



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4 n-uc

1911

N. 1

Հրգիծարանական ժողովուրդ

Երևան

418



ԿԵՆ

ԷԳԳԻՇԵԱԲԱՆԱԿԱՆ
ՃՈՂՈՎԱԾՈՒ



ԽՍԲԱԳԻՐ -
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՄՈՒՇԵՆ ԲԱԳՐՍՏՈՒՆԻ

Ի.
1911
ԷԳԳԻՇ

Handwritten text in a stylized, possibly cursive or shorthand script, rendered in reddish-brown ink. The characters are highly stylized and difficult to decipher.

A large, rectangular frame drawn in reddish-brown ink, containing faint, illegible text. The text is mirrored or repeated, possibly indicating a watermark or bleed-through from the reverse side of the page. The frame has rounded corners and a double-line border.

891-99-82

25 Haverhill
by Effingham and Haverhill
no. 100. J. H. Haverhill

Կ Ռ Ա Ն

ԵՐԳԻՇԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Խմբագիր — Նիստասարակիչ
Մ Ո Ւ Շ Ե Ղ, Բ Ա Ք Ր Ա Տ Ո Ւ Ն Ի



~~3680-73~~

Ե Ր Ե Ի Ա Ն
Տպարան «ԼՈՅՍ» Ա. Յակովբեանցի և որդ.
1911

6948-uk

[Faint handwritten text, likely bleed-through from the reverse side of the page]

[Faint, illegible markings or characters]

[Faint, illegible markings or characters]



[Faint, illegible markings or characters]

«ԿՈՍՆ»-ի ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՆՐԱ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԳՐԱԻԱԿԱՆՆԵՐԸ

Երբ վարակւեցանք ազգի առաջադիմութեան և զարգացման մեծ գաղափարներով, զրան անմիջապէս հետևեց քաղցած ապրելու ուրեմն և խմբագիր դառնալու հիւանդութիւնը:

Այս հիւանդութիւնը բռնկւեց հետևեալ ձախող պարագաներում:

Երկար ժամանակ նիհարեցինք Ստեփ. Նազարեանի օրօք, թըթւեցինք «Մեղու-Հայաստան»-ի և «Նոր-Դարի» ժամանակ, լարւած ջղայնութիւն ստացանք Գրիգոր Արծրունու օրօք, ուրւականի պէս սկսանք թափառել Բաֆֆու իդէաներով, տաքութեան ու տենդի մէջ սկսանք զառանցել Գամառ-Քաթիսլայով, ներւնային դարձանք Շիրվանզադէով, թոքախտ ընկանք և մէլանխոլիզմով բռնւեցինք հայ բոլոր բանաստեղծներով և այս բոլորից յիտոյ ստեղծւեց Ա. Ահարոնեանի ողբ ու կականը «Արցունքի հովիտը»:

Ուրիշ փրկութեան միջոց չկար, եթէ ոչ այս քայքայւած ներւերը բուժել երգիծաբանական պիլուլներով:

Եւ ահա այս բոլոր հիւանդութիւններն ինչ որ հակասական մի օրէնքով փոխւեց մեր մէջ խրօնիքական ախտով անվերջ ծիծաղի: Եւ ես ամեն օր ծիծաղում եմ և անպայման ծաղրել եմ ուզում՝ որպէս քաղցած խմբագիր, որի համար և ասպարէզ ենք իջնում մեր այս անդրանիկ հրատարակութեամբ: Իսկ եթէ մեր ծիծաղը մի փոքր լացի կարող է նմանւել—ցաւ չէ:

Աներկբայ եմ, որ մեր հատարակութիւնը չէր սպասում մեր «Կռան»-ի հրապարակ գալուն, ինչպէս որ նա չէ սիրում սպասել հայ գրականութեան մէջ մի որևէ գիրք աւելանալուն:

Եւ քանի որ մեր հրատարակութիւնն ոչ դասազիրք է, ոչ ա-

1007
31156

ուևորական մի ձեռնարկ, ոչ կանանց սեռի համար Փարիզի վերջին մօզաների մի ժուրնալ, այլ մի հայերէն հրատարակութիւն, ուրեմն և պարզ է որ մեր սալօնների բնակիչները նրան պիտի ընդունեն դէմքի այնպիսի ծամածուծութեամբ, երբ մէկը ներս է մըտնում և ստիպում նրանց ձեռքները գրպան տանել՝ փող հանելու համար:

Ըստ հին և նորագոյն աւանդութեան մենք ևս չհարցանելով ապագայի կամքը, մեր այս հրատարակութեամբ ասպարէզ ենք իջնում շատ ոսկէ երազների հետ ի միասին նաև ապագայի վառ յոյսերով, որոնց շիրականալուն կվկայէ ինքը՝ մեր հասարակութիւնը:

Այն է. «Կռան»-ը առայժմ լոյս է տեսնում որպէս ժողովածու. յետոյ կվերածւի ամսաթերթի կամ պատկերազարդ շաբաթաթերթի. յետոյ նա կծնի մի օրաթերթ ևս, ապա երկուսն էլ միասին մի խոշոր դէֆիցիտի հետ կառաջնորդեն երևի դէպի գերեզման և ապա հրաժարիմք ի խմբագրութենէ և ամենայն փորձանայ նորա:

Հրատարակութեան ապագան ապահովւած է միանգամայն այն բոլոր յուսալից գրականներով, որոնք վայելում են մեր բոլոր պարբերական հրատարակութիւնները:

Այն է. խմբագիրը միանգամայն ամուսնացած չէ:

Բաւական ամուր կազմւածք ունի և փորձւած է երկար ժամանակ քաղցած մնալու:

Առանց յոգնելու կարող է աշխատել խմբագրական գործում մինչև 25 ժամ:

Սարսափելի պինդ երես ունի՝ բախելու հարուսանների դռները:

Պարտքերը չէ յիշում, երբ փող չէ ունենում:

Շրջապատւած է այնպիսի աշխատակիցներով, որոնք հէնց Մովսէս Խորենացու օրերից սկսած սովոր են ազգասիրաբար ձրի ծառայել հայ գրականութեանը:

Սրանք արդէն բաւական մեծ առհաւատչեաներ են մեր ընթերցող հասարակութեան համար, առանց կասկածելու՝ յաւիտենապէս գրել բաժանորդ մեր ապագայ հրատարակութիւններին և օգտւել նրանցից ըստ աւանդութեան:

Գրւել բաժանորդ և փողը չվճարել.

Վաճառել մեծ քանակութեամբ և հաշիւ չտալ.

Կարդալ ձրի. ինքը օգտւելուց յետոյ տալ բոլոր ծանօթներին,

բարեկամներին, հարևաններին, հարևան գիւղացիներին և այլն:

Վերցնել ուրիշից և չվերադարձնել:

Եւ այս ամենից յետոյ, մենք խորապէս զգացած դէպի ազգը և ջատագով ազգային գրականութեան յառաջադիմութեան, պիտի գործենք միշտ յուսալով ձգտել՝ դէպի այն փայլուն ապագան, երբ մեր բազմերախտ ժողովուրդը դիակառքերով ու բազմաթիւ ծաղկեայ պսակներով իր թաղելու բնատուր ընդունակութեամբ մեր քաղցից ծիւրւած ու քամւած դիակը կառաջնորդէ դէպի յաւիտենականութիւն:

Օ՛ն ուրեմն, յառաջ, դէպի դիակառքի պսակները.....

Մ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ:

Ա Յ Ց

ԴԷՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ

I

Պատիւ ունիմ ներկայանալ հայ գրականութեանը—Պօղոս Մէկուսի. յայտնի գրականագէտ, որ հազիւ կարողանալով բաժանել ուսանողի յաւիտենական մունդիրից՝ ոտք դրի ազգային գրականութեան անդաստան:

Կարդացած չէ՞ք իմ վրական երկերը. դրանք սոււար հատորներ են կաղմում, որոնք արտացօլում են իրանց մէջ գեղարւեստ, տեխնիքական հմտութիւն, պարունակում են փիլիսոփայական, ազգային, սօցիալական բարդ պրօբլեմների բացատրութիւններ, սակայն որոնք տակաւին լոյս ընծայւած չեն և նոյն իսկ գրւած էլ չեն, բայց խօսք եմ տալիս մօտիկ ապագայում գրել, եթէ ՚ի հարկէ՝ համոզւած լինեմ, որ ազգը դրանց կհասկանայ և կգնահատ է:

Միննոյն ժամանակ և յայտնի թղթակից Կովկասահայ օրագրերի, շաբաթաթերթերի և այլն: Թէև շատերը չըմբռնելով իմ գաղափարներն ու անտի-արմատական սկզբունքները, ուղարկած բոլոր նիւթերս պահել են տպագրելու երևի 100 տարուց յետոյ, երբ արդէն մեր անգրագէտ ընթերցող հասարակութիւնը կհասունանայ և կարող կլինի դրանց մարսել:

Բայց մի քանիսն արդէն տպւած են, որոնցից մի երկուսը կարծեմ Կովկասի քամիների մասին է, միւսը՝ ամուսնական տարածայնութիւնների, երրորդն էլ՝ ինչ որ մի քահանայի կամիլաւկայի նկատմամբ:

Այս յօդւածները պէտք է ասած յարուցին մեծ ցնցում, և հասարակական ու քաղաքական նոր ձգտումներ իմ մէջ և կարդացիցին մեծ ոգևորութեամբ, — ի հարկէ իմ կողմից:

Եւ հէնց այդ օրից ես ինձ դասելով հայ առաջնակարգ գրականագէտների շարքը, սկսայ թէ ներքինով և թէ արտաքինով ինձ նմանցնել հայ ժուրնալիստի:

Եւ եթէ փողոցում կտեսնէք կարճահասակ կամ բարձրահասակ (սա կօշիկների սեղօնային փոփոխութիւններից է կախւած) մի մարդու երկար

ցիւրհաբար գլխին, երկար մազերով, նորագոյն տարազով, ակնոցները քթին, հաստ ձեռնափայտով և մի քանի լրագրիք էլ ձեռքին՝ արագ-արագ անցնելիս ու խորը բարե տալիս ծանօթ-անծանօթի, դա ես եմ՝ հայ դրականագէտս, որ իմ ամբողջ ունեցածով ու դատարկ գրպաններովս գտնուում եմ փողոցում:

Ես լինում եմ ամեն տեղ, ամեն ժողովներում, ամեն հարցերում, բոլոր հանդէսներում, թատրոններում և նոյնիսկ Կաթողիկոսական պատգամաւորական ժողովներում և թաղման սգահանդէսների ժամանակ ազգային սեղանի վրայ բազմած՝ մեծ ախորժակով ուտելիս:

Ահա, այս հակիրճ աւտօբիօգրաֆիան՝ ի պաշտօնէ պարտաւորւած տալիսեմ, որովհետև վճռած եմ տալ իմ պաշտօնական այցս հայկական մտքի բարձունքներին, այն փեսայի նման, որ նոր ամուսնացած լինելով այցելում է իր կնոջ բարեկամներին, ասելու՝ թէ այ՞, այսուհետև ես ձեր ընտանիքի հարազատ անդամներից մինն եմ:

Այցելութեանս առաջին պատիւը պատկանում է հայ քաղաքական ու դիւանագիտական մարմիններին:

Հայկական կեանքի մէջ ամենից տարափոխիկ թռչունները նախ սարեակներն են, ապա հայ քաղաքական մարմիններն և նոցա հետ դիւանագէտ գլուխները:

Անշուշտ սրանք վաղուց է ինչ կովկասից չլել են Պօլիս, և այնտեղ մենք կ'հանդիպենք նրանց, եթէ նոքա այդտեղից էլ մինչև մեր տեղ հասնելը չլած չեն լինիլ մի այլ կողմ մի նոր առաջնորդ, պատրիարք, Կաթողիկոս ընտրելու կամ նրանց հրաժարեցնելու պայքարով:

Այդ չուժը տակաւին անսպասելի պէտք է համարել, որովհետև այդպէս է ցոյց տալիս իմ՝ «Հայ քաղաքական կեանքի բարօմետրը»:

Նա ունի մի սլաք, որը փոխանակ մազնիտի նման ձգելու դէպի հիւսիս, առանձին մի յատկութիւն ունի պարզելու դէպի հայկական վեղարը:

Եթէ հայ մթնոլորդը բռնւած է ազգայնական տենդով, սլաքն ուղիղ ցոյց է տալիս էջմիածինը, իսկ եթէ «սօցիալական» Պօլսոյ պատրիարքարանը:

Իսկ մեր բարօմետրի սլաքը անշարժ կանգնած լինելով Պօլսոյ պատրիարքարանի վրայ, աներկբայօրէն գուշակում է հայկական «սօցիալիզմի» տակաւին մնայուն բնաւորութիւնը:

Եւ մեր այցելութիւնը Պօլսոյ մեծապատիւ դիւանագէտներին ու «սօցիալիստեր»-ին իրենց տեղումը միանգամայն ապահովւած է:

Նախքան ճանապարհորդական պայուսակ վերցնելը, խիստ կարևոր էր ունենալ պաշտօնական այնպիսի մի գրութիւն, որի առաջ խոնարհւէին բոլոր գլուխները, բոլոր մարդիկ և բաց լինէին բոլոր դռները:

Երկար մտածում եմ, օրինակ՝ եթէ լինէի Պետական դումայի անդամ, բայց նրա պօրտֆէյլով չի կարելի մտնել մի այնպիսի ժողով, որը տեղի է ունենում որևէ դուխանում:

Եթէ բարձրագոյն մի պաշտօնեայ կամ նրանից սկսած մինչև վերջին զօրօդովոյը լինեմ, սակայն գտնում եմ ոչ այն, ինչ որ ես ուզում եմ լինել:

Ուրեմն ինչ անել: Հմ, գտայ, իսկոյն վազում եմ հայ թերթերից մէկի խմբագրատուն:

— Պարոն խմբագիր, - դիմում եմ նրան, - խնդրում եմ ինձ մի վկայական տալ:

— Ի՞նչ վկայական. ծննդական, բայց սա խօս կօնսիստօրիայ չէ:

— Ո՛չ, ես ուզում եմ ճանապարհորդել:

— Ուրեմն անցադիր, բայց սա խօս ոստիկանատուն չէ:

— Ներեցէք, պ. խմբագիր. աւելի բարձրը: Ես ուզում եմ թղթակցի վկայագիր:

— Հմ, բայց դուք շատ վաղուց չէ որ աշխատակցումէք մեր թերթին. ընդամենը մի քանի յօդաձևեր էք տւել:

— Բայց և այնպէս աշխատակցել եմ. այդ դէպքում վճարեցէք իմ հօնօրարը:

— Բայց մենք հօնօրար չենք տալիս և ոչ մի թղթակցի:

— Ես չգիտեմ. այս կամ այն: Մենք հօ ձեր ճորտը չենք, մենք հօ ստրուկ չենք, վերջապէս մենք...

— Ի՛է, լաւ, լաւ, էլ միք բարկանալ. վերջապէս ասաց խմբագիրը և գրելով մի պաշտօնական վկայագիր ու կնքելով խմբագրական կնիքով ինձ յանձնեց, պարտաւորեցնելով որ շարունակ և անվերջ թղթակցեմ իր լրագրին:

Ես վերցնելով գրութիւնը ցտեսութիւն ասացի, և հէնց նոյն օրն ևեթ երկաթուղով ճանապարհւեցի դէպի Բաթում:

Միւս օրը մենք նստեցինք մի նաւ և սկսանք լողալ դէպի Պօլիս:

Երկու օր նաւն անվտանգ լողաց խաղաղ ծովի կապոյտ մակերևոյթի վրայով, սակայն երրորդ օրը դեռ Բոսֆորի ափերը չհասած, հանդիպեցինք սոսկալի փոթորկի:

Նաւապետը գունատուեց և յետ դառնալով ինձ, — որ արդէն բաւական մտերմացել էինք, — ասաց որ այս փոթորիկը խիստ վտանգաւոր տեսակներէն է և գալիս է Պօլսոյ Պատրիարքարանից: Երևում է որ Դուրեանը նորից հրաժարական է տւել:

— Հըմ... բայց յաճախ են պատահում այսպիսի փոթորկումները:

— Առնւազը շաբաթական երեք անգամ և ամեն անգամին մի Եւրոպական նաւ ջրասոյդ է լինում կամ նստում է աւազի վրայ:

— Հիմա ի՞նչ պէտք է անել:

— Պարիսի պիտի ձգենք մինչև որ պատրիարքը իւր հրաժարականը յետ վերցնէ և դա կտնէ մինչև երեք օր:

— Բայց դա խիստ երկար ժամանակամիջոց է:

— Այո, Եւրոպական դիպլօմատիան այդ առթիւ քանիցս անաջադրութիւններ արել է պատրիարքարանին — կարճել երեքօրեայ ժամանակամիջոցը, սակայն պատասխան է ստացել, որ տեխնիքական և ոչ մի հնարաւորութիւն չկայ, որովհետև մինչև ժողով կգումարելի, մինչև կկարդացւի հրաժարականի կէտերը, մինչև նորից դիմումներ կլինեն Դուրեանին և սա էլ կաճա-

պարէ յետ վերցնել իր հրաժարականը, ուղիղ երեք օր կտուէ: Այնպէս որ երեք օր պատրիարքական օրեր են, երեք օր էլ հրաժարականի, հետևապէս և Սև ծովի վրայ երեք օր խաղաղութեան և երեք օր էլ փոթորկի օրեր են:

Երեքօրեայ փոթորկումներից յետոյ ծովը խաղաղուեց և նաւը խարխալը վերցնելով իջաւ Բոսֆորի նաւամատոյցներից մինը:

Վերցնելով պայուսակս իջայ նաւամատոյցի վրայ և բազմութեան խուռն ժխորի մէջ կանգնած՝ չգիտեմ ինչ անելիքս:

Այդ ժամանակ մօտենում է ինձ մի հայ բեռնակիր և աչքերը յառելով դէպի պայուսակս հարցնում:

— Էֆէնդը՛մ, բացականներուն քովը պիտի երթաս չէ՞նէ՞ գոցականներուն:

Մինչև իմ պատասխանելս մօտ է վազում մէկ ուրիշը և դիմելով միևսին պատասխանում է.

— Ծօ խելան, չէս տեսնէր որ էֆէնդին բացական է և բացականներուն քովը պիտի երթայ և ձեռքը պարզում է դէպի պայուսակս:

— Հարիֆ, ձեռքդ քեզի քաշէ, բարկանում է առաջինը, ինչէ՞ն գիտցար որ էֆէնդին բացական է: Ես կսեմ, որ անի գոցական է, և պայուսակը ձրգում է դէպի իրան:

— Ծօ ինձի սա պայուսակը կսեմ քեզի, քանի որ էֆէնդին բացական է ու կուզ է անոնց օթէլը հրթալ:

— Իսկ, ե՛ս քեզի կապացուցեմ, որ էֆէնդին գոցական է... ահան,— և նա մատով ցոյց տաւ իմ վերարկիս ամուր գոցած կոճակները.— նայէ, խելան, ինձի՞ դաս կուտաս. բացականներն ի նշան իրենց սկզբունքին բաճկոններէն մինչև փանթալոնին կոճակները քիչ կմնայ արձակ թողնեն, և ուժով խլելով պայուսակը, ուսին դրեց ու արագ կերպով առաջ անցաւ:

Ես լուռ սկսում եմ հետևել բեռնակրին. երբ սա վազում է, վազում եմ, կանգնում է՝ կանգնում. դանդաղ եմ գնում՝ երբ նա դանդաղեցնում է իր քայլերը:

Պօլսոյ փողոցներում վխտում է այլատարր ամբոխի խառնիճաղանչ մի բազմութիւն, որոնք ներքևից միանգամայն տարբեր են— բազմաբղէտ, իսկ վերևից միանման՝ կարմիր: Դա փինջուխաւոր ֆէսն է, որ սահմանադրութեան յայտարարումից յետոյ Եւրոպացիք նոյնիսկ սիրահարւեցին նրա վրայ և ֆէս կրելով կուզէին դրականապէս ապացուցել, որ իրենք նոյնպէս Օսմանիներ են:

— Տօ, բարեկամ, ուր ես տանում պայուսակս և ո՞ւր ես առաջնորդում ինձ:

— Էֆէնդը՛մ, Գատը— Գիւղ, գոցականներուն քովը. աղւոր օթէլ մը ունին: Ես ալ գոցական եմ. եկեղեցու ամենէն անձնէր պաշտպանն այդ կըրօնքին թշնամի հերետիկոսներուն դէմ. քեզի պէս գոցական ազնիւ էֆէնդիինն համար աղէկ չըլլար Հայտար-Փաշա կամ Նիկոմիդիա, որ բացականներուն քովը երթաք, անոնք քեզի բռնի ստորագրել կուտան որ դուն բացական ըլլաս:

— Բայց դու այնպէս ես հաստատում իմ գոցական լինելս, կարծես թէ

հետս մի ամբողջ տարի ապուր ես խմած:

— Առանց ապուր ալ խմելու տեսնելուն պէս անանկ կզանազանեմ, ինչպէս սեխը ձմերուկէն: Սահմանադրութենէն ետքը Պօլսոյ մէջ այժմ ամենքն ալ կճանչցւին: Թունդ յեղափոխականներու քովէն անցնելիս միշտ կ'իշխենք նախկին զապթիէներ, որոնք այժմ քեզի խոնարհ ծառայ եմ կսեն. զգոյշ կ'եցիր, որ ադ յեղափոխական ըսւածներուդ սկզբունքները չքննիս եթէ ոչ՝ սօսիա մը կուտես: Եթէ մէկը տեսնես անմուրուս, որ բնաւ չի համաձայնէր իր ոտքերուն հանդէպը նայել որ քարին չզարնւի, — անիկայ ազատական է: Պահպանողականը միշտ ասանկ պատկառնի ու համեստ նայւածքով, ունի: Եկեղեցւոյ քովէն անցնելիս միշտ զինքը կ'սաչակնքէ ու այնպիսի արտայայտութիւնով, ունի իր դէմքին վրայ, որ կարծես կզղջայ, թէ ինչո՞ւ իր մօրուքը նօսրացրաց է սափրիչին քով: Ազատականներ միշտ կը յարգեն իրենց բանակին մարդիկ. միւսներ նոցա համար խղճալի են ու ատելի: Ազատականներ իրենց մասին անանկ կարծիք ունին, որ բեռնակիր մը, եթէ ազատական է, կըրնայ ազգային երեցփոխան ընտրուիլ:

— Բայց այդ ազատական ու պահպանողական ասւած բանակները Պօլսի մէջ խիստ են պայքարում:

— Խիստ սոսկալի, էֆէնդըմ, անանկ լարւած են իրարուն դէմ, որ կարծես իրարմէ նոր սահմանադրութիւն մը պահանջելիք ունին, ու ադ սահմանադրութիւնը մեր եկեղեցիներու չորս պատերուն մէջ գացեր սլահւեր է: Ազատականներ կըսեն՝ բացէք սա դուռը, եթէ քիչ ալ ուշանաք, սահմանադրութիւնը հոն մահախեղդ կ'լլայ. իսկ պահպանողականները կսեն, որ եկեղեցոյն մէջ ատանկ բան մը թագնւած չկայ, հոն մենակ մեր Աստուածը կը արնակի: Ու մեր պահպանողական և ազատական բանակները համիդէական ուժերմին դէմ կուելու ոգևորութիւնը առած իրարու դէմ բանակ են դրած:

Պօլիս այժմ կ'դտնւէ սկզբունքային զինւորական դրութեան մէջ և բաժանւած՝ հակադիր դիրքերու: Սանկ, եթէ օտարականին մէկը Սթամբուլին նաւամատոյցներուն մէկը իջնէ, անիկայ արդէն սլաշարւած կ'լլայ բացականներէն կամ գոցականներէն: Մենք գոցականներս կաշխատինք անոր Գատը-Գիւղ տանիլ կամ Մազրի-Գիւղ, իսկ բացականները Բերա կամ Ղալաթիս, որովհետև այդտեղանք կ'դտնւեն այն աւազանները, ուր դրսէն եկողները միշտ կ'մկրտուին պահպանողական կամ ազատական: Ու եթէ կուսակցական պայքարը այսպէս արագ առաջ ընթանայ ու լարւած ատելութիւնը իր ծայր աստիճանին հասնէ, օր մը «ազատական» Բերա կ'ոմբակոծէ «պահպանողական» Գատը Գիւղ. ծայր «ազատականներ» Ղալաթիս, թունդ պահպանողական՝ Մազրի գիւղ: Կէտիկ-Փաշա կը քալէ Գում-Կափուին վրայ, Սամարթիան միմեանց կ'կոտորէ: Հայդար-Փաշայէն մինչև Նիկոմիդիա «ազատականներ» պիտի չւին Իւսկիւտարին բնիկներուն վրայ, միացած գաւառացի ամբոխին հետ: Բոսֆորի երկայնքէն մինչև Սև ծովին բերանը ասիական ու եւրոպական եզերքներուն վրայ գտնուող գիւղերուն ազատական երիտասարդ սեռը կ'ոտորելուց յետոյ, իր մէջին հասակաւոր պահպանողականներուն, պիտի քալէ Պօլսին վաճառականներու, սեղանաւորներու, գործա-

բանատէրերու, մեծատուն հարուստներու վրայ, որոնք ամենքն ալ պահպանողական են: Ան ատեն Սուլթան Համիդ երախտապարտութեան բուն ըզգացմունք արտայայտելէն ետքը ազատականներու մեծ ժողովրդապետ և փոխարքայ պարոն Ակնունուն, պիտի երթայ բողոքելու Եւրոպական դեսպանատնովին, թէ ինչո՞ւ իրենք զինք կմեղադրէին այն յանցանքին մէջ, որպէս թէ հայերը կոտորած է իրենց կամքին հակառակ, այն ինչ ինքը գահընկէց ըլլալէն ետքը, այժմ հայեր սկսած են իրենք իրենց կոտորել:

Վերջապէս բեռնակիրս կանգ առաւ Պօլսոյ հեռաւոր թաղերից մէկի բարձրաշէն մի շինութեան առաջ, որը յետոյ, ինչպէս երևաց, հիւրանոց է և գտնուում է Գատը-Գիւղում:

Ներս մտնելուն պէս, բարձրահասակ մէկը, որ անշուշտ խիստ դժգոհ պիտի եղած լինէր իր մազերի ալեխառնութեան դէմ, որ այնպէս անզթօրէն սափրել էր իր ծնօտից, ինձ տեսնելուն պէս Պօլսահայի ժպիտը երեսին իւղոտ և փայլուն սիւրտուկի օձիքը շտկելով, մօտեցաւ ու այնպիսի մտերմական ձևով բարևեց, կարծես թէ վաղուց չէ որ արցունքով բաժանուել ենք իրարից:

Սակայն բեռնակիրս, որ երևում էր թէ Պօլսի համետակիրներին դասակարգի մէջ այնքան էլ խղճուկներին չէր, պայուսակս վայր դնելով, իսկոյն առաջ անցաւ և ինձ ներկայացնելով անծանօթին, ասաց:

— Մարգար աղա, ահան այն պատուական հիւրերէն մէկը, որոնց դուն այնքան կյարգես: Մեծարելի ազգային մը:

— Եւ անշուշտ ազնւատոհմ երիտասարդ մը:

— Պատուարժան քաղաքացի մը:

— Անշուշտ մեծարելի վաճառական մը:

— Անուշաբարոյ սիրտ մը ունի:

— Եւ անշուշտ քաղցր խօսընկեր մը:

— Անանկ հետաքրքիր անձնաւորութիւն մը:

— Անշուշտ ազգային անձնէր գործիչ մը, որուն ծանօթանալու պատիւը կունենանք:

— Պօղոս Մէկունի — ասացի ես սեղմելով ինձ մեկնուած ձեռքը, որ անշուշտ հիւրանոցի տէրը պիտի լինէր:

— Պօղոս Մէկունի, ա՛ն, կարծեմ ծանօթ պիտի ըլլա սա ազգանունը: Մէկունի, Մէկունի, կեցիր էֆէնդի, կեցիր յիշեմ:

— Ռուսաստանցի:

— Այո՛, այո՛, Ռուսացի. կեցիր գտնեմ. անշուշտ կյիշեմ. ձեզի խիստ ծանօթ անձնաւորութիւնն էք:

— Եմ ը. ը.

— Կովկասի քաղաքներից մէկի բնակիչ:

— Այո՛, այո՛, ճիշտ այդպէս:

— Երբեմնի ուսանող:

— Ճիշտ այդպէս:

— Այժմ գրականագէտ:

— Ինչպէս չէ՞ ճիշտ այդպէս:

— Ու աշխատակից Կովկասահայ յայտնի թերթերից մէկի և եթէ կամենաք, ձեզ ցոյց կտամ իմ վկայականս:

— Հ'ըմ, չըսի՞, թէ կ'ճանչնամ: Անշուշտ մէկ տեղ կարդացած պիտի ըլլամ ձեր ազգանունը: Շատ ուրախ եմ, կճանչնամ, կճանչնամ: Ծօ, մանչ, ապա դառնալով ծառաներից մէկին, սա Պօղոս աղային համար պատրաստեցէք առաջնակարգ օթևաններէն մինը:

— Ամենէն առաջնակարգ Մարգար աղան, գիտնալու է, որ Պօղոս աղան մերիններէն է, աւելացրեց բեռնակիրս:

— Անշուշտ, ամենէն առաջնակարգ: Հա, գիտնալու է Պօղոս աղայ, թէ սա ազգին դաւաճան ու կործանարար «ազատական» ըսւածներդ որքան ըմբոստացած են եկեղեցւոյն դէմ, ձեզի պէս պատուարժան մտածող մը՝ անշուշտ մեր նւիրական հաւատքին թշնամիներու դէմ կանգնած ըլլալը, մեծ ախոյան ունենալմէ մեզի համար:

— Ու գիտէք, Մարգար աղա, էֆէնդին խիստ փորձեալ և իմաստուն անձնաւորութիւնմէ, ինձի տեսնելուն պէս, իսկոյն ճանչցաւ՝ որ ես ալ ձերայիններէն եմ: Սա պայուսակը մեկնեց ինձի ու ըսաւ ուղիղ քալէ Գատը-Գիւղին հիւրանոցներէն մէկը: Ա՛հ, մեծ բաղդաւորութիւն կ'լլար ինձի գէթ օրական մէկ-երկու սանկ հարուստ ազգայիններ ինձի ծառայութիւն յանձնէին: Անցեալ օրին մէկ հիւր ալ սանկ պատահեցաւ ու այնպէս առատաձեռն վճարեց:

— Աղէկ. Պօղոս աղան եթէ մէկ-երկու դուրուշ քեզի ձգէ նէ, անոր քսակէն բան մը չպակսեր: Վերցուր պայուսակը և քալէ մեզի հետ: Համեցէք Պօղոս աղա, ձեզի օթևան մը յանձնենք:

Մենք անցանք նեղ ու երկայն նրբանցքով դէպի վեր, ուր երկուստեք ընկնումէին մի շարք սենեակների դռներ՝ իրենց անշուք և աղտոտ արտաքինով: Նրբանցքի փայտէ, անգոյն ու աղտոտ յատակը և բոլոր աչքի ընկնող պարագաներից երևում էր, որ եթէ Պօլսի «ամենէն աչքի ընկնող հիւրանոց»-ը սա է, ապա նշանակում է թէ այս հայելին որքան բնական պիտի լինի նրանց մաքրասիրութիւնն ու ճաշակը պատկերացնելու համար:

Մարգար աղան մեզ մտցրեց նրբանցքի վերին սենեակներից մէկի դռնովը: Ծառան դեռ սրբում էր աղտոտ յատակը, ուր տակաւին աւելի հետ այս ու այն պատին էին կպչում երևի մի քանի օր առաջ կերած մսեղէնի ոսկորները:

— Ծօ մանչ, աղէկ սրբէ, ասաց Մարգար աղան և քիթը մտնող թողից իրարու հտեից անեղ ձայնով փոշտաց:— Սա սենեակին օդը բաւական ըսքանչելի է Պօղոս աղա, հոս կրնաք աղէկ քնանալ, եթէ ցորեկը ուշադրութիւն չը դարձնէք անընդհատ անցնող սայլերու որոտմունքին, աւանակներու աղաղակներուն, իսկ գիշերը մուկերու խմբական արշաւանքներ ընելուց: Սա լուսամուտը կնայէ ուղիղ Մահսուսէյի ընկերութեան նաւերն անցնող ծովուն ճանապարհին վրայ, սակայն ապակիներ քիչ մը աղտոտ ըլլալուն կրնայ որ ոչինչ չերևայ, ծօ, մանչ, վաղը իրիկւան յիշէ, որ

սա մահճակալն ալ երկաթագործին տանիլ, քիչ մը վտանգաւոր դրութեան մէջ է: Պօղոս աղան, անանկ զգոյշ քնէ, որ չլլա թէ ձեզի փորձանք մը բերէ: Ծօ տղայ ան շունին ձագը չեկաւ սա անկողինը լալ տանելու. ձեզի չըսի՞ որ երթաք անոր կանչէք. չըսի՞:

— Ըսեցիք Մարգար աղան. պատասխանեց ծառան:

— Հասկա ինչու չգնացիք:

— Մոռացած ենք:

— Ծօ իշուն ձագ, ես ձեզի չեմ ըսած, թէ սանկ մոռացկոտ ու պարտազանց ծառաներ ինձի պէտք չեն: Ես սանկ անճշտապահութիւններ չեմ սիրեր, ես վերին ծայր մաքրասէր ըլլալովս, կուզեմ որ իմ հիւրանոցս ալ միշտ մաքուր հայելիի մը պէս փալիլէ: Վասն զի սանկ ճոխ ապրած այցելուներ միշտ կուզան հոս ու խիստ շնորհակալ և գոհ եղած կհեռանան՝ ուղած գինէն կրկնակի վճարելով: Գնան ու միտքդ պահէ, շունին ձագ, որպէս զի յիշեցնես ան լացարարին և միւս անգամ չսրդողեցնէք ինձի, վասն զի գէշ խօսքեր ընելու բնաւորութիւն չունիմ: Մէյմ ալ, ծօ, սա դուռին լաւ հսկեցէք՝ Պօղոս աղային բացակայ ըլլալու ժամանակ, վասն զի փականքն աւրւած է:

— Մարգար աղան, դուռն ալ պիտի նորոգուի. ձեզի անցած շարթուն յիշեցուցի ադոր համար:

— Աղէկ, աղէկ, — ապա դառնալով ինձ — գիտէս, Պօղոս աղա, սահմանադրութենէն ետքը դուռներուն բաց ու գոց ըլլալուն նկատմամբ միայն եկեղեցիներն են որ մեզի տագնապին մէջ դրած են, սա խնդիրն իհարկէ խիստ ծանրակշիռ հարցմն է, որու նկատմամբ ես ունիմ իմ սեփական համոզումներս, այդ համոզումներէն մինն նախ այն է... հն, ներեցէք Պօղոս աղա, կեցիք սա բեռնակրին վճարեմ, — ասաց Մարգար աղան յանկարծ խօսքը փոխելով և որպէս թէ փող հանելու համար ձեռքերը դանդաղօրէն տանելով դէպի գրպանները:

— Ո՛չ, ոչ, Մարգար աղան, ես կվճարեմ:

— Կեցիր ջանքմ, քանի մը՝ դուրուշ բանքմ չէ:

— Ո՛չ, ես կվճարեմ:

— Դէ, տղայ, ստացիր Պօղոս աղայէն ու շնորհակալութիւն ըրէ:

Բեռնակրին ճանապարհելուց յետոյ, ինձ մնում էր մի կերպ ազատել և Մարգար աղայից, որովհետև ճանապարհի ծանր յոգնածութիւնից սաստիկ դողրած, կուզէի մի քիչ քնել, որի համար և նստեցի մահճակալի վրայ: Մարգար աղան ըստ երևոյթին երկար խօսելու տրամադրութեամբ տեղ բռնեց աթոռի վրայ և վառելով մի գլանակ նորից վերսկսեց:

— Այդ համոզումներէն մինն այն է, որ Աստուծոյ աղօթից տաճարները բնաւ չեն կրնար բաց ըլլալ զանազան համախմբումներուն ու միթիւնկներուն համար. աղիկայ միանգամայն հակառակ է սահմանադրութեան ոգուն. անանկ խօսքեր ու ճառեր կրնան արտասանել, որ Աստուած չի կրնար բնակիր հոն: Երկրորդ, Դուրեան պատրիարք յարած է աղ ազատական սօցիալիստ բանակներուն և կուզէ եկեղեցին միանգամայն մէջ տեղէն բառնալ: Ան մի

անգամ ըսած է, թէ՛ «եկեղեցին ժողովատեղի է, ուր կրնան խօսիլ ամէն բան, ով կամենայ, ինչ որ ուզէ», ու ադոր համար ալ այժմ թատրոններ, միթիւնկներ ու հրապարակախօսութիւններ կուզեն տեղափոխել եկեղեցիներուն մէջ, իսկ աղօթքն ու շարականները հրապարակային զւարճութիւններու առարկայ դարձնել: Լսեցի՞ք Քօմիթաս վարչապետին քօնցերտներ, կաղաչիմ Պօղոս աղա, ըսեցէք, լսեցի՞ք:

— Այո՛, լսեցինք Մարգար աղա, պատասխանեցի հօրանջելով:

— Հասկա ի՞նչ է ադոր պատասխանը:

— Երևի կարգալիւծութիւն:

— Այո՛, այո՛, Պօղոս աղա, մեզի պէտք չեն ադանկ հաւատուրաց սօցիալիստ հոգևորականներ ու եթէ ես պատրիարք կամ կաթողիկոս ըլլայի, դիտե՞ս ինչ կնէյի անոնց:

— Ինչ պիտի «էնէի՞ք»:

— Ծովը նետել կուտայի:

— Բայց այդ տեսակ պատժի համար դուք բողոքեցիք Համիդի դէմ 1895 թւականներին, ընտրեցէք աւելի մեղմ պատիժ:

— Ոչ, Պօղոս աղա, չեմ կրնար: Բարկութիւնը ամեն բան կնէ, ադոնք արժանի են ծովը նետելու:

Յոգնածութիւնն ինձ աւելի է յաղթահարում և ես ներողութիւն խնդրելով, թիկն եմ տալիս: Մարգար աղան շարունակում է:

— Ադ պատրիարք Դուրեան ըսածդ եկեղեցւոյ դաւադիրմն է, անոր հրաժարականը պահանջելու է: Ան եկեղեցւոյն թշնամի է. Աշըգեան, Օրմանեան աւելի մեղմ վտանգաւոր էին՝ քան ասիկայ, անոնք բնաւ համաձայն չէին ըլլալ եկեղեցին սրբապղծել:

Թմրութիւնն ինձ տիրում է, որից սկսում եմ մերթ ննջալ և մերթ քաղաքավարութիւնից ստիպւած՝ լսել հիւրանոցիս տիրոջը, աչքերս բաց ու խուփ անելով: Նա շարունակում է.

— Ադ պատրիարքը հակառակ երէցփոխանական ժողովոյն մեծամասնութեանն կամքի, հակառակ ազգին ցանկութեան, հակառակ կաթողիկոսին կոնդակի և հակառակ իր նախկին որոշման նորէն յետ ընդունած է բացին սկզբունքը:

Ես ուզում եմ ներողութիւն խնդրել Մարգար աղայից՝ ինձ մենակ թողնել հանգստանալու:

— Ես չեմ ուզեր այո՛, Դուրեանին պատրիարքութիւնը, պէտք է անոր հրաժարեցնել:

— Բայց ներեցէք, Մարգար աղա, ես կուզէի...

— Դո՛ւք, Պօղոս աղա, ես ձեզի չեմ հասկանար, դուք ի՞նչպէս թոյլ կուտաք համաձայնելիլ այդ դաւաճաններուն, դուք կուզէի՞ք որ մեր ազգին մէջ պառակտում ըլլայ, կուզէի՞ք որ Եւրոպական պիտութիւնները մեզի անաստւած ազգ մը ճանչնան, դուք կուզէի՞ք...

— Բայց Պօղոս աղա, ես կուզէի...

— Բայց ո՛չ, ես չեմ ուզեր, ես ձեզի կ'հակաճառիմ, ես պահպանողա-

կանմն եմ, ազատականներն ազգին դաւաճաններ են: Ես կուզեմ անոնց ոչնչացնել:

— Բայց Պօղոս աղա, ես կուզէի...

— Ի՞նչ կուզէիք, հակառակը, պահպանողականներու ոչնչացումը:

— Ոչ, Մարգար աղա...

— Դուք ազատակամն էք. խօսքս կտրում է Մարգար աղան:

— Ո՛չ էֆէնդըմ, ես ոչ այս եմ և ոչ այն, այլ ես կուզէի մի փոքր հանդատանալ որովհետև խիստ յոգնած եմ:

— Ա՛ա, ներեցէք Պօղոս աղա. խնդրեմ, խնդրեմ, աղէկ մը քնեցէք, ես ձեզի կուքամ յետոյ—ասաց նա և դուրս գնաց:

II

Մարգար աղայի հեռանալուց յետոյ, դեռ աչքս նորէի կայցրել, երբ յանկարծ ինձ մի ձայն դարթեցրեց. ներս մտնողը հիւրանոցի ծառան էր:

— Պօղոս աղա, ներեցէք ձեզի անհանգիստ ընելուս համար, վասն զի ես բնաւ համաձայն չեմ և չեմ ընդունիր: Կրողքեմ ադոր դէմ:

Զարմանալի բան, մտածեցի ես. երևի այստեղ ես ժամանակ չըպիտի ունենամ մի փոքր հանգստանալու:

— Ինչո՞ւ, ի՞նչ ունիք իմ դէմ,—հարցնում եմ զարմացած:

— Սակայն, Պօղոս աղա դուք կ'սրղողիք, բայց կաղաչեմ, ներեցէք քուներնիդ խանգարելուս համար, վասն զի ճանփորդութենէ եկած էք և ձեզի հանգստանալ պետք է, սակայն սա պարագային մէջ լուել՝ կնշանակէ պարտւիլ կամ համաձայն ըլլալ պահպանողականներուն բանակին: Մենք ազատ սահմանադրական ենք, խօսքին ազատութիւնը վերին աստիճանին կ'սիրենք և կ'գործադրենք ամեն պարագաներուն մէջ: Ահա ադոր համար ալ եկայ ձեզի խօսելու, ըսելու որ ես միանգամայն դէմ եմ և բողոքեմ պիտի:

— Բայց ում դէմ, ի՞մ:

— Նեւեցէք, Պօղոս աղա, վասն զի աղանկ վերաբերմունք ազգին և սահմանադրութեան դէմ դաւաճանութիւնմն է, մատնութիւնմն է, դաւադրութիւնմն է և անգամ մը պիտի ըսել, որ աղանկ գլուխներուն վրա, եթէ սօփաներ չլլան կախւած, կարելի չէ որ ազգը բաղդաւոր վիճակի մը մէջ դնիլ:

— Բայց պարո՞ն, ես այստեղ ոչ մի այդպիսի յանցանք կատարած չկամ և կ'խնդրեմ որ իմ գլխից յետ վերցնէք այդ սօփան: Կարծեմ որ իմ ցերեկ ժամանակ քնելովս դէմ չեմ դնացած լինի սահմանադրական կարգերին: Սա իմ ազատ սենհակս է, ուզենամ՝ կ'պառկեմ, ուզենամ՝ կ'քնեմ, այդ ինչ ձեր գործնէ: Խնդրում եմ հեռացէք և ինձ հանգիստ թողէք:

— Ներեցէք Պօղոս աղա, մի սրղողիք, պիտի ըսած որ ես պարտաճանաչ սպասաւոր եմ, և ադոր համար ալ Մարգար աղան միշտ ինձի կյանձնարար է հսկել ձեզի պէս պատուաւոր հիւրեր: Սակայն հոս խնդիրը այլ է և այնքան տագնապալից ու վիճելի, որ եթէ չըսինք, չբողոքինք, սահմանա-

դրութիւնը կրնայ աւելի ու ձեռք է հիշել, գիտնալու է՝ որ մենք արթուն
աչօք կհսկենք սահմանադրութիւնը:

—Ուրեմն այստեղ արգելւած է ցերեկները քնել:

—Ոչ, Պօղոս աղա, կրնաք քնել:

—Գուցէ պէտք է քնել աչքերը բաց:

—Ո՛չ, էֆէնդըմ, կրնաք քնել և աչքերնիդ գոցած: Խնդիրը հոս մեր
հկեղեցիներուն բաց ու գոցին կ'վերաբերէ:

—Բայց այդ ի՞նչ կապ ունի իմ քնելուս կամ արթուն մնալուս հետ:

—Սա ձեզի հետ կապ չունի Պօղոս աղա, այլ Մարգար աղային հետ:
Անիկայ քիչ մը առաջ հոս ձեզի խօսեցաւ և աղէկ մը ընդդիմախօսեց, սա-
կայն ես ազատական ըլլալով, բնաւ չեմ ընդունիր անոր սկզբունքները, վասն
զի ան ըէակսիօն պահպանողականն է ու ադոր համար ալ եկայ ձեզի բո-
ղոքելու—պատասխանելու անոր զրպարտութիւններուն դէմ՝ թէ մեր բանակին
և թէ Գուրեան պատրիարքին նկատմամբ: Ադ պահպանողական ըսւածներդ
դաւաճաններ են, որոնք բնաւ չեն ուղեր համողելը, որ ազգին միակ փըր-
կիչները մենք՝ ազատականներս ենք: Սա սահմանադրութիւնը մենք ստեղ-
ծեցինք, բռնակալ Համիդ մենք տապալեցինք, բոլոր վայրենի քիւրդեր ու
արիւնկալ էշիրէթներ մենք զսպեցինք, ու մենք եթէ չլլայինք Շէֆքէթ
փաշան դժւար թէ կրնար Ելդըզ-Քիօսկին վրայ քալել:

Գուրեան պատրիարքը էն ամենէն բարձր գաղափարներուն տէր մարդն
է, դիւանագէտ, լուսամիտ ազատական մը, որ բնաւ չի ուղեր ենթարկելի
ադ պահպանողական խաւարամիտներուն: Նա միշտ մեզի հետ է, երբ կսենք
վեր կաց, իսկոյն կ'կանգնէ, երբ կսենք հրաժարիէ, կ'հրաժարուի, ու երբ
կսենք տեղդ դարձիւր, իսկոյն կուգայ պատրիարքարան ու կսկսէ կառավա-
րել: Անիկայ մեզի հետ համամիտ է հկեղեցիներուն բացի նկատմամբ: Մենք
սօցիալիստ ազատականներս կուզենք, որ մեր հկեղեցին չլլայ փթած ժամա-
կարգութիւններու լոկ վայր մը, այլ հոն աղօթքների փոխարէն աւելի ա-
ղէկ կլլայ միթինկներ կազմիլ, ազգին քաղաքական և սօցիալական պա-
հանջներու մասին խորհել:

—Բայց այդ ինձ չի վերաբերում, խօսեցէք Մարգար աղային հետ:

—Պէտք է որ տէր Մարկոսներուն ու տէր Թովմասներուն փոխարէն
հոն քարոզ կարդան ու խօսեն մեր սօցիալիստ վաւաններ, վարդգէսներ,
Շահրիկեաններ և այլք. ի՞նչ ընենք թէ անոնք Ֆարաջաններ չունեն հազած
կամ ինչո՞վ պակաս են կղերական սևազգեստներէն:

—Սոսեցէք Մարգար աղայի հետ,—կրկնում եմ ես սաստիկ ձանձրա-
ցած.—գուցէ նա ապացուցանում է որ Ֆարաջաններն աւելի բարձր են:

—Այդ ըլլալու բան չէ էֆէնդըմ, ես կըսեմ որ տարբերութիւն կայ, ա-
նոնք յետադէմ կղերականներ են, իսկ ասոնք ազատամիտ, անոնք կրօնա-
կաններ են որ ժողովուրդը կ'ոչխարացնեն, իսկ ասոնք սօցիալիստներ, ա-
նոնք Մովսէսին գաւազանը կցուցունեն ժողովրդին, իսկ ասոնք՝ յեղափո-
խութեան, անոնք ժողովուրդը կ'վարեն դէպի Սենային անապատները, իսկ
ասոնք կըշեն դէպի սահմանադրական կարգերը, անոնք ձրիակեղներու կաս-

տամն են իսկ ասոնք քաղաքական կուսակցութիւններու. և վերջապէս ասոնք Ֆարաժաւորներ են իսկ ասոնք բաճկոնաւորներ: Կրնայ մի ըլլալ համեմատութիւն սա երկու հատւածներուն մէջ:

— Չղիտեմ, խօսեցէք Մարգար աղայի հետ:

— Անոր սկզբունքները բնաւ չեն համապատասխաներ իմինիս, անիկայ բարկացած ատեն ինձի կանւանէ իշուն ձագ, շունին տղայ, իսկ ես բնաւ համաձայն չեմ անոր գաղափարներուն: Բայց, ներեցէք Պօղոս աղա, սա խնդրոյն ես նորէն կ'վերադառնամ. այժմ կշտապեմ, վասն զի հոն հեշտակուն եփւելու վրայ է:

— Խնդրեմ, խնդրեմ, զնացէք:

— Չեզի անհանգիստ չրի՞, Պօղոս աղա:

— Ոչ:

— Կրնաք միանգամայն ապահով ըլլալ, վասն զի ձեր անդորրութեան համար ես բոլոր ոյժերս կ'լարեմ:

— Շնորհակալ եմ:

— Ու աղոր համար ալ յուսամ, որ արժանի կ'լլամ այն առատ վարձատրութեան, զոր պիտի ընէք ինձի ձեր հրաժեշտ տալու ատեն:

Ծառան զնաց: Ես սպասում էի, որ նրա ետևից անմիջապէս կ'մտնի մէկ ուրիշը՝ կարդալու իր լեկցիան սահմանադրութեան եղանակների, բայց ու գոցի խնդրի մասին:

Սակայն, զարմանք, անցնում են բոպէներ և դեռ ոչ ոք չկայ:

Այժմ ինձ սկսեց զբաղեցնել մի այլ հարց: Սենեակիս փականքն «աւրբաւած է», և իմ մէջ առաջ եկաւ ակամայ մի երկիւղ, որ զարձեհալ իւր տեսակի բաց ու գոցի մի խնդիր էր:


Այժմ ինչպէս վճռել կամ ինչպէս վերաբերել այդ հարցին: Ընդունելով «ազատական» սկզբունքը և յայտարարելով ինձ բացական ու միշտ այդպէս բաց թողնել սենեակիս դուռը, — թերևս մեր Պօլսոյ ազգայիններն ըսկսած մեծապատիւ հրապարակախօս բեռնակիրներից մինչև ծայրահեղ ձախակողմեան էֆէնդիները, առանց թոյլտուութեան ժամանակ և անժամանակ ներս խուժեն սենեակս, և այն դարձնեն մի աուղիտօրիա իրենց քաղաքական ու ազգային բեմբասացութիւններին համար, — առանց հարցնելու թէ դա իմ ննջարանս է: Դրանից յետոյ, թերևս մէկն էլ հոետորի դիմակի տակ ներս մտնի և փոխանակ ճառ ասելու՝ գողանայ այն ամենը, ինչ որ իրեն չէ պատկանում:

Ուրեմն:

Հարկաւոր է կայացնել հետևեալ որոշումը. —

Որովհետև այս սենեակը յատկացւած է մարդկանց համար միայն քրնելու, ուրեմն սա չէ կարող բաց լինել և ծառայել որպէս աուղիտօրիա: Ուրիշ խօսքով, այդ խնդրում ընդունելով «գոցական» սկզբունքը, մենք խիստ պահպանողական կ'լինինք և հետևողական գոցական — մեր սենեակի վերաբերմամբ:

Վճռւած և կատարւած էր:



իջնելով մահճակալից, ես իսկոյն դռան ետեւը գլորեցի ծանր լւացաւ-
րանն և մահճակալս էլ մօտեցնելով նրան՝ հանգիստ կերպով պառկեցի:

Սակայն այն ես լուծեցի շատ տարրական մի տրամաբանութեամբ.
Փոխանակ պատրիարք Դուրեանի պէս այսպիսի մի յիմար հարց ահագին
չափերով ուռցնելու, ազգային ու միջազգային մի պատուհաս դարձնելու և
մանաւանդ թեր ու դէմ տատանումների դիմելով՝ խայտառակիլ թէ իրեն և
թէ ողջ ազգայինները, — ամենաթեթև կերպով կատարեցի մի պարզ ճշմար-
տութիւն. — փակ պահել այն, ինչոր ինձ է՞ պատկանում և իմ սեփականու-
թիւնս է:

Բայց... ինչ որ քայլեր են մօտենում: Անշուշտ, դէպի ննջարանս է
ուղղւած. բայց քայլերը խուլ են, հատ-հատ և անորոշ են արձագանք տա-
լիս նրբասրահում:

Տը՛կ, տը՛կ, տը՛կ. ծեծում են դուռս:

Սա մատնների ծայրով է ծեծում, մտածում եմ ես, և անշուշտ կարող է
մի մոցիքով լինել, մի վաճառական կամ մի որևէ կօմմիւլոյաժօր:

Նորից ծեծում են. տը՛կ, տը՛կ, տը՛կ...

— Ո՞վ էք դուք և ի՞նչ էք կամենում, առանց տեղիցս շարժելու հարց-
նում եմ ես:

— Ներեցէք, դճւք էք Ռուսիայէն հոս եկած Պօղոս աղան:

— Բայց ձեզ ո՞վ ասաց թէ Ռուսիայից մի որևէ Պօղոս աղա է եկել:

— Մենք ձեզի տեսանք նաւամատոյցին վրայ և ձեզի առաջնորդող բեռ-
նակրէն իմացանք, որ Գատը-Գիւղն էք եկած և հոս իջևանած: Մարզար
աղան ալ հաստատեց:

Թրքական գաղտնի ոստիկաններ չէ՞ն ստքա, որ Սուլթան Համիդի կա-
ռավարութեան օրօք այնպէս շղթայել էին ամբողջ մայրաքաղաքը. — կասկա-
ծանքով և մի քիչ էլ վախեցած մտածեցի ես: Բայց ինձ հետ ի՞նչ կապ կա-
րող էին ունենալ սրանք, քանի՞ որ ես իմ բնակավայրից հեռացել եմ պատ-
շաճաւոր թոյլտուութեամբ և սեփական անցագրով:

— Բայց ասացէք խնդրեմ, ով էք դճւք և ի՞նչ էք կամենում:

— Նախ, ստոյգ պէտք է գիտենայինք, իրօք Պօղոս աղան դուք էք, և
ապա կուզէինք ձեզի հետ խօսիլ կարևոր խնդիրների մասին:

— Այո՛, Պօղոս աղան ես եմ, Ռուսիայից Պօլիս եկած, իջևանել եմ այս
հիւրանոցում, այս սենեակում, հիմա էլ տանն եմ գտնւում, ունեմ պատշա-
ճաւոր անցագիր, երկրից հեռացել եմ բաւական բարեյոյս կարծիքներով
իմ մասին և այստեղ՝ Պօլսում էլ չեմ կատարել ոչ մի յանցագործութիւն.
ըստ որում՝ կասկածելու և խուզարկութեան ենթարկւելու ոչ մի առիթ
տւած չեմ:

— Բայց ներեցէք, Պօղոս աղա, կրնաք միանգամայն հանգիստ ըլլալ և
ապահով Պօլսոյն մէջ, մանաւանդ Թուրքիոյ ներկայ սահմանադրական կար-
գերուն ատեն: Ես կուզէի ձեզի հետ տեսնւիլ և ստոյգ գիտնալ, արդե՞ք հոս
եկած չէք խմբագիր ըլլալու կամ մի որևէ ասանկ գործ սկսելու:

— Խմբագիր կամ «աղանկ գործ մը սկսելով»...

— Այն, Պօղոս աղա, վասն զի Ռուսիայէն ներկայումս սկսած զաղթը դէպի Պօլիս, բացառապէս խմբագիրներու հսկայական հոսանքն է: Ո՛վ, հոս կուգայ, անմիջապէս թերթ մը կհրատարակէ, և կամ աղանկ գործ մը կսկսէ: Անշուշտ, Պօղոս աղա, ձեր թերթն ազատական ուղղութիւն ունենալու է: Ո՛հ, որքան կսիրեմ սա սկզբունքները: Համայն թուրքիան յամակւած է արմատական գաղափարներով: Մեր փառամենտին մեծամասնութիւնն ազատական ուղղութիւն ունի և պետական ներքին ու արտաքին բոլոր խնդիրներն աղ ուղղութեամբ կվճուեն: Ապացոյցներու պէտքութիւն չկայ, վասն զի մեր վարած քաղաքականութիւնն այդ ուղղութեամբ, ականերև փաստեր բաւականին տւած է: Թուրքիայ ինքնահաճ կերպով զՊուլկարիա անկախ թագաւորութիւն հրատարակելէ ետքը, զՊոսնիա ու Հերցոկովինիա պատւական ընծայ մը ըրաւ Ֆրանց-Իօսիֆ կայսեր: Ադ աքթը կատարելէ ետք, երիտասարդ թուրքիոյ «Միութեան և Առաջադիմութեան» քօմիտէ շատ ամառսաց, որ աղ «փոքրիկ» նահանգները շարժական հարստութիւններ չեն եղած, որպէս զի արքունական սա ընծաներն ըստ տաճկական աւանդական սովորութեան՝ արաբական սև նժոյգներու վրայ բարձւէին ու անանկ նւիրաբերւէին, որ աւելի սրտագին ու պարտաւորեցուցիչ կլլար մեր դիւանագիտութեան քաղաքականութեան նկատմամբ:

Ադկէ զատ. Մակեդոնական ու Հայկական խնդիրներն իրենքզիրենք հալեցան թուրքիոյ սահմանադրական մեծ կաթսային մէջ: Արաբիայէն սկսած մինչև Սասունին բարձրաբերձ լեռներուն արձիւներ յայտարարւեցան ջերմագին «օսմանլիներ», միանգամայն մոռացութեան տալով անցեալի նեղսիրտ ազգայնականութիւնն ու ազգայնութիւնը:

Աս ազատական սկզբունքներուն հետ ի միասին, մեր առևտուրին ու հասարակական աշխատանքներու մինխտրութիւնն,— որ ընդհանրապէս և բացառապէս ժառանգութիւն մը տրւած է հայերուս,— կվարէ խիստ շահաւէտ և հանրօգուտ քաղաքականութեամբ:

Ա՛հ, ես կսիրեմ զնորատունկեան էֆէնդի, վասն զի անոր քաղաքականութիւնն անգնահատելի էր: Ան վճռած էր յարդել թուրքիոյ բոլոր լեռներ, ցամքեցնել բոլոր ճահիճներ ու նոյն իսկ Բզնունեաց ծով: Փափուկ հողերու վերածել ամեն առապար վայրեր, և բոլոր գործարանական ու երկաթուղիական ձեռնարկութիւններ յանձնելով օտար պետութիւններու շահագործութեան: Ադկէ կծագէր այն, որ օտար ազգութիւններ կաշխատէին ու մենք հանգիստ կնստէինք ու կուտէինք: Ասանկ պարագաներուն մէջ մեր երկիր կատարեալ դրախտ կլլար: Սակայն, թուրքիոյ փառամէնտը տակաւին ձեռնպահ կացուց զնորատունկեան էֆէնդի իր ծրագրներէն, թողնելով ապագային՝ դրախտական ձեռնարկութիւններ:

Մենք ունինք մեր սեփական ազգային սահմանադրութիւնն, երէցփոխանական ժողով՝ իր քաղաքական ու կրօնական բաժանմունքներով: Սա մէկ աքաղէմիա ու համալսարան մը պիտի հաշւել, տրամաբանական ու բեմբասացութեան գիտութիւններու նկատմամբ, ուր մեր ազգայինք՝ գիտնական

սլատրիարք Դուրեանին ձեռնէրեցութեամբ, կմարզին զիւանագիտական յարարութիւններու ու աւելի ևս՝ նահանջման քաղաքականութեան մէջ:

Սա երէցփոխաններուն ամենէն ընտիր յատկութիւնն անոր մէջ կը կայանայ, որ ասոնք մարզանքներ կը նշուեն ոչ թէ ներսէն, այլ և աներեւոյթ դաւադաններուն միջոցաւ նաև դուրսէն, որոնք միևնոյն ժամանակ նաև զիւանագիտական ուղեցոյց մը կհանդիսանան երէցփոխանական ժողովոյն: Ու փորձով գիտցուցաւ, որ ասոնց ամուր գանդերն Եւրոպական փառամէնտներուն մէջ՝ անգնահատելի դանձեր կրնան համարուիլ, որպէս ուժեղ ամբողջութիւններ զիմագրաւելու օդին մէջ սաւառնող աթոռներուն առջև:

Աս մաւսածային թէօրիսն Թուրքիոյ մէջ սրբագործած մեղրթմն է: Անիկայ սահմանադրութենէն առաջ, Համիդէական ըէթիմին օրօք, կզործագրէր ժողովուրդը մարզելու համար, իսկ սահմանադրութենէն ետքը—ազատական գաղափարներու:

Սա միջոցը թէև քանի մը խմբագրական գլուխներուն վրայ արդիւնաւոր հետևանքներ չունեցաւ, սակայն Բիւզանդ ֆէչեան՝ աւելի ևս կատաղի պահպանողական դարձուց, և հասարակ տարրերուն—բեռնակիրներէն սկսած մինչև ռամիկ գիւղացիք—ծայրահեղ ձախակողմեան մը կրտսեց:

Ու զարմանք չէ, որ ներկայիս հոս կտիրէ սոսկալի աժանութիւն:

Աժանութիւն երէցփոխանական աթոռներու, որոնց հասնելու համար պիտի քննուի հետևեալ առարկաներէն:

I Եթէ պահպանողական է, գիտէ՞ պարսաւել Դուրեան, իսկ եթէ ազատական՝ գովաբանել անոր:

II Գիտէ՞ ճառ խօսել բաց ու գոցին խնդրոյն մասին:

III Համիդին ըէթիմին անտեն գէթ քանի մը օր ձերբակալուած եղեր է:

Աժանութիւն ազատական գաղափարներու:

Աս վերջինիս համար շատ բան պէտք չէ, գիտնալու քանի մը Եւրոպական դարձածքներ: Սօփա շարժելու արևստ և պահպանողական երէցփոխաններու ետևէն քալել:

Աժանութիւն և մեծ թիւ խմբագրական գործի, որոնց թերթերը իրենց ուղղութիւնները պիտի արտայայտին հետևեալ կերպով:

Եթէ ազատական ուղղութեան կուզէ ըլլալ, առաջին իսկ երեսին մէջ յայտարարելու է իր բացական ըլլալն և պինդ մը հայհոյելէ ըզզիբականութիւն՝ գործ ածելու է հետևեալ բառեր. — «դաւաճան», «դաւադիր», «յետադիմական», «չէրիաթճի», «մատնիչ». իսկ եթէ պահպանողական, — պինդ պարսաւելով զԴուրեան, ազատականներու հասցէին ուղղելու է հետևեալ բառերը. «ամբոխավարներ», «ազատականներու» փոխարէն գործածել «արատականներ», «կործանիչներ», «ազգի ու եկեղեցւոյ թշնամիներ» և այլն:

Աս կանոններս ձեզի սորվեցնելէն ետքը, Պօղոս աղա, կրնամ ձեզի առաջարկել նաև ծառայութիւն մը, միայն ինձի գիտնալ պէտք է, արդեօք հրատարակելու էք օռկան մը, թէ ոչ:

Այս ամբողջ ճառի ժամանակ պէտք է գիտենալ, որ ես մերթ քնում և մերթ զարթնում էի, անդադար խուզարկու ուստիկանի անհաճոյ ներկայութիւն ըզգալով իմ դռան հտեում:

— Ձեր ծառայութիւնն այն կլինի, պատասխանում եմ նրան, որ թոյլ կտաք ինձ հանդիստ մնալու: Միթէ դուք չէք յոգնում այդքան խօսելուց:

— Է՛հ, Պօղոս աղա, սահմանադրութենէն ետքը, դարերու լուսութիւնը մեզի ներկայումս անշափս զէւզէկ դարձուցած է: Ոչ խօսելով կյազենաք և ոչ ալ գրելով:

— Այդպիսի պայմաններում մենք՝ ուսահայերս տակաւին անկարող կլինինք մրցել ձեզ հետ. թոյլ տէք փոքր ինչ ընտելացնելու մեր ուղեղները պօլսական բարքերին, իսկ այժմ ազատ թողէք ինձ:

— Ներեցէք Պօղոս աղա, եթէ թերթ հրատարակելու ըլլաք նէ, ես կըրնամ ձեզի մատակարարիլ թուղթերու ընտիր տեսակներ:

Սակայն ես այլ ևս անկարող լսել՝ քնում եմ, և յանկարծ նորից զարթնում եմ դռան թխկ-թխկացնելուց:

— Բայց պարոն. — բարկանում եմ ես նստելով մահճակալիս վրայ, որը անզգոյշ շարժելուցս գլորւում է ցած ու ես ընկնում եմ յատակի վրայ, — ինձ ոչ ձեր թուղթն է պէտք և ոչ ճառերը: Ես բնաւ միտք չունիմ թերթ հրատարակելու:

— Բայց ներեցէք «ընկեր», ես ձեզի թուղթ առաջարկելու ծառայութիւն չեմ ըրած. ես այս բօլէիս եկած եմ և կուզեմ տեսնել «ընկեր» Պօղոս Մէկունին: Ինձի ըսեցին որ անիկայ հոս իջևանած է:

— Այո՛, այո՛ պարոն, ես Պօղոս Մէկունիս դժբաղդութիւն ունեցայ Պօլիս գալու, ուր ինչպէս երևում է ձեր ազգայիններն եկեղեցիներից բացի, մարդկանց մասնաւոր բնակարաններն էլ բոնի կերպով ուզում են բանալ ու ներս խուժելով, ամեն մի ննջարան աուղիտօրիա դարձնել: Այդ ընդհանուր գրոհից իմ ննջարանս փրկելու համար, ընդունելով «ուղղափառ» գոցականութեան սկզբունքը, վճուել եմ չբանալ իմ դուռս ոչ մէկի առջև, այդ առթիւ խնդրում եմ ներել, որովհետև լուսկեաց ուսահայերս այնքան դիմացկուն գլուխներ չունինք, դիմադրելու ձեր շատախօսութիւններին: Բայց ո՞վ էք դուք և ի՞նչ կկամենայիք:

— Բայց միթէ «ընկեր» Մէկունի, այդչափ մոռացկոտ եղած էք և չէք ճանչնայ ինձի ձայնէս:

— Ձայնէ՞դ:

— Այո՛, ձայնէս, վասն զի ես Ռուսիա երկար ժամանակ բնակած եմ, շատ անգամ դասախօսութիւն ըրած սօցիալ-քաղաքական սկզբունքներու մասին. ես Եսալեմն եմ: Մենք զիր սր աղէկ կճանչնանք:

— Եսալեմ... չեմ յիշում:

— Այո՛, Եսալեմ. իսկական անունս Գարեգին Կօզիկեան: Ռուսիա եղածս ատեն Հայոց Բարեգործական Ընկերութեան Թիֆլիսի մասնաճիւղին գրադարանի նախկին ծառայ. — այժմ Պօլսոյ մէջ խմբագիր «Նոր-Հոսանք» թերթի: Ըսկզբում Հնչակեան, յետոյ հայ ընկերավար, ուսակավարական:

որի շարքերէն ուժեղ պայքար կմղէի Հնչակեանութեան դէմ: Այժմ հոս կը կին Հնչակեան եղած եմ, և պայքար կմղեմ հայ ընկերավար-նամկավարականներուն դէմ:

— Բայց այդ ի՞նչպէս պարոն, Կօզիկեան— Եսալեմ: Ի՞նչպէս էք կարողանում կատարել այդ թռիչքներն այդքան հսկայական տարածութեան մէջ:

— Մի՞թէ հասկնալու դժւարութիւն կայ այն հասարակ ճշմարտութեան վերաբերմամբ, զոր ամեն մի հեռաւորութիւն բարձրանալու կամ իջնելու համար կդիմեն սանդուղքներու օգնութեան: Նախ կանգնած ըլլալով միջագոյնի գաղափարներուն բարձրութեան վրայ, անկէ մէկ քայլ իջանք ագոյն ընկերավար-նամկավարական աստիճանը. անկէ ետքը առաջինիս աստիճանը ըլլալով Հնչակեան՝ աւելի ցած դուալիստական կուսակցութիւնը, իջանք հոն և եթէ ուզենանք, խիստ դիւրիւթեամբ անկէ կրնանք իջնել հայ դաշնակցական ագոյնի աստիճանին վրայ:

Եւ այսպէս մինչև կղերականութիւն: Անանկ դիւրին են այդ սանդուղքները՝ հոս Պօլսոյ մէջ, որ ամենքս ալ, ամեն օր կելլենք ու կիջնանք՝ սկզբունքային այդ սանդուղքներուն վրայօքը, միայն նայած, թէ ո՞ւր կը թելագրէ մեր շահը:

— Բայց «պարոն» Կօզիկեան...

— Ա՛հ, ներեցէք «ընկեր»...

— Ո՛չ, ներեցէք, ինչո՞ւ «ընկեր» և ոչ «պարոն»:

— Սակայն ես սաստիկ կարդողիմ սա պուրժուական «պարոն» տխուրսէն. անիկա ինձի կյիշեցնէ սեփականատէր էքսպլուատատորի մը, զոր փրճութար դասակարգին արիւնը կքամէ:

— Իսկ ես սաստիկ խուսափում եմ այդ «ընկեր» ասածդ ածականից, որովհետև ինքս աղքատ լինելով հանդերձ, դէմ չեմ փառաւոր հարստութիւն ունենալու ախորժակից:

— Ուրեմն երկու ծայրահեղ հակառակորդներ զիրարու դէմ:

— Այո, և այդ պատճառով հարկաւոր է խզել մեր յարաբերութիւնները:

— Ուլթիմաթում մը, զոր կրնայ թշնամական դէպքերու առիթ հանդիսանալ. սա պարագային մէջ դիմելու է հոս խիստ պրաքթիկ դարձած սովորական այն միջոցին, զոր յաճախ ազգը փրկած է երէցփոխանական կործանարար պառակտումներէն՝ մինչև յիղափոխական կուսակցութիւններու արիւնահեղ ընդհարումները. — պարզել՝ «սոյամանական հաշտութեան դրօշակ», որու մշակած պայմանները հետեւեալն են:—

Լարւած ու ջղայնացած կողմերը խմելու են հանդստացուցիչ կաթիլներ և քանիմը ամիս կբացակային միմիանցից, իրարու երես չտեսնելու համար:

Անախորժ դէպքերու առիթ չլլալու համար, ժամանակ մը համբերութիւն ունենալ, իրենց խօսքերը, դարձեալներն ու հայհոյանքները մեղմելու:

Միմիանց հանդիպելու ատեն, չջօշափել սկզբունքային խնդիրներ՝ և վար դնել սօփան ու զէնքերը:

Յանուն ագոյնի «միաբանութեան», ամեն մէկ կողմ թողնելու է իր քափրիզն և հաշտելու իր հակառակորդին հետ. միաժամանակ ամեն մէկն ալ մը

նալով իր կուսակցական դիրքին վրայ:

— Բայց մի տեղ, ուր Դաշնակցութիւն կայ և սօցիալիստ, կամ ուր գործում են հինգ կուսակցութիւններ, այնտեղ ի՞նչպէս կարելի է պահպանել ազգային «միաբանութիւն»:

— Խիստ պարզ կերպով. ահա ամենապարզ օրինակ մը: Ծապլվար գիւղը, զոր կրողկանայ 20 տուն հայերէ, հոն կգործեն հինգ կուսակցութիւններ: Տեղւոյն պուրժուազիայի ներկայացուցիչն է ըէս Սրքօն, զոր ունի երեք արտ, երկու կով, մէկ էշ և երկու այծ: Իսկ բանւոր դասակարգի ներկայացուցիչ՝ պայտար Մկօն, որ միաժամանակ և հրկաթագործն էլ է:

Ըէս Սրքօյին իշուն պայտն ինկած ըլլալով, սա քաւիթալիզմին ներկայացուցիչն ստիպւած կըլլա դիմելու վարպետ Մկօյին բազուկներու ըստեղծագործութեանը, — պայտել տալու իր էշը:

Ինթերնացիօնալ ընկերավար-նամկավարներն ուժեղ փրօփազանտ մը դելով և ոտքի հանելով զփոօլետար պայտար Մկօն, կհամոզէ ընդհանուր գործադուլ յայտարարել ըէս Սրքօյին իշուն դէմ: Ըէս Սրքօն կուզէ իր էշը տանել մերձակայ տաճիկ գիւղը պայտել տալու: Սակայն Դաշնակցութիւնը մէջ տեղ կուգայ, թէ՛ «հայ իշուն տաճիկ պայտելը դէմ է ազգային ինքնասիրութեան, պէտք է որ հայ վարպետ Մկօ պայտէ անոր»: Հոս Հնչակեանք առաջ կուգան օգնելու իրենց համաձրագրային սօցիալ-նամկավարներուն, իսկ հայ նամկավարներ բանակ դնելով անոնց դէմ, կյայտարարեն՝ թէ սանկ քաղաքական աքթեր պէտք է որ միայն իրենց ձեռքով կատարէ և ոչ այլ մէկի: Դրութիւնը սուր կերպարանք առնելով, քիչ կմնայ արիւնահեղ ընդհարում մը պայթէ, մինչև մէջ տեղ կուգայ տեղւոյն կղերական դասակարգին ներկայացուցիչ՝ տէր Սահակ քահանան իր հաշտեցուցիչ պաղատանքներով: Միջկուսակցական բօնկրէ մը կկազմէի, պայմանական դրօշակը կպարզէ, բոլոր կէտերը կնդուռին և որպէսզի ամեն մէկ կուսակցութիւնալ մնաց իր դասակարգային բաւարարութեան մէջ, կվճուի, որ ըէս Սրքօյի էշը թողնուլ առանց պայտելու: Այս ձևով ալ մենք ևս պարզելով հաշտութեան դրօշակ, ևս իմ կողմէս ձեզի կթողում ձեր պուրժուական հայեացքներու մէջ՝ կոչելով զձեզ Պօղոս «աղա», առանց դիպելու ձեր պահպանողական սկզբունքներուն, չեմ ստիպեր որ բացական ըլլաք և իմ առջև բանաք ձեր սենեակին դուռը. այլ սա դիրքէն տալով ձեզի բանի մը հարցեր, կխնդրէի բարի ըլլայիք պատասխանելու:

— Ուրախութեամբ, համեցէք:

— Ի՞նչ կնէ Բ. Իշխանեան և ռըր կգտնէ անիկա:

— Ճանապարհորդում է: Եւրոպական մտքէն գրագողութիւն անելով կովկասում, փախաւ Լայպցիկ: Ինչպէս լսում ենք, այնտեղ էլ Բիւխէրը դատ բանալով նրա դէմ իր՝ դիրքը կողոպտելու մէջ, — մեր հասկացողութեամբ քըրէական, իսկ իրենց՝ քաղաքացիական յանցանքի համար, այնտեղից էլ փախել է Փարիզ, իսկ Փարիզում էլ լսելով, որ կասեանը գնում է այնտեղ գիտական քաղաքատնտեսութեան դասեր կարդալու Ժօրէսին, սրա երեսը չտեսնելու համար՝ պատրաստուում է հեռանալ Հարաֆային Ա.Ֆրիկա:

—Ո՞ւր կգտնուէ այժմ բժ. Իսախանեան:

— Այս ուսմակավար-հայ-ընկերավարականը Բագուում հրաժարիմք ասելով Մարքս-էնգէլսեան գաղափարներին և այրելով «Կեանք»-ի ու «Չայն»-ի բոլոր համարները, մտածում է միայն բուրժուաների կեանքի համար:

— Ինչպէս են Յ. Իւզրաշեան և եղբայր նորին Ռօբէրդ:

— Սրանք նաև թի շատրւաններում այրելով Մարքս-էնգէլսեան խաչը, այժմ կեանքի բուրժուաններ են վայելում Չիթենեաց պարտիզի մէջ: Սըրանց հետևեց նաև Դ. Տ.-Դանիկլիան և այրեց իր գրւածքները:

— Իսկ ի՞նչ կարող էք ըսել Մ. Մանուչարեանէն:

— Սա գաղափարի սահմաններում երկար թափառելուց յետոյ, վերջը համոզուեցաւ, որ իր միջազգայնութիւնը չէ կարող շարունակել իր հրէայ կնոջ հետ, բաժանուեց նրանից և գնաց ծառայելու «Բագու» թերթի խմբագրատանը:

— Ի՞նչ նարիման և եղբայր նորին Ղազար:

— Սրանք գործով համոզուելով որ մարդս «ոչ կարէ ծառայել երկու տէրանց», հետևապէս և զգալով մամօնայի՝ Աստուծոյ դէմ գործած յանցանքը, գնացին մատուցանելու նրան իրենց զղջումը, և այժմ խունկ են ծխում բուրժուազիայի գահոյքին:

— Ծնորհակալութիւն, ձեր տւած տեղեկութիւններուն համար, սա սարգան ինձի աւելի եռանդ կնեւրչնչէ: Սանկ, ցտեսութիւն Պօղոս աղա, հանգիստ քնեցէք, յոգնած կլլաք, հետևեալ անգամին յուսանք, որ երեսնիդ կտեսնենք:

— Յուսանք: Բարի գիշեր, ասում եմ, և վառելով լամպարը, հաղիւ կանգնեցնում եմ մահճակալս ու նորից պառկում:

Մենեակիս խաղաղ լռութիւնը խանգարւում է մերթ ընդ մերթ չգիտեմ, ինչ որ խուլ որոտով, քրթքրթոցներով և դրսից յաճախ շների խրմբական հաջոցներով, որոնք գիշերային մթութեան մէջ յարձակւում են խաղաղ անցորդների վրայ:

Զգալով որ խիստ քաղցած եմ և թէյ խմելու պահանջ եմ զգում, վեր եմ կենում բանալու սենեակիս դուռը ծառային կանչելու համար:

Բայց մէկ էլ լսում է ինչ որ աղմուկ, ձայներ, և մէկն աշխատում է մօտենալ սենեակիս:

— Ինձի ըսած են որ հոս իջևանած է Ռուսիայէն եկած Պօղոս աղան:

— Ծիշդ է էֆէնդըմ, լսում է ծառայի ձայնը.— սակայն ըսի, թէ Պօղոս աղան երկար ճանապարհորդութիւնէ սաստիկ դաղրած ըլլալով, այցելուներ չէ ընդուներ:

— Սակայն իմ վերաբերմամբ անիկայ զիջող կլլայ, վասն զի գիտենալու է, որ մենք օտարներ չենք և երկուսիս համար ալ կարևոր նշանակութիւն ունի սա տեսակցութիւնը:

— Կրնաք ազոր համար վաղն ալ գալ:

— Վաղը չի կրնար ըլլալ, վասն զի անոր ժամանումը կարևոր նշանակութիւն ունի մեր մամուլին համար, և ես պիտի աշխատեմ կանխիկ ամենէն առաջ, նոյն իսկ վաղուան համարին մէջ զետեղել անոր Պօլիս ժամանումը:

—Անիկայ, ոչ թէ ձեզի պէս լրագրական խուզարկուներու, այլ և աւելի շատ կարևոր անձնաւորութեանց համար դուռը չի բանար:

—Սոսկալի գոցական մը եղած է:

—Յիրաւի սոսկալի գոցական մը, որուն յամառութիւնը միայն կրնայ խորտակիլ ազատականներուն բանակը:

—Սակայն, կսեմ ձեզի, որ անիկայ իմ վերաբերմամբ նոյնը չի կրնար ըլլալ, անիկայ գրականագէտին վսեմութիւնն ունենալու է՝ յարգել թղթակից մը:

—Ան ատեն, փորձեցէք, կրնայ ըլլալ, որ ձեզի ընդունէ, ասում է ծառան և հեռանում:

Անշուշտ, պօլսահայ մամուլի բեպրտէօրներից մէկը, մտածում եմ ես: Սակայն նման դէպքերում նրանց գրչի ծառայութիւնից վախեցած, որոշում եմ նորից գոցական մնալ:

Լսում է դռան ձայնը:

—Ո՞վ էք, ի՞նչ էք կամենում:

—Պօղոս էֆէնդին կուգեմ:

—Ո՞ր Պօղոս էֆէնդին:

—Պօղոս Մէկունի, ազգային մեծ գրականագէտ մը, որ Ռուսիայէն հոս ժամանած է:

—Սակայն, խնդրեմ ասացէք ինձ, ես սխալ չե՞մ արդեօք իմ արդէն համոզում դարձրած մի գաղափարիս մէջ:

—Ո՞րն է անիկայ, խնդրեմ:

—Այն, որ ձեզնում օգն անգամ, կախարդական զօրութիւն ունի խուզարկու ոստիկանի դեր կատարելու: Հակառակ դէպքում, ինչո՞վ կարելի է բացադրել այն, որ իմ Պօլիս մտնելուցս յետոյ, մի ժամ չանցած՝ արդէն ամենքը գիտեն:

—Զարմանալու ոչինչ չկայ: Հոս՝ Պօլսոյն մէջ ամեն մի հայ կատարեալ կախարդմն է այդ արեւստին մէջ. վասն զի Համիդին ըէթիմէն մեզի այդ գիտութիւնն միայն աւանդ մնացած է: Երբ անիկայ իր լրտեսներու լէգէօններով մեզի կհալածէր, մենք ալ հմտութիւն ձեռք բերած էինք փախչելու: Իսկ փախուստն աւելի խորամանկութիւն է քան հետապնդելը,—հետևապէս և մենք այդ բանին մէջ խորամանկ կարող ենք ըլլալ, քան տաճիկ խուզարկու լրտեսը:

—Բայց ներեցէք, կարծեմ թէ պատիւ ունիմ խօսելու իրեն՝ Պօղոս էֆէնդիին հետ:

—«Ես ալ կարծեմ», որովհետև Պօլիս գալուց յետոյ ես՝ ինքս ինձ չեմ ճանաչում:

—Անշուշտ, աղանկ ալ ըլլալու է: Վասն զի Համիդին ըէթիմին եաքը մենք ալ մեզի չենք ճանչնար, ու սահմանադրութիւն յայտարարելէ ետքը ստիպւած ենք զիրար ճանչնալու համար ընել հետեւեալ հարցումները:

—Ըսէք ինձի, կաղաչեմ, ո՞ւր կապրինք մենք. Բարձր, Լօնդրոն, Զւիցերիա, թէ ուրիշ նոր աշխարհը:

—Ոչ այս և ոչ այն, այլ Պօլսոյն մէջ, միայն ցորեկը փոխւած է երազի, իսկ երազը՝ ցորեկի:

—Սա պօլսահայն երկնքէն իջած է, որ սանկ «Եաշասըն Հուրիէթ» կաղաղակէ:

—Ինչո՞ւ երկնքէն, օր մը առաջ անոնք Համիդին համար ալ կերգէին, «Փատիշահըմ, չօք եաշա»:

—Ո՞վ պիտի ըլլա սա խմբագիրը, զոր արդի քաղաքականութիւնն ու Եւրոպիոյ բոլոր սահմանադրութիւններ փոթեատ կնէ:

—Համիդին ատենօք փինէջի մը, զոր կօշիկներ կկարկատէր Ղալաթիոյ կամուրջին քովերը:

—Սա Հուրիէթին թերութիւններ խարաղանոց թունդ ազատականը ո՞վ ըլլալու է:

—Փօլիսաջիին սանահայրը, որու խորհուրդները կարևոր տեղ կրննէին Համիդին ըէթիմին էջերը լրացնելու:

—Ըսեցէք խնդրեմ, ո՞վ է սա ազգային երէցփոխանը, զոր Դուրեանին դիւանագիտական հակասութիւնները կբանադադէ:

—Ան ատենօք, Օրմանեան պատրիարքին պնակալէզը եղած է:

—Զարմանալի Քրիստոնիա մը, զոր կեանքն անգամ կուզէ դնել եկեղեցիները գոց պահելուն խնդրոյն համար:

—Ատենօք նոյն եռանդով մահմեդականութիւնը պաշտպանած է:

—Ո՞վ է սա ներբողը, զոր քիած ատենն ալ կպօռայ «կեցցէ սահմանադրութիւնը»:

—Ատենօք Համիդին ձեռքերը իր շրթունքներով թրջող մը: Վերջապէս, ո՞վ ըլլալու է սա Դաշնակցական ՚հերոսը, զոր սօփա կբանեցնէ երէցփոխաններուն գլխուն վրայ:

—Համիդին ատենօք կին մը... Անանկ որ, եթէ Պօլիսը ծայրէ իծայր դիտելու ըլլաք նէ, ներկայիս մէջ բնաւ չպիտի ճանչնաք ոչ ոք: Եւ զարմանալու ալ ոչինչ չկայ, որ դուք ալ Պօլիս գալէն ետքը՝ ձեզի չճանչնաք: Սակայն մեծարգոյ էֆէնդի, պատիւ ըրէք սա դուռը բանալ, վասն զի անանկ աւելի դիւրին կլլայ մեզի ազատ խօսիլ միմիանց հետ:

—Սահմանադրութիւնից յետոյ, փորձը ցոյց է տուել որ խօսելու դիւրութիւն այստեղ տալը միանգամայն պատուհաս է, դրա համար էլ գոցականութեան խնդիրը անխուսափելիօրէն ասպարէզ է եկել, որպէս ամենաուժեղ ինքնապաշտպանութիւնն այդ խօսելախտի դէմ:

Ներեցէք, որ ես էլ այժմ ակամայից ձեռք առնելով ինքնապաշտպանութեան այս միջոցը, — գոցականի յամառութեամբ պաշտպանւում եմ փակ դռան ետևում: Իսկ եթէ դուք էլ խիստ հեռու կգնաք ձեր ազատական ըսկզբունքի մէջ և կացինով դուռը ջարդելու քաղաքական անհրաժեշտութիւնը կզգաք, այն ժամանակ առանց Դուրեանի կամքը հարցնելու, ես ուստիկաններ կհրաւիրեմ:

—Ներեցէք, Պօղոս էֆէնդի, մեր ազգային պատւին ու քաղաքակրթութեան ինքնասիրութեանը միանգամայն դէմ ըլլալով ուստիկանութեան

միջամտութիւնը, աւելի աղէկ կլլար հաշտութեամբ լուծել սա խնդիրը...

— Անշուշտ, համաձայն եմ ձեզ հետ, այդ պատճառով խօսեցէք որքան կուզէք և ազատ թողէք ինձ սենեակիս մէջ, այսպէս էլ մենք կարող ենք ազատ կերպով միմիանց հասկանալ:

— Բայց ես կուզէի անձամբ ձեզի հետ տեսնել և ծանօթանալու բաղդը ունենալ:

— Ես Պօլսի մէջ անձամբ տեսած կամ չտեսած միևնոյնն եմ համարում, որովհետև սահմանադրութիւնից յետոյ, ամեն ինչ այստեղ կեղծ է: Ինչքանքէ անձամբ էլ տեսնէք ինձ, այնուամենայնիւ իրականութիւնը հասկանալու համար՝ պէտք է դիմէք սովորական հարց ու պատասխաններին:

— Բայց մի՞թէ կասկած կայ, որ դուք Պօղոս էֆէնդին էք:

— Եւ ո՞չ մի կասկած: Այստեղ՝ Պօղոս աղա կամ Պօղոս էֆէնդի, իսկ Ռուսիայում մի հասարակ Պօղոս:

— Ինչքան անւանի գրականագէտ Պօղոս Մէկունին չէք:

— Անշուշտ, միայն Պօլսի մէջ, իսկ այնտեղ մի անյայտ թղթակից՝ Պօղոս Մէկունի:

— Տաղանդաւոր վիպասան մը:

— Անշուշտ այստեղ, իր չգրած և չունեցած ոչ մի աշխատութիւնով:

— Սանկ, հանճարեղ գեղարւեստագէտ մը:

— Պօլսի մէջ, աւելի ևս սահմանադրութիւնից յետոյ:

— Կարևորագոյն ազգային դէմք մը:

— Անշուշտ, սակայն և ոչ մի ապացոյցով:

— Իրօք, հասարակական մեծութիւն մը:

— Պօլսական տեսակէտով:

— Որուն այցելելու պատիւն ունինք հոս՝ պօլսական ազգայիններս:

— Պօլսական դիպլոմով, ներեցէք և պօլսահայի ճանաչողութեամբ: Բայց, թոյլ տւէք խնդրեմ— ծանօթանալ ձեզ ևս. ո՞ւմ հետ պատիւ ունիմ խօսելու:

— Պօլսահայ մամուլին ականաւոր աշխատակիցներէն մէկու:

— Անշուշտ, պօլսական տեսակէտով:

— Յայտնի՝ իր գեղարւեստական գործերով:

— Անշուշտ, իրականութեանն աւելի մօտիկ լինելու համար՝ հետեւեալ մեկնարանութեամբ, — յայտնի նկարագրող՝ կնուէրի և հարսանեաց հանդէսների:

— Պերճախօս ներբողող մը:

— Որ գիտէ անմահների ու անզուգական կորուստների շարքը դասել մի որևէ հարուստ, բայց աննշան մեռել:

— Ամենէն տարածւած և առաջնակարգ օտկաններէն մէկու ոգին, աջ թիկունքը:

— Հօնօրար չվճարող խմբագրի շողմութիւն իր հասարակ լրատւին:

— Ու եթէ թերթ մը հրատարակելու ըլլաք հոս, ես իմ բոլոր ֆիզիքական ու եւրոպական մտքին իմաստով հասկցւած ազատ գաղափարներովս կրնամ ձեզի աշխատակցիլ:

—Սակայն կարող է պատահել, որ իմ ծայրահեղ ձախակողմեան գաղափարներս համապատասխան չլինեն ձերինն հետ:

—Էֆէնդըմ, ես ձեզի կհետևեմ ամեն տեղ, ուր որ երթալու ըլլաք՝ գաղափարներու շաւիղներուն մէջ: Գիտնալու է սակայն, որ սահմանադրութենէն ետքը մենք խորապէս ըմբռնած ենք բոլոր քաղաքական կուսակցութիւններու սկզբունքային փլաթֆօրման, ընդ նմին և սորւած, ամեն առիթը ներկայանալու ատեն յայտարարել զմեզ ամեն գաղափարի տէր, որու կամենանք: Եթէ չուզենք ինթերնացիօնալ-ոսմկաժար յայտարարել, կ'յայտարարենք զմեզ ազգութիւնը չճանչցող քօսմօսիտիթ մը, առիթը ներկայանալուն պէս, կրնամ ասպարէզ նետել որպէս թունդ կղերականութեան կաստային ներկայացուցիչ մը: Անկէ ետքն, որպէս Հնչակեան մը, կրնամ պայքար մղել Դաշնակցութեան դէմ և ընդհակառակը: Հոս մեր մամուլը ունի զարմանալի յատկութիւն մը. անիկայ յոյժ ճկուն է ազգն ու սահմանադրութիւնը պաշտպանելուն համար. այսօր կկուէ այս դիրքին վրայ, վաղը՝ այն:

—Բայց ես բնաւ միտք չունեմ խմբագիր լինելու:

—Կզարմանամ. բնութեան օրէնքին դէմ գացած պիտի ըլլաք, երբ կարգալ գիտէք և խմբագիր ըլլալու ձգտում չէք արտայայտեր: Իրօք, զարմանալի է Պօղոս Էֆէնդի:

—Ես այստեղ բնութեան օրէնքին դէմ ոչ մի անբնականութիւն չեմ գտնում:

—Կրնայ ըլլալ, որ Ռուսիոյ հայերուն մէջ իսպառ կրացակայէ այդ առանձնայատկութիւնն: Հոս բնաւ այդպէս չէ, մանաւանդ սահմանադրութիւն յայտարարելէ ետքը: Ես չեմ կրնայ ըմբռնել այն հասկացողութիւնը, զոր մարդս երբ բարկանալու, յուզելու, յուսահատուելու կամ խնդալու ու ծիծաղելու բնական օրէնքին մղումներն ունի և չի ձգտիր խմբագիր ըլլալ. իսկ երբ Պօլսոյ մէջ կապրիք, ադ ինքզինք անխուսափելի կ'լլայ:

—Սակայն ինչ տարբերութիւն:

—Հոս մեծ տարբերութիւն, քաղաքական սա պարագաներուն մէջ, երբ ազգային ջոջի մը աթոռին ձգտելու տենչ կզգաս, կարելի չէ որ խմբագիր չլլաս. մանաւանդ, երբ ատոր համար աժանագին միջոցներ կան: Երբ ամենքը քաղաքագէտ կհռչակելն ու Վիքթօր-Հիւկօյին հանձարը կ'յորջորջին, կարելի չէ որ քեզի վրայ չխօսեցնիս անոնց: Երբ մէկը քեզի կհայհոյէ, կարելի չէ, որ թերթ մը չհրատարակիս:

—Իսկ այդ դէպքում ո՞վքեր պիտի կարգան թերթը:

—Միթէ հոս անգրագէտ հասարակութիւն քիչ կայ: Բաժանորդներ ճարելուն համար Ֆիզիքական ու բարոյական միջոցները չեն պակսեր: Բաւականէ, ջոջի մը մկրտութեան, հարսանեաց, մահւան և այլ պատշաճաւոր դէպքերու ու հանդէսներու գովքը նկարագրես: Իսկ Պօլսոյ մէջ սանկ բաժանորդագրութեան դէպքեր ամեն օր, ամեն ժամ կայ: Սա ծանրութիւնը եթէ ինձի ձգէք նէ, յաջողութիւնը միանգամայն ապահովւած կրնանք համարել: Պօլիսը մեզի աղէկ կճանչնայ, իսկ մենք աւելի աղէկ՝ Պօլիսը: Սանկ, ցտեսութիւն Պօղոս Էֆէնդի, կշտապիմ, վասն զի սա կարևոր տեսակցու-

Թիւնը մեր թերթին համար արժէքաւոր նորութիւն մը ըլլալով՝ կշտապիւմ վաղւան համարին համար հաղորդել:

—Շտապեցէք, շտապեցէք խնդրեմ, ցտեսութիւն:

Թղթակցի հեռանալուց յետոյ, ես դուռը բաց արի արդէն գեշերւայ ժամը 10-ն էր:

Քիչ անցած ներս է մտնում Մարգար աղան, իր հետ ունենալով երկու անձանօթներ:

—Բարե Պօղոս աղա, քունիւրնիդ անուշ, անուշ քնեցի՞ք:

—Բնաւ քուն չհկաւ աչքերիս, Մարգար աղա:

—Ի՞նչ կնէիք հապա:

—Արթուն աչօք սահմանադրութեանն էի հսկում և բաց ու գոցի խընդրի մասին մտածում:

—Անշուշտ, անշուշտ Պօղոս աղա, սա խնդիրը ծանրակշիռ հարցմն է, ամենքս ալ ազոր մասին խորհելու պարտաւորեա՞ծ ենք:—Եւ ապա ներկայացնելով իր ընկերներին—խնդրեմ ծանօթացէք, Պօղոս աղա,—ասում է նա, մեր Գաւոր-Գիւղին յայտնի թաղականներէն են, լսելով ձեր բարի գալուստը, աճապարած են ձեզի այցելութիւն ընել:

—Անշուշտ մեծ պատիւ մը ըրած էք Պօղոս աղա, մեր թաղը իջևանելով, յուսամք, որ հոս ամեն ազգային ու հասարական խնդիր ազուր վիճակի մը մէջ կգտնէք, ճառեց նրանցից մէկը:

—Իսկ եթէ թերութիւններ ալ նկատէ, Պօղոս աղան, ներողամիտ կլլայ, վասն զի սա բաց ու գոցին խնդիրը նւաճած է մեզի ամբողջովին և ուրիշ հարցերու մասին խորհելու ժամանակ չի տար:

Ծառան ներս է մտնում:

—Ծօ, մանչ, հոս ընթրիք բեր: Պօղոս աղան, համեղ քօնեաք ունինք, մասթիկայ, բօմ, ափսէնթ: Ծանապարհի դադրածութենէն ետք՝ աղէկ կուգայ ձեզի:

—Պօղոս աղային հարցնելու չէ, պատւիրէ թող բերէ, ասում է մէկը և նստում սեղանի առաջ:

—Անշուշտ, ափսէնթ մը ձգել վատ չի ըլլար: Աւելացնում է միւսը և նստում:

—Պօղոս աղան ջերմեռանդ գոցականմն է, ասում է Մարգար աղան և դառնալով ծառային—ծօ, մանչ, քալէ բեր, ինչ որ պատրաստի կլլայ: Արժէ աղէկ մը խորհիլ սա բաց ու գոցին խիստ կարևոր խնդրոյն մասին:

—Անշուշտ: Քիչ մը առաջ Մարկոս աղային քովն էինք: Պատրիարքարանին մէջ տեղի ունեցող հակասահմանադրական գործունէութիւնք բաւական քննադատեցինք.—նարտ ձգելով: Քաղաքական սա աննպաստ հանգամանքներուն ատեն, մեր ազգային ներքին կեանքը երկպառակութեանց ու արիւնային ընդհարումներու դրդապատճառ ամբոխավարներուն...

—Աղէկ մը բզկտելու է սա հաւը, Ստեփան աղա.—ընդհատում է նրան Մարգար աղան, առջևը դնելով մի ամբողջ տապակած հաւ:

Սեղանը զարդարում է զանազան ուտելեղէններով: Մարգար աղան

կրկին պահանջում է նորանոր բաներ, անընդահատ իմ հասցէին շոայլելով հիւրասիրական կօմպլիմէնտներ:

— Է՛հ, Մարգար աղա, որքան ալ սա խնդրոյն նկատմամբ կփնտռեմ կարևորագոյն դարման մը, սակայն չեմ կրնար գտնել:

— Գաւաթ մը ամսէնթ ընդունեցէք, Սամսոն աղա, առաջարկում է նրբան լցնելով մի բաժակ թանձր ու կանաչագոյն խմիչք:

Եւ մենք սկսում ենք խորհել բաց ու գոցի խնդրի մասին: Բայց աներկբայ եմ, որ այս անգամ հարցը թէօրիայից անցնելով գործնականի, պէտք է շօշափէ մինչև գրպանիս խորքերը: Գոնէ այս է խոստանում Մարգար աղայի հրամայած և իմ հաշուից վճարուելիք այս ընթրիքի խորհրդածութեանց վերջնական բէզօլիւցիան:

Սակայն այս դէպքում ես, օսմանեան սահմանադրութեանը և գրպանիս շահերին դէմ «գացած չլլալուս» համար, պէտք է որ շարունակեմ լինել դարձեալ ուղղափառ «գոցական»:

III

Միւս օրը երեկոյեան ժամի 4-ին վճռեցի տալ իմ առաջին այցելութիւնը Պօլսի հայկական մտքի բարձունքներից մէկին՝ Բիւզանդ-Քէչեանին:

Ասել է՝ պաշարողական դրութիւնից անցնելով յարձակողականի, պէտք է դուրս գայի իմ փակուած սենեակից:

— Պօղոս աղա, սափրիչ մը կանչելու է, ասում է ծառան, նկատելով իմ պատրաստութիւններս այցելութիւնների համար:

— Ի՞նչ կարիք կայ որ, հարցնում եմ զարմացած:

— Վասն զի սա չածիլուած դէմքով մը չի կրնար ըլլալ, որ Պօլսոյ մէջ ելնէք, որ կյիշեցնէք Սուլթան Համիդին օրերը: Սահմանադրութենէ ետքը ազանկ մօրուքները խիստ արհամարելի են և նոյնիսկ Ժէօն-Թուրքիքը քեզի մատնանիշ կրնեն:

— Բացադրեցէք խնդրեմ, ասում եմ ես կանգնելով հայելու առաջ:

— Համիդին ատենօք, մարդիկ կպաշտպանուէին տափակ մօրուքներուն ետև, իսկ սրածայր մօրուքներուն մէջ կհամարուէին թաղնուած յեղափոխական, ամբողջ գաղտնիք մը: Սանկ սրածայր մօրուքներ հոս այժմ սահմանադրութեան մէկ կարևէր ցուցանշանն են և ազատական գաղափարներուն արտայայտիչը: — Իսկ եթէ կուզէք Օսմանեան երէցփ. ժողովին անդամներուն նմանելի, պէտք է որ բոլորովին ածելէք:

Հայելու մէջ դիմացս կանգնած է մարդկային տարօրինակ մի պատճէնն. գլխի սև մազերով, ծնօտի շէկ պէխ ու մօրուքով, սաստիկ կարճահասակ, որի լայնքը մրցում է բարձրութեան հետ, գերմանական քիթ և անդոյն աչքեր:

Հաւատացած եմ, որ եթէ սա, ճիշտ լինի որպէս հարազատ պատճէնն իմ արտաքինի, աւելի շուտ հրէայ ոսկերչի կամ մի գինեպանի տպաւորութիւն պէտք է թողնէի, քան թէ մի գրականագէտի:

Մասան նորից ներս է մտնում:

— Պօղոս աղա, սա լրագիրը ձեզի դրկեա՞ծ է:

Պօլսահայ թերթերից մէկը: Բաց եմ անում և առաջին իսկ հայեացքից աչքիս է զարնւում հետևեալ խոշորատառ վերնագիրը տողերը:

«Կովկասահայ մեծ գրականագէտ ազգայինի մը այցելութիւն ի Պօլիս»:

«Երէկ ամսոյս 10-ին, երեկոյեան ժամը 5-ին, 10 րօպէին և 10 վայր-

«կեանին Պօլիս ժամանած է և Գատը-Գիւղին առաջնակարգ հիւրա-

«նոցներէն մէկը իջևանած, կովկասահայ մեծ գրականագէտ և հրատա-

«րակախօս՝ Պօղոս Մէկունի: Մենք բազմ ունեցանք իր ժամանակին

«ներկայանալ իրեն, որ խիստ սիրալիր ընդունեց իւր բնակարանին

«մէջ և երկար զրուցեցաւ ազգային խնդիրներու վերաբերմամբ, յայտ-

«նելով վերին աստիճանի լուրջ և շահեկան կարծիքներ արդի թուր-

«քիոյ քաղաքականութեան և մեր ազգային ներքին կեանքը տագնա-

«պող խնդիրներու մասին: Մեծարգոյ Պօղոս Մէկունին, կովկասահայ

«էն խոշոր դէմքերէն է, զոր օժտւած ըլլալով բարձրագոյն կրթու-

«թեամբ, կատարեալ հանճար մը կհանդիսանայ հայ արդի գրականու-

«թեան մէջ, բայց ցաւ ի սիրտ, պիտի ըսած, որ անոր զրչին և ոչ

«մէկ արդիւնքը հոս ստացւած չէ: Պօղոս Մէկունի իր ժամանակին

«մօտիկ մտերմութեան մէջ եղած է Ռուս մեծ հանճարին՝ Լև Թօլսթօյին

«հետ, յաճախ մէկ տեղ ժամանակ անցրած, նարտ կամ սքամպիլ խա-

«ղալով:

«Սանկ բարձրահասակ, պարթև դէմքը, ածուխի նման սև մօրուքով,

«խոշոր, կրակին պէս փայլող աչքերով ու հայկական արծւանիշ քիթով:

«Վէս և թափանցող հայեացքը, ինձի նետած ատեն, ես կզգայի իրօք

«խոշոր մեծութեան մը ներքև, անհամեմատ չափով բարձր որպէս

«մարդկային առանձնայատկութիւն մը:

«Մեծ գրականագէտը սանկ ցանկութիւնմ ալ արտայայտեց, թէ մը-

«տադիր է Պօլսոյն մէջ լրագիր մը հրատարակել, որու նպատակը պի-

«տի ըլլայ, պօլսահայը հաղորդակից ընել Եւրոպական արդի քաղաքա-

«կրթութեան ու մտքին հետ»:

Կարդալով այդ յօդւածը, ես ֆնացի միանգամայն ապշած դրութեան

մէջ:

Ահա քեզ կեղծիք, պօլսական ընկերութեան երևակայ-կան գրական

մարդու մի տիպ, որ բնաւ ինձ չի վերաբերում և գրամագծօրէն հակասում

է հայելու մէջ դիմաց կանգնած իմ պատկերիս:

Թերևս հայելին է կեղծում, սակայն կասկածելի չէ, որ պօլսական

ժողովրդատները աւելի քան ճշգրիտ հայելիներ հանդիսանային որևէ ճշ-

մարտութեան մէջ, մանաւանդ, որ ես Ռուսիայումն էլ քանիցս նայել եմ

հայելիի մէջ, և բնաւ ինձ վրայ չեմ տեսել մի այդպիսի «արծւանիշ քիթ»,

խոշոր, կրակի պէս «փայլուն աչքեր», «ածուխի պէս սև մօրուք», բարձրահա-

սակ, «պարթև կազմւածք» և այլն:

Այժմ հարց է առաջ գալիս, այս յօդւածը կարդալուց յետոյ, ինչպէս

կնդուենն ինձ. ո՞րն է սրանցից իսկականը. — Ինքս Պօղոս Մէկուենին, թէ՞ լրագրում Պօլսի թղթակցի ստեղծածը:

Այնուամենայնիւ թողնելով բազմի բերմունքին, թէ ինչպէս կյարդի այս խեղաթիւրումը, վերցնում եմ այցեւածներս ու դուրս գալով հիւրանոցից, ուղևորում եմ դէպի Ստամպօլ, Սուլթան, Համամ, Մօլլա Թաշը, ուր գտնւում է «Բիւզանդիօն»-ի խմբագրութիւնը:

Գատը-Գիւղից անցնելով դէպի ծով, վերցնում եմ կամուրջի դէմ կանգնած «Շիրքէթի-Կէմիսի» նաւակներից մէկի տօմսակը և մի քանի բօպէներից յետոյ, արդէն Ստամպօլի կամուրջի վրայ ենք, իսկ յետոյ Սուլթան Համամի խմբագրատան դիմաց:

— Այստե՞ղ է պարոն Բիւզանդ-Քէչեանը, հարցնում եմ դուանը կանգնած ծառային:

— Հոս է էֆէնդըմ:

— Տարէք այս այցեւածսը իրեն և յայտնեցէք որ ձեզի հետ ուղում է տեսակցել այս մարդը:

Քիչ յետոյ ծառան աճապարանքով մօտ վազեց և հրաւիրեց ինձ խմբագրական ընդունարանը:

Բիւզանդ-Քէչեանը պօլսական սիրալիրութեամբ վազեց մինչև դրոսն մօտ, սակայն ինձ տեսնելուն պէս, քիչ շփոթւած ու զարմացած մի քայլ յետ գնաց ու նորից առաջ գալով, սեղմեց իմ ձեռքս և տարաւ մինչև բաղկաթողը:

— Գալուստներդ բարի, պարոն Մէկուենի. ի՞նչպէս էք, աղէկ էք, հանգիստ եկա՞ք, ճանապարհնիդ ձանձրոյթ չզգացի՞ք, ի՞նչ ունիք մեզի ըսելու Ռուսիայէն. հոն մեր ազգայինք ի՞նչպէս են, աղէկ են, պ. Քալանթար, Համբարձում Առաքելեան, «Մշակին» աշխատակիցներ, աղէկ են: Սակայն պարոն Մէկուենի, ես ձեզի բոլորովին այլ կերպ կսպասէի տեսնել, դուք անչէք, ինչ որ այսօրեան թերթին մէջ գրւած Պօղոս Մէկուենին է:

— Պօլսի մէջ ոչ մի բան իւր բնական դրութեան մէջ չէ և չի ճանաչւում:

— Անշուշտ, սահմանադրութենէն ետքը, երբ ազատական գաղափարները սօփաշիներու կվերածւին մեր ինթելիգենցիայի կողմից:

— Իսկ մամուլի կողմից Ռուսահայ կարճահասակ Պօղոս Մէկուենին Պօլսում միանգամայն պարթևահասակ ու բոլորովին մի այլ երևակայական տիպի:

— Այո՛, սահմանադրութենէն ետքը, ազատական օրէնքներուն սահմանին մէջ, բազմ ունեցանք վայելել գանահարութիւն մը, որ բնաւ կերած չէի Համիդին օրօք: Սակայն, ըսէք ինձի պարոն Մէկուենի, մեր ո՞ր մեղքերուն համար զրկեցիք սա սօփաշիները մեզի, դ՞ուք, որ այնքան բարոյական ու նիւթական միջոցներ զոհեցիք մեր բարօր վիճակին համար: Ինչո՞ւ հոն, հապա առաջ չեկաւ սա չարաբաղդ «բաց ու գոց»-ին մղձաւանջը, որ մեր ազգայիններքին կեանքը կաղմկէ. ի՞նչպէս, կամ ի՞նչ միջոցներով անոնց դէմ պայքարեցիք, ցոյց տւէք մեզ միջոց մը:

— Դուք, պարոն Բիւզանդ, մոռանում էք, որ մեզ մօտ է ապրում մտքի

տիտանը — «Արամազդը», նա որ Ուրմալիոսի գագաթից շանթեր կարող է թափել նրանց գլխին:

— Բայց ո՞վ պիտի ըլլայ սա «Արամազդ» ըսածդ, չի՞ կրնայ ըլլալ որ անոր տեղափոխէինք հոս — Պօլիս, հանելու սա ամբոխավարներուն դէմ:

— Կարելի է, սակայն այդ բանի համար պէտք է յարուցանել նրա վրդովմունքը, հակառակ դէպքում նա իր տեղից չի բարձրանայ և դուք ոչինչ չէք շահիլ:

— Ի՞նչ ընելու է անոր զայրոյթը շարժելուն համար, գուցէ պէտք կ'ըլլայ յօդաձեռք մը գրել իր դէմ:

— Ոչ, աւելի խստագոյնը:

— Քանի մը Սօբաջինե՞ր ղրկել իր հտնէն:

— Ո՛չ, աւելի խստագոյնը:

— Ազատականներուն գործելակերպը, թաքթիքան ղրկել անոր...

— Այդ ևս չի օգնիլ, աւելի խստագոյնը:

— Գուցէ նորէն Դուրեանը հրաւիրել պատրիարքական աթո՞ռ:

— Այդ ևս չի օգնիլ:

— Ըսել է թէ սա Արամազդ ըսածդ բնաւ սրդողելու արիւն չունի՞, հապա ինչ ընելու է անոր ոտքի հանելու համար:

— Բարձրացնել նորից մի տեսչական խնդիր նրա դէմ և նա սարսափելի փոթորիկ կբարձրացնէ... դա ինքն է Լ. Սարգսեանը:

— Ա՛... կյիշեմ, կյիշեմ, սակայն այլևս անկարելի է, վասն զի անիկա ներկայիս պետական հիմնարկութեան մը մէջ ապաւինած է և հակառակորդներուն անմատչելի, ուրիշ ի՞նչ հնար կրնաք առաջարկիլ:

— Նրա համար այլևս ուրիշ ոչինչ, սակայն այդ դէպքում այստեղ փոխադրել կարելի է նրա ամենաընդունակ կօլլեգաներից մէկին...

— Դիւրին բարկցողմն է:

— Առանց բարկանալու էլ նա կուարարի մէկն է, և այստեղ փոխադրելուն պէս, ազգային բոլոր հակ ու ներհակ տարրերին մի յօդաձեռով լարելով իր դէմ, ամենքը կսկսեն զբաղուել նրանով և ժողովուրդն ու եկեղեցին իսպառ ազատ կթողնեն. դա ինքը Համբարձում Առաքելեանն է:

— Ա՛, կճանչնամ, զՀամբարձում... հոս Եւրոպա եղած ատենն ալ զըրական գաղութներն իրարու կզարնէր, իսկ սլարոն Նազարբէգին հետ ընդհարելով փախաւ ի Կովկաս և այնտեղէն կուրակոծէր իր հակառակորդին ընտանեկան տարածայնութիւնները...

Այդ ժամանակ ներս է մտնում մի երիտասարդ, խիստ մուսյլ և մըտախոհ դէմքով, ձեռքերը դրած վերարկի գրպանը, առանց բարեւելու անցնում է միւս կողմը և նստում աթոռի վրայ:

Ես սկսում եմ կասկածել, մի գուցէ նա զրպանում զէնք թագցրած ունի և սպանում է յարձակել մէկն ու մէկիս վրայ: Ինչե՞ր չի կարելի սպասել Թիւրքիոյ ներկայ սահմանադրութեան ժամանակ...

Բիւզանդ Քէչեանը ոչ պակաս կասկածանքով նայում է նորեկի կողմը և շարունակում է:

—Բայց Հ. Առաքելեանը հոս տեղափոխելու համար ի՞նչ միջոց կառաջարկէք:

—Կազմեցէք այստեղ միջազգային խաղաղութեան մի կօնգրէս, կամ ընտրեցէք որևէ ժողովի կամ մասնաժողովի նախագահ և կամ նոյնիսկ քարտուղար, այդ ժամանակ նա նոյնիսկ հեռագրով կտեղափոխուի այստեղ:

—Հըմ... երկուսն ալ ծանրակշիռ խնդիրներ են: Հոս բնաւ խաղաղասիրական տարրեր չեն գտնւիր, մանաւանդ արդի սահմանադրական կարգերուն ատէն, ադոր համար ալ քօնքրէն բնաւ ըլլալու բան չէ, իսկ ժողովներու և մասնաժողովներու նախագահութեան պաշտօններուն համար հոս ամենքս ալ եռանդուն թեկնածուներ ենք, որ բնաւ ձեռք է բաց չենք թողնիր:

Ներս են մտնում նորից երեք հոգի, դարձեալ ոչ պակաս կասկածելի տրամադրութեամբ: Ես սկսում եմ անհանգստանալ: Բիւզանդն ուսերը տարակուսանքով վեր է բարձրացնում: Ես աշխատում եմ առիթ փնտռել դուրս թռչելու «Բիւզանդիոն»-ի խմբագրատնից:

Նորեկներն առանց մի խօսք ասելու, անցնում են ընդունարանի միւս կողմերը և նստում: Նրանք խիստ անհանգստութեան նշաններ են անում և քչփչում են միմեանց հետ:

Ես լուռ հարցական եմ անում, թէ ովքե՞ր են դրանք:

Բիւզանդը նոյն կերպ պատասխանում է յայտնելով թէ «դէմքերնին մերոնցն են», սակայն տրամադրութիւննին «օտար», և շարունակում է.

—Սանկ էֆէնդըմ, ըսէք ինձի ի՞նչ կնէ պարոն Քալանթար... յաճախ աչքէ կանցնեմ անոր «Վրձինին» «Մանրանկարները», որոնք երգիծաբանական ըլլալով հանդերձ, բնաւ չեն շարժեր մեր Ալփիարին ժպիտը:

—Իր գիւղատնտեսական գործունէութեան 25 ամեայ յօբելեանը տօնելուց յետոյ, այժմ մտածում է կատարել՝ գրականական, ժուրնալիստական և հասարակական գործունէութեան 25 ամեակը և այժմ վճռելու վրայ է, թէ ի՞նչպէս հաշտեցնել այդ երկու հակասութիւններն իրար հետ, որովհետև առաջինում յայտարարեց որպէս գիւղացիութեանը պաշտպան—նարօդնիկ, իսկ այստեղ պիտի յայտարարուի որպէս կղերարուժեակ:

—Եթէ անիկա հոս ըլլարնէ, մենք կհաշտեցնէինք, ընտրելով հաշտարար մասնաժողով մը: Իսկ ինչպէս է մեր հոշակաւոր պատմաբան և հրապարակախօս պարոն Լէօ:

—Ոչինչ, այժմ շատ լաւ է, իր 25 ամեայ գրական գործունէութեան յօբելեանից ստացած արժէքաւոր և անարժէք թղթերն է մարսում. բայց պատուհարար հանդիպելով կուլ գնացած հին փաստաթղթերի, ստացել է ստամոքսի խիստ խանգարումն, և որը յետ տալուց յետոյ՝ բաւական հանգստանում է:

—Փաստաթուղթեր կուլ տւած, ադիկա ըլլալու բան մը չէ, թերևս ան ազգին պատմութեան կամ անոր ճակատագիրը յեղաշրջող դօքիւմա մը եղած ըլլա՞:

—Ո՛չ, բնաւ երբէք. պ. Լէօ անգիտակցաբար կուլ տւած այդ փաս-

տաթղթերը յետոյ կարդալով, տեսաւ, որ ինքը մեղանչել է նրանց դէմ: Իր «Գրիգոր Արծրունի» եռահատոր աշխատութեան մէջ յայտարարելով է. Առաքելեանին ամենապատուական և ջերմեռանդ «մշակականը», այժմ յետ գտնուած փաստաթղթերն ապացուցանում են, որ նա՝ է. Առաքելեանը իր կեանքում «բնաւ մշակական» չի եղել:

— Այո, կրնայ պատահիլ: Աղէկ կլլար, եթէ պ. Լէօ յաճախ ստամոքսային նոյնանման խանգարումներ ստանար և յետ դարցունէր աւելի շատ կարևոր տօքիւմաներ, որոնք թերևս իր պատմական տեսութիւններուն վերայ աւելի ճշմարիտ լոյս սփռէին: Ան ատեն թերևս կարիք կլլար անոնք նորէն, վերուստէն ի վայր փոփոխելու: Անանկ չէ պարոն Մէկունի:

— Այդ բոլորը հանգամանքների և ժամանակի խնդիր է. նայած, թէ ապագայում պ. Լէօ ու՞մ հետ կբարեկամանայ և ու՞մ հետ կթշնամանայ: Թերևս այդպիսի մի ստամոքսային խանգարումն կատարւէ նրա հետ նաև Շիրվանզադէի օրօք, երբ կկատարւի նրա 30 ամեայ գրական յօբելեանը: Այժմ Լէօն Շիրվանզադէին գովասանելու պրօցէսի մէջ է և ստիպւած պիտի լինի փաստեր ճարել, ջրելու իր «Ռուսահայ գրականութիւն պատմութեան» աշխատութեան մէջ Շիրվանզադէին ուղղած իր աննպաստ քննադատականը:

— Յուսանք և սպասինք... Ինչպէս ըսի սապիսի ստամոքսային խանգարումները կարևոր են: Է, պարոն Մէկունի, ըսէք ինձի, ի՞նչպէս է մեր շնորհալի բանաստեղծ Յ. Թումանեանը:

— Երազում է... իր յօբելեանը տօնելու, դրա համար թողել է Պառնասի բարձունքները և դարձել հրապարակախօս:

— Իսկ պարոն Ծատուրեան:

— Հրապարակախօս լինելու վտանգն անցել է, որովհետև իր գրական 25 ամեակը տօնւեց:

— Հապա Շիրվանզադէ:

— Մինչև յօբելեանը հրապարակախօս, իսկ այնուհետև եւրոպական կուրօրտներ կամ ընդմիջտ գրչադադար...

— Ի՞նչպէս է մեր յայտնի վիպագրող պարոն Ատրպետ և այժմ Պարսկաստանի պատմագիր:

— Կրկին հրապարակախօս և դէպի յօբելեանը:

— Պարոն Ահարոնեան:

— Նոյնպէս:

— Պարոն Աթանասեան:

— Նոյնպէս:

— Ըսել է թէ ձեզ մօտ ամենքն ալ հրապարակախօս և յօբելեանական թեկնածուներ են:

— Իսկ ձեզ մօտ, պարոն Բիւզանդ, ինչո՞ւ յօբելեաններ չեն կատարւում:

— Թերևս այդ վարակիչ ախտը կովկասէն անցնէ ի տաճկահայս, սակայն հոս սա բաց ու գոցին խնդիրը մեզի բնաւ ժամանակ չի տար յօբելեաններով զբաղւիլ: Դուրեանը մեզի խիստ կխանգարէ, մանաւանդ պատ-

ընդհանուր խնդիր ու կրօնական ժողովներ: Դուք երջանիկ մարդիկ էք, երբ չունիք ոչ սահմանադրութիւն, ոչ պատրիարքարան, ոչ երեցփոխանական ոչ ազգային ու կրօնական ժողովներ, ոչ քաղաքական հաստատումներ, ոչ այս և ոչ այն: Իսկ պարոն Մէկունի, ըսէք ինձի, ի՞նչպէս է պարոն Աղայեան, մեր նոր սերունդին հէքիաթարան, մեր ծերունի դաստիարակը:

Երբ Բիւզանդը շեշտեց իմ անունս, ես նկատեցի թէ ինչպէս նըստած անձանօթներից մէկը վեր թռաւ տեղից, կանգնեց և ուշադրութեամբ սկսեց նայել ինձ:

— Ահ, պարոն Բիւզանդ, Աղայեանի մասին մի հարցնէք, դժբախտութիւն է պատահել նրա հետ:

— Ի՞ժբաղդութիւն, կաթւած է ստացեր:

— Ոչ, աւելի վատը:

— Ի՞նչպէս, տրամվային տակն ինկած է:

— Է՛հ, ոչ, աւելի վատը:

— Սակայն ի՞նչ պատահեցաւ, մահամերձ հիւանդ է:

— Ոչ, երանի թէ...

— Վերջապէս մեռաւ:

— Աւելի վատը:

— Հապա ի՞նչ պատահեցաւ ադ մարդուն հետ, ըսէք ինձի ի սէր Աստուծոյ:

— Մանկավարժութիւնը թողեց և հրապարակախօս դարձաւ...

— Իսկ յետո՞յ...

— Եւ ապա խուլացաւ...

— Խուլացա՞ւ, սակայն ի՞նչպէս, Մելիք-Աղամեանին պէս մսեցա՞ւ:

— Ոչ...

— Կլլայ որ ծերութեան արդիւնքն է:

— Ոչ, նա տակաւին երիտասարդ է և սկսնակ հրապարակախօս...

— Զլլայ «հիւն ու վեւական» պայքարին մ' ատեն Ստեփանոս Մալխասեան ապտակ մը զարկաւ իր ականջին...

— Ոչ, պարոն Բիւզանդ, ինքը կամովին խուլացաւ:

— Կամովի՞ն խուլացաւ, բայց ի՞նչպէս:

— «Բուրդ խրեց ականջները»...

— Բ՞ուրդ... սակայն ինչո՞ւ:

— Որպէս զի չսէ իր դէմ պայքարողների ձայները և իրաւունք ունենայ չպատասխանելու նրանց յարձակումներին:

Այդ ժամանակ նստողներից իմ անունս լսող և տեղից վեր թռչող պարոնը, վեր է կենում և մօտենալով ինձ, ասում է.

— Սակայն, վսեմաշուք էֆէնդի, ադ ըլլալու բան չէ, ադ անկարելի է:

Ես սաստիկ շփոթւում եմ, կարծելով թէ յարձակումը և դրաման արդէն սկսւում է:

— Այո, իրաւ կսիմ, ասանկ չիլլար, սա թիւրիմացութիւնը յարդելու է, պարոն Բիւզանդ, սա մեծապատիւ Պօղոս Մէկունին մեզի սխալմունքին և

Թիւրիմացու թեան մէջ կղնէ: Ասիկայ անպատուութիւն պիտի ըլլա իմ գրչիս և հռչակիս համար, ինչ կկարծեն վերջապէս մեր ազգայինք, տեսնելով սա Պօղոս աղան...

Բիւզանդը յանկարծակիի եկածի պէս, կանգնում է տեղից:

— Բայց ներեցէք պարոն, բանն ինչո՞ւմն է... վախեցած հարցնում եմ ես:

— Այո՛, այո՛, ըսէք, ի՞նչ տեսած էք սա կովկասահայ մեծ գրականագէտ վսեմապատիւ Պօղոս էֆէնդիէն, — խօսում է Բիւզանդը — չլլայ թիւրիմացու-թիւն մը պատահած է, անշուշտ, թիւրիմացու թիւն մը, հակառակ պարագային Պօղոս էֆէնդիին կասկածելի մարդ մը չէ, անիկայ ամբոխավարներուն բանակը չէ յարգեր, չէ գովասաներ սօբաջիներուն վարմունքը, չի յարգեր զԴուրեան, Սահմանադրութեան դէմ սխալ քայլ մ' ըրած չէ, վերջապէս բաց ու գոցին խնդրին նկատմամբ պատուարեր դիրք մը բռնած է:

— Այո՛, այո՛ — վրայ է բերում խօսողը — իրաւացի է, Պօղոս էֆէնդիին խըստիւ գոցականմն է, ես ազոր մասին աւձամբ ստուգեցի, սակայն ես ադ չեմ ըսեր, ես սաստիկ սրգողած եմ անոր դէմ...

— Զեզի «խաւարամիտ» անւանած է:

— Ոչ, ոչ:

— «Ազգագաւ» ըսած է:

— Ոչ, էֆէնդըմ:

— «Շէրիաթճի» ըսաւ, մի...

— Ոչ այս և ոչ այն, այլ որ վսեմապատիւ Պօղոս էֆէնդիին անանկ չէ, ինչպէս որ ես ինքս գրած էի անոր մասին թերթին մէջ:

— Հապա՞...

— Անիկա սանկ պարթևահասակ, արծաքիթ, սևաչեայ, սևամօրուս, ազդու հայեացքով և վիթխարի անձնաւորութիւն մ' ըլլալու էր, ահա թէ ինտոր կսրգողիմ:

— Ըսել է, թէ դո՞ւք գրած էք այն յօդւածը...

— Այո՛, ես ինքս գրած եմ:

— Ըսել է թէ մեծապատիւ Պօղոս էֆէնդիին սա ինքը չէ, կեղծիք մը կայ հոս, ի՞նչ կսէք էֆէնդըմ, դարձաւ Բիւզանդը դէպի ինձ:

Ահա թէ ինչպիսի թիւրիմացութիւնների ժամանակ կարող էր պէտք գալ Պօլսում իմ դօկումենտներս, որոնք իսկոյն դնում եմ Բիւզանդ Քեչեանի առաջ:

— Կզարմանամ, ասում է նա նայելով ինձ, և ապա թղթակցին:

— Բայց ներեցէք, դուք սկզբունքով հրն էք ընդունում, ես պիտի յարմարւէի թղթակցի գրչին թէ թղթակցի գրչին ինձ:

— Մենք պօլսահայ գրականագէտներս սիրում ենք երևակայութիւն, պատասխանում է թղթակցը, և ամեն բան կգրենք երևակայութիւններիս թելադրութեամբ: Անշուշտ, խիստ աղէկ կլլար, խիստ ազդու և բանաստեղծական, եթէ դուք անանկ ըլլայիք, որպիսին ես երևակայած էի, և մենք սաստիկ կսրգողինք, երբ յաճախ ամեն բան մեր գրածին նման չիլլար...

— Ներեցէք պարոնայք, միւս կողմից մօտենում է նորիկներից մէկը —

ես ալ այն կարծիքին եմ, որ դէպքերը և իրողութիւնները պիտի յարմարուին մեզի: Հոս Պօլսին մէջ մենք կպնդինք ադ սկզբունքն ըստ կարգին իրազործելու, մենք կպնդինք, որ ամեն բան յարմարին հոս միմեանց.— Ժողովուրդը՝ սահմանադրութեան, սահմանադրութիւնը՝ փառլամենթին, ազգը՝ պատրիարքին, ժողովուրդը կրօնական և ազգային ժողովին և ապա ամեն բան մեր գրչին, ինչպէս և Դուրեան պատրիարքը պիտի յարմարէր ըստ հարկին մեր տրամադրութեանը:

— Դուրեան պէտք է ըսած բաւական յարմարեցաւ մեր տրամադրութեան և ահա ընդ միշտ հրաժարեցաւ պատրիարքական աթոռէն:

— Ընդ միշտ, միւս կողմից վեր բարձրացան միւսները, ըստ երևոյթին վրդովւած,— ադ խնդրոյն համար ալ մենք եկած ենք հոս պարօն Բիւզանդ, ձեզի աղէկ մը քամահրելու, պէտք չէ որ Դուրեան ընդ միշտ հրաժարէ, ազիկայ մեր մամուլին աշխատակիցներու շահերուն չի գար:

— Սակայն, պարօնայք, Դուրեանին հրաժարակցին վրայ պնդողը և անոր երկդիմեան քաղաքականութիւնը հրապարակօրէն ամբաստանողը դուք չէիք. ահան, հոս, սա «Բիւզանդիոն»-ին էջերը դուք չէք լեցուցած այդ ուղղութեամբ:

— Այո՛, մենք կգրէինք, կամբաստանէինք, սակայն ընդմիշտ հեռացնել Դուրեան պատրիարքական աթոռէն մենք բնաւ չէինք ուզեր, ասով կըլմնայ մեր գրական աշխատակիցներու խօսքը և այնուհետև ձեռնունայն պիտի մնանք, տարակուսելով թէ ալ ի՞նչ պիտի գրենք...

— Հապա ի՞նչպէս կուզէիք...

— Մենք կուզէինք որ Դուրեան յարմարէր մեր երևակայութեանց, կուզէինք որ ան միշտ լեցուն ըլլար իր երկդիմութիւններով, ամեն օր պատրիարքարանէն իր տունը, իր տնէն պատրիարքարան վազէր հրաժարականն ի ձեռին: Եւ մենք, անշուշտ, ամեն վայրկեանին առիթ կունենայինք աղէկ մը բզկտել նախ ազատական ըսած ամբօխավարներուն և ապա անոնց գործակատար— Դուրեան պատրիարք, իսկ այժմ ամեն խնդիր լըմնցած, ալ ոչինչ չունինք գրելու...

— Է՛հ պարօնայք, պատասխանեց Բիւզանդը, խնդրոյն այդչափ ալ ուժեղ նշանակութիւն տալը ձեր կողմէն՝ անփորձութեան արդիւնքն է: Գըրելու նիւթ մեզի համար բնաւ չի պակսեր: Դուրեանին փոխարէն աթոռին կնստեցնենք Մանկունի Վահրամ, որ նորէն մեզի մամուլին էջերը լցնելու առատ նիւթ կրերէ: Ան ատեն ամբօխավարներ կսկսեն բուռն թափով յարձակել անոր վրայ, իսկ մենք ալ կսկսինք պաշտպանիլ անոր: Ահա ձեզի նիւթ, եթէ ուրիշ խնդիրներու վրայ խորհելու և գրելու ընդունակ չէք, դացէք և հանգիստ կեցէք...

Մենք դուրս եկանք «Բիւզանդիոն»-ի խմբագրատնից:

Նոյն օրը Բիւզանդ Քէչեանը իր թերթում մի ընդարձակ յօդւած տը-

պեց իմ մասին և յայտարարեց, որ «Կովկասէն հոս ժամանած՝ ազգային մեծ գրականագէտ, բանաստեղծ, հրապարակախօս, մեծ քերթող և պատմաբան պ. Մէկունի շնորհ ըրաւ անձամբ դալու և այցելութիւն մ' ընել մեզ!»:

Եւ յետոյ յօգւածի մէջ աւելացնում է.

— «Իր անհատական կարծիքներ ու համոզումներ միանգամայն Սահմանադիր-Ռամկավարական ըլլալով, պատիւ կրեբէ «Բիւզանդիոն»-ին և անշուշտ կրղխին ազգասէր, լուսամիտ, շրջահայեաց, և որ աւելի վսեմագոյնն է, սահմանադրական լայն հասկացողութիւններով զեղուն սիրտէ մը:

«Ազգային խնդիրներուն նկատմամբ ըսաւ, Դուրեանին հրաժարականը ազգային շահերուն համար անխուսափելի անհրաժեշտութիւն մնէ:

«Բոլոր տաճկահայեր միաձոյլ կերպով Սահմանադիր-Ռամկավար քաղաքականութեանը յարելու են:

«Միւս բոլոր կուսակցութիւնները ազգին համար միանգամայն պատուհաս են:

«Պատրիարքական տեղապահ ընտրելու է անշուշտ Վահրամ եպ. Մանկունի, վասն զի անոր գործակցութիւն Գէորգ չորրորդ Կաթողիկոսին օրօք ցարդ անմոռաց կմնայ Կովկասին հայերուն յիշողութեան մէջ:

«Իր ցաւը յայտնեց ւամբօսավարներու ազգադաւ բռնութեանը «Բիւզանդիոն»-ին խմբագրին վրայ, որ խիստ ճնշող տպաւորութիւն թողած է իւր ժամանակին կովկասահայ խոհուն, մտածող շարք մը հայերուն վրայ»:

Ի հետևումս դրա, պօլսահայ մի ուրիշ թերթ սաստիկ դայրացած «Բիւզանդիոնի» վրայ, յայտարարում է.

«Այո, «Բիւզանդիոն» ամեն կաթսային մէջ ալ սահմանադիր-ռամկավարական ապուր կերեակայէ եփւելիս, մինչ դեռ ես ինքս անձամբ այցելութիւն մ' ըրի պ. Մէկունու, որուն Կովկաս եղածս ատենօք կճանչնամ և յաճախ միասին սօցիալական խնդիրներու մասին խորհած ենք:

«Անիկայ սկզբէն «Հնչակեան» եղած է, որպէս պատգամաւոր Կովկասէն Բարիզ գացած և մասնակցած է Հնչակեան կենդրոնական ընդհանուր ժողովներուն: Ապա անցած է Հայ սօցեալ-տեմօքրատներուն կուսակցութեան շարքեր, իսկ Պօլիս գալով որոշած է գործել կրկին «Հնչակեան սօցիալ-տեմօքրատ» կուսակցութեան դրօշին տակ:

Մի ուրիշ թերթ շտապում է գրել:

«Պօլսահայ մեր ազգային թերթեր կսիրեն ամեն ինչ սեփականացնել, առանց խնայելու անգամ ո՞վ ինչ է և որո՞ւ սեփականութիւն ըլլալը: Ես անձամբ պատիւ ունեցայ այցելել վսեմապատիւ մեծ գրականագէտ Պօղոս Մէկունու և իր հետ ժամէ մը աւելի խօսակցութիւն ունենալով, անի ինծի համոզեց իր «Ազատական» ըլլալը: Քանիցս մասնակցած է Ազատականներու խմբական կոիւնիտուն Համիտական ըէժիմին պաշտպան ելուզակներուն դէմ, եղած է ժնե՝ Դրօշակին խմբագրատունը, մօտիկ ընկերակցութեան մէջ եղած է իւր ժամանակին անմահ Քրիստափոր Միքայէլեանին հետ և Կովկասէն Պօլիս եկած է յատուկ յանձնարարական նամակներով: Այդ յանձ-

հնարարութիւնքն անշուշտ տաճկահայ աւտօնօմիային խնդրին հետ կապ ունի և շուտով այցելութիւն մը ընելով վսեմաշուք Ակնուււրէն իրմէ կարևոր հրահանգներ ու խորհուրդներ պիտի ընդունէ»:

Այս խնդիրը շուտով ստացաւ այնպիսի սուր կերպարանք, որ բաւական չէ պօլսահայ օպպօզիցիօն թերթերի ամբողջովին դրան նւիրելն ու միմեանց ոմբակոծելը, կուսակցական շարքերն սկսան իրար դէմ լարել և միմեանց հետ տուր ու դմփոց սկսել:

Գործը հասաւ ծայրահեղ դրութեան: Դաշնակցական և Հնչակեան միացեալ կուսակցութիւններն ուղտիմատում արին Արմենական և Ազգային-Ռամկավարական հատուածներին, թէ «չհամարձակին միւս անգամ յայտարարել Պօղոս Մէկոււնու սեփականացումը, վասն զի ան իրենց կպատկանի»:

Վերջիններս համարելով դա «հակառակ ազգային ու եկեղեցական, մահաւանդ սահմանադրական շահերին, պնդեցին իրենց սկզբունքը և աւելի խիստ լեզուով ուղտիմատում դրին Դաշնակցութեան առաջ:

Այնուհետև լուր տարածեց, որ «Ազատականները», «սա քաղաքական ու սօցիալ-տնտեսական խնդիրը լուծելու համար, որոշած են առաջիկայ կիւրակի օրը ներս խուժել Կում-Կափուին մայր եկեղեցւոյ մէջ և խանգարելով պատարագը՝ միտինք գումարել»:

Գոցականները դրա առաջն առնելու համար, դիմեցին վճռական քայլի և գնալով հրաժարւած պատրիարքի մօտ, խնդրեցին «արիւնհեղութեան առաջն առնելու համար այդ կիւրակէ ինքը յանձն առնէ պատարագ մատուցելու», որովհետև նրանք գիտէին, որ եթէ Դուրեանը լինէր այդ օրւան պատարագիչը, անշուշտ, «Ազատականները» իրենց սրբազան առաջնորդին չվշտացնելու համար ոչ միայն յետ պէտք է կանգնէին իրենց որոշումից, այլ՝ թերևս իրենց ամբողջ սօցիալիստական գւարդիայով նոյնիսկ ամեն նախազգուշութիւններ ձեռք առնելով, պէտք է աշխատեն պահպանելու հասարակական կարգը, որպէսզի ոչ մի շշուկ չխանգարէր սրբազան հօր պատարագը:

Իսկ Գոցականները մտածում էին, թէ դրանով ժամանակ կվաստակէին շտապեցնել ազգային-երէցփոխանական ժողովը և «Պօղոս Մէկոււնեան ծանրակշիռ և կարգինալ խնդիրը» առաջ մղելով, հնար կունենային շուտ ընդփոյթ լուծել նոր պատրիարքի ընտրութեան խնդիրը:

Ազատական բանակի պաշտօնական օրգանը նկատելով Գոցականների այդ մտադրութիւնը, դայրոյթի սաստիկ մրուր թափելով և ազգային երէցփոխանական ժողովի բոլոր խառնաշփոթութիւնների միակ պատճառը նրանց վերագրելով, պահանջում էին իզուր ժամավաճառ չլինել նորագոյն ընտրութիւններով և մի պատգամաւորութիւն ուղարկելով հրաժարւած պատրիարք հօր մօտ խնդրել՝ որ նորէն յետ վերցնէ իր հրաժարականն և պատրիարքարան վերագառնալով, գլուխ կանգնէ ազգային ժողովին՝ գոհացումն տալով «սանկ ազգային առկախ մնացեալ կարևոր խնդիրներուն»...

Այս հանգամանքները, որոնք միանգամայն կարճ ժամանակում և անակնկալ կերպով ծնունդ առան և կանգնեցին իմ առաջս Պօլսի իրականու-

թեան մէջ՝ մի բան էին խոստանում, կամ դէպի անակնկալ քարձրութիւն կամ միանգամայն անսպասելի անկում ինձ համար:

Եւ որովհետեւ այստեղ ամեն քայլափոխում իմ առաջ կանգնած էին այդ երկու հակադիր երևոյթները, ես պէտք է շտապեցնէի վերջացնել իմ այցելութիւններս և օր առաջ դառնալ դէպի Կովկաս:

Կէս օրից յետոյ երբ հիւրանոց և կայ, ծառան ինձ ասաց, որ «ձեզի ժամէ մ' ՚ի վեր կսպասեն Վռամեան և Շահրիկեան էֆէնտիները»:

Արդեօք դէմօնստրատիւ մի ուլտիմատումի համար եկած չլինե՞ն, մըտածում եմ ես:

Ներս եմ մտնում և ահա սեղանիս մօտ դէմ առ դէմ նստած՝ հանդիպում եմ երկու ֆէսաւոր ջէնտլմէնների, որոնք սիգարները բերաններին լուռ սպասողական դրութեամբ ծխում են:

— Պատիւ ունիմ ներկայանալ արգոյ ազգայիններին, Պօղոս Մէկունի, որ նորերս Կովկասից ձեզ հիւր է եկած—ասում եմ ես պօլսական քաղաքավարութեամբ, պարզելով առաջինին ձեռքս:

— Շահրիկեան, ձեռքս սեղմելով, պաշտօնական քաղաքավարութեամբ գլուխ է տալիս նա:

— Վռամեան, հետևում է նրան երկրորդը նոյնպէս:

— Յուսանք, որ ներկայ Պօլիսը իր սահմանադրական կարգերով ձեզի խիստ հաճելի և աղէկ կուգայ:

— Անշուշտ, կատարելապէս մի ազատ երկիր:

— Այո՛. ազատութիւն՝ խօսքի, մամուլի, համախմբումներու, քաղաքական պայքարներու, անձի և գոյքերու անձեռնմխելիութեան...

— Անշուշտ, որոնց բուն իմաստը աւելի արմատապէս հասկանում և գործադրում էք դուք, քան համանման պայմաններում ապրող այլ ազգեր և հասարակութիւններ:

— Այո՛, պիտի ըսած, որ մեր Օսմանեան հայրենիքին ամենարմատական և առողջ տարրը կկազմենք մենք—հայ լուսաւորչական Քրիստոնիայ տարրս:

— Այսինքն հայերդ:

— Օ, մի յիշեցէք սա անունը, վեր է թռչում տեղից Շահրիկեան էֆէնդին.—սա անունը լսել անգամ չենք ուզեր, վասնզի թուրքիոյ նորոգ սահմանադրութիւն ալ միանգամ ընդ միշտ վերջակէտ դրաւ Տաճկաստանին տարբեր ազգութեանց խնդրոյն, այսուհետ հոս գոյութիւն ունեն միմեայն օսմանլիներ. մենք բոլորս ալ օսմանլիներ ենք, սկսեալ յոյներէն, պուլկարներէն, մօլդաւներէն, քիւրդերէն մինչևի հայ տարրերս, մենք ամենքս ալ կգործենք մեր հայրենիքին բարգաւաճման համար: Հոս գոյութիւն ունին միմեայն քաղաքական հատուածներ, պուրժւազախա, և փոօլեթար: Պուրժւական դասակարգ հոս կներկայացնէ Բիւզանդ-Քէչեան իր համախոհներով, իսկ փոօլետարներս մենք «Ազատական» ըսւածներս ե՞ք մեր «Ազատամարտ» թերթով: Հոս մենք կկազմենք քաղաքական կուռյն առանցքը. ասոր համար ալ մենք մեր կուամարտին առաջին յարւած ուղղած ենք դէպի կը-

ղերա-պուրժւական եկեղեցին, զոր կուզենք վերածել լոկ հասարակական հիմնարկութեան, ինչպէս Անդղիոյ Հովարդէնին դահլիճը:

— Բայց ես որքան գիտեմ, աշխարհիս բոլոր սօցիալիստները խիստ յարգանքով են վերաբերում հակառակորդների կրօնական զգացմունքներին. դուք ևս պէտք է յարգէք ձեր հակառակորդների—կղերա-պուրժւաղիայի հաւատոյ սրբութեանը:

— Ներեցէք վսեմապատիւ էֆէնդի, տեղից վեր թռչելով խօսեց Վրոնամեանը.— մենք բնաւ սանկ զգացումներու և նւիրականութիւններու մէջ չենք մտներ: Մեր սօցիալիզմը միանգամայն տարբեր բնաւորութիւն ունի: Մենք կքալենք միանգամ ընդ միշտ տարբեր ուղղութեամբ, մեզի պէտք չեն Մարքս-էնգելսեան, Փլեխանովին, Բերնշտայնին թէօրիաներ: Մենք աւելի աղէկ կհասկնանք սօցիալիզմին վարդապետութիւնն և թաքթիքը, քան անոնք: Մենք կզարնենք, կփշրենք, կխորտակենք, կտապալենք ամեն բան ինչ որ մեր ուղղութեան և մեր սօցիալիզմին չի գար, ահա ասոր համար ալ սահնադարեան, փոշիացեալ և խարխուլ եկեղեցին մենք պիտի վերակազմենք և մկրտենք սօցիալիստական գաղափարներով: Հոն ամբիոնին վրայ կանգնած ամեն մի եպիսկոպոս ու քահանայ փթած շարականներու փոխարէն սօցիալիզմին վարդապետութիւնը պիտի պատգամէ և մենք սնոնց հետ միասին ձեռք ձեռքի տւած, համերաշխօրէն ամբողջ ազգը պիտի քալեցնենք դէպի հեռուն, այն ազատ իդէաներու և գաղափարներու երջանիկ նաւահանգիստը, ուր շողշողուն ճառագայթները սօցիալիզմին կապոյտ երկնակամարէն սփռած ունին մարդկային համատարած սերունդներուն վրայ: —

— Անշուշտ, վսեմապատիւ Մէկունի կհաւնի մեր պարոն Վրոնամեան, անի հանճարեղ հռետորմն է:

— Այո, խիստ հանճարեղ:

— Իսկ պարոն Շահրիկեան անզուգական հրապարակախօսմն է ու եթէ «Բիւզանդիոն»-ին բարբաջանքներ չլլան-նէ, Շահրիկեան Կիկերոն մը կրնայ համարել մեր մէջ, խօսում է Վրոնամեան:

— Անշուշտ, անշուշտ:

— Վրոնամեան կատարելապէս ժօրէս մը կյիշեցնէ:

— Շահրիկեան էֆէնտի եթէ Եւրոպա ըլլար նէ, անոր անունը Բէրէլին, Կաուցկուն և Բէրնշտայնին հետ կհորջորջւէր:

— Անշուշտ, անշուշտ:

— Պարոն Վրոնամեանին ճարտասանական հանճար կարող կլլայ մէկէն շարժել ամբողջ հասարակութիւններ, ցեղեր, անկիրթ ու վայրենի տարրեր, անիկայ երբ հանգուցեալին մը վրան դամբանական կխօսէ, հաւատացէք, որ մեռեալը յարութիւն առնելու նշաններ կցուցնէ:

— Ըսել չի ուզեր, որ վսեմապատիւ Մէկունի իր ստեղծագործող գըրիշով կրնայ մեզի աղէկ տեղ մը տալ իր բերթւածքներուն մէջ, չպէտք է որ ազգին սանկ հանճարներ լուռ մնան մեզի պէս եզակի մարդոց վրայ:

— Անշուշտ, պարոն Մէկունի խիստ շրջահայեաց գրականագէտմն է, աղբորը կհասկանայ:

— Կրնամ հաւատացնել, որ պարոն Մէկունի հոս մեր բանակին մէջ բնաւ Ակնունի էֆէնտիէ յետ չի մնար և շուտով կրնայ ազգային երէցփոխանական նախադահին աթոռը հասնել:

— Իսկ ես կերաշխաւորեմ անոր մեր Թուրքիոյ փառլամենթին անդամութեան աթոռը:

— Անկէ ետ թերևս Շինարարութեան նախարարութեան աթոռը, անանկ չէ պարոն Շահրիկ...

— Անշուշտ, անշուշտ:

— Մեծ յաջողութիւն ունեցած պիտի ըլլանք վսեմապատիւ Պօղոս էֆէնտի ունենալով մեր բանակին մէջ:

— Անշուշտ, անոր անխուսափելի պէտքութիւնը ունենք մեր քաղաքական պայքարին մէջ և հարկէ որ վսեմապատիւ Պօղոս Մէկունի շտապէ արտայայտել իր սկզբունքները ընդհանրապէս Թուրքիոյ սահմանադրութեան և մասնաւորապէս եկեղեցիներուն «բաց ու գոցին» նկատմամբ:

— Անշուշտ, հակառակ պարագային սա խաւարամիտ շէրիաթիներու բանակը ժողովուրդը թիւրիմացութեան մէջ պիտի ձգէ վսեմապատիւ Պօղոս Մէկունուն «Ազատական» գաղափարներ ունենալը ժխտելով և իրենց բանակին սեփականութիւնը յայտարարելով:

— Գուցէ հարկ կլլայ քանի մը յօդածներ գրել «Ազատամարտ»-ին մէջ:

— Ո՛չ, սա պարտականութիւնը վսեմապատիւ Պօղոս Մէկունի մեզի պիտի ձգէ: Միայն վսեմապատիւ Պօղոս Մէկունի շտապելու է տեսակցութիւն մ' ընել վսեմաշուք Ակնունու, որ արդէն բաւական ուշացած է: Ամեն մի «Ազատական» կարևոր անհատ երբ Պօլիս կմտնի, անոր՝ Ակնունու այցելութիւն գնալը պարտաւորեցուցիչ գործ է մ' առաւել է, վսեմապատիւ Պօղոս Մէկունի:

— Անշուշտ, ան ատեն մենք չենք յապաղիր «Ազատամարտ»-ին մէջ ընդարձակ յօդածներ նւիրել սա քաղաքական մեծ նշանակութիւն ունեցող տեսակցութեան մասին երկու նշանաւոր հայերուն միջև:

— Անշուշտ, սա հանգամանքը բաւական կլլայ լուրջ խորհրդածութիւններ առաջ բերելու Թուրքիոյ փառլամենտին մէջ հայերու ներքին քաղաքականութեան նկատմամբ:

— Իսկ արտաքին քաղաքականութեան մէջ առանձին հարցապնդում՝ Ֆրանսական մինիստր Բրիանի կողմէ Ժօրէսին մեր սօցիալիստական շարժումներու նկատմամբ:

— Անշուշտ, վսեմապատիւ Պօղոս Մէկունի չի յապաղի կատարել սա տեսակցութիւնը:

Եւ նրանք վեր կացան ցտեսութիւն ասեցին ու հեռացան:

Նախ քան «քաղաքական մեծ նշանակութիւն ունեցող տեսակցութեան» մասին մտածելը, ես շտապեցի ճաշել և անմիջապէս փողոց դուրս գալ, ազատ լինելու այն բոլոր «քաղաքական» նշանակութիւն ունեցող տեսակցութիւններէ, որոնք առանձին թափով կատարուում էր Պօլսոյ ազգայիններէ կողմից ղէպի ինձ, ծանրաբեռնած՝ սահմանադրական և այլ սկզբունքային

ճառերով:

Կէս ժամից յետոյ, արդէն անցնում էի հիւրանոցիս նրբանցքով, երբ հանդիպեցի երկու անձանօթ երիտասարդներու: Նրանք խնդրում էին ծառային:

— Ըսէք որ Սահմանադիր-Ռամկավարականներուն բանակին կողմէ եկած ենք... բայց ես շտապով անցայ առանց նրանց կողմը նայելու: Ծառան մօտեցաւ յայտնելու, բայց ես ձեռքով նշան արի որ ժամանակ չունեմ, անցայ: Փողոցի մուտքի առաջ կանգնած տեսնում եմ նորից երեք հոգի:

— Վսեմապատիւ Պօղոս Մէկունին կուզենք տեսնել:

— Ժամանակ չունեմ:

— Արմենականներու կողմէ խրկւած ենք...

— Ասացի որ ժամանակ չունեմ:

— Քանի մը վայրկեան միայն ազգային կարեոր խնդիրներու մասին... ասում են նրանք, վազելով ետևիցս, բայց ես պատահելով առաջին իսկ հանդիպող կառքին, նստում եմ և հրամայում քշել դէպի նաւահանգիստ:

Ընթերցողներս թող բնաւ չհետաքրքրուին թէ ո՞վ ինչ տեղ է ապրում, ո՞ր թաղը ինչ անուն ունի, որովհետև սահմանադրութիւնից յետոյ ամեն ինչ տակն ու վրայ է հղել ու ոչ մի բան իր անունի և տեղի մէջ չէ գրտնւում:

Մի քանի արւարձաններ անցնելուց յետոյ, կանգ եմ առնում նորին վսեմափայլութիւն Գ. Էֆէնդի Նորատունկեանի պալատի առաջ:

— Նորին վսեմապատուութիւնը տանն է, հարցնում եմ ես դռնապանին:

— Նորին վսեմութիւնը այցելուներ չէ ընդուներ՝ նախարարական պաշտօնին ատեն խիստ դադրած ըլլալով: Այժմ հանգիստ կառնէ—նարտ ձգելով... կառքը քշել եմ տալիս դէպի Հալաճեան Էֆէնդին:

— Վսեմապատիւ Հալաճեան Էֆէնդիին կուզեմ տեսնել:

— Նորին վսեմութիւնը այցելուներ ընդունել է դադարած է նախարարութեան պաշտօնէն ետքը, այժմ հանգիստ կառնէ—նարտ ձգելով...

Այժմ անցնում եմ դէպի Հասարակական Աշխատանքների Շինարարութեան գործոց նախարար՝ Բաստրմաճեան Էֆէնդիին:

— Նորին վսեմափայլութիւնը ժամանակ ունի՞ այցելուներ ընդունելու:

— Աղէկ ժամ մը չէք ընտրած, վսեմապատիւ տէր, ասում է սենեկապետը: Նորին վսեմութիւնը քաղաքական լուրջ խնդրով է գրադած:

— Թերևս մի քանի բոպէ...

— Ըսի որ խնդիրը լուրջ է, նարտիին խաղը ներկայիս ամենատաք շրջանին մէջ է: Թերևս վսեմապատիւ Գ. Զոհրապ երկու շէշ մը բերէ և Շինարարութեանց Գործոց Նախարարութեան պաշտօն իրեն ձեռքը ձգէ:

Անցնում եմ դէպի Գարայեան Էֆէնդի:

— Թուրքիոյ ազգային պառլամենտի անդամ վսեմապատիւ Գարայեան Էֆէնդիին կարելի է տեսնել:

— Նարտիին խաղը ամենատաք շրջանին մէջ է, խնդիրը Հասարակա-

կան Շինարարութեան Գործոց Նախարարութեան ատոմն է, եթէ նա ութերորորդ անգամ ալ վսեմապատիւ Համբարձում Պօյեաճեան մարտ ըլլայ նէ, Բաստրմաճեանէն հտք ինքը կնստէ նախարարութեան ատոմ:

Անցնում եմ դէպի տօքտօր Տաղաւարեան:

—Վսեմապատիւ տօքտօր Տաղաւարեանին կուզեմ տեսնել:

—Նարտ կձգէ:

—Վարդգէս էֆէնդիին կուզեմ տեսնել:

—Նարտ կխաղան կոր:

Եւ այսպէս պառլամենտի բոլոր հայ անդամները «քաղաքական մեծ պայքար է» սկսած, միմեանց հետ Հասարակական Շինարարութեան Գործոց Նախարարի ատոմը ձեռք է ձեռք խլելու համար նարդիի միջոցաւ:

Ես ուղեորւում եմ դէպի նախկին պատրիարք սրբազան Օրմանեանը:

Բարապանը պատասխանում է.

—Նորին սրբազնութիւնը ամեն առտուն ալ կանուխ ոտքի վրայ է այցելունքը ընդունելու համար, վասն զի կաշխատէ շուտ ընդ փոյթ հաշիւներ մաքրել:

—Եթէ այդպէս է, յայտնեցէք իրեն որ ուզում եմ տեսնել: Բլապանը շուտով վերադարձաւ և ինձ առաջնորդեց դէպի ընդունարանը:

Նորին սրբազնութիւնը նստած բազկաթոռի վրայ, կասկածոտ հայեացքը դէպի դուռը ձգած, ըստ երևոյթին «խէր-շառ» էր ձգում թաղբհի վրայ:

Ինձ թւած, որ թաղբհի հատիկը միշտ վերջանում էր «շառ» գուշակութեան վրայ, որովհետև երբ ես ներս մտայ, նրա դէմքն աւելի մթազնեց:

—Աստուած օգնական, սրբազան հայր, ասում եմ ես մօտենալով աջն առնելու:

—Աստուած պահապան, ասում է նա ձեռքի այնպիսի շարժումով, որ յայտնում է, թէ «կլախեմ, մօտ մի եկուր»:

—Ըսէ որդիս, ինչ կուզես ինձմէն, չլլայ մի նորէն լրացուցիչ տեղեկութիւն ուզելու եկած էք ազգային երէցփոխանական ժողովոյն մասնախումբին կողմէ, ես ալ դադրեցայ բացադրութիւններ տալով թէ բանաւոր և թէ գրաւոր:

—Ո՛չ, սրբազան հայր, ես դրա համար չեմ եկել, այլ...

—Գուցէ թէ ժառանգութեան խնդրոյ համար:

—Ոչ այս և ոչ էլ այն, այլ եկել եմ այցելելու նորին սրբազնութեանդ և հարցնելու ձեր առողջութիւնը:

—Թիւրքահայ հորիզոնին վրայ բարեպատեն փոփոխութիւններ կընկատեմ, վասնզի սահմանադրութիւնէ հտքը ատանկ յանձնարարութեամբ մը թէ ազգին, թէ եկեղեցոյն, թէ երեցփոխանական ժողովոյն և թէ ոչ մէկ անհատին կողմէ ոչ ոք եկած է...

—Տխուր և խաւար թիւրիմացութիւններով լի մի անցեալ, որը մոռացութեան պէտք է տալ:

—Զղջումի խոստովանութիւն մը, բացականչեց Օրմանեան սրբազանը, —

Թերևս քննիչ յանձնաժողովն իմ անմեղութիւնս յայտարարեց բարուած մեղադրանքներու համար, կսիրեմ հաւատալ:

— Ես աներկբայ եմ, սրբազան հայր, ոչ այդ յայտարարութիւնը շուտով կլինի, բայց ես...

— Թերևս երէցփոխանական ժողովին կողմէ՞... կհաւատամ, որ վերջապէս անիկայ տխուր փորձին առաջ համոզեցաւ, որ Օրմանեանին պատրիարքութիւնն անփոխարինելի կորուստն էր ազգին և եկեղեցոյն բարօրութեան համար: Եւ անիկայ համոզեցաւ, որ սա ամբոխավարներուն յարձակումներն իմ անձնաւորութեանս դէմ մէկ յետին նպատակ մը ունէր, այն որ սահմանադրութեամբ լեզւին կապանքները քակած ժողովրդին դատաստանէն փախչելու համար, իրենք առաջինը հրատարակեցին իրենց «հաշիւներ պահանջողներ» որպէսզի ուրիշներ իրենցմէ հաշիւ չպահանջեն ըրած վայրագութիւններուն և շահատակութիւններուն համար:

— Մոռացէք, սրբազան հայր, այդ անուշներով լի երազը:

— Մի համոզէք ինձի, վասնզի ալ պէտք չէ ազգին ըրած գղջումն ինձի և ես ալ պատրիարքական աթոռը դարձող չեմ, փնտռեցէք ձեզի նոր պատրիարք մը, եթէ անվճռական և անքաղաքագէտ Դուրեան չկրցաւ եկեղեցին փրկել միթիւններու ասպարէզ դարձնելէ:

— Ես եկած չեմ ազգային երէցփոխանական ժողովի կողմից, այլ...

— Եթէ անոնց կողմէն չէ, կրնայ ըլլալ որ ազգին մէկ ցանկութիւնը կամ կրօնական ժողովին դիտումներն առիս յայտարարելու եկած էք: Անշուշտ, անոնք վերջապէս համոզուած են, որ պատրիարքական և երէցփոխանական սա սոսկալի տազնապը, «բաց ու գոցին» մղձաւանջը միայն ժայռի մը նման անյողողող կամք ունեցող Մաղաքիա Օրմանեան կրնայ վճռել: Ես կամք մ' և անոր հետ լեզու մ' ունիմ, որ ամբողջ ազգը սանկ ալ կը դարձնեմ, նանկ ալ. ես ամբողջ տասնեակ տարիներ բռնակալ Համիտ իմ ձեռքիս մէջ սեղմած պահեցի և անիկայ հայու մը քիթը չկրցաւ արիւն առնել...

— Ես իսրտէ կցանկամ, որ Ձերդ սրբազանութիւնը նորից պատրիարքական աթոռին նստեր, սակայն...

— Ո՛չ, ես չեմ ուզեր, ես պատրիարք ըլլալով, անձիս վրայ փորձեցի, որ հայ ազգն իր ամենաբարձր և ընտիր հոգևորականների կքաշէ դէպի այդ բարձունքները, որպէսզի անկէ աւելի մեծ գահավէժէ մը կորստեան անդունդը գլորէ, մէկ անգամ գլորեցայ, այլ ևս երկրորդ անգամ մի հրաւիրէք ինձի գլորելու: Դուք գլորած էք ձեր բոլոր պատրիարքներն ու կաթողիկոսներն այդ բարձունքէն և կուզէք նորէն պատժել ինձի:

— Սակայն, սրբազան հայր, հանգիստ մնացէք, ես այդ տխուր պաշտօնը ձեզ առաջարկելու չեկայ, ես Ռուսիայից նորերս Պօլիս եմ եկել և պարտք համարեցի կատարել իմ այցելութիւններիս մէկ կարևոր կէտը:

— Եթէ այդպէս է, ուրախ եմ... այս անգամ հանգիստ տօնով ասաց սրբազանը— ի՞նչ պաշտօն ունիք հոս:

— Ես կովկասահայ համեստ գրականագէտներից մէկն եմ, Պօզոս Մէ-

կուսի կեղծ անունով:

—Ա՛, կյիշեմ, բարի եկած էք. կարգացի լրագրներու մէջ ձեր մասին, ուրախ եմ, ի՞նչ ունիք ըսելու կովկասէն, ի՞նչպէս է Նորին վեհափառութիւն իզմիրըեան, ահ, ադ երկաթէ մարդը քաշեցիք տարաք հոն արճիճ դարձնելու. աղէկ մը կհալէ՞ք անոր:

—Ոչ ոք չի կարող նրան փափկեցնել, ամբողջ ազգի մէջ միայն տէր Եզնիկ հայրը իրեն ոսկերչութեան փորձերը անում է հալեցնելու նրան՝ արճիճ հրատարակելով, սակայն բնաւ ժողովրդին հաճելի արհեստ չէ որ գործադրում է հայր Եզնիկը:

—Ան Եզնիկ քահանայն, «Հովիտ»-ին խմբագիրը, կճանչնամ, կսեն թէ անիկա իր «Հովիտը» կհրատարակէ բացառապէս ինծի պաշտպանելու համար և թէ կաթողիկոսութեան կամ նորէն պատրիարքութեան կոչումին ինծի հասցնելու ջանքեր ընելու համար:

—Այո՛, սրբազան հայր, նա կոչում է «Օրմանական» և յաճախ է պատահում, որ սխալմամբ իր ազգանունը գրելուս, ստորագրում է «Եզնիկ քահանայ Օրմանեան»:

—Աղէկ բան մը չի ըներ, թերևս ան իմ մահէս ետքը նոյնիսկ ժառանգորդ հրատարակէ իրեն իմ կայքերուս, ի սէր Աստուծոյ, ըսէք անոր որ դադրէ «Օրմանեան» ըլլալէ. ես ոչ անոր պատրիարքութիւնը կուզեմ և ոչ ալ կաթողիկոսութիւնը...

—Չպիտի մոռանամ կատարել այդ յանձնարարութիւնը, որովհետև կովկասահայերիս համար դա իրիստ կարևոր է:

—Ի՞նչպէս:

—«Օրմանականութիւնը» ձեռքից խլելով, թերևս թերթը դադարէ և նրա հետ միանգամ ընդ միշտ լուծեան անդունդը գլորւի այն խումբակը, որ ապրում են էջմիածնի մէջ որպէս այլացեղ սելջուկներ և միշտ վրդովւում ազգի ու հոգևոր Պետի խաղաղութիւնը:

—Աղէկ երևոյթ մը չէ եղած եղեր...

Ես իմ դերը վերջացրած համարելով, Օրմանեան սրբազանի աջն առայ և մնաս բարով ասելով, թողի նրան նորէն սպասողական դրութեան մէջ, թէ երբ կգայ մէկը «Ազգի Երէցփոխանական ժողովի» կողմից իր զըղջումը և ցաւակցութիւնը յայտնելու «անուրջներով լի թիւրիմացութիւնների համար»...

Վ

—Շեփորը, շեփորը հնչեցրին, պատերազմի նշանը տրւեցաւ...

Ահա այս խօսքերը բացականչելով ներս ընկաւ Մարգար աղան իմ սենեակս մի լրագիր ձեռքին:

Ամեն տեսակ դժոխային պատկերներ վայրկենապէս անցան մտքովս և ես սաստիկ վախեցած վեր թռայ տեղիցս:

—Ի՞նչ է պատահել, Մարգար աղա:

—Այլ փրկութիւն չունինք, կործանումը անխուսափելի է...

—Ի՞նչ է պատահել, նոր յեղաշրջում...

—Ձէ ճանըմ, աւելի վատթարագոյնը...

—Համիտը նորից վերագարձաւ Պօլիս...

—Է՛հ, աղէկ չէ՞ր որ աղանկ ըլլար, աւելի վատթարագոյնը կայ...

—Վերջապէս նոր հայկական կոտորած...

—Ես այլևս տածիկներու ձեռքէն սպանելու ահը չունիմ, աւելի վատթարագոյնը ասիկայ է...

—Վերջապէս ի՞նչը, ասացէք էլի՞...

—Ահան, Պօղոս էֆէնտի, կարդացէք...

Առնում եմ թերթը, որի ճակատին գրած է «Ազատամարտ», իսկ նրա ներքև խոշոր տառերով մի առաջնորդող, ուր գրում է.

—«Դաւադրութիւն, դաւաճանութիւն, կործանիչ քստմնելիութիւն մը, սթափւեցէք ով ազգին բոլոր «Ազատական» տարրեր, վտանգն անխուսափելի է». մենք կանգնած ենք ահաւոր ճգնաժամի մը սպառնացող վտանգին առջև և մեր կեանքով ու արիւնով է, որ պիտի դիմագրաւենք ազգային սամեծ պատուհասը:

«Թող կորչին դաւադիրները, դաւաճանները և թող նորէն կուսամարտի կեանք և ոգևորութիւն ստանան մեր սօցիալիստական խտացեալ շարքերը, ծիծաղի դաժան հեգնութիւնով մը, վազելու սա կուսամարտին ահեղ գուպարածին դէմ:

«Յառաջ քաջամարտիկ զինւորներ, որ հերոսութեան սնման դիւցազնութիւնը կպատկերացնէք ձեր խրոխտ ճակատին: Իզէն, դէպի պատերազմի ահեղ ասպարէզը, հոն—պատրիարքարանին ահեղատեսիլ դահլիճին մէջ կսպասեն մեր թշնամի երէցփոխաններու խմբակները կազմ և պատրաստ, վասնզի մեր յառաջամարտիկ խուզարկու խմբակները նկատած են, որ թըշնամին երէկ գաղտագողի ներս է մտած Պօլսոյ խաներից մէկը և ընդհանուր ոյժերով բանակ դնելով հոն, դաւադրական խորհուրդ մը կազմած են առաջիկայ ազգային ժողովին մէջ օրհասական լեզւամարտով վերցնել մէջ տեղէն զԴուրեան սրբազան և ընդունել անոր հրաժարականը»...

—Ի՞նչ իրաւացի էք Մարգար աղա, ասում եմ ես խիստ լըջօրէն, վրտանգը անխուսափելի է, ինձ թւում է որ վաղը նրանք կպաշարեն պատրիարքարանն և կուճակոծեն, ես վախենում եմ որ «Ազատական» բանակի յարձակումները տարածւեն նաև պատրիարքարանից դուրս:

—Ես ալ հաւատացած եմ, նոյնիսկ այս գիշեր վատ երազ տեսած եմ, թէև կրնայ պատահել որ բաց քնած ըլլամ, սակայն ահն ու երկիւղը արիւնս կսառեցն են, հապա ի՞նչ ընելու է Պօղոս էֆէնտի:

—Սորհուրդ պիտի տալ պարոն Թէքէհանին և Բիւզանդին դրս առաջըն առնելու:

—Ի՞նչ ընեն, զրահներ հագնին:

—Ոչ, աւելի ուժեղ բան:

—Պատնէշներ կանգնին:

— Ոչ, աւելի ուժեղը:

— Ըսել է թէ գիմել Եւրոպական միջամտութեան:

— Ո՛չ, Մարգար աղա:

— Հասցան:

— Սպառազինուել այն զէնքերով, որով ինձ թւում է զինուած է «Ազատամարտ»-ի խմբագիրը — «շիշ մը մաստիքա դատարկել»:

— Կհամոզուիմ ձեզի Պօղոս էֆէնտի, վասն զի Շահրիկեան կամ պարոն Ակնունի սա յօդուածը գրած պիտի ըլլան առաւօտեան մինչև ժամը 11-ը:

— Ինչից իմացաք:

— Անկէ կ'հասկնամ, որ հոս Պօլսոյ մէջ մինչև այդ ժամը գրած յօդուածները սաստիկ ջղային կ'լլան ու կատաղի, երբ տակաւին մաստիքա խմելու ժամանակաշրջանը կտիրէ: Անկէ ետք կսկսել ալքօհօլին թուլութիւնը, գինի և ալն, երբ արդէն լրագրերը կամ կզառանցեն կամ գրածնին բնաւ անհասկանալի բաներ կ'լլան, կամ երևակայական երազանքներով ցնորւած:

— Եւ անշուշտ քաղաքան պայքարն էլ այստեղ մինչև 11-ը սօփամարտով կվերջանայ, 11-ից յետոյ կուփամարտով, կէսօրից յետոյ լոկ մէկ-մէկու հայհոյելով, իսկ երեկոյանները՝ հաշտութեան բանակցութիւններ վարելով:

— Ճիշտ այդպէս, ասոր համար ալ անմիջապէս գիմելու է պ. Բիւզանդ Քիչեանին և այլոց որպէսզի, սա «շեփոր»-ին դէմ իրենց պատասխանը գրեն երեկոյեան պահուն, որպէսզի հաշտութեան ազգարար մը ըլլար այն և ոչ սօփամարտի կամ կումփամարտի հրաւէր: Այնուամենայնիւ Պօղոս էֆէնտի, չարագոյծ դէպքերու և նշանաւոր անցքերու նախօրեակին մէջ կ'գտնուինք: Է՛հ, սա «բաց ու գոցին» խնդիրը մեզի քօս ու փուշ ընելու է ըստըստովին:

— Յուսահատուել պէտք չէ, Մարգար աղա, անձրևի խոշորնալն ապացոյց է եղանակի բարեյաջող վախճանին, հայ քաղաքական պայքարը հասել է իր վախճանին:

— Աստուած տայ... ասաց Մարգար աղան և դուրս գնաց: Ես շտապեցի շարունակել իմ այցելութիւններս:

Հիւրանոցի դռան մօտ առաջս դուրս է գալիս անձանօթ երիտասարդի մէկը, կապոյտ բաձկոնով, կապոյտ խորամանկ աչքերով և անհանգիստ շաշտուն իրանով:

— Էֆէնտըմ, կրնամ ձեզի առաջարկել իմ ծառայութիւնս...

— Ի՞նչ էք կամենում:

— Գիտեմ, որ Պօլիս ժամանած էք և քաղաքին միանդամայն անձանօթ անձնաւորութիւնմէք, ես ձեզի կուզեմ առաջնորդիլ դէպի ձեր տալիք այցելութիւնները:

— Իսկ դուք ի՞նչպէս իմացաք որ ես այցելութիւններ ունիմ տալու:

— Տասնեակ տարիներ այդ ծառայութիւնը կ'նեմ ես մեր ազգայիններուն, մարդը տեսնելուն պէս իսկոյն կ'հասկնամ զինքը և անոր մտադրութիւնները, ինձի հարցնելու և սորվեցնելու պէտքութիւն չկայ, միայն ըսելու է թէ

որ դասակարգէն սկսելու է:

—է՛, շատ լաւ, առաջնորդիր. ես ուզում եմ գնալ յայտնի գրականագէտ վսեմապատիւ Մրմրեանի մօտ:

—Աղէկ, ալ ինձի ըսելու պէտքութիւն չկայ. ըսելէ թէ գրականագէտներուն շարքէն սկսելու ենք:

Եւ մենք կառք նստելով առաջ սլացանք:

—Իջնինք հոս, վերջապէս ասաց իմ առաջնորդս Պօլսի արւարձաններից մէկում, կառքը կանգնեցնելով մի դռան առաջ:—Մտէք սա դռնով, բարձրացէք պատշգամբ, անկէ ետք մտէք նրբասենեակը և բաղխէք աջ դուռը: Բարձրանում եմ վերև, մտնում եմ նրբասենեակը և բաղխում աջ դուռը:

—Ո՞վ էք... լսում է մի կոպիտ ձայն և բաց է անում դուռը: Դա մի ծերուկ է անծիլած մօրուքով, հաստ պեխերով և ըստ երևոյթին ծանր լսող ականջներով:

—Վսեմապատիւ Մրմրեան է՞քէնտին տա՛նն է:

—Այո՛, ասիկայ իմ տիրոջս տունն է, կուզէք անոր տեսնի՞լ:

—Այո՛:

—Քիչ մը սպասելու ձանձրոյթը պիտի ունենաք, վասնզի սաստիկ զբաղմուքի մէջ է. ո՛հ, եթէ գիտնաք խեղճը որքան ծանրաբեռնւած է ազգային և սահմանադրական ծանր խնդիրներով:

—Բայց ներեցէք, ես շտապում եմ, պէտք է յատնել իրեն:

—Ըսի, որ քիչ մը սպասելու ձանձրոյթը պիտի ունենաք. վասն չի ան չի կրնար ամեն մի պարգային մարդ ընդունիլ. մանաւանդ որ ներկայիս հանւած վիճակին մէջ է:

—Բայց դուք ասացիք որ ազգային ու սահմանադրական խնդիրներով է զբաղւած. երևի հանւած վիճակի մէջ:

—Այո՛, այո՛, մէկ վայրկեան մ'ալ ազատութիւն չունէ. բայց ներեցէք ըսելու... է՛հ, ինչ ըրած, պիտի ըսել. ան ներկայ վայրկեանիս իր վանթալօնը կ'կարկատէ:

—Մրմրեանը:

—Այո՛, այս բոպէիս երթամ յայտնեմ, քիչ մը սպասեցէք. կրնայ ըլլալ որ արդէն գործն աւարտած ըլլայ...

Եւ գնաց:

Քառորդ ժամից յետոյ վերջապէս պատիւ ունեցանք հրաւիրւելու ընդունարանը. երևի վարտիկն աւարտել էր: Ներս է մտնում բոլորովին մի այլ մարդ որին չեմ կարողանում նմանեցնել Մրմրեանին: Թերևս այստեղ էլ սահմանադրութիւնը կատարել է իր գործը: Խեղճ մարդ, որքան փոխւել է և որ զարմանալին է, որքան փոքրացել ու բարակել:

Նա վազում է և երկու ձեռքերով սեղմում աջս:

—Ա՛հ, վսեմապատիւ տէ՛ր, ներեցէք ձեզի սպասեցնել տալուս համար. սա ազգային բարդ և ծանրակշիռ խնդիրները մեզի շունչ քաշելու ժամանակ չեն տար: Սա վայրկեանիս «բաց ու գոց»-ին խնդրով էի զբաղւած և կխոր-

հէի ազգային երէցփոխանական պառակտւած մասունքները միացնելու գործին վրայ: Ինչպէս էք վսեմաշուք տէր, աղէկ էք, գործերնիդ յաջող են: Պօլիս նոր եկած էք, եթէ նոր եկած էք, սաստիկ կսրողովմ, որ իմաց չէք տւած նաւամատոյցին վրայ ըստ հարկին ձեզի դիմաւորելու: Սահմանադրութիւնն ինչպէս է, ազգը ներկայիս աղէկ կշնչէ. ինչ կարծիքի էք Օրմանեանին մասին: Սուլթան Համիտ կսեն, հաւարութեամբ կպարապէ. Ալբանական խնդիր թուրքիոյ մեծ մտատանջութիւն չի պատճառիր, Դուրեհանին հրաժարական, Հալաճեանին Շինարարական Նախարարութիւնը, կովկասէն հիւր եկած քօլերան, Գ. Զոհրապին հարցապնդում ազոր մասին, ըսէք ինծի էֆէնտըմ ուր կընակիք, որ արւարձանին մէջ, հասցէնիդ ճիշդ պիտի ըսէք որպէս զի թերթիս համարները կանոնաւոր առաքին. ծօ, ծերուկ, ապա ձայն է տալիս նա ծառային, բեր ան բաժանորդագրական մատեան, վսեմապատիւ էֆէնտին փափագ կյայտնէ բաժանորդագին մը վճարելու:

— Բայց ներեցէք պարոն, ես ժամանակ չունեմ, պէտք է...

— Այս րօպէս, վայրկեան մը չի քաշեր վսեմապատիւ տէր, առնում է մատեանը և սկսում է գրել:

— Միայն մէկ հասմբ:

— Եւ ոչ մէկ համար...

— Ադ ըլլալու բան չէ վսեմապատիւ տէր իմ թերթիս թուրքիոյ մէջ միակ երգիծաբանական օտկանն է. ինչ Պարոնեան, ինչ Մօլիէո, ինչ Մարկ-Տէն. հոն հանձարներն ու չնաշխահիկ տաղանդները զիրար յաջորդած՝ մրցութեան սասարէզ կուգան ու համայն հայութիւն ամի բերան մնացած է: Պատահած էք թէ ինչպէս նկարած եմ Համիտին քիթը և «Քաւոզ» անունը շղթային նման կախած անոր քիթէն, հոն ծաղու են առնւած բոլոր «Ազատականներ», բոլոր սօցիալիստներ, բոլոր ռամկավարականներ, ազգային գործիչներ, սահմանադրական պայքար, ազգային ժողով, երէցփոխանական պառակտում, պատրիարք Դուրեհան և այլք: Իսկ երգիծաբանութիւն պիտէք, ամէնէն կարևոր թերթն է, մինչև անգամ առողջապահական: Երբ «Քաւոզը» կարգաք, ախորժակնիդ կբացւի, աղէկ կուտէք, աղէկ կմարսէք, հանգիստ ալ կքնէք և...

— Բայց ներեղութիւն պարոն. դուք Մրմրեանը չէք:

— Ո՛չ, ես «Քաւոզ»-ին խմբագիր՝ Երևանդ Թօլայեանն եմ. իսկ դ՞ո՞ւք վսեմապատիւ էֆէնտի:

— Ես ուսահայ գրականագէտ Պօղոս Մեկունին եմ: Յաւում եմ, որ թիւրիմացութեամբ ենք պատահում միմիանց, ներեցէք ես Մրմրեանին էի ուղում տեսնել:

— Պօղոս Մեկունի, նորերս հոս ժամանած մեծ գրականագէտ և աղնւագարմ հայ հանձարը, ներեցէք վսեմապատիւ տէր...

— Ցտեսութիւն, ներեցէք միւս անգամին կհանդիպենք, ասում եմ ես և ուղղում դէպի դուռը:

— Բայց վսեմապատիւ տէր...

- Ներեցէք... և նրա ձայնը խլանում է ծածկող դռան ետևում:
- Շշտապով նստում ենք կառք և հեռանում:
- Բայց հս ձեզ չասացի՞, ինձ տարէք պարոն Մրմրեանի մօտ:
- Սակայն վսեմապատիւ տէր, ինձի ըսելու էիք ան ատեն, որ վերեւն է սկսելու այցը և ոչ թէ վարէն...
- Ինչպէս թէ վերեւն և ոչ թէ վարէն:
- Այո, վսեմաշուք տէր, հոս այցելութիւնները կարգաւ սկսելու է կամ փոքրէն սկսած դէպի վեր, կամ վերէն սկսած դէպի վար:
- Վեր ու վար ես չեմ հասկանում, զգոյշ եղիր որ այլևս սխալմունք չպատահի: Այս անգամ տար ինձ զինւորական մեծ հրամանատար Շէֆքէթ փաշայի մօտ:
- Անմիջապէս:
- Եւ մեր կառքը սլանում է դէպի Ստամբուլի արւարձանները:
- Ահա մեծ հրամանատարին ապարանքը:
- Մի շինութիւն, որն այնքան հասարակ է, որ դրժւար թէ նրա մէջ ապրելիս լինէր թիւրքիոյ ընդհանուր դիքատատօր հրամանատարը: Բայց սահմանադրութիւնը, մտածում ես, կարող է պատահել, որ ամեն ինչ այստեղ փոխած լինի:
- Ներս ենք մտնում, դուրս է գալիս մակեդոնական զինւորի հազուստով մի երիտասարդ:
- Զինւորական հրամանատարին տեսնել ենք ուզում:
- Մտէք սա դահլիճը հոն կրնաք տեսնիլ:
- Մտնում ենք, մէկն այգտեղ խիստ եռանդով պարապած է զինւորական վարժութիւններով:
- Մէկ, երկու, մէկ, երկու, շրջան դէպի աջ, դէպի ձախ, կանգնիր... Եւ նա իւր մարշրուտի համաձայն կատարում է բոլոր մարզանքները, երբ ներս մտանք, իսկոյն բացապանչեց.
- Ի ծննկ և հրացանն 'ի նշան... մէկ, երկու, երեք... եւ նա ծուռկ չոքելով, հրացանն ուղիղ նշանում է դէպի իմ ճակատը:
- Երևի այդպէս են ընդունում այստեղ առհասարակ օտար այցելուներին, մտածում եմ ես, զարմանալի կարգեր: Բայց չմոռանաք որ սարսափից արդէն սիրտս պատուելու վրայ էր, ահա մի մատի շաշժում, նրանից յետոյ և «արձակիր» բառը ու ես գետին պիտի գլորւեմ:
- Բայց բարեբաղդաբար նա վեր կացաւ և հրացանը վայր դնելով, այս անգամ անկիւնից վեր առաւ մի սօփա և դիմելով ինձ ասաց.
- Զամարձակիս ընդունել Գուրեանին հրաժարականը, եթէ ոչ ահա այսպէս, մէկ, երկու, հատ մը կողիդ, հատ մը աջ, հատ մը ձախ, հատ մը զլխուդ և այլն... Եւ փայտի յարւածներն ուժով ըստ հարկին վրայ բերելով, բայց խիստ ուշիկ կողերիս ու զլխիս կպցնելով, ապա յետ կանդնեց ու սօփան վայր դնելով, այս անգամ խիստ սիրալիր կերպով պարզելով ձեռքն ինձ, ասաց.
- Գիտէք, վսեմապատիւ էֆէնտի, վաղն երեցփոխանական վճռաջինջ

ատենը տեղի պիտի ունենայ Դուրեանին հրաժարականին նկատմամբ, ասոր համար ալ նախապատրաստութիւններ է որ կտեսնինք. էհ ինչ ըրած, ազգը և սահմանադրութիւնը պէտք է մեր արիւնովը պաշտպանենք...

— Բայց ներեցէք ես զինւորական մեծ հրամանատարին տեսնելու եմ հկել, յայտնեցէք խնդրում եմ, իրեն որ...

— Ան ձեր գիմացը կանգնած է. ինչ ծառայութիւն

— Բայց դուք հայ էք. իսկ Մահմուդ Շէֆքէթ փաշան իսկական Օսմանլի:

— Ախ, ներեցէք, դուք Օսմանլի Մահմուդ Շէֆքէթ փաշան կուզէք, ներեցէք, ես ան չեմ, ես հայ «ազատական» Մահմուդ Շէֆքէթ փաշան եմ. եթէ քննադատելու ըլլանք նէ, ես անօրմէն պակաս հերոս և ասպետական դիւցազն չեմ: Եթէ ան ամբողջ Օսմանեան թուրք ու քիւրդ ազգաբնակչութիւնն իր ասին մէջ սեղմած ունի, ես ամբողջ հայ ազգաբնակչութիւնն ունեմ. կուզէք այս վայրկեանիս հրաման մը արձակի՛մ և ամբողջ զօրագունդ մը կազմ, պատրաստ հաւաքելին ազգային երեցփոխական ժողովին վրայ քաշելու: Այո, ես հոշակաւոր հերոս եմ, զոր Օսմանլի Մահմուդ Շէֆքէթ փաշային Պօլիսը նւաճելու ատեն, ետեան ինկած անվախ կ'քալէի դէպի Սուլթան Ապաիւլ Համիտին զնգանը. ինձի աղէկ նայէ հարը կանիծեմ, կ'ջարդեմ, կ'փշրեմ, կ'խորտակեմ...

Բայց ես բանալով դուռը, գրեթէ փախայ հայ Շէֆքէթ փաշայի բնակարանից և ձգելով ինձ կառքը, քշել տւեցի:

— Վերջապէս դու ինձ մի փորձանքի բերելու ես պարհն, բարկանում եմ ես առաջնորդիս վրա, — ես քեզ ասացի տար ինձ Մահմուդ Շէֆքէթ փաշայի տունը, թէ՛ այպիսի մի խելառի.

— Վսեմապատիւ տէր, դուք ինձի չսիք Օսմանլի Շէֆքէթ փաշայի կուզէք, թէ հայ Շէֆքէթ փաշայի. հոս ինձի յանցանք չունիմ, վասնզի սահմանադրութենէ հտք հոս հայերուս մէջ ամեն բան կայ, սկսեալ մինիստր նախագահէն մինչև զինւորական տիքթատօր-հրամատարը իրենց ֆէրրաշներով. անանկ որ ասոնց իսկականը որոշելու համար պիտի հարցնիլ նախ հայ թէ օսմանլի ըլլալը:

— Դուք իրաւացի էք. համաձայնում եմ ես. — բայց միայն նայեցէք, որ այս անգամ թիւրիմացութեան մէջ չնկնենք. տար ինձ հայ լուսաւորչական սրբազան պատրիարքի տունը:

— Ան իջապէս է մենք բաւական ժամանակ պտոյտներ անելուց յետոյ, կանգ ենք առնում մարմարեայ մի փառաւոր ասպարանքի առաջ:

— Ապրելու նուրբ ձաշակ և փառաւոր հարստութիւն են ունեցել այստեղի բարձրաստիճան հոգևորականները, նկատում եմ ես.

— Այո, նոբին սրբազնութիւնը մեծ հարստութիւն ունի և աղոր մասին ինչ որ լեզնտներ կպտուին կապւած Գէորդ IV կաթուղիկոսին հետ էջմիածնում:

Դարձեալ կասկածելի բան: Բանաստեղծ Դուրեան, մարմարէ ասպարանք, Գէորդ IV կաթուղիկոս և դրա հետ կապւած լեզնդա ինչ որ հա-

ըստութեան մասին, կասկածելի...

Ներսէնք մտնում ապարանքը. բարապանը մեզ մարմարէ սանդուղքներով տանում է դէպի վեր: Մենք մտնում ենք արեւելեան ճաշակով, մօզայիկներով և դրւագաւոր քանդակներով զարդարւած մի շքեղ դահլիճ, ուր թագաւորում է թաւիշն ու մետաքսը: Սա այն դրախտներից է, ուր Աստուած ընաւ Եւա չի ստեղծել Ադամի հաւատոյ նիրհը չխանդարելու համար. բայց խորամանկ Եւաներն իրենք են, որ գաղտագողի մտնում են այստեղ ու Ադամներին խարելով՝ ուտեցնում են արգելւած պտուղը:

Հանդիսաւոր դռնից ներս է մտնում ալեխառն մազերով մի հողկորական, որի թափանցող և ազդու հայացքը գերիշխողի արտայայտութեամբ՝ նայում է դիմացինի վրայ. նրան տեսնելուս պէս, ես շփոթւեցի և մնացի տեղումս գամւած:

Դուրեան եպիսկոպոսի փոխարէն դիմացս է կանգնում Վահրամ արքեպիսկոպոս Մանկունին:

Ես նրան ճանաչում եմ շատ վաղուց: Ամեն մի Փարաջան 2-300 բուրլի պնահատելով, այս հողկորականը սպառնում էր ողջ հայութիւնը քահանայացոյնի. դժբախտաբար այդ ծրագիրը դեռ իւր լրիւ նպատակին չհասած, ջուրն ընկաւ, որովհետեւ Գէորգ IV կաթողիկոսը ազդն այս փորձանքից ազատելու համար շտապեց կնքել իր մահկանացուն և Վահրամ արքեպիսկոպոս Մանկունին էջմիածնից աճապարեց ապաստանել Կ. Պոլիս:

Քաղաքավարութեան օրէնքը պահանջում էր կօրրէկա լինել և ես փոխանակ յետ փախչելու՝ սեղմեցի նրա աջը և համբուրեցի:

Նա կարծես զարմացաւ և դժգոհ արտայայտութիւն ընդունեց, երբ ափը բաց արաւ և մէջը աջհամբոյր չտեսաւ:

— Բարի էք և կած, ասաց նա. ըշտէ չլլան քահանայանալու նպատակ ունիք. աղոր համար քանի մը օր ըպասելու է, վասն զի երէցփոխանական ժողով տակաւին վերջնական վճիռ չէ արձակած իմ տեղապահութեանս համար:

— Ես Ռուսաստանցի եմ...

— Ռուսիայէն, մտախոհ կերպով կրկնեց սրբազան Մանկունին: — Զլլան հիմակ ալ ինձի պիտի շրջապատին Ռուսիայէն հոս եկած գաղթականներ: Ո՛չ, սանկ ճակատ սգրական զուգադիպութիւն չի կրնար ըլլալ. ասիկա կատակ մնէ, զոր բնութիւն կ'խաղայ ինձի հետ: 1880 թւականներուն երբ կվարէի Գէորգ IV-ին կաթողիկոսական տիքթատուրան հայոց հողկորականութեան վրայ, ան ատեն տաճկահայ փախստականներ զիս կնեղէին, իսկ հիմիկ ալ ռուսահայեր. ինտնր կրնամ ասոնց հալածել. ան ատեն դեռ երիտասարդ էի և ուժեղ...

— Հանգստացէք սրբազան հայր, ստակ չիմ խնդրում. ես՝ ռուսահաժ գրականագէտ Պօղոս-Մէկունիս եկայ ձեզ այցելելու և անձամբ ստուգելու, թէ ձեր մնաց ութսունական թւականների այն հողկորականը, որ...

— Զոր համայն հայ հողկորականութիւնը իր ափին մէջ ճգմած, սանկ ալ կդարձնէր նանկալ. ան դանձմն էր, զոր ճակատագրի մը բերմամբ չէր որ կորսնեցաւ. այլ ամբոխի մը հալածանքէ երես դարձուց...

— Ամբոխի...

— Այո, ճիշտ Օրմանեանին պէս: Ասոր «Ազատական» ըսւած ամբօխին մէկ հատուածին ձեռքով, իսկ անոր «մշակական» ըսւած մէկ բանակին կողմէ, ու երբ հայ ժողովուրդ մէկու մը կուզէ տասալել, անշուշտ, ազդին դրամներու վատնումը կ'կապեն անոր ետեւէն և ահա ամբողջ 30 տարի է ի վեր Մանկունի կորսնցւեցաւ...

— Վաղը ազգային երեցփոխանական ժողովն է, անշուշտ. Դուրեանի հրաժարականը պէտք է ընդունել:

— Այո, ազգային երեցփոխաններ ինծի փնդտելու ելած են. վաղը թերևս դտնելու յաջողին. ան տտեան սա «ազատական» ըսւած հակառակորդներու հետ ճակատամարտի պիտի ելնեմ:

— Միթէ 'իւրք ազատական-բանակին չէք համակրում, չէ՞ որ...

— Ես ինքս աւելի ճշմարիտ ազատական եմ և կսիրեմ սահմանադրութիւնը, սակայն իմ ազատական գաղափարներ բնաւ եկեղեցիէն դուրս չեն ելներ և ասոր համար ալ անոր դոներ ամուր պիտի գոցեմ անոնց առաջ. ինծի Մանկունի կսեն. 30 տարւայ լուծենէ ետքը ոյժերս պիտի հաւաքիմ և անանկ պօռամ, որ ամենքն ալ յաւիտենապէս դուրս կորզւին եկեղեցիներէ: Մենք դարեր կեանք չենք մաշեր, որ անոնց համար աղօթատներու փոխարէն միթիւնկայի վայրեր ժառանգենք. փուած սփռոցի՞ կվազեն...:

— Ցանկանում եմ Ձեզ ոյժ և կարողութիւն, ասացի ես և մնաս ըարեաւասելով Մանկունուն, շտապով դուրս եկայ նրա ապարանքից:

— Նորից թիւրիմացութիւն, խիստ վրդովւած դիմում եմ ես իմ առաջնորդին.

— Թիւրիմացութիւն... վսեմապատիւ տէր, դուք չսի՞ք տարէք ինծի սրբազան պատրիարքին, ես ալ ձեզի հոս բերած եմ:

— Բայց պատրիարքը Մանկունին չէ այլ Դուրեանը:

— Ոչ, Դուրեանը չէ, այլ Մանկունին է:

— Բայց դուք կատարեալ խելառ էք և ինձ շփոթութիւններ լմէջ էք դնում:

— Վսեմապատիւ էֆէնտի, դուք զիս կվիրաւորէք. սա հարցը քննելու է, ես կսեմ որ Մանկունին է պատրիարք:

— Իսկ ես ասում եմ Դուրեանն է:

— Ես չեմ ընդուներ անոր պատրիարքութիւնը և պատրիարք չեմ ձանջնար, երբ ան բացականչեալ «ազատական» բանակը կպաշտպանէ:

— Դուք կատարեալ հոսհոս էք, ես ձեզ հետ կարիք չեմ զգում վիճելու, այժմ հեռացէք և ինձ ազատ թողէք:

— Վսեմապատիւ պարոն, դուք կվիրաւորէք իմ սիրար, որ ազգին համար կբարախէ. ես կրթւած անձնաւորութիւնմ եմ, երկու անգամ Ամերիկա գացած եմ, երեք անգամ Լօնդրա, հինգ անգամ Բարիզ, վեց անգամ Պուլկարիա և այլն. կցաւիմ, որ ինձի չէք ձանջնար և աղանկ կոպիտ վերաբերմուք մը ցոյց կուտաք. աղէկ, կերթամ, բայց վճարեցէք ինձի:

Ես տալիս եմ նրան օսմանեան մի ոսկի և օձիքս ազատում:

Միւս օրն ազատականները մեծ զգուշութեամբ և զինւորական մեծ հմտութեամբ մօտեցան հայկական Բաստիլիային՝ Ղալաթիայի մեծ խորհրդարանին: Երեցփոխանական ժողովը պաշարեց:

Թուրքիոյ կառավարութիւնը մի հարցապնդում ուղղից ներքին գործոց նախարարութեանը թէ. «հայերուն տրւած սա ներքին սահմանադրութիւնը չի խախտեր արդեօք Օսմանեան պետութեան գոյութեան հիմքերը»:

Ներքին գործոց նախարարութիւնը պատասխանեց.

«Բնաւ երբէք, ընդհակառակը, միասկիտական բռնութիւնը անոնց աւելի կմիացնէ և կամրապնդէ. չինք սխալւիր, եթէ սա կրօնական սահմանադրութեան քովն ալ զնենք ազգային ինքնավարութեան ազատութիւնը, ան ատեն ըստ ինքնավար նահանգներ պատերազմ սկսելով միմիանց դէմ այդ ազգին անունը միայն կմնայ պատմութեան մէջ և ուրիշ ոչինչ»:

Կառավարութիւնը տւաւ երկրորդ հարցապնդումը.

«Բայց սա սպառազինութիւնը և զօրախաղերը, որ կյիշեցնէ վիթխարի Սպարտան իր վիթխարի զիւցազններով»...

Ներքին գործոց նախարարութիւնը անպատասխան թողնելով, միայն չորս հոգի գափթիէներէ զրկում «Բաստիլիան» պաշարողներին դէմ — երեցփոխանական ժողովը պաշտպանելու:

Ասում են զինւորական հրամանատարը փախչելու ժամանակ հերոսաբար ձակատը պատին է կպցնում և քիթը ջարդում...

«Ազատական» հերոսներից շատերը յոյների գրպաններում են թաղնւում, իսկ մնացեալը մեծ քաջութեամբ յետ նահանջում դէպի սրճարանները:

Երեցփոխանական ժողովն ազատում է — տօթի ճնշումից, որ փչում էին Շահրիկեան զիւցազնները...:

Դուրեանը տապալում է...

Երբ ես այցելութեան գնացի պ. Ակնունուն, ինձ ասացին, որ «համաձայն յայտարարւած բիւլէտէնի, նորին մեծութիւնը ընդունելութիւն չի բներ»:

— Միթէ հիւանդ է:

— Ոչ, նորին վսեմութիւնը սաստիկ յուզւած է, Դուրեանին տապալման լուրն ատնելով:

Երկրորդ անգամ գնացի:

— Համաձայն բիւլէտէնի այսօր քիչ մը բարեհաջող գրութիւնն կտիրէ, վաղը եկէք:

Վաղը գնացի:

— Նորին վսեմութիւնն այսօր մարդ չի ընդուներ:

— Բիւլէտէն կանչ:

— Ոչ, այսօր խիստ զբաղւած է քաղաքական լուրջ ծրագրի մը մակարդակով:

— Ի՞նչպէս Կամերիկական ինդուստրիան արդէն վճռել է տեղափոխել թիւքիս:

— Ոչ, աւելի լուրջ խնդրով:

— Գաղթեա՛ծ հայերի վերագարձի՞ հարցով:

— Ոչ, աւելի կարևորագոյնը:

— Հայկական ինքնավարութեան խնդրով:

— Չէ, հսկայական ցոյց մը պիտի կազմակերպէ:

— Ծովային թէ ցամաքային:

— Հաւանական է, որ ցամաքային վասն զի ծովային ըլլալու համար քիչ մը նաւատորմիդին պակասութիւն կզգացւի:

Փոքր մարդ՝ հսկայական ծրագրներ:

Ես շտապեցի քանի որ թուքիոյ հորիզոնը չէ աղմուկել Ակնունու պարաստելիք քաղաքական փոթորիկներով, հրաժեշտ տալ Պօլսին, թողնելով միւս տեսակցութիւններս ապագային:

Վերջին գիշերը ես անցկացրի սոսկալի տագնապի մէջ:

Ամբողջ գիշերը լսում էր սոսկալի որոտ, թնդիւն, ճարձատիւններ և միահամուռ գրոհի հսկայական հոնդիւն: Տոյցն սկսած է, մտածեցի ես՝ թիւրքիոյ նորոգ սահմանադրութիւնը Ակնունու կազմակերպած ցոյցովը թերևս խեղդի և տեղի տայ քաղաքական բէակցիայի, կոտորած ու աւերածութիւնների:

Վեր կացայ, տակաւին գիշերւայ ժամը երեքն էր: Մտածեցի մի հնար գտնել կեանքս գոնէ ազատելու: Բայց մեծ հղաւ զարմանքս, երբ ճշուեց, որ այդ բոլորը մկների բարձրացրած աղմուկն է՝ հիւրանոցի առաստաղի հակում...

Այնուամենայնիւ Ակնունու ցոյցի անաւորութեան ուրւականը ինձ հանգիստ չէր տալիս:

Առաւօտեան դամը 6-ին շտապեցի հրաժեշտ տալ բոլորին: Մարդար աղան երբ լիովին ստացաւ իր վճարը, լաց եղաւ, ասելով որ «կցաւ իմ ձեզի նման մէկ ազնիւ հիւրէ մը զրկւելուս» համար:

Նոյնը կրկնեցին և բոլոր ծառայողները:

Պօլիսը, քաղաքական արհաւարիքների այդ դժբաղդ հնոցը, խորհրդաւոր լռութեամբ, ասես, սարսափից շունչը յորը քաշած, սպասում էր գալիք օրհասականին:

Մարդկանց մռայլ դէմքերը, կենդանիների տխուր նայւածքը, հղանակի ամպամածութիւնը, նաւերի լուռ սպասողական դրութիւնը և ամբողջ շրջապատը իրենց ճակատին կրում էին Ակնունեան քաղաքական ծրագրի սարսափի ուրւականը...

Ինձ ասացին, որ Եւրոպական դիպլոմատիան արտակարգ համազումար կազմելով, քննել է, թէ «Ակնունու քաղաքական ցոյցը միջուկային բարդութիւններ չի կարող առաջ բերել»:

Պատասխանը բացասական է կղել:

Միւս կողմից, կաուցկին և Բէքէլը մի շարք մտախոհ հեռագրներ են ուղարկել սօցալիստական աշխարհի մեծութիւններին, քրքրելու համար բոլոր գիտական գործերը, թէ «հայկական այս սօցիալիզմը ինչ բնաւորութիւն ունի, արդեօք, նա չի՞ խախտի Մարքս-էնգլիսեան գաղափարների թէ-

օրիան»։ Պատասխանը մնացիլ է դեռ չպարզւած...

Կէս օրւայ ժամը 12-ին լսեց թնդանօթների ահուկի որոտ։

Մեր նաւը պատրաստուել էր ճանապարհ ընկնելու։ Ծովային բոլոր ընակչութիւնը սարսափից գունատւեց։ Յոյցն սկսեց, ահամայ շշնջացի ես և մտայ նաւասեանեակս։ Մեր նաւապետը շտապեց խարխախ վերցնել և ժամ առաջ փախչել։

Նորից որոտ և թնդանօթների համազարկեր։

Մի վայրկեան, Ակնունու փոքրիկ մարմինը այնքան մեծացաւ և հսկայական մի ահաւորութիւն դարձաւ իմ աչքիս, որ մտզերս ոսկրացան ու բիզրիզ ցցեցին գլխիս վրայ։

Սուտ է, որ ասում են թէ հաւերը չեն կարող սաղի ձու ածել։ Ահա մի սաղի ձու որ հայկական հաւանոցումն է ածել։ Եւ ի՞նչ էք ասում, իմ ազգայնական ինքնասիրութիւնս բաւական բարձրացաւ և ես սկսայ սարժենալ Ակնունու անձնաւորութեամբ։

Նորից թնդիւն և որոտ...

Ես ահամայ գոչում եմ կեցցէ Ակնունին...

Մենք ճանապարհ ընկանք։ Պօլիսը թողինք նորից թնդանօթների որոտի մէջ և Բոսֆորի ափերից վառօղի ծուխը մթին մառախուղի նման սկսաւ բարձրանալ և ծածկել մայրաքաղաքը։

Դժբախտ Պօլիս...

Երկու ժամից յետոյ լուր է ստացւում.

«Թիւրքիոյ նոր գնած նաւատօրհիղը թնդանօթների որոտազին ցընծութիւններով մտաւ Պօլսոյ ջրերը։

«Կատարեց հայկական մի ցոյց։ Ազատականները խմբեցին Դուրեանի ընակարանի շուրջը և համակրութեան ցոյց արին. զափթիէների երևալովը նրանք փախան։

«Ազատականները ծակեցին հայ լուսաւորչական մի եկեղեցու կտուր և այնտեղից մտնելով աղօթատունը սօցիալիստական ճառեր արտասանեցին»...

Ես նստած տեղումս, երբ դիմացի հայելու մէջ նկատեցի իմ արտաքինս, նմանում էի այնպիսի մի մարդու, որի ձեռքից ամանով լի սպասը վայր է ընկնում և փշրւում է...

ՊՕՂՈՍ ՄԷԿՈՒՆԻ

Պօլիս.



Մ Տ Ի Ա Ն Կ Ո Ի Մ Ը

(ՄԱՐԿ ՏԻԷՆ)

Մի գեկեցում՝ կարգապահ Հարութօրդի Պատմա-Հնագիտական ընկերութեան մո-
ղովում եւ ներկայացրած 30 դոլարի մերցանակաբաշխութեան պրեմիային:

Պարոններ! Ամենից առաջ թոյլ տւէք նկատել, որ ես չեմ պատրաստ-
ւում ապացուցանել, որ իբր թէ ինքը՝ հէնց ստեղծ սովորութիւնը նւազում
կամ ընկնում է. — Ասուած չանի, ես այդպիսի մտադրութիւնից շատ հեռու
եմ: «Սուտը որպէս մարդկային բնութեան հիմնական յատկութիւն, որպէս
կենսական մի սկզբունք, — յաւիտենական է, կեանքի դժւարին մօմէնտներին
համար նա միտեսակ հանգրւան է, ուր կարելի է հանգստանալ և սիրտինք
գտնել. սուտը, — այդ չորրորդ հրասլուրանքը այդ տասներորդ մուսան, այդ՝
մարդու ամենալաւ և ամենաանձնէր ընկերը — անմահ է. նա յամենայն դէպս
երկրագնդի երեսից չի չքանայ, քանի գոյութիւն կունենայ այս բաղդաւոր
և մեծարելի հասարակութիւնը: — Ո՛չ, պարոններ, ինձ միայն վշտացնում է
ստախօսութեան արւեստի արդէն իսկ նկատելի նւազումը և անկումը:

Կարողէ՞ արդեօք գիտակից և զգայուն մարդը սառնարիւնութեամբ և
առանց վրդովւելու տեսնել ու տանել մեր օրերի սնարւեստ և անհունի
ստախօսութիւնը, անկեղծօրէն չվշտանալ, տեսնելով թէ ինչպէս ստո-
րացել է այն, ինչպէս պոռնկացրել և այլասեռել է արւեստներից այդ
ամենաազնւագոյնը: Ես ամաչում եմ նոյնիսկ իմ ընտրած այս թեմայի
մասին խօսել ձեզպէս մտահարուստ ժողովականներիդ առաջ, և ինձ թւում
է, որ իմ այս բանախօսութիւնը իմ կողմից մի այնպիսի համարձակու-
թիւն է, ինչպիսին կլինէր եթէ մի պառաւած աղջիկ մտածէր Իսրայէլի
սրդեսէր մայրերին սովորեցնել թէ ինչպէս պէտք է երեխաններին կերա-
կրել: Վսեմաշուք պարոններ! ես ընաւ մտադիր չեմ ձեզ քննադատելու.
դուք համարեայ բոլորդ էլ ինձնից տարիքով հասակաւորներ էք և այս
հարցում՝ ձեր փորձառութեամբ ինձնից գերազանց, և եթէ իմ այս կամ
այն խօսքը կամ ասածը ձեզ վրայ քննադատութեան տպաւորութիւն կթող-
նի, — խնդրում եմ, այն ընդունեցէք ոչ որպէս պարսաւանք կամ կշտամ-
բանք, այլ սակայն դէպի ձեզ տածած իմ անկեղծ հիացմունքիս հաւաս-
տիքը: Եւ յիրաւի եթէ սուտը, ամենապեղեցիկ արւեստներից այդ գեղեց-
կագոյնը, ամեն տեղ ունենար այսպիսի սրտաբաց ընդունելութիւն,
օգուէր այսպիսի լուսամիտ հովանարորութեամբ որպիսին ներկայ դէպ-
քում, այս ամենայարգելի ընկերութեան մէջ, — ինձ չէր վիճակւի նրա ան-
կումը այսպէս դառնագինս ողբալ: Այս սակայն, յարգելի պարոններ, ասում
եմ ոչ թէ ձեզ շոյելու նպատակով, այլ իորին համոզմունքիցս բղխած-
սկզբունքներով, որ ձեր արած ծառայութեանը պէտք է արժէքաւոր և ամե-
նաճշմարիտ գնահատութիւնը տալ: (Այս խօսքերից յետոյ ես մտադիր էի
մի քանի անուններ տալ և բերել շոշափելի օրինակներ, սակայն ժողովա-
կաններին միջից լուող շշուկները ինձ հասկացրին, որ այդ բոլորն աւելորդ
է, որ աւելի լաւ կլինի որ ես խուսափեմ մանրամասնութիւններից և բա-
ւականանամ միայն ընդհանուր գիտողութիւններով):

Դժւար թէ կեանքում կարելի լինի մատնանշել մի հատիկ այլ երևոյ-
թի կամ փաստի վրայ, որ այնպիսի հաստատուն և հիմնաւոր լինի, ինչ-

պիսին սուտն է, որը մեր առօրեայ փոխյարարերութիւններէ մէջ անխուսափելիութիւն է:—Այստեղից արդէն առանց երկար ու բարակ բացադրութեան հետեւում է, որ սուտը մի առաքինութիւն է: Սակայն իւրաքանչիւր մի առաքինութեան զարգացման ու բարգաւաճման համար հարկաւոր է աշխատասիրութիւն և վարժութիւն: Սրանից նոյնպէս հետեւում է, որ սուտը որպէս կեանքի առաջնագոյն առաքինութիւն, անհրաժեշտ է ուսուցանել ինչպէս դպրոցում և ընտանիքում, նոյնպէս և տպագրական խօսքի միջոցով: Ի՞նչ կարող է անել անկիրթ և ոչ մի դպրոց չանցած ինքնուստախօսը այն մարդու դէմ, որը սիստեմատիկ կերպով ուսումնասիրել է այդ առարկան: Օրինակ ի՞նչ համեմատութիւն իմ և միստր Պ...-ի մէջ, ասենք, հէնց թէկուզ իմ և առաջին իսկ քայլին պատահած փաստարանի մէջ: Աշխարհին պէտք է խելօք և կշռադատուած սուտ: Եւ յիրաւի, ես երբեմն մտածում եմ, որ մարդկանց համար լաւ կլինի և օգտաւէտ որ նրանք երբէք չստեն, քան անխելք և անմիտ սուտ ասեն:

Անմիտ և անարեւստ սուտը շատ յաճախ նոյնքան և ոչ պակաս անօգուտ և վնասակար է, քան՝ ճշմարտախօսութիւնը:

Այժմ տեսնենք թէ այդ առթիւ ինչպէս են արտայայտուում փիլիսօփաները:

Յայտնի առածը ասում է. «երեխաները և յիմարները միշտ ճիշտ են ասում»: Եզրակացութիւնը պարզ է. — հասակաւոր և խելօք մարդիկ երբէք չպէտքէ ճշմարիտ խօսեն: Պարկմէնը, — պատմաբան, — յայտարարում է. «ճշմարտութեան սկզբունքը իւր իսկ իմաստով — մի անհեթութիւն է»... մի այլ տեղում նոյն այդ առթիւ նա հիմնաւորում է հետեւեալ առածը, որ նոյնքան հին է, որքան ինքը աշխարհը և ասում է. — «ճշմարտութիւնը չ'պէտքէ ամեն ժամանակ ասել, մարդիկ որոնք մի տեսակ հիւանդութիւն ունին շարունակ ճշմարտախօս լինելու և յաճախ խանդարելու աշխարհօրէն ընդհանուր կարգը, — ո՛չ այլ ինչ են քան անտանելի յիմարներ»: Այս թէև մի փոքր ուժեղ, բայց տեղին է ասւած: Մեզնից և ոչ մէկը չէ կարող երկար ժամանակ ապրել, յարմարել այնպիսի մարդու հետ, որ սովորութիւն ունի շարունակ ճիշտ ասելու: Բարեբախտաբար այս երբէք էլ չէ պատահում: Ստի օգնութեան չ'զիմելը անմիտ երևոյթ է: Այդպիսի հրաշք երբէք գոյութիւն չէ ունեցել և չի էլ ունենալ: Կան, իհարկէ, մարդիկ որոնք կործում են, որ իրենք երբէք չեն ստում, բայց այդ իսկապէս այդպէս չէ: Նրանք ստում են ինչպէս և բոլորը, և նրանց ինքնախարէութիւնը որպէս խայտառակութեան կնիք դրօշմում է մեր, այսպէս ասած, քաղաքակրթութեան վրայ: Ամեն մարդ ստում է, ստում է, ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկեան, ստում է թէ արթուն թէ քնած ժամակ, նոյնիսկ՝ հրազելիս, ստում է երբ ուրախանում է և երբ տխրում: Երբ նա համր է, այդ դէպքում ստում են նրա աչքերը, նրա ձեռքերը, նրա ոտները, նրա մկանների իւրաքանչիւր շարժումը, մի խօսքով նա ամբողջապէս ստի արտայայտութիւն է լինում, որոնք մտացածին են լինում նոյնիսկ քարոզների ժամանակ...

Սակայն, կարծէք, ես սկսում եմ քաղաքավարութեան սահմանից դուրս գալ:

Այն հեռաւոր երկրում ուր ես մի ժամանակ սպրում էի, փափուկ սևոի ներկայացուցիչները սովորութիւն ունէին փոխայցելութիւններ անել իրր թէ սրտագինս պահանջ էին դրում միմիանց տեսնելու: Տուն վերադառնալու ժամանակ նրանք ուրախ-ուրախ աղաղակում էին. «մենք տասն»

և վեց այցելութիւնն արիք, սակայն տասնևչորս տեղում ոչ ոքի տանը չգտանք»։ Եւ այդ ուրախաձայն աղաղակներն մէջ պարզօրէն նկատուում էր, որ նրանք աւելի բաւականութիւնն են ստացել այն տասնևչորս անյաջող այցելութիւններից, քան՝ երկու յաջողածներում։

Հարց. արդեօք այս փոխադարձ այցելութիւնները կանանց խորուսիկ երևակայութեան ստեղծած մի պահանջ չէ, որի յայտարարը ամենաականջայտնի և սովորական ստախօսութիւնն է և որը միայն քաղաքավարութիւնից ստիպւած անւանուում է «ճշմարտութիւնից խուսափել»։ Անվիճելի է։ Բայց նման սուտ թոյլատրելիէ՞, անպայման։ Աւելին։ Նա գեղեցիկ է և պատուաւոր, որովհետև նրա նպատակը անհատական օգուտի մէջ չէ այլ, սակայն, մի անշահախնդիր դիտաւորութիւն՝ յիշւած տասնևվեցին բաւականութիւն պատճառելու։ Ստատարոյ ճշմարտասէրը ամենայն հաւանականութեամբ բարձրաձայն կ'այտարարէր, որ ինքը երբէք չէր ցանկանալ տեսնել այդ խմբի երսր և... և ինքն իրեն իշային դրութեան դրած կլինէր, որովհետև իր բոլորին անօգուտ պարզութեամբ վիրաւորած կլինէր մի քանի մարդու Այն հեռաւոր երկրի կանայք ունէին մի այլ սովորութիւն նոյնպէս... բայց վերջապէս նրանք իւրացրած ունէին սիրալիր ստախօսութեան հազար մի տեսակ ձևեր և նրաց մէջ չէիք պատահել մէկին գոնէ, որ նրանց այդ արտայայտումներին չվերագրէր ամենամաքուր դրդապատճառներն ու չյարգէր նրանց խելքն ու սիրտը։

Մանրամասնութիւնների մէջ չեմ մտնում։

Նոյն այդ հեռաւոր երկրի տղամարդիք ոտից ցզլուխ ստախօսներ էին։ Նոյնիսկ նրանց ամենասովորական հարցը «ինչպէ՞ս էք կամ ինչպէ՞ս է ձեր առողջութիւնը», ոչ այլ ինչ է քան ամենամեծ սուտը, որովհետև նրանց ինչ, թէ դուք ինչպէ՞ս էք ապրում, կամ ինչպէ՞ս է ձեր առողջութիւնը, եթէ իհարկէ, այդ մասին հարցնողը դազաղ շինող չէ։ Ու այդպիսի առօրեայ սովորական թեթև հարցին ինքներդ պատասխանում էք նոյնպէս սովորական ստով։ Սօ մարդ այդպիսի մի հարցի չէ պատասխանելու լայն գիտական և բժշկական քննութիւնների տւած հետևանքներով, որ այդպիսի հարցերի ժամանակ, ինքնին հասկանալի է, միանգամայն անհնարին է, այլ և պատասխանում է ինչպէս որ գալիս է, յաճախ նոյնիսկ տալով իր դրութեանը միանգամայն հակառակ պատասխան։ Ենթադրենք մի բոլոր, որ դազաղ շինողին դուք պատասխանում էք, որ ձեր առողջութիւնը այնքան էլ լաւ չէ, քնականօրէն ինքներդ դրանից ոչինչ չէք կորցնում, մինչդեռ ձեր այդ պատասխանը նրան բաւականութիւն կ'պատճառի։

Անհրաւէր այցելուն, որ իր երևալով ձեզ խանգարում է ու տհաճութիւն է պատճառում, սովորաբար ընդունում էք այսպիսի սրտագին ձևով. «ա՛խ, որքան ուրախ եմ ձեզ տեսնելու համար», իսկ ներքուստ խիստ վրդովւած մտածում էք. «եթէ հնար լինէր ես քեզ կուղարկէի մարդագէլերի մօտ, մանաւանդ ճաշի ժամակ»։ Եւ երբ նա պատրաստուում է գնալու, դուք մի տեսակ իրր թէ վշտացած այդ բանից, տխուր ձայնով հարցնում էք. «ինչպէ՞ս, դուք արդէն գնում էք», և իսկոյն աւելացնում «այցելէք շուտ, շուտ»... այս բոլորից երկու կողմերն էլ չեն վնասուում, երկու կողմերն էլ չեն խարւում, մինչդեռ այսպիսի պարագայում միանգամայն անտեղի կերպով արտայայտած ճշմարտութիւնը երկուսին էլ տհաճութիւն կ'պատճառէր։

Ես կարծում եմ որ «քաղաքավարութիւնից ստիպւած» այսպիսի ստերը միանգամայն խրախուսանքի արժանի են։ Ընդհանրապէս քաղաքավարութիւն ասած բանը իր բարձրագոյն արտայայտութեամբ, ինձ թւում է, մի

ամենահրաշալի ամբողջութիւն, հիմքից մինչև գագաթը ոսկէզօծած բարեացակամ և անձնագոհ ստի նմուշներով:

Այն ինչ որ այժմ ինձ սաստիկ վշտացնում է այդ — գհեռիկ և անբաղաքավարի ճշմարտութեան անընդհատ զարգացումն ու տիրապետութիւնն է: Լարենք մեր բոլոր ոյժերը, որպէս զի ջախջախենք, վերացնենք երկրի երեսից նրա իշխանութիւնը: Մարդկանց վիրաւորող և մլասող ճշմարտութիւնը ոչնչով չէ զանազանում պախարակելի ստից. ո՛չ մէկը և ո՛չ միւսը չ'պէտք է ասել: Մէկը որ իր ճշմարտախօսութեամբ ուրիշին պատճառում է տանջանք և վիրաւորանք, վախենալով մի գուցէ եթէ ուրիշ կերպ վարւի իր հոգին կմեղաւորւի, պարտաւոր է սկզբից մտածել, արժանի՞ է սակայն, այդպիսի հոգին փրկութեան, որպիսին իրենն է: Բայց նա, որը իր մերձաւորին օգնելու նպատակով հարկադրւած է եղել խարել, ծ, նա իր ինքնագոհ ստախօսութեան համար ամենայն հաւանականութեամբ երկնքի արքայութեան մէջ փառաւոր տեղ կունենայ և հրեշտակներին աստուծային փառաբանութեանը կարժանանայ: Վիրաւորական սուտը — գովական բան չէ, բայց նոյնքան և աւելի գովական բան չէ վիրաւորող ճշմարտութիւնը, — որը ընդունւած է և օրէնքի և իրաւաբանական տեսակէտից:

Ստի տարածւած բազմաթիւ տեսակներից ու ձևերից յիշատակելու արժանի է նաև «անխօս» (անձայն) սուտը: Այս, — լուրի՞եամբ քողարկւած ճշմարտութիւնը, — ոչ այլ ինչ է, քան նոյն սուտը: Շատ յամառ ճշմարտասէրներ մեղանչում են երևակայելով, եթէ իրենք չեն ստում խօսքերով, նշանակում է երբէք չեն ստում: Վերը յիշածս այն հեռաւոր երկրում ապրում էր մի բարեհոգի ազնւագարմ տիկին: Նրա մտածմունքները միշտ էլ բիւրեղի նման մաքուր էին, այդպէս էր նաև նրա ընաւորութիւնը: Զգիտեմ ինչպէս, մի անգամ նրա մօտ ճաշի ժամանակ, խօսակցութեան մէջ ես ասացի. որ «բոլոր մարդիկ ստում են». նա մի տեսակ ապշից ու կրկնեց. — «բոլոր», —: Այդ այն ժամանակներումն էր երբ աշխարհիկ քաղաքավարութեան և էտիակայի վերաբերմամբ՝ ինչպէս այժմ, այնքան էլ խստապահանջ չէին, — դրա համար էլ ես առանց այլևայլութեան ու քաշելու պընդեցի իմ ասածը. «այո՛, բոլորը, բոլորը առանց բացառութեան»: Նա համարեայ զայրույթով նայեց ինձ վրայ և ասաց. «ինչպէ՞ս, ինձ նոյնպէս դուք գնում էք այդ բոլորի շարքում»... — «Ի հարկէ, և դուք, ես կարծում եմ, աւելի վարպետօրէն»... — «Սաս... այստեղ երեխաներ կան», ասաց նա խորհրդաւոր կերպով, և խօսակցութեան նիւթը փոխելով, մենք սկսեցինք զրուցել այլ հարցերի մասին:

Բայց հէնց որ երեխաները դուրս գնացին, տիկինը իսկոյն դարձաւ նախկին խօսակցութեան: «Ես որոշիլ եմ կեանքումս երբէք սուտ չասել, և ո՛չ մի անգամ, լսում էք իմ այդ որոշումս չեմ խախտել»: Ես ասացի. «չնայելով իմ դէպի ձեզ տածածս խորին յարգանքներիս այնուամենայնիւ ես թող եմ տալիս ինձ ասելու, որ ձեր ինձ հետ ունեցած այս խօսակցութեան ընթացքում, սուտը ինչպէս ծխի քուլաներ ձեզնից անընդհատ դուրս է գալի»:

Նա խնդրեց ինձ գոնէ մի հատիկ օրինակ բերել:

Ես ասացի.

— «Համեցէք. անա Օկլէնդսկի հիւանդանոցի հարցումների այն թերի և չլրացրած թուղթը, որը ուղարկել էին ձեզ այն զթութեան քրոջ հետ, որին դուք պահանջել էիք ձեր ազգականի համար, երբ վերջինս վտանգաւոր հիւանդ էր: Այդ թուղթը պարունակում է զանազան տեսակ հարցեր, որոնք բնորոշում են նրա՝ գթութեան քրոջ պարտականութիւնները և ընդհանրապէս նրա վերաբերմունքը՝ դէպի հիւանդը: Օր. «հիւանդին հսկելու

իր հերթապահութեան ժամանակ երբեիցի չէ՞ քնել արդեօք նա», «չէ՞ մոռացել արդեօք ժամանակին զեղ տալ հիւանդին» և այլն և այլն: Ըստ այսմ ձեզ յատուկ խնդրում են տալ հնարաւորին չափ ամենաճիշտ և ամենամանրաման պատասխանները, որովհետև նախ հիւանդանոցի շահերն են այդ պահնանջում և երկրորդ, բոլոր թէկուզ ամենաաննշան զանցառութիւնները որ տեղի ունեցած կլինին նրա պարտականութիւնները կատարելու ժամանակ, պէտքէ ինակատի առնւեն: Չեր ասելով, գթութեան քրոջից դուք չափազանց դո՛ւ էիք, սակայն, նրա ունեցած բազմաթիւ լաւագոյն յատկութիւնները, դուք կարող էիք նկատել նրա հետ մի պակասութիւնը.— դուք երբէք չէք կարող հաւատացած լինել, որ ամենայն օր երբ նա մաքրում, ուղղում էր փոքրիկ Ջօնի անկողինը, նրան անկողնից հանելիս լաւ փաթաթում էր և ապա միայն նստեցնում մի կողմի վրայ, և խեղճ Ջօնին շարունակ դողում էր և անհամբեր սպասում, թէ երբ պատրաստ կլինի իր անկողինը:

Դուք ամբողջովին գրել լրացրել էք հարցումների թղթի միւս օրինակը և գթութեան քրոջ հետ ուղարկել հիւանդանոց: Սակայն, ասացէք խնդրեմ, ինչպէս կպատասխանէիք դուք թէկուզ այս հարցին, «չեն եղել արդեօք դէպքեր, երբ հիւանդը գթութեան քրոջ անփութութեան պատճառով մրսած լինի»:

Այստեղ ձեզ մօտ, — կալիֆօրնիայում-գրազ գալը սովորութիւն է. իմ կողմից ես դնում եմ 10 դօլլար, դուք դրէք թէկուզ 10 ցէնտ,— որ պատասխանելով այս հարցին, դուք չէք ստել»:

Նա պատասխանեց.

— «Ես չեմ ստել և հէնց այս պարագայում, այդ հարցի պատասխանը ես բաց եմ թողել»:

— «Ահա և դուք ստել էք այսպէս ասած՝ ստել «լռութեամբ»-ի սկզբունքով»:

-- «Այո, սակայն, այդ ի՞նչ սուտ է: Ի՞նչպէս կարող էի գրել այդ միանգամայն հրաշալի ազջկայ՝ այդ մի հատիկ պակասութիւնը: Այդ արդէն կլինէր չափազանց խիստ». պատասխանեց նա: «Ստել, — հակադրեցի ես, — պէտք է հէնց այն ժամանակ երբ ցանկանում են կատարել բարի գործ: Չեր ցանկութիւնը — գեղեցիկ է, եզրակացութիւնը — տհաս, իսկ դրա պատճառը — կշռադատութեան բացակայութիւն: Ցանկանում էք իմանալ ձեր այդ քայլի հետևանքը: Դուք զիտէք որ միտքը Ջէմսի որդի Վիլլին արդէն քութէշի ամենածանր տեսակով հիւանդ է: Դուք որ այնպէս հիացմունքով գովաբանել էիք այդ օրիորդին, նրանք հրաւիրել են նրան որ երեխային խնամի: Երևակայեցէք այսպիսի մի դէպք: Ամբողջ օրւայ չափազանց յոգնածութիւնից դադրած, ընտանիքից բոլոր անդամները գիշերը պարկում են քնելու, թողնելով երեխային՝ ձեր յանձնարարած օրիորդի ձակատագրական հսկողութեանը: Անշուշտ ձեր յանձնարարականը միտքը Ջէմսի ընտանիքին այդպիսի հաւատ դէպի օրիորդը՝ կատարելապէս կարող էր ներշնչել...»

Եւ ինչ, եթէ վաղը ես գամ ձեզ մօտ և մենք միասին գնանք ուղեկցելու դժբախտ Վիլլիի յուղարկաւորութեան հանդէսը, ... այդ դէպքում ինչ կասէք դուք, չէ՞ որ այսպէս թէ այնպէս դուք էլ կունենաք ձեր յայտնի բաժինը նրա վախճանման դործում և սկամայից կլինէք նրա գերեզմանափորերից մէկը:

Բայց ինձ արդէն լսող չկար....

Սօսակցուհիս, տիկինը վաղուց արդէն ժամը 30 մեկ արագնթաց քառածի կառքով սլանում էր դէպի միտքը Ջէմսը, այն հաստատ որոշումով,

որպէսզի նրան պատմի ամբողջ ճշմարտութիւնը այդ մարդասպան աղջկայ մասին — խեղճ Վելլիին փրկելու համար: Սակայն այդ ինքնին անօգուտ էր, որովհետև Վելլին բոլորովին առողջ էր: Ես ստեղ էի: Չնայելով դրան տիկինը հէնց նոյն օրն իսկ լրացրեց հիւանդանոցի հարցումների թերթիկը օրիորդի մասին և ուղարկեց հիւանդանոցի վարչութեանը, ընդամին գրելով հնարաւորին չափ բոլոր մանրամասնութիւնները և իր նկատողութիւնները օրիորդի անփութութեան մասին՝ դէպի հիւանդը:

Պարոններ! դուք տեսնում էք, որ ազնւագարմ տիկնոջ այս սխալը նրանում չէ կայանում որ նա ստեղ է, այլ՝ որ նա ստեղ է անգիտակցաբար:


Մինչդեռ տւեալ դէպքում անհրաժեշտ էր, որ նա գրէր ճշմարտութիւթիւնը և այդ ճշմարտութիւնը մեղմացնէր մի կեղծ հաճոյախօսութեամբ: Օր. «մի կողմից, սակայն, գթութեան այս քոյրը, — կատարելիութիւն է, նա հիւանդի մօտ գիշերապահութեան ժամանակ երբէք չէ քնում»... ուրիշ խօսքով պէտք էր թէև անշան, սակայն, սիրալիր մի ստով մեղմացնէր թէև դառն, բայց այս դէպքում՝ խիստ անհրաժեշտ ճշմարտութիւնը:

Սուտը — ունիվերսալ երևոյթ է. մենք բոլորս ստում ենք և չենք կարող չստել, դրա համար էլ խոհեմութիւնը պահանջում է որ մենք սկսենք եռանդուն կերպով վարժուել խելօք և մտածուած ստախօսութեան մէջ: Պէտք է սովորենք ստել բարի և ոչ թէ այլ նպատակի համար. ստել՝ մերձաւորի և ոչ մէր անձնական օգտի համար. ստենք սիրալիր, մարդասէր և բարեացակամ կերպով, ոչ՝ վիրաւորող, անխիղճ և չարամիտ կերպով: Ստենք պուխներս բարձր պահած, ուղղամիտ, պարզօրէն, արիարար և ոչ՝ ստրկացած, փոքրոգի մարդուկի նման, որ չզիտէ յարգել իր գերագոյն կոչումը, այն ժամանակ միայն կընկնի հոտած ու փթած ճշմարտութիւնը, որ վարակել է ամբողջ աշխարհը: Եւ այն ժամանակ միայն մենք կլինենք մեծ, կդառնանք բարեգութ ու գեղեցիկ, կհանդիսանանք այս երկրի արժանաւոր զաւակները, որտեղ ինքը ամենաբարի բնութիւնը չէ ստում միայն այն ժամանակ, երբ արդէն խոստանում է ամենավատ եղանակի նախաժամը...

Օ՛, այն ժամանակ միայն... բայց, պարոններ, ինձ որպէս սկսնակի, որ նոր է միայն ուսումնասիրում գեղեցիկ արւեստի այդ ճիւղը, չէ սաղում այս հարցի առթիւ դասեր կարգալ իրենից աւելի քան կօմպետէնտ այս հասարակութեանը:

Հանաքը մի կողմ. իմ կարծիքով, աւելի քան ցանկալի և օգտակար ստի ձևերի հարցը պահանջում է աւելի լուրջ և ուշադիր ուսումնասիրութիւն: Մէկէլ երբ արդէն ակնյայտնի է, որ մենք ստում ենք և հարկադրուած ենք յաւիտեանս ստել, — աւելորդութիւն չէր լինի, եթէ մի քանի ընդգծումներով պարզէինք, թէ ստի որ տեսակներն են աւելի ընդունելի և գործադրելի: Սակայն այս հարցի որոշումը ես թողնում եմ այս յարգելի ժողովին, որի անդամները կազմում են այնպիսի անհատներ, — որոնց շողօքորթելու համար չէ որ ստում եմ, — որոնք կարող են գեղարւեստի այս բարձր ճիւղում համարել ամենայայտնի վարպետները...

Ռուսերենից թարգմ. W.




Ասես, շատ է ցեխը սրտին դուր եկել՝
Ճահիճն է ընկել,
Դեռ ականջիս էլ թևերն է քսում
Կեղտոտ անասուն...

Քիթս մոտրրեց, ու դեռ քէֆ ունի,
Անքան կենդանի!
Աշխարհում, քանի ծիծեռնակներ կան,
Յեխն ու ճահիճը միշտ կան, կը մնան».—
Վերջացրեց խոզը
Իր յուզած խօսքը:

Տեղն է նկատում խոզը, իմ արև,
Ասենք—ճիշտ էլ է, արդար, ակներև.
Բայց միթէ աշխարհն աւերեց այնքան,
Որ խոզը դուրս դայ մաքրութեան պաշտպան:

ԱՐՔՄԻՄ-ԼԻԶԱ



«ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ»

(Էսթիզ իրականից)

Բոլորը, բոլորը ճանաչում էին նրան: Ճանաչում էի նրան և ես:
Յիշում էի հազիւ քսանչորս քսանհինգ տարեկան լինէր նա. առողջ,
կարմրերես, կայտառ, զւարթ. մանուսանդ զւարթ...

Նոր էր նա վերագարձել Պետերբուրգից, հետաքրքրւում էր ամեն բա-
նով, սրամիտ էր, կենդանի և ծիծաղկոտ:

Երբ նա կծիծաղէր բոլորն էլ ակամայ վարակւում էին, մի երկու
րոպէում այն շրջանում, ուր նա կար, ամեն ինչ փոխւում էր, ամեն ինչ
ծիծաղում, ուրախանում էր:

Իսկ նրա արտաքինը:

Մաքուր, ճաշակով, էլեգանտ՝ սկսած սիրուն գլխարկից, կոկեա փող-
պատից, մինչև այն գողտրիկ կօշիկներն ու գեղեցիկ ձեռնափայտը, ոչ նա
կրում էր իր աջ ձեռքին: Երեսն ամիլած, փոքրիկ բեխերը չարաճճի գէպի
վեր սրած, ձիւնի նման մաքուր վզնոցով ու գունաւոր շապիկով:

Ահա այսպէս էր նա մինչև կատաստրօֆան...

Անցաւ ընդամենը եօթ-ութ ամիս: Ես նրան այլ ևս չէի տեսնում. հա-
ւատացած էի, որ նա չւել էր արտասահման՝ բախտի, զւարճութեան և ծի-
ծաղի համար...

Այդպէս էի կարծում ես, այդպէս էին կարծում և ուրիշները այդ եօթ-
ութ ամսում:

Եօթ-ութ ամսում...

Գիտէ՞ք դրանք ինչ ամիսներ էին: Այն ամիսները, երբ ամեն ոք երեք
րուրի քսանհինգ կոպէկ վճարելով կարող էր երկու շաբթւայ մէջ և՛ խըմ-
բագիր դառնալ և՛ հրատարակիչ:

Եւ ահա մայիսներն ու ժողովները, փողոցն ու տպարանները լցւեցին
խմբագիրներով: Գեղարւեստական, գրական, հասարակական, ազգային, զի-
տական, տնտեսական, աւելին կասեմ՝ նոյն իսկ առետրա-արդիւնարեւական...

Եւ վխտում էին մեր աշխարհում դրանց խմբագիրները...

Վերջի վերջոյ քաղաքի ողջ միջնոլորդը այն աստիճան խմբագրական

դարձաւ, որ այլ ևս անկարելի էր շնչել: Լրագիր որ տեսնում էի սիրտո խառնում էր, և շտապում էի դեղատուն՝ նաշատիրի սպիրտ առնելու և մի երկու անգամ քթիս տանելու...

Բայց այդ էլ չէր օգնում...

Բարերազտարար օդը սկսեց փոքր առ փոքր մաքրւել և մի գեղեցիկ օր հրապարակից չքացան բոլոր այդ խմբագիրները իրանց թերթերով:

Ես յաճախ հանդիպում էի դրանցից մէկին կամ միւսին. գիտական թերթի խմբագրին տեսայ բակալէյնի խանութում գործակատարի պաշտօնով շաքար էր կոտորում, ազգային-հասարակական թերթի խմբագիրը սինեմոտոգրաֆներից մէկի մօտ երթեկողներից տոմսակ էր ուզում ու պատում, գրական-գեղարուեստական հանդէսի խմբագիր-հրատարակիչը տրամվայի կօնդուկտոր էր դարձել, քաղաքական-տնտեսականինը մտել էր կոնսիստորիա և գրագրի պաշտօնով արտագրում էր երէցփոխների հաշիւները...

Եւ այսպէս բոլորը:

Հրապարակի վրայ մնացել էին երեք-չորսը միայն:

Ահա այդ ժամանակ էր, որ ես մի օր փողոցում հանդիպեցի նրան Հանդիպեցի. բայց ինչ դրութեան մէջ: Նրա աչքերը փոս էին ընկել, քիթը սրւել, երկարացել էր, երեսի, այն մաքուր կարմիր երեսի վրայ բուսել էր մօրուքը և խառնւել դիտի խճճւած մազերի հետ, որոնք վաղուց է ինչ սանր չէին տեսել, վզնոցը այնքան կեղտոտ էր և այնպէս ծալծլւած, որ նրա վրայ հազիւ էր երևում այն սե լաթը, որ փողպատի տեղ կախւած էր նրա պարանոցից: Իսկ բաճկոնը. մաշւած, մուրի և թանաքի կեղտից իր գոյնը կորցրած, կախ ընկած. իսկ գլխարկը, վաղուց ներկի երես չտեսած կոշիկները՝ երկու երեք կարկատաններով. սարսափելի էին դրանք:

Բայց նրա հագուստի մէջ ամենից նշանաւորը նրա վարտիկն էր, ցածի մասում մաշւած և քնձըրնոտած, ծնկների մօտ գուրս պրծած և կախ ընկած, իսկ ետևի կողմից մի շարք զանազան ձևի և մեծութեան կարկատաններով, որոնց կողքերից երևում էր երբեմն սպիտակ անդրավարտիկը...

Դուք պէտք է տեսնէիք, թէ ինչ տաղանդաւոր հնարագիտութեան էր դիմում նա, ցանկանալով ցոյց չտալ վարտիկի ետևի մասի պակասները. նա խօսելիս մէջքը կանէր պատին. միայն այդ ժամանակ էր նա կարողանում երկու ձեռքերը ազատ շարժել, իսկ երբ պատ չկայ և նա զգում էր որ իրեն կարող են ամեն կողմից դիտել, այդ ժամանակ նա մի ձեռքով կը խօսէր, իսկ միւսով. բռնած մի քանի թերթեր, կպաշտպանէր հոքը խուզարկու աչքերից. այս վարժութիւնները այնքան ճարպիկ էին դարձրել նրա ձեռքերը, որ նրանք անգիտակցաբար կատարում էին նրա վարտիկի համար պահապան հրեշտակի դերը...

Տասնհինգ տարով պառաւած էր նա, տարիներով, որոնք մտցրել էին նրա երբեմն կրակոտ, կենդանի, ծիծաղող աչքերի մէջ և՛ վիշտ և՛ յոգնածութիւն և՛ թախիծ:

Ես այլ ևս անկարող էի լռել. տեսայ թէ չէ, լի անկեղծ խղճահարութեամբ, մօտեցայ նրան, բռնեցի ձեռքը և նայեցի նրա աչքերին...

— Ինչպէ՞ս ես, եղաւ իմ առաջին հարցը նրան:
— Ոչինչ, ապրում եմ... պատասխանեց նա մեղաւոր հայացքով:
— Ասա խնդրեմ, ի՞նչ անբաղտութիւն է պատահել քեզ հետ, հարցրի ես:
— Ոչինչ... առանձին ոչինչ: Ես... ես խմբագիր եմ... ահա եօթ ամիս
է ինչ հրատարակում եմ հայերէն մի թերթ (և նա տւեց թերթի անունը),
որը, չգիտեմ ինչու, չեն փակում և ահա ես կրում եմ իմ խաչը:
Ինձ համար այժմ ամեն ինչ պարզ էր...
Նա հայոց թերթի ոչ միայն խմբագիրն էր այլ և նրա հրատարակիչը...
Եւ ես նրան միթիթարեւու համար ոչ մի բառ չգտայ...

ՍՍԼ-ՄՍՆ



ՖԷԼԻԵՏՈՆԻՍՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Լև Տօլստոյը իր կեանքի վերջին օրերին քաշեց աշխարհային կեանքից և ապաւինեց վանքերը:

Եթէ դա ուրիշ գրականագէտներին մէջ չզարթեցնէ իր վնասակար հետևողականութիւնը և շատ շատերը չմտածեն հետևել Վիթիստի ՄԱՐԴՈՒՍ օրինակին, սակայն դա մեզ համար խիստ կորստաբեր է:

Նախ այն պատճառով, որ մենք հետևողականութեան սոսկալի հիւանդութիւն ունենք:

Երկրորդը՝ որ կատարւած փաստը հէնց շեշտում է մեր մի աւելի ևս հիւանդոտ կողմը:

Այն, որ Տօլստոյը ապաւինեց կղերանոցներում—վանքերում:

Եւ չէ՞ որ մեզնում առանց այն էլ բոլորը կղերականներ են—«տիրացուներ»:

Ներեցէք, այսպէս անւանելուս, ես յանցանք չունիմ, նախ հէնց իրենք՝ մեր գրականագէտներն են միշտ շեշտում և գործածում այս բառը, և երկրորդ, որ իրօք մենք միշտ մեր կուլտուրայի ու քաղաքակրթութեան միակ աղբիւրը գտնելու համար, Մովսէսի գաւազանով խփում ենք միշտ վանքերի ու եկեղեցիների պատերին:

Փաստէր էք ուզում:

Տաճկահայ—այդ իսրայէլի առաջնորդ սօցիալիստ և արմատական Մովսէսները Մարքս-էնգէլսեան գաղափարներով սարսափելի ոգևորւած թէև արշաւում են դէպի կօսմօպօլիտիզմի փարախը, բայց այնուամենայնիւ որքան հեռու են արշաւում, էլի գալիս են կաշում իրենց մօր կողքից՝—եկեղեցու պատերից և դրանց «քաղաքական» պայքարը պառւած մուխսիների աղօթատներից հեռուն չէ անցնում: Եւ եթէ Եւրոպայում ծայրահեղ ձախակողմեաններն իրենց ահաւոր գործադուլներով քարուքանդ են անում գործարաններ ու երկաթուղու գծերը, մեր սօցիալիստներն էլ քարուքանդ են անում եկեղեցու խարխուղ դռները, օդն աղմկում «բաց ու գոցի» խնդրով:

Սա տիրացութիւն չէ:

Կուլտուրան և քաղաքակրթութիւնն Եւրոպայում տօնում է օդի և

վերսլացման յաղթանակը, այրօսլանների կատարելագործութիւնը:

Այստեղ՝ մեղնում «ազատամիտ» թերթերը տօնում են Փառաջաւորների թաղումը, նրանց ձեռնադրութիւնը, նրանց մեռելութիւնից նորէն կեանքի հրաւիրելն և մասսային Փառաջաւորների խունկ ու մոմի բուրմունքներով ոգևորելը:

«Մշակ»-ը աւելի շատ է գրում և ոգևորում քահանայի մի Փառաջայով, քան մի որևէ աշխարհիկ հարցով:

Մեր նորագոյն վիպասաններն ու բանաստեղծները որքան էլ ուզում են նոր գաղափարների վարդապետութեան պատգամ հնչեցնել, բայց կրկին տիրացուական փոշին և նրա գլխարկն է մէջ տեղ գալիս:

Մեր հասարակութիւնն աւելի շատ է ոգևորում քահանայի մի կամիլաւկայով կամ խառա փիլոնով, քան որևէ մի հասարակական ընտրութիւնով:

Եւ որ մենք տիրացուներ ենք՝ դա աքսիօմա է, և դրա համար պէտք չէ փնտռել էնցիկլօպիդիան բառարան:

Ահա հէնց չարիքն էլ այստեղ է և Տօլստոյը մի ահագին քար էր, որ ձգեց մեր ջրհորը:

Եւ այժմ մենք կտեսնենք մի օր ի՞նչ:

Այն որ սլ. Քալանթարը կգնայ հանգստանալու Վրաստանի և Իմէրէթի առաջնորդական աթոռի վրայ:

Պ. Հ. Առաքելիան՝ Ղարաբաղի թեմը:

Պ. Ահարոնեանը Մօսկվայում քահանայ կձեռնադրուի, երբ կմեռնի է. ք. Նազարեանը:

Պ. Յ. Թումանեանը կերթայ ձգնելու Սանահնի վանքում:

Պ. Աթանասեանը Երևան կգայ քահանայական պաշտօնով և այլն և այլն: Իսկ ոյք են, «որք ընտրեալք լիցին սօցիալական վարդապետութեան ի կովկասահայս»:

Այստեղ արդէն «և եղիցին յետինք առաջինք, իսկ առաջինք՝ յետինք»: Կղերական, այսինքն կրօնական մենաստաններից ու վանքերից պիտի սկսուի Փառաջաւորների արտագաղթ դէպի աշխարհիկ կեանքը, քարոզելու մարքսիստական գաղափարները:

Հեռացած և երբեմնի վարդապետ Երևանդ Տէր-Մինասեանը՝ այժմ աշխարհիկ կեանքում առանձին ոգևորութեամբ հետևում է սօցիալական խնդիրներին, որպէս զուտ աշխարհական:

Փառաջան վայր դրեց Եղիշէ Մուրադեանը և այժմ պարապում է տընտեսական հարցերով:


Շուտով կհեռանայ Խորէն վարդապետ Լազարեանը նորէն շարունակելու իր ոսկերչութեան արհեստը և աշխարհիկ կեանքը:

Թէև այժմ Բենիկ վարդապետը մի մեղայականով քաւեց իր չունեցած յանցանքը և իր դուրս դրած ոտքը նորէն ներս դրեց դէպի վանքը, բայց յարմար առիթը չի փախցնի, իր սքեմը վար դնելու, թօթափելով կղերական փօշին իր ազատամիտ սկզբունքներից:

Իսկ ֆառաշաների սքեմ հագած սօցիալիստ «Հովիտ»-ը իր խմբագրական օպաօզիցիօն և բողոքաւոր ամբողջ տարրերով պարզելով ծայրահեղ ձախակողմեանի դրօշակ, կսկսէ հարւածել մեր տիրացուական ու կղերական բոլոր թերթերին, որպէս դուալիզմի խիստ թթվութիւնով վարակած օրգաններ:

Ահա, թէ ինչ յեղաշրջում կարող է առաջ բերել մեզանում և Ծօլստոյի օրինակը:

Մէ-ԲՈՒՆԻ



«ՇԱՆԹԷՔԼԵՕՐ»

Երեկոյեան նոր էի տուն գնացել: Սենեակումս մենակ նստած վերցրի սեղանիս վրայ դրած նոր ստացած ամսագիրը և սկսեցի թերթել: Հէնց առաջին իսկ երեսներից մէկում, աչքովս ընկաւ կանացի մի նկար՝ հագնուած Փարիզի ամենավերջին մօդայով— «Շանթէքլեօր»:

Երկար նայում եմ և յանկարծ սկսում ինքս ինձ ծիծաղել:

Տէր Աստուած. սա ինչի՞ է նման, կատարեալ մի ձուկ, այն ևս պոչի վրայ կանգնած, սակայն սա ոչ ձուկ է, ոչ մարդ և ոչ էլ թռչուն: Այսինքն այնպիսի մի կենդանի, որ ընդունակ չէ ոչ ջրում լողալու, ոչ օդում թռչելու և ոչ էլ գետնի երեսին քայլելու:

Բայց տեսէ՞ք, կարծես նա ուզում է շարժել, ուզում է քայլել, բայց ես տեսել եմ, որ նրանք չեն քայլում, այլ պոչի վրայ թռչկոտում են որպէս կենդուրունք:

Կին և կենդուրու, բայց անիծեալ մօդան ի՞նչեր ասես չէ կարող ստեղծել այժմ մեր կանանցից:

Յանկարծ միտքս պաշարւում է ինչ որ մի չարագուշակ երկիւղով. ըսկսում եմ մտածել. ո՞վ գիտէ, գուցէ մի օր վճռում եմ յիմարանալ, յիմարանալուց յետոյ էլ իհարկ է—ամուսնանալ, իսկ ամուսնանալուց էլ յետոյ, կինս հագնելիս լինի այդպիսի մի զգեստ՝ «Շանթէքլեօր»:

Երևակայեցէք, որ մենք մի տօն օր դուրս ենք գալիս գրօսնելու, իսկ այդ գրօսանքի ժամանակ դէմ ենք առնում մի մեծ ջրի, որի վրայով թռչելը անխուսափելի է: Այ քեզ բան, դիցուք թէ ես թռայ, ի՞նչ իմ կենդու... ախ ներողութիւն իմ կինս, նա խօսմ շարժել չի կարող:

Ուրեմն:

Էլ ի՞նչ ուրեմն, պէտք է շալակես և ջուրը անց կացնես:

Այո՛, պէտք է շալակել, ուրիշ միջոց չկայ. բայց յետոյ: Յետոյ էլ այն կլինի, որ ամենքը կսկսեն վրադ ծիծաղել և գուցէ նոյնիսկ սուլոցներով էլ ուղեկցեն քեզ:

Օ՛ճ, դա խայտառակութիւն է, ես բնաւ այդպիսի մի յիմարութիւն չեմ անի:

Այս «ամենակենսական» խնդրով էի զբաղւած, երբ ներս մտաւ ծառան

ու սեղանիս վրայ դնելով մի ծրար, հեռացաւ:

Կամացուկ տեղիցս շարժւեցի, վեր առայ ծրարը, բաց արի ու սկսեցի կարդալ:

Մի երկտող էր միայն, ուր ընկերս գրում էր թէ. «սիրելի Ա. . .
«Այսօր մեզ մօտ հաւաքւած են մի քանի ծանօթներ մի փոքր ուրախ
«ժամանակ անց կացնելու, դու ևս շտապիր գալու: — Քո Ս. Ա.

«Յ. Գ. Հն, չմոռանամ ասելու նաև, որ հրաւիրածներիս մէջ կան մի
«քանի նոր ծանօթ օրիորդներ էլ»:

Ընկերոջս այդ հրաւէրը ամեն ինչ մոռացնել տւեց ինձ: Ես իսկոյն
վեր թռայ տեղիցս, հանեցի պահարանից նոր շորերս, հագնւեցի միանգա-
մայն «շիկ», լաւ սանրւեցի, պիտերս էլ նոր կատարելագործւած գործիքներով
ոլորեցի, թաշկինակիս վրայ էլ հոտաւէտ իւղիւր ցանեցի, մի խօսքով ըս-
պառազինւելով կանանց վրայ յաղթանակ տանելու բոլոր զէնքերով, դուրս
եկայ տանից ու կառք նստելով հասա հրաւիրատեղը:

Դեռ դռան մօտ նոյն իսկ, ընկերս ինձ դիմաւորեց, որ խիստ ուրախ
տրամադրութեան մէջ էր գտնւում:

— Ապրես մեր տղայ, լաւ շիկ ես դուրս բերել, ասաց նա ու թևս թե-
ւին առնելով, տարաւ դահլիճ, հերթով ներկայացնելով բոլոր հիւրերին, ծա-
նօթացրեց ամենքի հետ:

Ամենից վերջը ես բաղդ ունեցայ ծանօթանալու մի օրիորդի հետ, որը
ըստ երևոյթին այնքան էլ վատ չէր իր գեղեցիկ արտաքինով: Ընկերս հրա-
ւիրեց ինձ նստել նրա կողքին և զբաղեցնել նրան:

Եւ մենք սկսեցինք զբաղւել . . .

Ինձ իհարկէ ես պահում էի շատ կօրրէկտ, իսկ օրիորդը խիստ նա-
զանքով և քնքշութեամբ ժպտում էր իմ ամեն մի խօսքին պատասխանելու
ժամանակ:

Մեր խօսակցութիւնը սկզբում սկսւեց գրականութիւնից: Մենք ըս-
կսեցինք, իհարկէ, քննադատել հայ, ռուս և եւրոպական դրական դէմքերը,
վերլուծելով նրանց գրւածքները գրական ու իդէական բարձրութեան տե-
սակէտից: Ապա խօսքը անցաւ քաղաքականութեան, Բաղդադի ու Հընդ-
կաեւրոպական նոր կառուցելիք երկաթուղիների մասին. ինչպէս և Արա-
բիայի ու Ալբանացիների ապստամբութիւնների շուրջը: (Բայց խօսքը մեր
մէջ մնայ, երկուսս էլ այդ խնդիրների մասին այնքան գաղափար ունե-
ինք, որքան և կարող էինք ունենալ Չինական քաղաքականութեան մասին):

Ապա մեր խօսակցութիւնը արագ կերպով հեռաւոր սահմաններից ըս-
կսեց մօտենալ առօրեայ հասարակական խնդիրներին, յետոյ մօղաներին, յե-
տոյ մենք սկսեցինք բամբասել սիրահարւածներին, մինչև որ խօսքը մաս-
նաւորեց մեր անձնականին, մեր հոգեկան ու մտաւոր ապրումներին:

Այստեղ արդէն, թիւը գնում էր դէպի սիրոյ բացատրութիւնը ու
թերևս հէնց այդ բոլորին էլ մենք զգացմունքների արտայայտութեան զը-
րական քայլեր անէինք, եթէ մեզ չհրաւիրէին ընթրիքի:

Պէտք է ասած, շատերը նախանձում էին մեզ, նոյնիսկ մի օրիորդ էլ

Թոյլ տւեց՝ իրեն մեր երկուսիս հասցէին անել մի այնպիսի կօմպլիմենտ, որը աւելի ևս արագացրեց մեր մերձեցումը:

Երբ սեղանը վերջացաւ, քանի անգամ զիջանելով սեղանակիցներին թախանձանքներին ես երգեցի մի քանի երգեր, մենք արդէն սիրահարուցինք և բացադուբեցինք միմիանց հետ:

Կէս զիշերից անց էր, երբ բոլորս վեր կացանք տուն գնալու: Բայց ընկերուհիս մենակ էր, նրան պէտք էր ուղեկցէի մինչև իրենց տուն:

Ամենից վերջը մենք դուրս եկանք:

Գիշերը մութն էր, լուսին չկար:

Մենք թւանցուկ արինք և սկսեցինք գնալ մթութեան մէջ, նեղ փողոցներով:

Սակայն այդ նեղ ու դժւարանցանելի փողոցներն ու խաւարը որքան անախորժ բաներ էին, և մենք արտաքուստ դատապարտում էինք քաղաքային վարչութեան անփութութիւնը, սակայն երկուսս էլ զգում էինք, որ այդպէս աւելի լաւէ, քան լուսաւորութիւնը:

Ճանապարհներս դիտմամբ երկարացնելու համար, անցանք մի ուրիշ փողոց, որը աւելի խուլ էր և խաղաղ:

Ոչ ոք չկար, և այստեղ միայն կատարուեց այն երջանիկ քայլը, որ սիրոյ առաջին նշանն էր: Մեր տաք շրթունքները հանդիպեցին միմեանց և մենք ջերմ ու քաղցր համբոյրներ փոխանակեցինք:

Տունը արդէն մօտ էր, սակայն մթութեան մէջ մենք յանկարծ հանդիպեցինք մի քանդաւածքի, որի վրայով անպայման պէտք էր թռչել: Մենք կանգ առանք: Իմ պարտականութիւնս էր օգնել ուղեկցուհուս՝ թռչելու այդ տեղից, իսկ փոսը մթութեան մէջ պարզուում էր աւելի և աւելի դէպի հեռուն և խորը:

Սակայն հէնց այդ ժամանակ միայն սթափուեցի, տեսնելով որ ընկերուհիս հագած է «Շանթէքլիօր» զգեստ, բառի բուն իմաստով:


Այ քեզ բան: Յետոյ, չէ՞ որ նա չի կարող թռչել, նրա քայլերը իսկ և իսկ նման էին կենդուրու-ի ցաթկոցին: Յետ դառնալ անկարելի էր: Ուրե՛մն:

Պէտք էր շալակել ու անցկացնել փոսովը:

Բայց դա այնքան էլ վատ ծառայութիւն չէր, չէ՞ որ նա բաւական քնքոյշ է և դեղեցիկ...

Եւ օգտուելով մթութիւնից, կանգնեցրի նրան մի քարի վրայ ու շալակելով անցկացրի փոսը...

ՄԱՐՏ. ՌՈՒՇԱՆԵԱՆ



*
*
*

Բանկիրի որդին. (վազ է վազ ներս մտնելով իրենց տնային բժշկի ընդունա-
րանը) — Օ՛, բժիշկ ես կորած եմ. մեր նոր աղախինը խօլերայով
բռնւած է, իսկ այսօր առաւօտեան ես նրան համբուրեցի. (տեսնելով
հօրը, որը նոյնպէս մտաւ բժշկի ընդունարանը, ինքը դուրս փախաւ):

Բժիշկ. — Բարեկամ, հետեցէք ձեր որդուն, նա այսօր առաւօ-
տեան համբուրել է ձեր նոր աղախնու հետ, իսկ նա խօլերայով
վարակւած է:

Բանկիր. — Ինչէք ասում. Աստուած իմ, այդ դէպքում ես
նոյնպէս խօ կորած եմ:

Բժիշկ. — Դուք նոյնպէս. յուսով եմ սակայն, որ դուք այնքան
յիմարացած չէք եղած, աղախունուն համբուրելուց յետոյ՝ համ-
բուրել նաև ձեր կնոջը:

Բանկիր. — Տարաբախտաբար այ՞. ես այսօր համբուրել եմ
կնոջս նոյնպէս:

Բժիշկ. — Աստուած իմ... այդ դէպքում ես էլ եմ կորած...

Ամուսինը. — Ժէնիա, այդ ինչ նորութիւն է, դու թոյլ ես տա-
լիս, որ այն անպիտանը համբուրի քո մազերը:

Կինը. — Մի վերաւորելիք Սերգէյ, նա իմ մազերը համբուրելու
ունի կատարեալ իրաւունք, որովհետև ներկայիս իմ մազերը սլառ-
կանում են նրա հանգուցեալ կնոջը, որին նա այնպէս վառ ու կը-
րակոտ կերպով սիրում էր:

— Լսեցէք, Բարոն, բոլորը ասում են, որ դուք մտադրւել էք
ինձ հետ ամուսնանալ, որովհետև ձեր պարտատէրերին փող է նար-
կառու:

— Օ... դրանց միք հաւատալ, յարձելի օրիորդ, եթէ իմ պար-
տատէրերին փող հարկաւոր լինի, այդ դէպքում իրենք էլ կարող
են ամուսնանալ:

Ամուսինը.—Մեր մէջ ամեն ինչ արդէն վերջացած է: Դեռ ես իմ պաշտօնատեղին չհասած, դու ինձ խաբեցիր: Մի աշխատիր արդարանալ, որովհետև հէնց այսօր ես քեզ բռնեցի in flagrante:

Կինը.—Ես բոլորովին չեմ էլ աշխատում արդարանալ, ինքնատու ինձ խաբեցիր:

Ամուսինը.—Ե՛ս... ինչպէ՞ս...

Կինը.—Այո, դու, որ փոխանակ երկու շաբաթից յետոյ տուն վերադառնալու, ինչպէս ասում էիր, վերադարձար երեք օրից յետոյ:

Սէրը տղամարդկանց համար կեանքի նպատակ է, իսկ կանանց համար այն միայն միջոց: Ահա միակ դէպքը, ուր միջոցը արդարացնում է նպատակը և ոչ ընդհակառակը:

—Ինքներդ ոչ աւելի ոչ պակաս մի մանուֆակտուրային խանութի գործակատար էք, և յանկարծ... համարձակում էք իմ աղջկայ ձեռքը խնդրել:

—Սակայն, ինչ մեծ դժբախտութիւն է այդ. եթէ այդ ձեզ դուր չի գալիս, ես կարող եմ թողնել այն, միայն թէ, դուք ձեր աղջկայ վրայ շատ փող տաք:


Մէկ կինը — կին է:

Երկուսը՝ — բազար:

Երեքը՝ — տօնավաճառ:

Չորսը՝ — Սողոմ-Գամար:

Հինգը՝ — աշխարհի վերջ:



ԹՈՂԷՔ ԻՆՁ...

Թողէք ինձ, որ լամ կեանքս հալ ու մահ,
Անորոշ բախտիս շէմքին՝ ծնկաչոք,
Տրտունջը լսել յուսաբեկ հոգուս
Յաւիտեան... ու թող չխղճայ ոչ ոք:

Թողէք ինձ միայնակ հեռաւոր դաշտում,
Իմ արցունքներից ես լիճ կկազմեմ
Ու այն լճի մէջ հոգիս պահ կտամ,
Միևնոյն է, բախտը չի ժպտում իմ դէմ...

Հացող հողմերի սև-հառաչներից
Ես բաժին կառնեմ, ու երբ ծարաւ եմ—
Կնշտ-կնշտ կխամեմ աղի լճակից...
— Հոգուս սէրն է այդ, թողէք, խնդրում եմ:

ՏԻՂԵՔՆ ԵՒ ՏԷՐՈՒՆԵԹ

* * *

Շուրջս մռայլ, շուրջս տխուր—
Մահն է խօսում իմ ականջին.
Մութը գրկած անսէր, անլիւր—
Հնու ընկած եմ ես անմեկին...

Լեռն է տնքում, սմայն է ճայթում
Իմ չոր-զլիսին թախծոտ ժամին,
Ու խե-հոգիս դուրս է սողում
Չուլնում մռայլ այդ մահերգին...

Ն Ա Ր Գ Ի Ձ

Մ Ա Պ Ն Ի Տ

(Ռուսերէնից)

I

Կեանքիս մէջ առաջին անգամ ես իմ սեփական տելեֆոնը ունեցայ, և դրա համար ես այնքան ուրախ էի ու այնքան հպարտ, ինչպէս փոքրիկ երեխան իր սիրած խաղալիքի համար:

Առաւօտեան երբ ես տանից դուրս էի գնում, մի կեղծ անփութութեամբ կնոջս ասացի.— Եթէ որեէ մէկը ինձ տելեֆոնով հարցնելու լինի,— հարցրու ձվ է և համարը նշանակի: Ես շատ լաւ գիտէի, որ ամբողջ աշխարհում բացի տելեֆոնի կայարանի ծառայողներից և ինձնից ուրիշ ոչ ոք չգիտէ, որ այդ օրը առաւօտեան ժամի ութից ես ունիմ իմ սեփական տելեֆոնը: Բայց այնուամենայնիւ հպարտութեանս և պարծենկոտութեանս կիրքը ինձ այն աստիճան էր կլանել, որ երբ նախասենեակում ես հագնւում էի, նոյն պատէրը բացի կնոջիցս՝ ես տւի աղախնին և ութ տարեկան աղջկանս՝ Կէտտիին:

— Եթէ որեէ մէկը ինձ տելեֆոնով հարցնելու լինի.— հարցրէք ձվ է և համարը գրեցէք:

— Պատրաստ եմ ձեր հրամանին աղա.— ասաց աղախինը:

— Շատ լաւ, հայրիկ ջան, կրկնեց Կէտտիին:

Փողոց դուրս գալով, ես գնում էի այնպէս հպարտ ու վեհօրէն, որ երբէք չզարմացայ ու չվրդովեցի, երբ յետևիցս երկու անցորդներ սկսեցին իմ մասին խօսել:

— Նայիր, որքան հպարտ է նա:

— Այո, նա այնքան յիմար ու ծիծաղելի արտայայտութիւն ունի, որ կարծես հէնց այսօր սեփական տելեֆոնի տէր է դառել:

II

Տուն վերադառնալով, ես անասելի կերպով մնացի զարմացած ու շիւլարած աղախնուս վերաբերմունքից: Դուռը բանալով, նա ինձնից փախաւ, վէշէլկայի յետևը մտաւ ու նշան արեց որ իրեն մօտ գնամ:

Ես մօտեցայ նրան ու հարցրի.

— Ասան, ի՞նչ կայ:

— Աղան, աղան, — փափաաւով և ծիծաղը հաղիւ պահելով ասաց նա. — գիտէ՞ք, ձեզ մի բան պէտք է հաղորդեմ, միայն թէ այնպէս անենք, որ տիկինը չլսի:

Սկզբում ես կարծեցի, թէ նա հարբած է. յետոյ էլ ինձ թւաց, թէ ես իմ գեղեցկութեամբ հրապուրել եմ նրան և նա առաջարկում է ինձ, որ իրեն հեա յանցաւոր յարաբերութիւն ստեղծեմ:

— Դէհ, ասան, ի՞նչ ես ուզում, — հարցրի բարկացած.

— Աղան, սուս կաց, կամաց: Այս գիշեր Վերա Պաւլովնայի մօտ չգնար, որովհետեւ նրա ամուսինը այսօր այլևս Մոսկվա չէ գնում:

Ես ապշած նայում էի աղախնու խորհրդաւոր ու ժպտացող դէմքին, և հէնց այդտեղ ըմբռնեցի, որ նա առաջւայ նման դէպի ինձ անտարբեր է, սակայն ալկոհոլը զրկել էր նրան գիտակցութիւնից և նա դուրս էր տալիս ամեն ինչ, ինչ որ խելքին բրդում էր:

Այդ ժամանակ երեխաների սենեակից դուրս թռաւ Կէտտին, փաթաթուկից պարանոցովս ու սկսեց լալ:

— Ի՞նչ է պատահել. — անհանգստացած հարցրի ես.

— Ա՛խ... խեղճ հայրիկ... ինձ մեծ ցաւ կպատճառի եթէ դու կուրանաս... հայրիկ ջան, լաւ կլինի որ դու թողնես այդ չոր Բէլսկուն, այդ կատիւն:

— Ո՞ր... Ռ... Բէլսկուն հառաչեցի ես, ուղիղ նայելով նրա արտասուածքին:

— Քո սիրուհուն... դերասանուհուն... Կլէմանսը ասում է, որ նա մի շար կատու է: Կլէմանսն ասաց նաև, որ եթէ դու նրան չթողնես, նա քո աչքերը աղաթթվուտով կայրի, և յետոյ նա խնդրում էր, որ դու անպատճառ նրա հետ այսօր տեսնես: Մայրիկին ես այս բոլորը իհարկէ չեմ ասել, որպէսզի նրան աւելի չբարկացնեմ ու չջղայնացնեմ: — Ես այլևս անկարող համբերել՝ Կէտտին մի կողմը հրեցի ու վազեցի դէպի կինս:

Նա իմ առանձնասենեակում էր. գրասեղանիս առաջ նստած, տիւիֆոնի խողովակը ձեռին բռնած, արտասուկից ու դողդոջուն ձայնով խօսում էր: — Այդ էլ հաղորդել... լաւ: Այս էլ կարող եմ հաղորդել... ինչպէ՞ս... բազմաթիւ համբուրներ, շատ լաւ, այդ էլ կհաղորդեմ... միևնոյն է արդէն մէկից յետոյ...: Կինս, տիւիֆոնի խողովակը մի կողմը դնելով, դարձաւ դէպի ինձ և ուղիղ աչքերիս նայելով, ասաց այս տարօրինակ ֆրազան. — Ձեր բռնում՝ Բասէյնում լինելը այժմ արդէն վտանգաւոր է, նրա ամուսինը կարծեօք ձեզ հետեւում է:

— Այս տունը մի կատարեալ գժանոց է. ես արդէն ոչինչ չեմ հասկանում. — աներկբայօրէն պատասխանեցի ես: Կինս մօտեցաւ ինձ, երեսը մօտեցրեց իմինիս ու նոյնպէս աներկբայօրէն պատասխանեց.

— Դու... գարշելի ես...

— Այդ մասին առաջին անգամն եմ լսում. հաւանականօրէն սա ամենաթարմ և գուցէ երեկոյեան ամենավերջին նորութիւնն է:

Գու ծիծաղում ես... կծիծաղես արդեօք, եթէ սրան էլ նայես...

Նա վերցրեց սեղանի վրայից շատ արագ և խիստ խառը գրած թղթի մի կտոր ու սկսեց կարդալ:

— № 349-27. «Երազում եմ գոնէ մի աչքով, այսօր թատրոնում քեզ տեսնել և դէպի քեզ առաքել օղային անթիւ համբոյրներս»:

— № 259-09 «Ի՞նչ ես արել իմ քեզ նւիրած բրիլանտէ մատանին, մի գուցէ նւիրել ես սիրուհուդ՝ Գուսիա Պետրովնային»:

— № 317-01 «Ես քեզ վրայ խիստ բարկացած եմ, երդում էիր, որ ես միակն եմ քեզ համար, մինչդեռ նևակու վրայ քեզ տեսել են այն հաստիկ շիկահէրի հետ: Զգոյշ կ'աց և կրակի հետ հանաք մի անիր»:

— № 102-12 «Գու անզգամ ես, յուսամ, որ հասկացար»:

— № 9-07 «Գարշելի և ուրիշ ոչինչ»...

— № 177-02 «Իմ անդինս, զանգահարի, երբ գալու լինես, ապա թէ ոչ՝ ամուսինս կարող է գալ և մեզ չի յաջողուիլ պայմանաւորել: Սիրում ես դու առաջւայ նման քո Նադիային:

Կինս կատաղութեամբ թուղթը ձմռեց իր ձեռքերի մէջ և շարտեց դէպի ինձ:

— Ինչո՞ւ ես կանգնել, ինչո՞ւ չես զանգահարում քո «աննման Նադիային».— Ես այժմ եմ միայն հասկանում, թէ ինչո՞ւ դու այնպէս անհամբերութեամբ սպասում էիր սեփական տելեֆոն ունենալու: Դէհ, զանգահարիր նրան... № 177-02, շուտ արն, թէ չէ նրա ամուսինը կարող է տուն գալ և ձեզ չի յաջողուիլ «տեսակցութեան համար պայմանաւորել».— ստոր արարած...

Եւ որովհետև այս բոլորից ես ոչինչ չէի հասկանում, ուստի անելիքս էլ չէի իմանում. շիւարել ու կանգնել էի:

Եթէ մէկն ու մէկի սարքած մի հանաք էր սա, արդէն այդ ձևի հանաքները ինձ հրբէք ուրախութիւն և բաւականութիւն պատճառել չէին կարող:

Ես վերցրի թուղթը և ուշադրութեամբ կարդալով այն, մօտեցայ տելեֆոնին:

— Կենդրոնականն է՝ տէք խնդրեմ № 177-02 շնորհակալութիւն, № 177-02՞. պատասխանողը տղամարդ էր.

— Այո՞. ո՞վ է խօսողը:

— № 300-05. Կանչեցէք տելեֆոնի մօտ Նադիային:

— Ան. դուք № 300-05-էք: Ես արդէն այդ №-ի վրայ մի անգամ կընոջս բռնել եմ: Եւ դուք նրան անւանում էք Նադիա: Գիտցէք, երիտասարդ պարոն, որ ես առաջին իսկ հանդիպմանս դէպքում, ձեզ մի լաւ ապտակելու եմ: Ես գիտեմ, թէ դուք ով էք:

— Շնորհակալութիւն. իմ կողմից բարևեցէք ձեր Նադիային և ասացէք որ նա խելագար է:

— Ես այդ խեղճին չեմ մեղադրում. ձեզ նման անզգամները ո՞ւմ ասես, որ չեն գայթակղեցնում: Ա՛խ, դուք պրօֆէսիօնալ անզգամ: Գիտցէք, պարոն № 300-05, որ ես հէնց վաղը ձեզ թակելու եմ դնականակով:

Այս խօսակցութիւնը, իհարկէ, ինձ չհանգստացրեց, իմ բորբոքած ուղեղը չթարմացրեց, այլ ընդհակառակը՝ աւելի քան վրդովեց:

III

Այդ օրւայ մեր ճաշը անցաւ վերին աստիճանի ճնշող լոռթեան մէջ: Կինս սուպը ուտելու ժամանակ, անձեռոցիկը աչքերին դէմ արած, անընդհատ լալիս էր: Տապակածը և քաղցրեւէնիքը ուտելու ժամանակ, նա իր արտասուքներով կատարելապէս ողողում էր այդ ուտելիքները: Աղջիկս՝ Կէտտին իր աչքերը իմիցս բոլորովին չէր հեռացնում: Եւ երբ կինս երեսը շուռ էր տալիս մի կողմի վրայ, աղջիկս փարւում էր իմ վզովս ու բարեկամաբար ականջիս փսփսում:

— Հայրիկ ջան... դու կթողնես այդ Բէլսկուն, այդ չար կատուին, չէ... նայիր է... թող նրան... — Աղախինը ափսէները ժողովելու ժամանակ նայում էր ինձ, խորհրդաւոր նշաններ անում, սպառնում, մատը վրաս թափ տալի ու փռթկացնում:

Տելեֆոնը զանգահարեցին: Ես տեղիցս վեր թռայ ու մտայ առանձնասենեակս:

— Ո՞վ է զանգահարողը:

— Այս № 300-05°:

— Այո՛, ո՞վ է խօսացողը:

Լսեց կանացի ծիծաղ:

— Խօսացողը ես եմ՝ Դուստիան, միթէ՞ քեզ մօտ չէ նւիրածս օղը, ի՞նչ ես արել այն:

— Ինձ մօտ օղ չկայ. — պատասխանեցի ես. — սրանից յետոյ այլևս երբէք ինձ չխօսացնես, գրողը տանի քեզ էլ, օղիդ էլ:

Ճաշից յետոյ, ամբողջ ընտանիքիցս մերժւած, իրստ տխուր-տրտում փակել էի առանձնասենեակս: Այդ ժամանակում մի քանի անգամ էլ տելեֆոնով խօսացի: Այդ խօսակցութիւնների ժամանակ մի անգամ ինձ յայտնեցին, որ եթէ ես չորդեգրեմ երեխային, նրան՝ համապատասխան մի գըրութեամբ կդնեն իմ դռան առաջ: Եւ յետոյ մէկը կրկին անգամ սպառնաց այրել իմ աչքերը աղաթթվուտով, եթէ ես չթողնեմ «այն անպիտան Բէլսկուն»: Ես խոստացայ, որդեգրել երեխային և Բէլսկուն թողնել: Տելեֆոնս գիշերն էլ մի քանի անգամ զանգահարեցին:

IV

Միւս օրը, առաւօտեան կանուխ, մեզ մօտ եկաւ ածելւած երեսով մի երիտասարդ պարոն, ու ծանօթացաւ որպէս դերասան: Բաղուկին էր նրա ազգանունը:

Նա առանց այլևայլութեան ու նախաբանի դառնալով ինձ, ասաց.

— Եթէ ձեզ համար միևնոյն է, թոյլ տւէք մեր տելեֆոնի համարները

փոխենք:

—Սակայն ինչո՞ւ.— զարմացած հարցրի ես:

—Դէ՛հ, գիտէ՞ք... ձեր այժմեան տելեֆոնի № 300-05-ը սկզբում իմս էր, և իմ ծանօթներն արդէն նրան սովորած՝ այժմ էլ շարունակում են նրանով հարցապնդումներ ու դիմումներ անել ինձ...:

—Այո՛, նրանք իսկապէս այդ №-ին շատ են սովորած.— համաձայն հետեցի ես էլ:

—Եւ իմ նոր №-ը շատ քչերին յայտնի լինելով, յաճախ թիւրիմացութիւններ են պատահում:

—Միանգամայն ճիշտ է և արդարացի. թիւրիմացութիւններ իսկապէս շատ են պատահում: Յուսով եմ, որ երէկ ձեզ հետ ոչինչ վատ բան չպատահեց, որովհետեւ Վերա Պաւլովնայի ամուսինը, ինչպէս ենթադրւում էր, զիջերը չգնաց Մոսկվա:

—Իսկապէ՞ս.— ուրախացած ասաց երիտասարդ պարոնը.— դէ, ասէ՞ք որքան լաւ եղաւ, որ ես երէկ երեկոյեան Կլէմանսի հետ ընկայ և նրա մօտ չգնացի:

—Իսկ Կլէմանսը Բէլսկու խաթեր համար պատրաստւում է ձեր աչքերը այրել.— ասացի ես:

—Դուք հաւատում է՞ք, նա պարծենում է. հաւատացնում եմ, որ Կլէմանսի համար ես երբէք Բէլսկուն չեմ թողնելու:

—Ինչպէս ուզում էք, իսկ ես խոստացայ, որ կթողնէք: Յետոյ № 77-92 սպառնում է № 300-05 դռան առաջը դնել ձեր երեխային, եթէ դուք նրան չորդեգրէք. ես խոստացայ որդեգրել այդ երեխան:

—Դուք կարծում էք նա իմս է՞.— մի փոքր շփոթւած ու կարմրած հարցրեց անիլլա՞ծ երիտասարդ պարոնը.— ճիշտն ասած, ես կատարելապէս շրփոթւել եմ, որտեղ են իմոնքս և որտեղ— ոչ:

Այդ բոպէներում նրա դէմքի վերին աստիճանի խաղաղ արտայատութիւնը ինձ կատաղեցնում ու վրդովում էր:

—Իսկ յետոյ, մէկը, Նադիայի ամուսինը, սպառնում էր ձեզ դազանակով թակել. — կթակի՞. նա ժպտաց ու ձեռքի արհամարհական մի շարժում արաւ:

—Չէ, հմ... դազանակով. նրան մի հասարակ ձեռնափայտ ունի միայն:

—Դէ՛հ ասացէ՞ք, համաձայն է՞ք համարները փոխանակելու:

—Ինչու չէ, — խնդրեմ, ես այս բոպէիս կենդրոնական կայարանի հետ կխօսեմ ու կկարգադրեմ:

Մ

Կնոջս, կանչեցի հիւրասենեակը, այդ երիտասարդ պարոնի մօտ, իսկ ես անցայ իմ առանձնասենեակս՝ որտեղ տելեֆոնն էր: Տելեֆոնով խօսելուս, միևնոյն ժամանակ ես լսում էի կնոջս ու դերասանի խօսակցութիւնը: — Այդպէս ուրեմն, դուք դերասան է՞ք: Ես թատրոն շատ եմ սիրում:

Օ... տիկին, ես այդ զգացի հէնց առաջին իսկ հայեացքից: Չեր աչքերում մի ուժ կայ, մի մազնխտական զօրութիւն... ինչո՞ւ դուք չէք խաղում Դուք այնքան գեղեցիկ էք... ձեր մէջ մի արտասուտը զգացմունք, մի հրապուրանք կայ, որ խոստանում է գեր, երջանիկ մի բախտաւորութիւն, որի մասին միայն երագել կարելի է... որը... որը...

Լսեց կնոջս թոյլ բողոքող ձայնը և թեթև աղմուկ, իսկ մի փոքր անց, այդ բոլորը ձուլւեց համբոյրների մէջ...

Թարգ. W



ԻՆՉ ԱԶԳ՝ ԻՆՉՊԷՍ Է՞ՔՆՈՒՄ ՄԻ ՆՈՐ ԳԻՐՔ:

Ամերիկացիք յայտնի գրականագետի դեռ մի քանի երես գըրած հեղինակութիւնը գնում են՝ մրցելով գների առասպելական բարձրացման մէջ:

Փրանսիացիք կառքերով են վազում դէպի գրավաճառանոցները՝ գնելու լոյս տեսած գիրքը:

Անգլիացիք՝ մինչև տպագրւելն արգէն գնած են լինում:

Գերմանացիք իրենց հեղինակներին չեն նւաստացնում՝ թոյլ տալով նրանց գրքերը տպագրւել միայն 15-երորդ անգամ:

Իտալացիք բարձրացնում են նրանց մինչև նիւթական և բարոյական այն վսեմութեան, որ հեղինակը կարիք չզգար խոնարհել մինչև գրքերի առևտուրը:

Ռուսաստանում առևտուր են անում և սակարգում են:

Իսկ հայերս....:

ՈՐՏԵՂ՝ ԻՆՉՊԷՍ ԵՆ ԳՆՈՒՄ ԼՐԱԳՐԵՐԸ:

Ամերիկայում թերթը յափշտակում են:

Անգլիայում խլում են:

Իտալիայում գնում են:

Փրանսիայում լրագրավաճառը փախչում է առնույնների բազմութիւնից:

Ռուսաստանում ցրիչն է վազում նրանց ետևից:

Իսկ հայերիս մէջ... նրանք փնտռում են հարևանների մօտ,
չկան մէկը, որ ստանում է և չէ կարգում...:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՈՐՏԵՂ՝ ԻՆՉՊԷՍ Է:

Ամերիկայում հողը բողոքում է իր հիւթը մինչև վերջին կա-
թիլը քամողներից:

Անգլիայում տանջում են նրան ծանրաբեռներով:

Շւեյցարիայում քիմիաբար ուժեղացնում են և հանում նրրա-
նից բոլորը այնպէս, որ նա չէ զգում և չի տրտնջում:

Ֆրանսիայում մշակում են հողը այնպէս, որ նա ցաւ չէ զգում:

Գերմանիայում որպէս երկւորեակներ կպել են մօր ստինքնե-
րից և ծծում են անյագաբար. բայց սա կաթից գրեթէ սպառւած է:

Ռուսաստանում հողը որբեայրի կնոջ է նման. նա կարօտ է
մշակողների:

Իսկ մեզանում... մի գրաստ, որին առանց սնունդ տալու
միշտ բարձում են...:

ՈՐՏԵՂ՝ ԻՆՉՊԷՍ ԵՆ ՍՈՎՈՐՈՒՄ:

Ամերիկայում գիտութիւնը հասցնում են մինչև հրաշքների:

Անգլիայում՝ ստեղծագործութեան:


Ֆրանսիայում՝ քաղաքակրթութեան:

Իտալիայում՝ գեղարւեստի կատարելութեան:

Գերմանիայում՝ ուսանում են:

Ռուսաստանում ուսուցանում են:

Գտնել, թէ ի՞նչ են անում մեզանում:



ԱԶԳԱՅԻՆ ՔՆԱՐ-ՀԵՐՔՈՒԹԻՒՆ:

Рѣшительно скажу: едва
Другая сыщется столица, какъ Москва.
(Горе отъ ума).

Համարձակ կասեմ.— աշխարհում ոչ ոք
Չկայ մեր հայից աւելի խելօք,
Աւելի գիտուն, աւելի ճարտար:
Խօսք է անարդար.—
Թէ մենք գոյն չունենք, ինքնուրոյն բնոյթ,
Թէ գռեհիկ ենք, եսամուլ ու մութ.
Թէ չունենք հոգի, ոչ միտք, ոչ ձգտում,
Թէ դատարկ է մեր գլխի մէջ, սրտում...
Ասում են՝ միթո՞ւմ, հայր կեանք չունի,
Թէ նա նման է ուզուոր գնչունի,
Որ բոբիկ ոտքով գոնէ դուռ ընկած
Չկեր է մուրում հնի մէջ փթած...
Է՛հ, շատ են ասում,
Բայց սո՛ւտ են խօսում:
Նախանձն է, ցաւը նրանց կուրացնում.—
Չեն կարող տեսնել, երբ իրանց ծոցում,
Հայն այդպէս ծաղկում, —
Սրտերն է ձաղկում...
Ուզում են խօսեն,
Միշտ մեզ բամբասեն...

Բայց, ոչինչ!

Այն ինչ

Մենք մեզ «լաւ» գիտենք,

Ինչ ենք, ինչ ազգ ենք:

Հին մի ասաց կայ, թէ՛ լաւ մարդն է նա,

Ով ամենից շատ դուշման կուեննայ,

Իսկ հայից ո՞վ շատ թշնամի ունի,

Հէնց ինքն հայն էլ է իրան թշնամի.—

Մեզնից արժանի

էլ մարդ կլինի...

Ասում են, չունենք մենք ձգտում ու սէր:

Շատ սուտ են խօսում.— նրանք չեն տեսել,

Որ միշտ ուզում ենք մենք խօսել, խօսել...

Խօսել ու դառնալ իրար կրծոտել.—

Բա սա ձգտում չէ:

Կասէք.— լաւը չէ.—

Շատ դալաթ կանէք,

Իրաւունք չունէք:—

Ամեն մարդ իրա գլխում խելք ունի.

Մենք այդպէս կուղենք, ո՞վ դէմ կլինի:

Հը, տեսա՞ք, ձեզ հետ դեռ համաձայն չենք.—

Սա կը նշանակէ— բնոյթ էլ ունենք...

Սէր չունենք.— սուտ է,

Ձէք տեսել միթէ

Մեր ուսումնական օրիորդներին.—

Ինչո՞վ են պակաս, ի՞նչը չէ տեղին.

Խելք չունեն, շնհորք, գիտութի՞ւն, ուսում,

Զգացմունք չունեն, չեն լալիս, յուզում.

Ձե՞րն են պակաս,

Սրտե՞րն են տհաս...

Ո՞ւմ չի կախարդել նրանց սիրտն, հոգին,

Ո՞վ չի դմայլել նրանց թուխ դէմքին,

Մե-ս՛ե աչք-ունքին,

Պայծառ գարունքին,—

Մո՞ւթ երազանքին...

Ո՞րն է նրանցից անմաս մնացել,
Դեռ կոկոն կրծքով չի հիւծւել, լացել.
Ու՛մ սիրտը նրանք չեն ակեկոծել,
Ո՞վ չի տառապել, հեծծել, դառնացել...

«Սիրել չգիտեն,
Նրանք տգէտ են!»

Ո՞վ է աւելի
Հայուհուց նազելի,
Ո՞վ գիտէ այնպէս
Սիրել հոգեպէս,
Մտքով ու կրծքով
Սրտով, արցունքով...

Տոյց տւէք մէկին,
Որ—միայն մի կին,
Մի թոյլ օրիորդ—
Դեռ թարմ՝ առաւօտ—

Ընդունակ լինէր հայուհու նման՝
Իր մութ աչերով՝ կայծակ աննման,—
Փոթորկել յանկարծ
Հինգ-վեց սիրտ հանգած

Ու իր երազող, թախծոտ հայեացքով,
Կուսական կայծով՝
Բոլորին շոյէր,
Բոլորին շահէր,
Գգւէր,
Օրօրէր...

«Միտք չունեն նրանք»... թող լինեն անկիրթ.—
Մի՞թէ համբոյրին հարկաւոր է միտք...

Սո՛ւտ է չարաչար.—
Սիրոյ մէջ հանճար՝
Էլ մեր հայերին չկայ հաւասար:

Ասում են, իբր՝ գոյն չունենք, բնոյթ!

Հապա ի՞նչն է մեր գրքերի մէջ նիւթ.—

Գրել չգիտենք,
Հերոսներ չունենք.—

Չեն խօսում նրանք «ուրիշի» նման,

Մինչև գերեզման
Չէ՛ն սիրում, սիրւում,—
Լռում, հառաչում...
Կամ ճառեր ասում,—
Խօսում ու խօսում...

Մի՞թէ նրանց մէջ հայը չի ապրում
Իր սնո, լճացած, խրճիթ-խաւարում.
Կամ հայ գործիչը՝ իր հպարտ քթով,
Մի՞թէ չի տանջւում «ազգային» վշտով...

Ասում են՝ իբր, անուս ենք, տգէտ...
Ո՞վ է մեր հայից մեծ իմաստագէտ.
Ո՞վ այնպէս արագ թափանցել գիտէ,
Ինչպէս մեր հայն է...


Ապա՛ ցոյց տւէք ձեր միջից մէկին,
Որ՛ դեռ չը վարժւած գրել այբ-բէն-գիմ,—
Հեղինակ դառնար,
Միշտ գրէր ու լմր
Եւ այնքան ուժեղ,
Այնքան հանճարեղ,

Որ մարդու՛ ցաւից սիրտը քարացնէր,
Քարը հալեցնէր ու լմր, լացացնէր...
Կամ թէ նա դառնար գիտուն—քննադատ
Ու հսկայ գրչով սառնարիւն, հանդարտ՝
Շէքսպիրին սրտէր,
Կանտին բամբասէր...

Ապա տեսէք մեր ուսուցիչներին
Իրանք չը սորւած ոչ մի բան կարգին՝
Մարդիկ ապագայ սերունդ են կրթում,—
Ճանապարհ հարթում
Հեռաւոր պայծառ հայոց ազգութեան,—
Փայլուն մարդկութեան...

Դուք տեսէք նրանց մեծ փողոցներում՝
Գլխին ցիլինդրը, տրոստ՝ ձեռներում,
Միրուքն ածելած—ծայրին քիչ թողած—
Մազերը յաճախ գգած, գգգլւած,—
Մայթով վեր ու վար շարք-շարք քայլելիս,—


Տւփ-տւփ վիճելիս...
Ի՞նչ խանդ ու աւիւն,
Ի՞նչ կրակ, արիւն՝
Ասես՝ չեն վառում նրանց ճառերում—
Յուզած, երերուն...
Ինչէր չեն խօսում,
Ի՞նչ չեն քարոզում,—
էլ՝ պետական կնիք, էլ՝ կին ու օժիտ,
Հասարակութիւն, էլ կոյս ու ժպիտ,
Սէր, կանանց հարցեր,
Դպրոցի ցաւեր,
էլ... կարծես կախարդ ճախարակ լինեն
Մի ձեռք վճռել են մանեն, հա մանեն
Ինչ որ ձեռք անցնի. — էլ՝ բուրդ ու բամբակ,
էլ՝ մտղ ու դանակ,
էլ՝ եղ ու կարագ,
էլ՝ Աստու կրակ,—
Մանէն,
Ուրբեն
Ու դուգած, կոկած,
Դուրս թողնեն յանկարծ...
Ապա՝ ասացէք. — այսպէս ընդունակ
էլ ո՞վ կլինի: — Մեր հայը մենակ:
Դէհ, եկէք, հայեր,
Միասին խմբէնք,
Մեզ բամբասողի աչքը դուրս հանենք,
Խմբէնք ու կրկնենք. —
— Ի՞նչ էլ որ ասէք, աշխարհում ոչ ոք,
Զկայ, չի լինի մեր հայից խելօք...



ԱՐԻ, ԱՐԻ...

Արի, փշրեմ քեզ, մատանի
Մատս էլ քեզ սէր չունի.
Է՛ն մատանին մատն ի՞նչ կանի,—
Որ լուսնի պէս տէր չունի...

Արի, դո՛ւն էլ, արի—սիրտ, քեզ
Կտրեմ,—ուրիշ ճար չկայ.
Սիրտն ինչ կանեմ, երբ ծաղկի պէս՝
Նրան սիրող եմ չկայ...



Նրա կրծքով մի շանթ անցաւ,
Բոցավառեց ու անցաւ,
Բոցը հսկայ շուտ չքացաւ,
Բայց կայծ թողեց ու անցաւ...

Կուրծքը սրտին շուտ ձէն տուեց.—
«Վեր կաց, ա՛յ սիրտ, դուրս արի.
Կոյսն աչքերով նշան տուեց,—
«Թո՛ւր, հէք սիրտ, ինձ արի»...




Մ Ո Ռ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Անորոշ իղձեր, տենչեր ու յուշեր,
Կարօտ ու թախիժ, տառապանք ու սէր,—
Անձայն հեկեկանք, հառաչ ու խնդում—
Զարթնել են անհա՛ կրկին իմ հոգում.—

Մթին խաւար է իմ մտքին տիրում,—
Շուրջըս սուերներ դողդոջ ու տրտում,
Իմ երակներով թախիժ է հոսում,—
Սիրտըս ամպամած՝ թրթռում, յուզւում...

Զգում եմ.— այն չեմ, ինչ էի առաջ.—
Ես մի սուեր եմ խճել, լալահառաչ.—
Տառապող մի շճնչ, խաւարած մի յճւշ,
Տխուր մի երազ՝ մոռացւած, անյճւշ...


Ցնորում եմ լճու, երազում զգոյշ,—
Թախձկոտ եմ, մոլոր, քայքայւած, անոյժ,—
Ես ս՛ե մի միտք եմ... բայց ան՛ իմ հոգում
Գիտակցութեան վճու արև է ծագում:



Ե Ա Ր Ը Ս


Եարրս, համեստ մանիշակ՝
Կուրծք ունի խոր, թշեր տաք.
Թէ մօտենաս կը շանթէ
Բոց կը թափէ կրծքիդ տակ...

Նա մի անգամ ինձ նայեց,—
Սիրտըս հանեց,— խոց դրեց.
Հայեացք ունի նա շանթէ,—
Փախիր... քեզ էլ կը շանթէ:



Նաշխուն արև՝ տապ ու հանդարտ—
Սև աչերուդ բոցին մատաղ.
Երկնի խնձոր, դրախտի վարդ՝
Թուխ այտերուդ շողին մատաղ:

Ծոցիդ միջին երկու աշխարհ՝
Մէկը մէկից տաք ու պայծառ.
Եզեմի հայր, դժոխքի մայր՝
Նրա դալար բոյրին մատաղ...



*
* * *

—Սիրուն տղայ, ինչի՞ էդպէս
Լուռ ու տխուր ման կուգաս.
—Անուշ աղջիկ, — վախճամ՝ ձայնէս
Վայ թէ... ցաւըս իմանաս.

—Ինչի՞ հապա, անուշ տղայ,
Դէմքէդ արցունք կը բխա.
—Ա՛խ, իմ քոյրիկ... արցունք չէ դա, —
Սրտիս վէրքն է կը մխա.

—Վա՛խ, իմ ազիդ, էդ ո՞վ էդպէս
Խոր ցաւ դրեց քո սրտում.
—Չքնաղ քոյրիկ, մի թուխ՝ քեզ պէս,
Սիրուն աղջիկ... իմ սրտում.

—Ա՛խ, իմ ախպէր... ի՞նչ ճար անեմ,
Ասա՛ սիրտըդ չը ցաւի.
—Թո՞ղ ինձ, քոյրիկ, թող լաց լինեմ, —
Որ լաց լինեմ՝ չի ցաւի.

—Չէ, իմ ախպէր, չէ, մաշւած ես,
Դուն լաց լինես, — կը մեռնես.
Տուր ինձ սիրտըդ, քո տեղ ես լամ,
Պահեմ կրծքիս, — հողի տամ...

Ե Ր Գ

Աղջկերբ
Միասին
Գետի ափին հայ գեղջկուհին
Կուժն է լցնում, մազն հիւսում,
Կուժն է լցնում ջրի տակին,
Մազն է հիւսում, երգ ասում,
Կուժն է լցնում, մազն է հիւսում,
Երգ է երգում ու ասում.—

Աղջկերբ
«Ա՛խ, ջուր լինի, ջուրըս լցնեմ,—
Կուժըս ջրով տուն տանեմ,
Ա՛խ... սէր լինի, սիրտըս լցնեմ,—
Կուրծքըս սիրով քուն տանեմ»...

Տղերբ
Միասին
Հեռում յագնած հայ պատանին
Կուժ է տեսնում երազում,
Կուժ է տեսնում կոյսի ձեռին,
Ջուր է ուզում ու ասում,
Խոր երազում կուժ է տեսնում
Կոյսի ձեռին ու ասում.—

Տղերբ
«Աղջի, ջուր տուր, տապըս մարեմ,—
Էրթամ արտըս վնր անեմ,
Աղջի... հուր տուր, կուրծքս վառեմ,—
Քեզ իմ սրտին հնր անեմ»...

Միասին
Հայ գեղջկուհին գետի ափին
Կուժն է լցնում, երգ ասում,
Հայ պատանին՝ տապը կրծքին,
Ջուր է խնդրում երազում:

ՀԱՐՄՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

I

Բահադեանն առանձնացած իր սենեակում, շրջապատւած զըքերի ու բրոշիւրների սուտար քանակութեամբ, կարդում էր կանտի փիլիսոփայութիւնը:

Երկար իտրասուզումից յետոյ, յանկարծ նա գիրքը գայրոյթով խփեց սեղանի վրայ ու՝ վեր կենալով աթոռից, ձեռքերը կոխեց անդրավարտիկի դրպանները և՛ ներւնային արագութեամբ սկսեց անց ու դարձ անել սենեակի երկարութեամբ:

Երևում էր, որ նա խիստ բարկացած էր կանտի վրայ, թէ ինչո՞ւ սա այնպիսի բաներ է գրել, որոնց իր խելքը չի հասնում:

Ահա այդ ժամանակ սենեակի դուռը խիստ շառաչիւնով բացւեց և ներս ընկնելով իր ընկերներից մէկը, սկսեց աղաղակել:

— Յաղթութիւն, յաղթութիւն... և առանց նայելու Բահադեանին, սկսեց արագ վազվզել սենեակում, անդադար կրկնելով — յաղթութիւն, յաղթութիւն:

Բահադեանը շարած, կանգնած մնաց իր տեղում և՛ կարծելով, թէ խեղձը խելագարւել է, սկսեց արգահատանքով նայել նրան:

— Յաղթութիւն, յաղթութիւն...

— Եղբայր, ի՞նչ յաղթութիւն, գժւել ես, ի՞նչ է:

— Յաղթութիւն էլի, ի՞նչպէս կլինի յաղթութիւնը, պատասխանեց ընկերը, յանկարծ կանգ առնելով և նորից հեծն շարունակելով իր անց ու դարձը:

— Բայց ի՞նչ յաղթութիւն, Հայաստանն ազատեցի՞ք, ի՞նչ է:

— Ի՞նչ Հայաստան, աւելի մեծը:

— Պօլիսն առա՞ք:

— Աւելի մեծը, ջանում:

— Գուցէ Չինաստանի՞ն տիրեցի՞ք:

— Չէ ջանում, աւելի մեծ բան:

— Ի՞նչ:

— Առո՞ն Սարգսեանին տապալեցի՞նք, այժմ Յովնանեան դպրոցը մերն է,—

խաղաղութիւն ամենեցուն:

—Այդ ինչ ասել է—խաղաղութիւն ամենեցուն:

—Այն, որ այժմ սկսած դպրոցներէ, եկեղեցիներէ մինչև դղիրութեան պաշտօնները մեր ձեռքումն են և՛ ամբողջ դրութեան տէրը լինելով, այժմ կարող ենք փառաւոր կերպով տեղաւորել ուր որ կամենանք, որ պաշտօնը որ ուզենք:

—Դրան ես վաղուց էի սպասում:

—Այո, ես ես սպասում էի, և հէնց հիմա հոգաբարձուներից մէկից իմացայ, որ քեզ հրաւիրել են պատմափիլիսոփայութեան դասատու, իսկ ինձ քաղաքատնտեսութեան. այժմ հարկաւոր է գրքեր, բրօշուրներ գնել ուսումնասիրելու այդ առարկաները:

—Իսկ ես՝ նախագուշակելով այդ բանը, արդէն ուսումնասիրում եմ կանտը, Նիցշէն, Հէգելը, Գեթթէն, Շօպէնհաուէրը և այլք:

—Իսկ ես, թէև ոչ մի գաղափար չունեմ քաղաքատնտեսութեան մասին, բայց հէնց այս օրւանից կսկսեմ անգիր անել Բօգդանովի «Տնտեսական գիտութեան համառօտ դասնթաց»-ները, և դու կտեսնես: Թէ ինչպէս փառաւոր կերպով կդասուանդեմ:

—Բայց գիտե՞ս ինչ, պարոն Փուղայեան, ես վճռել եմ մօտ ապագայում անցնել արտասահման,—դա ինձ համար խիստ անհրաժեշտ է:

—Ի՞նչ տեսակէտից:

—Այն, որ՝ եթէ այնտեղ մի առ ժամանակ՝ նոյնիսկ պարապ էլ մնամ, այնուամենայնիւ վերադառնալով այստեղ ես մեծ հոշակ կունենամ. տխուրսը մեծ նշանակութիւն ունի:

—Որ արտասահմանում էք եղել,— շեշտեց Փուղայեանը:

—Այո, այն ժամանակ ես նոյնիսկ տեսչութեան պաշտօն կստանամ մեր առաջնակարգ դպրոցներում:

—Է՛հ, եղբայր, առանց արտասահման գնալու էլ, այժմ որտեղ ուզենաս պաշտօն կստանաս. միթէ բոլոր բանալիները մեր ձեռքին չեն:

—Այնուամենայնիւ ես վճռել եմ գնալ. ես կամենում եմ աւելի բարձր կանգնել մեր միջավայրի մեծութիւններից, միայն թէ...

—Միայն թէ՛ փող չկայ... այնպէս չէ՞:

—Քսակս դատարկւել է:

—Աւաղ փառացս անցաւորի: Այո, «կար ժամանակ որ մենք էլ, շքեղապարզ հարսի պէս պճրում էինք» և այլն...

—Է՛հ, ոչինչ, այժմ մեր առաջ կայ մի ուրիշ ճանապարհ, որից կարելի է օգտուել:

—Այսինքն:

—Թէև գրպանով ու գլխով դատարկ, բայց նախկին դիրքից օգտուել դեռ կարելի է. գտնելու է մի հարուստ հարսնացու և այդ «երկվարով քալել դէպի արտասահման»:

—Աֆֆէրիմ, գտել ես. մնում է միայն ճարել. իսկ ես արդէն ճարել եմ և նպատակիս հասնելու որոշ նախագուշակութիւններ եմ ձեռք առել, այ-

սինքն օրիորդին արդէն հմայելու վրայ եմ:

—Վատ չէ.

Այդ ժամանակ դրսից լսեց դռան զանգակի ձայնը:

—Այս բոպէիս, դարձաւ Բահադեանն իր ընկերոջը և դուրս գնաց:

Մի քանի բոպէից յետոյ, նա ներս եկաւ բաւական ոգևորւած, ու աշխուժով տրորելով ձեռքերը:

— Հ'ը, ինչ կայ, բարի լո՞ւր, հարցրեց Փուզայեանը:

— Գիտե՞ս ինչ, ինձ հրաւիրում են մի հարուստ ընտանիքում մասնաւոր դասեր տալու:

— Հետաքոքիր է, աշակերտ, թէ աշակերտուհի:

— Հաւանականաբար՝ աշակերտուհու:

— Է՛հ, ցանկամ յաջողութիւն... ասաց Փուզայեանն ու դուրս եկաւ:

Բահադեանը շտապով սահարանից հանեց իր նոր զգեստները, հագաւ և կանգնելով հայելու առաջ, մի քանի անգամ շտկեց մօրուքը, պեխերը՝ փողպատը և բաճկոնը, վերցնելով ձեռնափայտն ու վերարկուն, դուրս եկաւ տանից:

Դռան առջև սպասում էր իր համար յատուկ դրկւած տնային կառքը, ուր և նստելով մեր մանկավարժը, սլացաւ դէպի Տփլիսի հեռաւոր թաղերից մէկը:

Տաս բոպէից յետոյ Բահադեանը կանգնած էր եռհարկեան մի շքեղ շինութեան առաջ, ուր շէյցարը՝ դուռը բանալով, խիստ քաղաքաւարութեամբ ընդունեց և առաջնորդեց նրան մինչև ընդունարան:

Թաւաղարդ սանդուխտները բարձրանալիս, Բահադեանը մի տոսնձին հպարտութիւն զգաց իր մէջ, մտածելով, որ ինքը իրօք մեծ դիրք ունեցող մի դէմք է, որ այսպիսի մեծատունների հետ գործ ունի:

Դահլիճ մտնելով, նրա վրայ խիստ շլացնող տպաւորութիւն թողեց ամենուրեք փայլող հարստութիւնը: Բրօնզեայ ջահեր, մոմակալներ, հախճապակեայ դարդեր, արանօսեայ կարասիներ, մարմար, փղոսկր, ոսկեթել վարագոյրներ, թաւապատ բազկաթոռներ և այլն, ուր փայլում էր հարուստ բուրժուայի ճաշակը, կեանքի փարթամութիւնն աւելի ևս կատարելութեան հասցնելու համար:

Քիչ յետոյ դահլիճ մտաւ տան տէրը, ուռած, փքւած արտաքինով ու ձմերուկի պէս կարմիր թշերով:

Նրա ինքնաբաւական հայեացքը այն արտայայտութիւնն ունէր, երբ մարդ նոր է վեր կացած լինում հարուստ խմիչքներով լի ճոխ սեղանի վրայից և խիստ դո՛հ է իր վիճակից:

— Բարև ձեզ պարոն Բահադեան, ասաց նա դեռ մի քանի գազ հեռից պարզելով իր ձեռքը հիւրին, — Շնորհակալ եմ որ հաճել էք մեր հրաւերն ընդունելու. խնդրեմ ծանօթանալ, — Իսահակ Մէլիք Պարոնեան, իսկ ես ձեզ ճանաչելու բաղձն ունիմ իմ բարեկամուհիներից մէկի շնորհիւ, որն այնքան համակրում է ձեզ:

— Շնորհակալ եմ, խիստ քաղաքավարութեամբ խոնարհելով և սեղ-

մելով տանտիրոջ ձեռքը, ասաց Բահադեանը— ինչո՞վ կարող եմ ձեզ ծառայել:

Ես ձեզ հրաւիրեցի, որ առանձին պարտաւէք իմ աղջկաս հետ, նա մի քանի դասերից խիստ թոյլ է:

— Շատ ուրախ եմ:

— Ի՞նչ առարկաներից կարող էք պարտաւել:

— Համարեա թէ բոլոր. գծագրութիւն, հանրահաշիւ, քերականութիւն, կոտորակ, ֆիզիկա, պատմութիւն, փիլիսոփայութիւն, տնտեսագիտութիւն, միներալոգիա, տերմինալոգիա...

— Բաւական է... կարծեմ իմ աղջիկս թոյլ է միայն հայերէնից. այս բոլոր պէիս ես կկանչեմ նրան:

Եւ բանալով սենեակներից մէկի դուռը, ձայն տուաւ— Օյլգան, Օյլգան:

— Այս բոլորս, հայրիկ, հնչեց ներսից մի քնքոյշ ձայն և ապա դահլիճ մտան երկու կանայք:

— Խնդրեմ ծանօթանաք. աղջիկս և կինս. ներկայացրեց նրանց տան տէրը:

— Շատ ուրախ եմ, ասաց Բահադեանը և սեղմեց երկուսի էլ ձեռքերը:

Այստեղ կին, աղջիկ և հայր, երեքն էլ այնքան նման էին, որ կարծէք միևնոյն խնձորից կտրած լինէին. — գէր, առողջ և կարմրաթուշ, իսկ օրիորդը՝ աւելի թարմ, գեղեցիկ, խոշոր ու սևորակ աչքերով, և երբ ժպտում էր, նրա վարդագոյն թշերի վրայ գրաւիչ փոսիկներ էին գոյանում:

Բահադեանն այնքան էլ սառնարիւն կերպով չընդունեց այդ փոսիկները և սեղմեց օրիորդի ձեռքը առանձին յափշտակութեամբ:

Տիկին Անիշկան, Բահադեանին ներկայանալուն պէս, ամուսնու ձեռքից խլելով խօսակցութեան ինիցիատիւը, սկսեց.

— Գիտէ՞ք, պարոն, ասաց նա՝ աւելի ևս կարմրելով, — իմ աղջիկս շատ ընդունակ է ամեն բանում:

— Շատ ուրախ եմ:

— Նա կատարեալ մի սալաւէյկայ է:

— Ուրախալի է:

— Նա պարում է հայկական, եւրոպական բոլոր պարերը և ի՞նչ հրաշալի:

— Աւելի ևս ուրախալի:

— Նա հրաշալի կերպով ածում է դաշնամուրի վրայ:

— Երևի, բաղդ կունենանք լսելու:

— Անշուշտ, մեր տանը գրեթէ ամեն կիւրակէ վէջերներ են լինում, երևի՝ շնորհ կանէք մեզ հետ ժամանակ անցկացնելու:

— Ամենայն պատրաստակամութեամբ:

— Մենք ծանօթների մի ահագին կրուդ ունենք, բոլորն էլ ինտելիգենտ և արիստոկրատ դասակարգից: Գիտէ՞ք, ինչքան սիրում են իմ աղջկաս. նա կատարեալ շարաճճի է, ամենքին էլ գրաւում և սիրել է տալիս իրեն:

— Խիստ հաճելի է, անշուշտ՝ բնաւորութիւնների ամենաընտիր յատ-

կութիւնը, երևի ձեր տիպարն է:

— Իհարկէ, ինչ արած, մեր միակ աղջիկն է և նոյնպիսի ժառանգը. դրա համար էլ մի փոքր շատ ենք երես տուել:

— Ուրիշ կերպ էլ չէր կարելի:

— Այդ պատճառաւ միշտ ծոյլ է:

— Ոչինչ, կուղղւի:

— Դասերով պարապել չի սիրում:

— Այդ էլ ոչինչ, կուղղւի:

— Ուշագրութիւնը միշտ դուրսն է, թատրոն, վէճեր, կլուբ, պրօսպէկտ և այլն:

— Ոչինչ, կուղղւի:

— Մի փոքր ներւնային է:

— Ոչինչ, կուղղւի:

— Ջղային և կամակոր է:

— Ոչինչ կուղղւի:

— Հայերէն դասեր իսկի չի սիրում:

— Կուղղւի:

— Պէտք է անպայման խիստ լինել:

— Անպայման:

— Նո՛ւ, Աննա, գնանք. թող նրանք պարապեն, մենք կարող ենք խանդարել, ընդհատեց ամուսինը և հրաւիրեց կնոջն անցնել միւս սենեակ:

— Լա՛ւ պարապեցէք աղջկաս հետ. նա խիստ լաւ աղջիկ է:

Վերջին անգամ պատուիրեց տիկին Անիչկան և նրանք դուրս գնացին:

II

Ծնողների գնալուց յետոյ, Բահադեանի մէջ աւամայ հարց առաջ եկաւ՝ գնել արդեօք այդ ապրանքը, որի դրական ու բացասական կողմերը քիչ վաստակով գոհ մնացող խանութպանի պէս այնքան ճշմարտութեամբ պատկերացրեց մայրը:

Եւ երբ նա մենակ գտաւ իրան այնպիսի մի չքնաղ էակի մօտ, որի հետ ինքը մանկավարժական ոչ մի հաշտեցուցիչ տարր չէ կազմում, աւելի ևս ամբօսանդեց այն կարծիքի մէջ, որ Տիխիսում ծնողները աւելի մեծ տրամադրութիւն ունեն շատ շուտ ապատուելու իրենց աղջիկներից, քան թէ գլխարկ ծախողները իրենց դարակներում խլամ մնացած կանացի շեփաներից:

Անցնելով իր գերին, Բահադեանը մանկավարժական պաֆօսով դիմեց օրիորդին:

— Դուք հայերէնից ի՞նչպէս էք:

— Շատ լաւ, կուզէ՞ք՝ կարդամ. պատասխանեց օրիորդը այնպիսի մի շարժումով, որ արտայայտում էր նրա անհանդիստ բնաւորութիւնը:

— Կարդացէք, խնդրեմ... բայց ո՛չ, խնդրեմ՝ ասացէք դուք անցնում էք հայոց գրականութիւն:

- Ինչպէս չէ, մենք միշտ ստանում ենք հայերէն «Մշակ»-ներ:
- Այդ չէ, ես ասում եմ հայոց գրականութեան պատմութեան մասին:
- Ո՛չ, գիմնադրւում չենք անցնում. բայց մենք և մութակի գիմնադրւում ստարշի կլասսիկները միշտ հաւաքւում ենք և պարապում այդպիսի բաներով:
- Իսկ հայոց պատմութի՞ւն:
- Սովորում ենք. մեր տէր հայրը շատ խիստ է այդ դասերում. այ, ես գիտեմ Յակովբ նահապետ. Աբրահամ, Իսաւ, Իսահակ, Մօյսէյ, Բարթոլղիմօ... ո՛չ, Բարթոլղիսէ... ախ կակօյէ նեպրօիզնօսիմօյէ իմեայ... Բարթոլղիսէմօս...
- Ո՛չ, ասացէք՝ Բարդուղիմէոս:
- Բարդուղիսէմօս:
- Ձէք կարողանում. ասացէք բճր...:
- Բճր:
- Դճւ...:
- Դճւ... բայց յետոյ յետ խլիով այդ խօսքը, արտասանեց — դճւ:
- Ո՛չ, դճւ:
- Նէտ, դճւ:
- Ես ասում եմ դճւ:
- Իսկ ես չեմ ուզում, այլ ասում եմ՝ դճւ:
- Բայց... օրիորդ, դճւ:
- Բայց, պարոն, դճւ:
- Ո՛չ, օրիորդ, հազիւ հասկանալով բանն ինչու՞ն է, ժպտաց Բահադեանը, — ես խօսում եմ ձեզ հետ Բճր-դճւ-դի՛մէ՛-ոս բառի մասին:
- Վաչտօ բի տօ նէ-ստալօ՝ ես սովորութիւն չունեմ գործածել ՚ դու բառը, ես չեմ սիրում այդ խօսքը. դա միայն ընդունւած է մարդու և կընոջ մէջ:
- Բայց, օրիորդ, մենք այստեղ չխօսեցինք մարդու և կընոջ մէջ եղած յարաբերութիւնների մասին, այլ Բարդուղիմէոս բառի սխալ արտասանութեան:
- Է՛հ, թողէք պաժալուտա այդ անտանելի բառը դրա մասին մեր տէր հայրն այնքան տանջեց, որ նոյնիսկ վերջը մի անգամ էլ լացացրինք:
- Ի՞նչպէս, ինչո՞ւ, — զարմացաւ Բահադեանը:
- Մենք նրան պրօստօ ձեռք էինք առնում, այնքան չարչարեցինք, որ մինչև անգամ բարկութիւնից սկսեց լաց լինել:
- Բայց մի՞թէ կարելի է ուսուցչի հետ այդպէս վարւել:
- Նո՛ւ, օչին պրօստօ. մենք առհասարակ հայերէն դասերն ընդունում ենք որպէս միջոց պալեստինացի, — ծիծաղել, հոհօւլ, պարել, մասխարութիւններ անել և այլն: Եւ նոյնիսկ տէր հօր ֆառաջայից միշտ ասեղով բաներ ենք քաշ անում, բայց նա տանում է և չի բարկանում:
- Ուրեմն՝ ասել է թէ ի՞նչ ևս մասխարի էք առնում:
- Ձե՞զ, ո՛չ, պատասխանեց օրիորդը, խորամանկօրէն ժպտալով,

որից նրա թշերի վրայ նորից երևացին փոսիկները:

Բահաղեանը սաստիկ բարկացած. ուզեց պատժել նրան, սակայն օրիորդի վարդագոյն թշերի կախարդիչ փոսիկները տեսնելուն-պէս, ակամայ պարտեց ու իւրովին մտածեց — այսպիսի արարածների առաջ ծունկ կը խոնարհւին ոչ թէ միայն ուսուցիչներ ու քահանաներ, այլ և ճգնաւորներ. և նա իր այդ զգացումը գուցէ բարձր ձայնով արտայատէր, եթէ այդ բո-պէին ներս չմտնէր տան տէրը: Երևի նա ուզեց ստուգել, թէ Բահաղեանը ինչ մեղօթով է պարապում իր աշակերտունու հետ:

Բահաղեանը լուրջ կերպարանք ընդունելով, կրթնեց աթոռի վրայ և ատենաբանի շեշտով խօսեց:

— Այո, ներկայ մանկավարժական փթած սիստէմը և մանկավարժ դասակարգը միանգամայն անընդունակ դաստիարակութեան դիսցիպլինա մտցընելուց մեր դպրոցներում, աշակերտները պարում են, երբ հայկարանութիւն ես դասաւանդում. հռհռում, են, երբ խօսում ես պատմութիւնից. այդ պատճառով ես կարծում եմ դպրոցները պիտի ենթարկել վերակազմութեան, դուրս վճնտելով այն բոլոր թերուս տարրերին՝ սկսած քահանաներից մինչև որոշ դասակարգի ու թայֆայի մարդիկ, որոնք ուսուցչութեան պաշտօնով մտել են ուսման տաճարները: Այդ սկզբունքը իմ փայփայած ամենամեծ գաղափարներից մէկն է, և պիտի իրագործեմ երբ արտասահմանից կվերադառնամ:

Բահաղեանն արտասահման բառն այնպէս շեշտեց, որ օրիորդը առանձին ուշադրութեամբ լսեց այն:

Այդ ժամանակ տան տէրը նորից դուրս գնաց, օրիորդը իրեն ազատ զգալով, դարձաւ Բահաղեանին:

— Դուք զագրանիցա՞ պիտի գնաք:

— Ինչպէս չէ:

— Ի՞նչ նպատակով:

— Պատմա-փիլիսոփայութիւն սովորելու:

— Օ՛հ, որքան կուզէի ես էլ լինել զագրանիցում:

— Մի՞թէ, դուք սիրում էք արտասահմանը:

— Ինչպէս չէ. պապաս թէև խօստացել է տանել բայց խօստումը չի կատարում. բայց ես այնքան կուզէի...

Եւ նրա շրթունքների ծայրերում երևացին նորից փոսիկները:

Բահաղեանը միանգամայն ընկճւած գեղեցիկ սանուհու հմայքից, իսպառ կորցրեց իր ոյժը և մոռանալով մանկավարժական դերը.

— Գիտէ՞ք ինչ Օյլգայ. ասաց նա — եթէ ձեր պապան չի տանում, այն ժամանակ մենք երկուսով... բայց խօսքը կիսատ թողեց:

— Նո՛ւ, նո՛ւ, ինչիէք ասում, չարաճճիօրէն վրայ պրծաւ օրիորդը. նրա աչքերում փայլեցին խանդոտ ժպիտներ:

— Ոչինչ, ոչինչ, պատասխանեց Բահաղեանը և՛ որպէս թէ խօսքը մոռացութեան տալու համար, բաց արեց հայերէն դասագիրքն ու դրեց օրիորդի առաջ:

- Կարդացէք՝ խնդրեմ, այս կտորը:
 - Ո՛հ, չեմ կարդալ. ասացէք, ի՞նչ էիք ուզում ասել:
 - Է՛հ, ոչինչ, կարիք չկայ ասելու:
 - Ո՛հ, պէտք է ասէք, խնդրում եմ:
 - Ի՞նչ յամառն էք, Օյլգան, ես ուզում էի ուրիշ բան ասել...
 - Նո՛ւ, ասացէք:
 - Եթէ շատ էք խնդրում, կասեմ, բայց չբարկանաք:
 - Ո՛հ, չեմ բարկանայ, ասացէք:
 - Ես ուզում էի ասել «այն ժամանակ մենք երկուսով կգնանք»...
- Օրիորդը կտորատելով գլուխը խոնհարեց ու ժպտաց: Բահադեանը նըկատելով այդ, աւելի եւս առաջ գնաց իր յարձակման մէջ:
- Իսկ դուք կգնէք ինձ հետ:
 - Բայց դուք ամուսնացած չէք:
 - Ո՛հ, ես ամուրի եմ:
 - Մի՞թէ, որքան լաւ կլինի. բայց դուք չէք սիրում որեէ մէկին:
 - Սիրում եմ...
 - Դու սիրում ես, բայց ո՛ւմ:
 - Բայց, օրիորդ, դուք խօսում էք ինձ հետ «դու»-ով, չէ՞ որ չէք սիրում այդ բանը:
 - Հանաք մի անէք, ասացէք ո՛ւմ էք սիրում:
 - Ո՛ւմ եմ սիրում, ուզում էք իմանալ:
 - Այո՛, այո՛:
 - Եթէ այդպէս է, ուրեմն լսեցէք. Օյլգան, ես սիրում եմ քե՛զ:
 - Ի՞նչ, բայց ինչո՞ւ, ի՞նչպէս:
 - Այս փոսիկները... և նա մատով կպաւ սանուհու թշին:
 - Մի՞թէ, լաւն են, բայց դուք էլ գեղեցիկ տղամարդ էք:
 - Դուք ինձ հաւանում էք:
 - Չգիտեմ:
 - Գուցէ մի ուրիշին էք սիրում:
 - Ե՞ս, այո՛, սիրում եմ...
 - Բայց ո՛ւմ. Օ, որքան դժբաղդ եմ ես, ասացէք, ո՛ւմ էք սիրում, հառաչեց Բահադեանը— ասացէք:
 - Ո՛հ, չեմ ասիլ:
 - Խնդրում եմ:
 - Չեմ ասում:
 - Ասացէք, խնդրեմ.— պնդում էր Բահադեանը, բռնելով օրիորդի ձեռքը:
 - Իսկ եթէ չասեմ:
 - Այն ժամանակ ես կհեռանամ այստեղից, ես կխելագարւեմ քո սիրուց՝ եւ իսպառ կհեռանամ աշխարհից, վաճառքի կգնամ, անձնասպանութիւն կը գործեմ, բանաստեղծ կդառնամ, վիպասան, պօէտ, դրամատուրգ և այլն և այլն, և այդ բոլորը քո սիրուց. ասացէք Օյլգան, ո՛ւմ էք սիրում. Օ, ես նըրան կբռբռեմ, կըրկտեմ, կըչնչացնեմ:

—Ճիշտ. ապա արեցէք այնպէս, ինչպէս ասում էք, ես էլ ձեզ եմ սիրում:

—Ի՞նչ, այո՞, ծ, որքան երջանիկ եմ. և Բահադեանը գրկից սանուհուն. նրանք սկսան անզուսպ կրքերով միմիանց համբուրել:

Այդ ժամանակ դուռը բացեց և ներս մտան տան տիրուհին ու տան տէրը, որոնք ուսուցչի և սանուհու գրկախառնութիւնը տեսնելով, խիստ այլայլեցին:

—Այդ ի՞նչ էք անում, պարոններ:

—Ոչինչ, պարապում ենք... ասաց օրիորդը դուրս պրծնելով Բահադեանի գրկից ու գիրքը դնելով առջևը:

—Իսկ ես խիստ եմ վարւում նրա հետ, նա խիստ կամակոր և շար աղջիկ է:

—Իմ աղջիկս, ո՛չ, նա շատ խելօք է, պնդեց մայրը:

—Նա ծոյլ է և շատախօս:

—Դուք չէք հասկանում, նա համեստ է և լուրջ:

—Նա չէ սիրում պարապել. նա մօղիստկայ է, սիրում է շարունակ թրև գալ և ոչինչ չսովորել:

—Ո՛չ, ոչ, իմ աղջիկս, սխալ էք. նա ժիր է և տնարար:

—Եւ անսահման շռայլ բնավորութիւն ունի. նա շարունակ մտածում է արտասահման գնալու և այդպիսի բաների մասին:

—Ի՛նչ, դա սովորական բան է, այդպէս էլ հարկաւոր է:

—Եւ այն դիտէք ում հետ, իր ամուսնու, բայց չէ՞ որ գուցէ նա աղքատ է:

—Նո՛ւ, այդ ոչինչ, չէ՞ որ մեր կարողութիւնը բոլորը նրանն է:

—Եթէ այդպէս է, ես սիրում եմ ձեր աղջկան և խնդրում նրա ձեռքը:

—Նո՛ւ, բրատ, ասաց տան տէրը ծիծաղելով, արդէն դուք առանց մեզ էլ ձեր ցանկութիւնը իրագործել էք. մենք ի՞նչ պէտք է ասենք:

—Ուրեմն ի՞նչ, դուք ուզում էք մեզ փեսայ լինել, ժպտալով ասաց տիրուհին Անիչկան. — ախ դուք չարածճիներ... և նրանք բոլորը գրկախառնեցին:

Մի առ ժամանակից յետոյ, Բահադեանը անցաւ արտասահման, աներոջ ոսկիները հետ գնած երիվարով...:

Մ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ




ԿԱՏՈՒՆԵՐԸ

Ութսուն կատու մէկ տեղ եկան.—
«Ժողով ունենք մենք թիմական,
Այսօր՝ ազգին մենք ի դիմաց,
Պէտք է վճռենք ծանր մի հարց.—

Մուկ է՞ ընկել մի տմարդի
Փոստն է կրծում մեր խեղճ ազգի.
Ընտրենք, եղբայրք, մեզնից մէկին,
Որ գզգզէ այդ սև մկին»...

Ու՛ պոչ-պոչի, գլուխ-գլխի,
Տարան, բերին գործըն ազգի.
Բայց մոռացած մուկն իրանց մօտ՝
Գզգզեցին մէկ-մէկու փոստ...

ՇԻՄՇԻՐԵԱՆ



ԱՌՈՎԵԱՆՅԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ:

Կորը քնած տեղը կորեկ ա տեսել,
Ասուած երազը տարին կատարի:

I

Էրևանու խալխը քօմմա հաւաքել էին վազալը ու անհամբեր սպասում էին պօէզի գալուն:

Ու մէկէլ ահա հեռից էրևաց պարաւօզի սև ծուխը, որ բալան-բալան բանցրանում էր դրա երկինք ու՝ խառնւում ամպերին:

— Գալիսն, գալիսն, քչփչացին ամենքն ու ոնց որ ծովի դաղին, խառնեցին իրար:

Մի քանի րոպէից եղը ահա պօէզը խիստ հերստուած, էն կողմից էկաւ ու վիշապի դայդա պոչը քաշ տալով, գնաց էն վիրի գլխումը, զրը՛մփ՛ կաննեց:

Ու աչքդ բարին տեսնի:

Պերօկլասնի վագօններից երկար ցիլինդրաւորներ են, որ իրար ետից սկսան վեր գալ:

Սրանց տեսնելուն պէս, վազալի էս խալխը էնպէս մի կեցցէ գոռաց, որ հէնց իմանաս թէ մի բօմբ էր՝ տրաքեց:

— Կեցցեն մեր ազիզ ղօնաղները, ձէն տւին նրանք. — կեցցէ Քալան-թարը, Համբարձում Առաքելովը, Սամսոն Յարութիւնովը, Շիրևանդաղէն, կեցցեն քօմմէքն էլ. կեցցեն...:

Էս հաղաղին էրևանու հասարակութեան պատւաւոր քաղաքացիներից մինը, պարոն Թաթէոս Տէրունովը, բանցրացաւ մէկի ուսերին ու խօսաց հետևեալ կտրուկ ճառը:

— Բարով, հազար բարով էք էկել, յարգելի պարոններ. մեր գլխի, մեր աչքերի վրայ տեղ ունէք, մեր քաղաքը ձեզ փէշքաշ ըլնի. ձեզ պէս ազգի ճրագ թանկագին ղօնաղները շատ ունենանք: Շատ շնորհակալ ենք, որ էդպէս էրք էք արել, թօրունով էկել էք մեր էսօրւայ հանդէսին, մեր պաշ-

տելի, անմահ Սաշատուր Արովեանցի արձանի բացմանը մասնակցելու: Աստուած էս օրին քօմմէքիդ էլ արժանացնի, փոխը ձեզ ընի: Ես մեր քաղաքի հասարակութեան կողմից՝ ինչպէս պատգամաւոր, հրաւիրում եմ ձեզ քօմմէքիդ, համեցէք՝ գնանք մեր քաղաքը:

Հասարակութիւնը նորից թնդացրեց.—

—Կեցցէ Քալանթարը, կեցցէ Գրիգոր Արծրունովի «Մշակ»-ը:

—Բայց, պարոններ, նորից շարունակեց Տէրունովը.— աչքիս էստեղ մի բան պակաս ա թւում. բայս սերս մեր «Սաթարալի» խմբագիր պարոն Գասպար Կալատուզովը, մեր ասկի ձեռագրիկը, մենք շատ բէղամաղ կլնենք, որ նա էկած չլնի:

—Վն, տօ մունդրիկներ, իժում չիք տէհնում վուր իս էստի իմ... յանկարծ վագօնից դուրս պրծաւ մեր Գասպարն ու սկսեց մի ճառ, բայց խիստ բարկացած:—Գնա, իս ձիր աչքին չիմ էրէւհում, իս մարթ չիմ, իս ասկային գուրծիչ չիմ, վուր ինձ համա կէցէ չիք բղաւում: Իս վսուր խմբագրէմէն իմ պակաս. թէ կի Ալէքսանդրէ Քալանթարովը մէ հատ «Մշակ»-է իզգաւայտ անում, իս էրկու, իրիք, ջէր մի էրկուսի պրաշէնիքն էլ ջիրումս հազրած ունիմ. մաշ ինձ համա ասօրնի կէցցէ հարկաւուր չի վուր բղաւէիք. թէ կի լայեաղ չիք անում:

Հէնց որ Գասպարն իր ճառը վերջացրեց, քօմմէքն էլ միաբերան ձէն տւին:

—Կեցցէ պարոն Գասպարը, կեցցէ:

—Ա՛յ, էտն հն. իս վուր ձիզ հարբա չգամ, դուք միզ մարթատիղ չիք դնի. մնշ:

Էստեղ մեր ազգային գործիչները վագօններից հալա վէր չէկած, դիմի մի մին ճառ ասեցին:

Իսկ պարուն Քալանթարը իր ճառումն ասաց.

—Մալադէց, էրևանցիք, ես իմ Աստօծը, մենք հայերս շատ ենք կուլտուրականացել, շատ, ու էնդդար դայրաթ ունենք, որ ինչ մտածում ենք էն սհաթին և եթ կատարում ենք: Ա՛յ, օրինակի համար, հէնց էս Արովեանցի արձանը. էրէկ մտածուեց ու էսօր էլ կանգնացրեց. էդպէս էլ հասարակական միւս բոլոր հիմնարկութիւնները: Ու եթէ էս դայրաթը ըսինց էթն, ես իմ Աստօծը, շուտով մենք գաւառներում սեփական հաշից բացւած կունենանք—գիւղատնտեսական բարձրագոյն կուրսեր, փորձադաշտեր, ջուլհականոցներ, արհեստական գպրոցներ, համայնական շտեմարաններ, աղքատանոց, անկեղանոց, գժանոց և այլն: Բայց էս բոլոր բաների արգելքը միայն մի բանն ա—էն, որ մի քիչ մտածելու ընդունակութիւն չունենք ու, եթէ մեր ամենաբարձր այս զարգացման հետ ունենայինք էդ մտածելու ընդունակութիւնն էլ, էն վախտը մենք ամեն բան կանենք կարճ ժամանակում:

—Այն, այն, ճիշդ է ասում պարոն Քալանթարը. կեցցէ մտածողութիւնը:

Բոլոր ղօնադների համար զանիտ էր արւած Պարիթից ստացած նոր աւտօմօբիլներ, ամմա-բայց, նրանք չնդունելով էտ բանը, ժողովրդի հետ լցեցին Միրզոյովի կօնկէքն ու սկսան էրմիշ ընիլ դրա քաղաքը:

Կօնկէքն էնպէս էին քշում, ոնց որ թէ հարսանիք ա, ու հարս են տա-
նում: Ժողովրդի մեծ բաղմութիւնը սաքով հետևում էր նրանց:

Ես, Լևոն Մարկոսովն ու մեր Օհանէս Նազարէթովը ընտրւած էինք
մասնաժողովի անդամ ու՝ Խաչատուր Արովեանցի գլուխը փոքրիկ նկարով
քաշած, բամկի միջին բուլակի դայդա կպցրել էինք դօշներիցս: Մեզ կար-
գադրւած էր, որ գնայինք վագրալ ու ընդունէինք պատւաւոր դօնադներին:
Ամբողջ հանդէսի ջաֆէն մեզ վրայ էին գցել:

Քօմմէքին ներկայանալուց ու ծանօթանալուց եղը, մօտացանք Գաս-
պար Կալատուղովին:

Սա հալա առաչ ու առաչ մեզ չճանաչեց, եղով աչքերը տրորելուց ու
մի քիչ էլ ճըսճըպացնելուց եղը, բիրդան ձէն տւաւ:

—Վա, Մկօ-Չան, դունիս, իս քու պէտլած հօքուն դուրրան, ասաց ու
պսօշտու հինգը մի շահի դարձաւ:

Էն գհում նստած բարիշնէքը մի քիչ քինթ ու մոռթները խոռեցին,
չունքի էս պսօշտուցը թօխմա էին ընկել, էլ դիր չէր գալիս:

—Գանա, թէկի դուն իս, մաշ էս վունց է վուր էտէնց իս. ախրը դուն
մէ սաքսան, դօխսան եաշի, քաւթառած մարթ էիր. մաշ էդ վունց է, վուր
էտէնց ջահել, դաշանգ տղայ իս դառի, նուր մէկանց բիղիբդ ու մազիբդ
սիւացիլ ին, — պտակէլու նուր ազափ իս դառի:

—Բաս, Գասպար Չան, մեր քաղաքը հիմի էնպէս մի բան ա դառել,
որ հալիւորները ջահէլանում են. այ, էս էլ մեր Լևոն Մարկոսովը:

—Իս ու իմ Աստօժը վուր բան չիմ հասկանում, էս միբ Լևունն է,
ախրը...

—Տեսնում ես հօ ոնց ա չաղացել, կարմրել. բաս մեր Նազարէթովը:

—Վա... Սամսօն Չան, մի էստի մտիկ տուր է, իս իմ աչքերին չիմ հա-
ւատում. էստի էրևանումը խալիսը վուտից գլուխ փուխել է. բոթում է
Գասպարը կողքին նստած Սամսօն Յարութիւնովին:

—Բաս էն երկու դաշանգ խաները, հէր ու չէ հէրգնամ դրանք Շօտա-
գեալու ռումբիքանց դայդա փբւածութիւնից տաքում էին. ամմա-բայց
հիմի նէմնիացել, մի մին թաւադ էն դառել:

—Էրևումա, վուրէ, էստի ինչ վուր թլիամա կայ. գանա վուր էտէնց
է, միբ Աշոտ Աթանէսովին ու Սամսօնին թողինք էստի, մէկը իժում կու
չաղանայ, մէկէլն էլ իժում կու բարակի: Ախրը ինձ ասիք, մաշ էդ
վունց է, վուր ձիբ մալիարնի էրևանը էտէնց առուղջապահական քաղաք է
դառի:

—Գիդաք վնց, Գասպար Չան. առաջ՝ քանի որ ապրում էինք մեր
քաղաքի ուսրաւի գլասնիքի մտածելու հանդի, էնպէս էինք, հիմի՝ որ ապ-
րում ենք մեր էմին Տէր-Գրիքորովի մի գրքի հանքի, էսպէս ենք, ինչ որ
կայ, քօմմա էդ գրքի շնորհիւ ա:

—Էդ ինչ զօրաւուր գիբք է գրի էմինը, նուր թաղա աւետարան է:

—Չէ, Գասպար Չան:

—Կուլի վուր սուրփ նարեկ է, համայիլ է. վուր էդէնց է. գրինք միբ

տէր Գուտին աչ ու խաչվառը վի կալի գա էստի, էդ գիրքը տիղափու-
խինք միր քաղաքը, էդ խօսմ սրփատեղի բանատեղ կու դառնայ, միդ էլ
շատ պէտքական կուլի:

— Էդպէս բան չիլնի, Գասպար ջան, դուք էլ կարող էք ձեզ համար
գրել, սա մէնակ էրեանու համար ա:

— Ղուրթ է, միր քաղքումը շատ գրքերին գրում, կաղէթնիր՝ «Խա-
թարալա», «Սուրհանդակ», «Մշակ», Ղազարուս Աղայեանցի նաղլնիրը, տէր
Գուտի «Հովիտ»-ը, բայց վունչ մէկն էլ էտէնց մի գորութիւն չէ ունէցի.
ձիր էմինը կարելի է վուր սուրփ է:

— Սուրփ էլ չէ, Գասպար ջան, աչ, մի մտիկ տուր, տես վոնց է, որ
մեր կօնկէն՝ առանց ձիու, ինքն իրան գնում է:

— Կուլի, վուր էտ էլ էմինի գրքի գորութէնիցն է:

— Ո՞նց չէ, գրանից սաւահի՝ մեր քաղաքը հիմի որ տեսնես, չես ճա-
նանչի, օղը մաքուր, ջուրը դրախտական, բուլվարներ, պաւիլիօններ, էլէք-
տրիսկի լուսաւորութիւն, կոյուղի, ջրհաններ, շատրւաններ, ծառ ու ծաղիկ,
արտ ու անդաստան,— էս քօմմա էդ գրքի շնորհիւ ա, դրա անումն ա «Ան-
հրաժեշտ ձեռնարկութիւն Երևան քաղաքի համար»:

— Ի՞նչ բան է գրւած էնդի:

— Գրւած ա, թէ՛ եթէ մեր քաղաքը մէկ միլիօն մանէթ փող պարտք
անի, դրանով մեր քաղաքն էնպէս կը կերպարանափոխուի, որ շոքը կհովանայ,
մոծակները կսատկոտեն, ճանձերը կոչնչանան, ու էրեանը Արասթումանի
դաշէքից էլ դէնը անց կը կենայ:

— Մաշ, վուր էտէնց բան է դուս գալի միլիօններիցը, վունց է, վուր
Բաքուի դժուղքը դրախտ չէ դառնում:

— Ձի դառնում նրա համար, որ էդ գրքից չունեն, ու Բաքուի ուպրա-
ւէն էսպէս գրքեր չի տպում:

— Կուլի, կուլի:

Մի սհաթից եղը մենք հասանք քաղաք ու՝ կօնկէքից վեր գալով, մը-
տանք Անգլիսկի բուլվարը:

Հազարաւոր ժողովուրդ էստեղ հաւաքւած, սպասում էր մեզ ու՝ հէնց
որ մեզ տեսան, բացէցին կէցցէնների տուտը:

Հայոց գործիչներին ճանապարհ տալով, գնացինք հասանք բուլվարի
մէջ տեղը:

Էստեղ՝ մի բոլորակ, բանցր տեղում շինւած էր արձանը, որ հալա
ծածկւած էր կանանչ կարմիր վարագոյրների ետևում:

Քաղաքը զարդարւած էր բայրաղներով, իսկ բուլվարը՝ հօ ոնց որ մի
Եդեմեան դրախտ:

Գասպարը, որ չտէհաւ էս ծառ ու ծաղիկը, մառմառէ շատրւանները,
բուլկէքը, պաւիլիօնները, բեսեղկէքն ու զարդարանքները, արմանքից բերա-
նը բաց մնաց:

— Իս ու իմ Աստուծը, սա մի Փանտաղիա է, ձիր էմին Տէր-Գրիգօ-
րովը հրաշք է գործի իր գրքովը:

Հայոց գործիչները քօմմէքն էլ տեղ բռնեցին արձանի կողքին շինած մենձ պաւիլօնում, որ բաւական բանցր էր, ու էդտեղից պէտք է խօսային իրանց ճառերը: Ժողովրդի մէջ հազարաւոր օրինակներով ծախւում էին Արովեանցի տպած պատկերքը, որ ձեռնէ ձեռ էին թոցնում:

Սհաթի 12-ն էր:

Պէտքա ասեմ, որ ես մանկութիւնից ուխտ էի արել, որ չմեռնեմ, ընչրու՝ Միմօն ծերունու դայդա, իմ ձեռովս չբանամ Արովեանցի արձանը: Էս իմ ուխտս ընդունեց մեր էրեւանու հասարակութիւնը և ինձ մուրազ արեց բանալու վարագոյրները:

Բանցրացայ ամբիօնի վրայ ու՝ դառնալով դէպի հասարակութիւնը, արձանը բաց անելուց առաջ՝ ասացի հետեւեալ ճառը:

— Գերամեծար աղաներ, յարգելի պարոնայք ու խանութներ: Էս օր ուրախութիւնիցս քիչ ա մնում, որ արտասուեմ, չունքի ձեր էս թաւուր պարտաճանաչութիւնը դէպի հայ գրողները, մանաւանդ դէպի Արովեանցի յիշատակը՝ շատ քաղցր ա ու գնահատելի:

Ես լաւ գիտամ, որ մեր վիպասան անմահ Արովեանցի յիշատակը ձեզ գիշեր ցերեկ քուն ու դադար չէր տալի, ու մի ալար մտածում էիք, թէ ո՞նց անմահացնէք նրա անունը: Ու, վերջապէս, ձեր սիրտը հանգստացնելու համար, սօքսուէննի հաշից, ձեր սեփական ջէրից տասհազարներ վեր դրիք ու էս արձանը շինեցիք: ԱՖէրիմ էրեւանցիք, ամագներդ Երուսաղէմ, Աստուած ձեզ էլ էւէլի շնորք տայ:

Մեր պարուն Գասպարն էլ կվկայի, որ դուք չափազանց էք սիրում ու տեղակում ձեր գրողներին: Մինն էնն, որ՝ քանի սաղ ու կենդանի ա, նրա գրած ամէն մի գիրքը, տետրակը, տողը իրար ձեռից էք խլխլում, հարիր հազար օրինակներով սաղացնում. էլ հօ փողին չէք խնայում: Իսկ որ մեռնում ա, հլա տարին չթամամած, արձան էք կաննացնում:

Չէ ախպէր, չի կարելի էդքան էրես ռալ գրական մարդուն. քիչ ա մնում ձեր թիքէն, ունեցածը՝ հայ լրագրի, գրքի ու կազէթի տաք: Ու՝ որ հիմի, օխտը տարեկանից սկսած, ընչրու սաքսան տարեկան հալիւորը՝ աչքներդ շիւացել ա, գեօղլուկով էք ման գալի, ես իմ Աստօծը դիփ հայերէն գրքեր կարդալուց ա:

Աստուած սիրէք, մի քիչ ձեզ խնայէք. հէր օրհնածներ, ի՞նչ խաբար ա, հայոց մէջ խմբագրներն ու գրողները քիչ ա մնում Մանթաշովի պէս պալատներ կանգնացնեն. էլ ի՞նչ կարիք կայ նրանց մասին մտածելու:

Հար-նայիսա:

Էս մի քանի խօսքերից եղը, ես՝ ահա բաց եմ անում մեր անմահ Արովեանցի արձանը: Փոխը մեր հայոց մէկէլ գործիչներին ընի: Չեզ այան ա, թէ էս արձանը ընչի՞ հմար ենք կաննացնում նրան—էն բանի համար, որ նա առաջին մարդն էր, որ իսկական, զուտ հայկար, այսինքն աշխարհափառ գրեց:

Գրեց ու գնաց և՝ որովհետև նրանից եղը էկողները կամաց-կամաց

հայեալը թարգարիս ու հիմի օխտը լիզուով են գրում ու, սա-
ւահի էք էլ, հիւն ու վեւական կուս սկսելով, հիմի էլ տառերով գրիւն են
ուզում թարգարիս, դրա համար էլ՝ դասն արտասուներով յիշելով մեր զը-
րական հայր Նոյ Նահապետին, արձան ենք կաննեցնում, որ տեանողները
իմանան թէ, «Սա էր, որ առաջին անգամ հայեալը գրեց ու սրանով էլ վեր-
ջացաւ հայեալը»:

Ահա նա:

Ու մի քույրու մարագոյրները վեր թափւելով, Արովեանցի ձիւնի
պէս սիպտակ, մաքուր արձանը սկսաւ փայլել արևի ցոլքերի տակ:

Բանձրացաւ ուռաների թնդիւն:

— Կեցցէ Արովեանցի յիշատակը, կեցցէ Արովեանցը...:

Որ թամաշ էիր անում արձանին, խելքդ գնում էր:

Արովեանցը նստած մի բանցր քարափի վրայ, գլուխը կրթնած աջու
ձեռին, խոր հայացքով մտիկ էր տալիս զէպի Մասիսը:

Յածում պատկերանում էր քաջն Աղասին, մի ղօլթղում պատսպարած՝
հրեշտակի նման մի կոյսի, իսկ մէկէլ ձեռքով թուրը քաշած, կուում էր այ-
լազգիների դէմ, որ էկել էին էդ աղջկան փախցնելու: Իրանցից էրկուսն
արդէն վեր էին ընկած:

Նրանցից ցած էրկում էր էրեանու «թիւ ու թարիզը կորցրած բերդը
իր թափւած տափներով» և յետոյ սահանքաւոր, օձապտոյտ Զանգուն, որ
լիզում էր ժեռ քարափների կողերը:

Էսպէս էր Արովեանցի արձանը:

II

Իմ պարտքը կատարելուց եղը, մեր Օհանէս Նազարէթովը՝ քաղաքի
հասարակութեան կողմից լիազօրութիւն ստացած, բանցրացաւ ամբիոն ու՝
գառնալով հայ գործիչներին, ասաց.

— Յարգելի պարոններ— պատիւ ունիմ յայտնելու, որ Երեանի հայ հա-
սարակութիւնը աւելի ևս առաջ գնալով իր զոհարերութիւնների և առա-
տաձեռնութեան մէջ, հանգանակել է մի խոշոր գումար ևս, նպատակ
ունենալով կանգնեցնել երկրորդ արձանը Արովեանցից յետոյ էն հայ գործ-
չին՝ նրա կենդանութեան ժամանակ, որն արժան կգտնուի: Այդ հարցը
պէտք է քննել ու որոշել հէնց հիմա, այստեղ, այս ժողովում:

Մի քար էր, որ ընկաւ հորը:

Բանցրացաւ շիտթ, դալմադալ, հայ գործիչներն իրար գլխով անցան:

Էդ վախար առաջ էկաւ Գասպար Կալատուղովն ու սկսեց.

— Միւր Նազարէթովը մէ խիտ քաղցր շաքար կերաւ՝ ասից վուր
ուփրօ էրկնու հասարակութիւնը մէ պամեատնիկ էլ զապասումը ունէ
կանգնեցնելու համա միւր էն կինթանի մնացած ասկային գործիչներու համա,
ու՛մը վուր արժան կու համարի էս ժողովը:

Շատ շնուրհակալ ինք, Աստուծ կինք տա էրէւնցիներուն, իմ արիւս

գիտէնա, վուր էրէւնցիք շատ ասկասէր մարդիկ ին, էս թաւուր բաների համա գլուխները վէր դրած ունին:

Մախլաս:

Իժուժ. էստի մինք պէտք ա քննինք ու զսպրօս անինք, թէ ո՞ւմ համա կանգնեցնինք էս պամեատնիկը:

Թէկի վուր ինձմէն կու հարցնիք, իս հիմիկս և էթ կու վճոխմ, թէ ում համա լայեաղ է էս պամեատնիկը: Միթօմ չի՞ք հասկանում ու չի՞ք իմանում: Իս ու իմ Աստուծը դիփուենանքտ էլ գիտիք, ամա չիք ուզում ասի, էնդուր համար վուր նախանձ մարդիկ իք: Թէկի վուր դուք չիք ասում, իս ինքս կօսիմ: Էդ դապասնօյ պամեատնիկը վուչովի համա չէ՞ բայց միայն ինձ համա... հիմի խօմ հասկացա՞ք: Իս գիդիմ վուր էստի ինձանից սաւահի մինձ մարդ չկայ: Ուփրօ ինքս ազնուփական տէրտէրի վուրթի, թէև սօր-ւիլիմ Պէտրէբուխի կանսէրվատօրումը, լաւ իլ տիրացութիւն գիդիմ ու մամիս միտքն էլ էն էր, վուր ինձ տէրտէր ձեռնադրի, իժուժ իս չուզեցի ու արանքէմէն բեղախտուր դուս էկայ:

Իս էի վուր առաջի անգամ հայուց մէջ իզդավաթ արի էրգիծարանական կազէթ «Խաթարալէն»: Ու տէսնելով, վուր հայուց մէջ կազէթ իզդաւաթ անիլը վուչնչ փուղ է ուզում, վուչ հախկ ու հէսար, Աստուծը գիդէնա, վուր քանիսը ուզէնամ դուս կու բէրիմ. չունքի գլուխս իստակ քիալլա է, գուրձում է... խօմ տէսնում իք, թէ «Սուրհանդակում» ինչ առաջնութօղնիւր իմ գրում, մաչ:

Իս էլ լաւ ուտում իմ, լաւ խմում իմ, քաղքի միչին լաւ մարթկերանց հիտ նստում, կանգնում իմ, մասխարութիւն իմ անում ու լաւ քէփ քաշում:

Ա՛յ, էստու հա՛մա էլ էդ պամեատնիկը ինձ համա է լայիղ, ինձ համա պէտք ա կանգնեցնիք:

Գասպար Կալատուզովից եղը առաջ էկաւ Համփարձում Առաքելովը և սկսեց:

— Պարոններ, ես միանգամայն դէմ եմ Գասպար Կալատուզեանցի առաջարկին, մի մարդ որ հայ խմբագիր է և հայերէն խօսել չիմանալուց բացի՝ խմբագրի արտաքին էլ չունի:

Որքան էլ ես թւեմ իմ բոլոր առաւելութիւններն ու արժանիքները, այնուամենայնիւ հաւատացած եմ, որ այստեղ ոչ ոք ինձ չի հաւատայ, որովհետև բոլորն էլ ինձ հետ հակառակորդներ են:

Բայց հէնց դրա մէջ էլ կայանում է իմ արժանիքը:

Հայ մամուլը մեծ երախտապարտութեամբ կընդունէ, որ իմ գոյութիւնը նրա համար մի չնաշխարհիկ առանձնայատկութիւն է:

Շատերն ասում են, որպէս թէ ես կուարար և անհաշտ բնաւորութիւն ունեմ, սակայն դա ինձ համար մի սկզբունք է, որով ես աշխատում եմ նախ՝ հրապարակում միշտ եռալ, և յետոյ նիւթ մատակարարել հայ մամուլին, դնել նրան մի քիչ պէտքական դրութեան մէջ ընթերցող հասարակութեան համար:

Ազգային, բոլոր հասարակական խնդիրները, վէճերը, տարաձայնու-

թիւնները ծախու առնելով՝ ես դառնում եմ կուլի կենդրոնը, ամեն ոք ըս-
կաում է ինձ հարւածել. հետեապէս և այս հանգամանքում իմ գըլուխս հան-
դիսանում է այն փորձաքարը, որի վրայ փորձուում և զուում են բոլոր կու-
սակցական վիճելի տարածայնութիւնները, սկսած կաթուղիկոսական խըն-
դրից, մինչև տնտեսական, սօցիալական, կուլտուրական, ազգային ու բան-
ւորական հարցերը:

Ի՞նչ դրութեան մէջ կլինի արդեօք առանց ինձ հայ մամուլը: Այս
ծանրաքարչ ու բազմատանջ ծառայութիւնը, որ ես երկաթի տոկունու-
թեամբ տանում եմ յանուն հայ մամուլի հետաքրքիր բովանդակութեան
համար, ինչո՞վ պիտի փոխարինւի, եթէ ոչ միմիայն ինձ համար կանգնեցը-
նելով այն արձանը, որը դուած է պահեստում:

Եւ որ ես արժանի եմ դրան, այդ կարող է վկայել ինքը՝ պարոն Քա-
լանթարը:

— Մինք էդ հանգի պաղլօզ վկայութիւննիր չինք ընդունում, — զսպը-
ւած, համբերութիւնից միանգամայն տրաքելով, վրայ պրծաւ Քասպարը —
տօ, կոտրած գդալ, միթօմ դուն խմբագրի լաւ սըվաթ ունիս, վուր ինձ էլ
չիս հաւնո՞ւմ. այ էստի, մէ մուշտի կտամ վուր....

Ու մուշտին վրայ էր ուզում բերել, եթէ չհասնէր Ղալայչի Մարգարը
և յետ չտանէր:

Առաջ եկաւ պարոն Քալանթարը:

— Իզուր են բանակուում իմ յարգելի կօլլեպաները Համբարձում Առա-
քելեանը և պարոն Կալատուղեանը, որովհետև եթէ երբեիցէ խնդիր գայ հայ
ներկայ իրականութեան մէջ մէկին իր կենդանութեան ժամանակ անմա-
հացնել արձանով-այդ նախապատուութիւնն ինձ է պատկանում:

Միակ խոշոր դէմքը կովկասահայ գրականութեան մէջ, ուրիշ ոչ ոք չէ
կարող լինել, բայց միայն ես, ինքս՝ Ալէքսանդր Քալանթարս, որի համար
կվկային բոլոր «Մշակ»-ականները և նոյնիսկ՝ ինքը Համբարձում Առաքե-
լեանը:

Ես անյողգողգ մնալով Գ. Արծրունու դաւանանքներին, այսօր միակ
առանցքն եմ կազմում մեր կուլտուրական ու խաղաղ քաղաքակրթութեան
զարգացմանը: Դրան ապացոյց հայ գիւղերում հիմնածս փարձաղաշտերը,
ջուլհակահոցները, կաթնատնտեսութեան, շերամապահական և այլ կայարան-
ները: Իմ անձնաւորութեանս շուրջն է պտուում ազգային, հասարակական
կեանքի մտաւոր շփումը: Ես երկաթի տոկունութեամբ, որպէս անդուլ մե-
քենայ, միշտ գործում եմ առանց յոգնելու և զտնւում եմ ամեն բանում.
Իմ բազիր-հրատարակիչ՝ «Մշակ» լրագրի, անդամ-խմբագիր՝ «Կաւկասկիյ
Սելսկի Սագեայստվեննի» լրագրի, խմբագրութեան անդամ՝ «Գիւղատնտես»
շարաթաթերթի, նախագահ՝ կովկասի հայոց տնայնագործութեան ընկերու-
թեան, հոգաբարձու՝ մի շարք մանր-մունր դպրոցների, նախագահ և անդամ՝
ազգային բոլոր ժողովների, յանձնաժողովների, ընկերութիւնների, անդամ՝
Հայոց Բարեգործական ընկերութեան ու Տփլիսի թեմական խորհրդների և
այլն և այլն և այլն....

Գասպար Կալատուզեանը անհամբերութեամբ մէջ ընկնելով.

— Մաշ մինք էստի դիփուենանքս էլ անգուրձնիր ինք էլի:

Առաջ ա գալիս պարուն լէօն,

— Ես միանգամայն դէմ եմ այն առաջարկութեանը, որ այստեղ արեցին պ. պ. Հ. Առաքելեան, Քալանթար և Կալատուզեան:

Ալէքսանդր Քալանթար և ընկերութիւնը միշտ վստահ իրենց յաջողութիւնների վրայ, արտօնեալ իրաւունք են դարձրել թաթները դնելու հասարակական ամեն մի այսպիսի երևոյթներու վրայ: Սակայն այդ նրանց այլ ևս չի յաջողել, նրանք այլ ևս այն հսկաները չեն, որոնք կրկէսի լայնատարածութեան մէջ յաղթանակող հերոսների դափնիները վայելեն: Այդ այն ժամանակն էր, երբ ես «Մշակ»-ի խմբագրատանն էի և իմ ուսերիս վերայ տանում էի «Մշակ»-ի յաղթանակը: Գրիգոր Արծրունուց յետոյ «Մշակ»-ը ինձանով էր «Մշակ», և հայ մամուլի հսկայ այդ Նապալէօնից յետոյ, պատմական և ժամանակագրական անխուսափելիութեամբ ինձ է վիճակւած հայ գրական կեանքի «աւագագոյնը» լինելու, որի հիմնաքարերը կազմում են իմ գրական հսկայ աշխատութիւնները:

Ես կարծում եմ, որ այս սկզբունքը ուժեղ թափով կպաշտպանէ «Հորիզոն»-ը, իր աշխատակիցների և ընթերցողների ամբողջ կազմով և ներկայ արձանր հայ հասարակութիւնը կկանգնեցնէ իմ յիշատակին:

Ուրեմն, Օն յառնջ, պարոնայք Թումանեան, Շիրվանզադէ, Աղայեան, Սահակեան, Ահարոնեան, խօսեցէք, ինչո՞ւ էք լռել, պաշտպանեցէք ինձ:

Բայց ոչ մինն էլ ա տեղներից չեն շարժւում:

Հ. Առաքելով:

— Եթէ հարցը դնում էք այնպիսի մի ուղղութեան վրայ, ուր պէտք է խառնել մամուլը իւր ամբողջ սաստաւով ու խմբագրական կազմով, ես պ. լէօ, ձեր դէմ կհանեմ մի ամբողջ լեզէօն մշակականների, որոնց դէմ կնրսեմանայ ձեր «Հորիզոն»-ի աշխատակիցների ամբողջ ցուցակը: Մի մոռացէք, որ մեր բանակում կան գրական այնպիսի ինվալիդներ, որոնց բանակուային հմտութիւնը արդիւնք է հայ լրագրական պարտիզանական կոիւնների բազմամեայ փորձառութեան, նրանք ձեզ կփչեն և դուք կթռչէք երկինք, դուք մեր փեթակներից փախած նորիլուկ ճանճեր:

Գասպար Կալատուզեան խօսքըն ուղղելով Հ. Առաքելովին:

— Դուն վուր մէյդան իս հանում քու «Մշակ»-ականների թայֆէն, մաշ իս քնած իմ, վուր տազ անիմ: Աստուձը գիդէնայ, ձեզ վրայ կու բրախ տամ թուկէմէն փախած էն դադա Սաթարալիստներ, վուր ձիզ Բաղդադ կու թոցնին, դուն խօսմ գիդիս միր կուսածկութիւնը:

Շիրվանզադէն:

— «Կան մարդիկ, — և այդպիսիների թիւը դժբաղտաբար լեզէօն է հայերի մէջ, — որոնք կարծում են, թէ արեւստներ, թատրոն, գեղեցիկ գրականութիւն և հրապարակախօսութիւն այն հանրամատչելի գլուխներն են, որոնց վրայ ամեն մի սափրիչ ունի իրաւունք իր ածելին փորձելու»:

Գուցէ այստեղ շատ շատերը հրապարակ գան ու յայտարարելով իրենց

«խիկար իմաստուններ» սկսեն «հեղինակաւոր լիզու գործածել»՝ քննադատելով մեր ազգային հրապարակախօսութիւնը, գեղարւեստն ու գրականութիւնը:

Ի ուր, պարոնայք Առաքելեան, Լէօ և Կալատուղեան, երբ ձեր արժանիքը քննադատելու համար հրապարակ էք քաշում ձեր թայֆայական բանակներին, զգո՞ւմ էք, որ «այդ ամբողջ իր մտաւոր սահմանափակութեան մէջ երբեմն այնքան հեռու է գնում, որ չի ուզում մի բոլոր անգամ խորհել, թէ արւեստների մասին խօսելու և դատելու համար հարկաւոր է ունենալ որոշ պատրաստականութիւն: Այդ անբոլոր խղճի ամենայն անդորրութեամբ և գոհակութեան ամենայն յանդգնութեամբ մի կային ձեռին, ճիգ է անում խուժել մեր ազգատիկ թատորնի և գեղեցիկ գրականութեան, մեր նորածիլ արւեստների փոքրիկ անդաստանը և աջ ու ձախ ջարդոտել ծաղիկներ, որոնց հոտն զգալու ճաշակից զուրկ է»:

Ոչ, ես դրանց կասեմ «կանգ առէք վանդալներ, ճանաչեցէք ձեր չափը», այստեղ մենք՝ արտօնեալ դասուկարգս միայն ճաշակ, նուրբ հասկացողութիւն ունենք խօսել Հ. Առաքելեանի գլխի մասին, քննադատել Կալատուղեանի առաջնորդողները, միմիանց հետ հաշտեցնել Քալանթարի բազմաբղէտ պաշտօնները, պ. Լէօի պատմաբանական, վիպական և հրապարակախօսական տաղանդները և այլն:

Սխալ չի լինի, եթէ ասեմ՝ այդ արձանը ինձ է արժանի. նոյնպէս և սխալ հոգեբանութիւն չէ, որ ամենքն էլ իրենց համար պահանջն այդ կոթողը, որովհետև մեզնից ամեն մէկի մէջ էլ նստած է միևնոյն համոզմունքը, որ ազգը իրենց համար պէտք է արձան կանգնեցնի և իմ կօլլեգաս պ. Լէօն իզուր էր օգնութեան կանչում ինձ և իր մի քանի ընկերներին, չհասկանալով որ այս խնդրում ամենքս էլ մենակ ենք...

— Ճիշտէ, ճիշտէ, միւս կողմից հաստատեցին Թումանեան և Աղայեան:

— Այո, ես միանգամայն մերժելով ցարդ եղած առաջարկութիւնները, ամենայն իրաւամբ կասեմ, որ այդ արձանը ինձ պէտք է կանգնեցնել — Շիրվանզադէիս, որ հայ գրականութեան մէջ առաջին անգամ հիմք դրեց բէալական և հոգեբանական վիպասանութեանը:

— Ներեցէք պ. Շիրվանզադէ, միւս կողմից խօսեց Գ. Սունդուկեանը. — բնաւ ձեզ իրաւունք չհամարէք սեփականացնել այն՝ ինչ որ ինձ է պատկանում:

— Տօ մի խօսա է, հէր օխնած, սիրտս քիչ է մնում վուր տուաքի, ասում է Կալատուղովը:

— Այո, հայկական բէալ կեանքը իր բոլոր նատուրալիզմով, հոգեբանական նրբութիւններով ես եմ առաջին անգամ գրել և բնական կենդանութեամբ գրել հայ բեմի վրայ: Այս մասին հրաւիրում եմ յարգելի թողովականների ուշադրութիւնը:

Մօտ ա գալիս պ. Ահարոնովը. սրբելով աչքերի արտասուքները:

— Եւ ամենքը, ամենքը յաւիտենականութեան կոթողների հմայքն են մըմնջում, մոռացութեան սև ու մութ գերեզմանի խորքը գլորելով տանջը-

ւողներինց ամենամեծ տանջւողին, որ իր սրտի մէջ կուտակած տանջւած ազգի ամբողջ վիշտը, կուրծքը պատառւած վիրաւորի նման, գալարուեց հառաչանքին, մոնչաց որպէս Սահարայի մենակ առիւծը և ապա լացաւ այնպիսի փղցուկով, որի արցունքի հեղեղը հովիտներ ողողեցին, որի հառաչանքից սարերը տնքացին, ձորերը մնչացին, գետերը վազեցին:

Է՛յ դու մարդկութեան յողնած կարաւան, որ Սահարայի խօլական մենակութեան մէջ անցնում ես շարան շարան զանգակների քնեցնող դողանջիւններով, որ դարեր անցան մաշիլով կուրծքդ առապարի կարծրութեամբ, ասա, մի՞թէ ողբերգութեան աստուածը ոլիմպիական ամպրոպներից չվկայեց իմ անմահութեան պատգամը:

Եթէ ոչ, այն ժամանակ ես վիրաւոր կուրծքս գրկած, որպէս դժբաղտութեան սե ուրւական, պիտի թափառեմ անարձան գերեզմանների հողաթումբերի վրայ, պիտի լամ սևազգեստ սգաւորի նման, պիտի լամ անվերջ և գիշերային անուրջների սոսկացուցիչ տեսիլներով՝ երևամ քեզ ո՞վ ապերախտ հայ ժողովուրդ, դատապարտելով քեզ ևս ինձ հետ անվերջ սգալու իմ վիշտը: Այո՛, լացէք դուք տարաբաղտ սերունդներ, որ ձեր աշիւնաներկ զաւակների վիշտը գրկած՝ հեծկլաում էք, կուլ տալով ձեր աչքերից ծոր ծոր կաթեցող արցունքները և ես ձեր քաւարանի առջև որպէս ողբասացների քուրմ՝ պիտի սգամ ձեզ հետ միասին:

Ու էս ժամանակ Ահարոնովի աչքերից վէր ընկան երկու խոշոր արցունքի կաթիլներ: Հանեց սպիտակ աղլուխը ու տարաւ դէպի աչքերը:

Գասպար Կալատուղովը, որ մինչև էդ վախտը բերանն օխտ դազ բաց արած մտիկ էր տալիս, Ահարոնովի լաց լինելը տեսնելով, ինքն էլ հանեց աղլուխն ու փղցկաց ասելով.

— Հէր օխնած, էլ ի՞նչ իս լաց ըլնում, սրտնիրս էլ մաշեցրիր ու միզ էլ հիտդ իս լացացնում: Ախպէր, իս չուզէցի էդ պամիտնիկը, գանա տւէք իրան թող ձէնը կտրէ, միխկ է: Աստուծը գիղէնա միղք է, մարդը մէ սհաթէ լաց է ըլնում, վուխպ է կարդում, մաշ մինք խղճմտանք չունինք:

— Առաջ ա գալի Երւանդ Ֆրանգովը.

«Der Uebermensch ist der Sinn der Erde»: «Գերմարդն է երկրի իմաստը»: Ես, որպէս հետևորդ Նիցշէի փիլիսոփայութեան, մերժում եմ մարդկութեան թոյլերի գոյութիւնը ու ասում. թող կորչեն թոյլերը... ես կծիծաղեմ, երբ դէպի Գերմարդու յաղթանակը տանող ճանապարհի վրայ՝ ողբ ու կական բարձրացնեն իմ ոտքերիս տակ թաւալուող թշւառները: Ինձ համար ամեն ինչ ոչինչ է, միայն Գերմարդն է իմ իղէալը:

Ես ձեզ չեմ խնդրիլ ինձ համար արձաններ կանգնեցնել, «խնդրել» նշանակում է պարտուել, բայց ես միշտ յաղթանակում եմ, և այդ յաղթանակը իմ միակ ճանապարհն է, որի վաղճանին ես կկանգնեմ՝ որպէս Կատարելութիւն, որպէս Գերմարդ: Ես փիլիսոփայ եմ և փիլիսոփայում եմ Գերմարդու պատգամը, կէցցէ Գերմարդը որ մերժում է ստրուկների արձանները...

— Հէր օխնածը Դաւիթ անյաղթն է էլի, ինչ տղամարդի հերս է ու-

նէցի, ասում ա կալատուզովը:

Յովհաննէս Թումանով:

— Է՛հ, պարոն Ֆրանգեան, ես միանգամայն համակարծիք չեմ քո Նիցշէականութեան քար ու ապառաժ ոգուն: Մարդիկ սիրտ ունեն, Աստուած էս աշխարհը ստեղծել ա ամենի համար, ամենքն էլ պէտք ա ապրեն, ամենքի համար էլ քաղցր ա գոյութեան կռիւը: Ո՞նց կարելի ա որ ես չլամ սը-
գաւորի հետ, չծիծաղեմ առաւօտեան արևի ոսկեղէն ձառագայթների հետ, չերգեմ վարդ ու բլբուլների հետ, չքնարերգեմ պատանեկութեան աստուածային սէրը:

Ու իմ քնարերգութեան տաւիղը ես միշտ երազում եմ հ կարւած տեսնել իմ սպիտակ արձանիս վրայ, որ սերունդ սերունդների ետևից գան ու քնարիս լարերի հետ երգեն Յովհաննէս Թումանեանի յիշատակը: Ախ, որքան երազում եմ ես գերեզմանի փոխարէն, ունենալ ժողովրդի ձեռակերտ կոթողը, տէք ինձ այդ արձանը:

Աւետիք Իսահակով:

— Ես թէև յաճախ լացել եմ մօրս կրծքի վրայ դրած իմ գլուխս, երգելով՝

«Դարդս լացէք սարի սմբուլ,

Ալւան ալւան ծաղիկներ,

Դարդս լացէք բաղի բլբուլ,

Ամպշող երկնից զով հովեր...

.....

Սակայն դէմ չեմ Երւանդ Ֆրանգեանի Գերմարդու վարդապետութեանը: Այո, կարդացէք դուք իմ «Արուլ ալա Մահարին» ուր ես այնտեղ արտայայտել եմ Նիցշէականութեան պատգամը.

«Գնան քարւանս, ոտնատակ տալով... հայրենիք և արդարութիւն»:

«Կոխելով անցիր մարդկանց, ընկերի, կին և ընտանիք և...»:

Ես էլ չեմ խնդրիլ որ ինձ համար կոթողներ կանգնեցնէք, այլ իմ քընարս ինձ համար արդէն ձեռակերտել է իմ յաւիտենական անմահութիւնը:

Աշոտ Աթանասով:

— Իսկապէս ասած, ես չգիտեմ, ինձ արժանիք ունե՞մ թէ ոչ: Մինչև հիմա իմ գրական աշխատութիւնների մասին և ոչ մէկը կարծիք չէ յայտնել և մեր գրական սֆինքսները չեն խօսեցել, միայն մէկը որի անունը չեմ ուզում արտասանել, որպէս քննադատութիւն, խօսեց իմ ընագիտութեան դասագրքի մասին և բաւական հայհոյեց... ճիշտ է, հայհոյանքը ասիական կրիտիկայի բունկման ամենաուժեղ արտայայտութիւնն է, մի ախտ՝ որով վարակւած են մեր բոլոր դրականագէտները, այնուամենայնիւ դա լինելով իմ գրական ու հասարակական գործունէութեան միակ քննադատութիւնը, ես տակաւին սպասողական դրութեան մէջ եմ, որ թերևս մէկը դուրս կգայ և կաշխատէ ապացուցանել թէ իրօք, ես ես մի կարևոր տեղ եմ գրաւում մեր գրական գործիչների շարքում:

Միւս կողմից ես իմ աչքում կորցնում եմ իմ մեծութիւնը այն բանի

համար, որ երբ առաւօտը վեր եմ կենում, հաստատ համոզւում եմ, թէ ես իրօք գիւղատնտես եմ. երկու ժամից յետոյ ինձ գտնում եմ ուսուցչական պաշտօնի մէջ, ճաշին քնում եմ, երեկոյեան արդէն խմբագիր եմ: Ու եթէ գոնէ սրանցից մէկի վրայ պարապած լինէի պրօֆէսիօնալ կերպով, թերևս ինձ իրաւունք համարէի ազգի վզին դնելու մի արձան: Է՛հ, չուզեցի այդ արձանն էլ: Մեր միջավայրի բազմաթիւ գոհերից մէկն էլ թող ես լինեմ, որ ստիպում է մարդկանց լինել բազմարեւեստեան ու սագի նման ոչ լաւ թռչիլ իմանալ, ոչ ձկան պէս լողալ և ոչ էլ նապաստակի պէս վազել: Կանգնեցրէք այդ արձանը իմ կարծիքով պարօն Գարեգին Լևոնեանի համար:

— Դուն քի համա աղւակատութիւն արն, պարուն Սալ-Ման, ինչ գուրձ ունիս Զիւանու տղի հիտ:

— Պարոնայք, խօսեց Գարեգին Լևոնեանը, — ես բնաւ կարիք չունիմ արձանի. եթէ ինձ գոնէ մի քիչ փող տայիք հոգալու հրդեհից կրածս վրնասները և հրատարակէի իմ «Գեղարեւոտը», աւելի քան երջանիկ կզգայի ինձ, քաղցած փորիս մասին ես աւելի շատ եմ մտածում, քան՝ տպագայ անմահութեան կոթողի:

— Ա՛յ, աֆէրիմ մեր տղայ, իսկական մատերալիստ ես, ձէն տւեց էն կողմից Բախիշ Իշխանովը: Մարքս-էնգէլսեան դիալէքտիկան իր ակտիւ ու պասիւ պրինցիպների մէջ բնաւ չի ընդունում իմպերիօկրիցիզմի պօզիտիւիստական աշխարհայացքը: Ես, որ իսպառ քայքայել եմ մատերիալիստական տւեալներից, թէ գրականով և թէ մտաւորով, դարձեալ կպնդէի, գրպանումս ունենալ մի կլորիկ գումար, քան թէ մի մառմառեայ ծանր արձան՝ փողոցի մէջ տեղում:

— Այո՛, պարոն, ուլտր-մատերիալիստ, մէջ գալով ասաց պարոն Պաժակը. — «նախ ստամոքս, ապա փիլիսոփայութիւն» — ասել է ձեր մեծ լիդերներից մէկը: Ամեն մի լաւագոյն գաղափար, իդէա և սկզբունք գոհարեբելով ծայր նիւթապաշտութեան, դուք բացասում էք իդէալականութիւնը, մի խոշոր առաջմղիչ ոյժ, որ միակ խթանն է մարդկութեան յառաջադիմութեան նւաճումների համար:

Ես որպէս իդէալի դէրւիշ, կերազէի անընդահատ քաղցած թափառել մարդկութեան հայրենիքում քարոզելով՝ «թող կորչեն ուլտր-մատերիալիստները»:

Ողջ հասարակութիւնը մին էլած ձէն տւեց:

— «Այո՛, թող կորչեն»:

Յետոյ իրար հարցնում են.

— Եանի խի՞ ենք գոռում թող կորչեն...

— Որ Պաժակն ա՛ստում էնա գոռա էլի...

— Ես կուզէի, որ բոլոր նահատակների արձանների շարքում՝ կանգնացրած տեսնել նաև իմս...

Ողջ հասարակութիւնը գոռում ա՛.

— Այո՛, այո՛, պարոն Պաժակ:

Առաջ եկաւ պարոն Մալխասով:

— Դուք պարոնայք, բավական աչառութեամբ վարվեցիք հրասպարակ նետոված այդ խնդրին առանց մի վայրկեան յիշելու վե՛րականութեան երգ-վեալ կողմնակցին...

— Ձէնդ կտրիր դու հերձաւածող, ձէն տւեց էն կողմից Աղայեանցը՝ դեռ պարծենում ես այն բանով, որ հայկական ուղղագրութիւնը պատակ-տեցիր և մի ուժեղ գէնք տալով անգրագէտ համբալկների ձեռքը, սկսան ամենքը գրել այն ձևով, որպէս թելազրում է իրանց մտաւոր համբալկութիւ-նը: Չհամարձակես ձէն հանել, թէ չէ մի հատ հէնց հիւն կցցեմ աչքիդ լսի մէջ որ կքոռանաս:

— Ես քեզ չեմ լսում պարոն Աղայեան, ինչքան ուզում ես հայհոյրի:

— Սո՛ւս, հերձաւածող, տգէտ և կամակոր, խիստ բարկացած վրայ պըր-ծաւ Աղայեանը դէպի Մալխասեանը:

— Գէնացալէ, միք թողա, իսէր Աստծու, սրանց ջուրը մէ աււովը չի գնում, հիմիկ սրանք իրար կդնքսին, իս Աղայեանցի թարս խասիաթը խօմ էն գլխէմէն գիդիմ:

— Բա չէ, թողամ որ արձանը նրա համար կանգնեցնին:

— Մաշ քիզ համա՛:

— Ձէ, բա քեզ համա՛ր:

— Բաս վունց իս գիտգիմ, մեր տղայ, մա՛շ:


— Ձէնդ կտրիր, հիմի թէ չէ հա՛...

— Ձէնդ էլ կտրէ հալա մէկն էլ էւէլի, էնպէս կու բղաւիմ, վուր ան-կաջնիրիդ բուրդը դուրս կը թռչի հա՛, դուն էն չիս, վուր իմ խմբագրու-թինէմէ մօշլա արի՛:

Բանցրացաւ կոխ, ղալմաղալ, ժողովուրդը խառնւեց իրար, ամեն մի գլխից սկսեց էրկու ձէն դուրս գալ...

Վերջը շատ փիս բան պէտք ա ծագեր, ամա-պայց էդ հաղաղեն զարթ-նեցի, տեսայ որ խիստ ծանդը էրազ էր...:

ՓԱԼԱՆԴՈՒԶ-ՄԿՕ



Մ Տ Ք Ե Ր

«Աշխատանքը ծնում է հոգու անդորրութիւն և բաղդաւորութիւն».— ասել է մի մեծ փիլիսոփայ: Անշուշտ սրանով չէ արդարացնում տաժանակիր աշխատանքը:

Որքան վեր ուզում է թող տանեն քեզ քո խոհերը, ուր որ սաւառնես դու քո երևակայութեամբ.— ոտքերդ միշտ կլինեն երկրի վրայ ու գլուխդ իւր տեղում:

Եթէ ուզում ես ըմբռնել շրջապատիդ իմաստը, բարձրացիր աշտարակի գագաթը. միայն ամենամեծ բարձրութիւնից նկատելի է թէ՛ ինչպէս երկրի վրայ ամեն ինչ փոքր և ոչնչութիւն է:

Մարդու բարոյական կատարելագործութեան ամենաիրական աստիճանաչափը— ճշմարտասիրութիւնն է:

Արժանիքը՝ սեռ չէ ճանաչում:

Իսկական բաղդաւորը կարող է միայն յիմարը լինել, ուրեմն ում որ չես ուզում վիրաւորել, բաղդաւոր մի՛ անւանիր:

Ճշմարտութիւնը—այդ արևն է, որից ծածկւելում համար ամենից լաւը ամպհովանին է:

Բարեկամութիւնը ու ճենապակեա բաժակը միևնոյն բանն է. նա շատ հեշտութեամբ է ջարդւում և երբէք էլ լաւ չէ կպչում:

Յաճախ օգտակար սուտը աւելի խելացի բան է, քան վնասակար ճշմարտութիւնը:

Սեփականութիւնը — գիւղութիւն է:

Մեծութիւնից դէպի ծիծաղելութիւնը—մի քայլ է:

Լեզուն մարդսն տւած է իր իսկական մտքերը ծածկելու համար:

Սուտը սառցապատ մի մակիրևոյթ է, որի վրայից թռչել կարելի է, բայց անցնել՝ երբէք:

Ամենավտանգաւորը նա է, ով իրենից չէ վախենում:

Յիմար գիտնականը միշտ էլ տգէտից ձանձրալի է:

Եթէ որևէ մէկը մտադրէր կոտորելու բոլոր յիմարներին, այն ժամանակ պէտք էր ողջ երկրագնդի ազկաբնակութեանը կոտորել:

Հոգու հանգստութիւնը գտնել չի կարելի, բայց նրա մասին երևակայել կարելի է:

Աւելի լաւ է մարդ ինքը լինի լաւ նախահայր, քան վատ նախորդներին ժառանգ կամ լաւ նախորդների վատ սերունդ:

Եղիբ քաղաքավարի, այդ ապահովում է քեզ և քո ականջներին շատ լկտիութիւններից:

Երբ քո մասին մտածում ես, ամենից առաջ մի մտանար պակասութիւններից:

Բաղդաւորութիւնը ինչպէս և առողջութիւնը—երբ նրանց չես նկատում, նշանակում է նա կայ:

Ուրիշների մէջ արժանիքը յարգելը Աստուածային յատկութիւն է, թերևս միակը մարդու մէջ, որ Աստուածային է:

ՄՏՔԵՐ ԿԱՆԱՆՅ ՄԵՍԻՆ

Կինը և ապակին միշտ էլ վտանգի մէջ են:

Սէրը միշտ էլ համարեա գեղեցիկ ծաղիկներով զարդարւած մի թակարդ է:

Իւրաքանչիւր մարմին զրկելով յենարանից վայր է ընկնում. բացառութիւն են կազմում միայն կանանց մարմինները, որոնք ընկնում են հէնց այն ժամանակ, երբ յենարան են ունենում:

Ամենաանմեղ աղջիկն անգամ 3-4 փութ մեղք ունի:

Կանայք որպէսզի կարիերա ստեղծեն, պէտք է երեք տեսակ մետաղ ունենան. ոսկեայ գլուխ, արծաթեայ ձայն և սրողպատեայ քիթ:

Ովկեանոսեւմ դժւար է յատակը որոնել, կանանց մէջ ճշմարտութիւնը:

Օրհնիր այն սուրը, որը քեզ ազատել է կանանցից:

Կարելի է արդեօք կասկածել կնոջ խելքի մասին, եթէ նա չէ ասել և ոչ մի խօսք:

Եթէ դու ինձ ցոյց կտաս մի կին, որ իր կեանքում հայելուն չէ նայել, ես քեզ համար կգղնեմ մի տղամարդ, որ երբեք փող չէ սիրել:

Կինը իր տարիքը չէ պակասեցնում, նա միայն նրա մասնիկները իր ընկերուհու տարիքին է աւելացնում:

Լաւ հագցնում են այն կանանց, որոնք տղամարդկանց համար յաճախ են հանւում:

Կանայք սիրոյ մասին այլևս չեն խօսում, երբ արդէն սովորում են նրան պատասխանել:

Կնոջ բարեգործութեանը կարելի է հաւատալ, բայց նրան երաշխաւորել չէ կարելի:

Չինացի ազնիւ կիներ հաւատարիմ է իր մարդուն, իսկ եթէ նա սիրահար էլ ունի—հաւատարիմ է լինում երկուսին էլ:

Երբ կիներ յամառում է, նշանակում է շուտով սկսելու է նրա անկման պրօցէսսը:

Երեք կանանցից միշտ լաւ է ելնում չորրորդը:

Սէրը այժմ բոլորի ծիծաղն է շարժում, իսկ կիրքը՝ խրախուսանք:

Խանդը՝ մի կողմից առաջ է բերում սիրոյ անտարբերութիւն, միւս կողմից այն հասցնում մինչ խելագարութեան:

Կնոջ բարեկամների մէջ ամուսինը իր սեփական թշնամիներին է տեսնում:

Որքան բարձր է սլահում կիներ իր շրջազգեստը, այնքան ցածր է նրա բարոյականը:

Կնոջ սիրտը երկու դուռն ունի—մէկով համարձակութիւնն է մտնում, միւսով՝ ոսկին:

Կիներ մարդու համար զոհաբերում է ամեն ինչ կամ ոչինչ:

Ուրիշի կնոջից զողացած համբոյրը ՚ի ցոյց մի հանիւր:

Կնոջ բաց կրծքին նայելով գործի մասին չէ կարելի մտածել:

1 Է Ն Կ Թ Ե Մ Ո Ւ Ր Ի 500-Ա Մ Ե Ա Յ Յ Օ Բ Ե Լ Ե Ա Ն Ը

(ՆԱՄԱԿՆԵՐ ՎԵՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՅ)

(անթել հեռագրով)

Ն Ա Մ Ա Կ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ձը լսած, չը տեսնած իրարանցում է տիրում Տարտարոսի բոլոր
բաժանմունքներում: Մեծ պատրաստութիւններ են տեսնում այս օրերս
հանդիսաւոր կերպով տօնելու մեր դժոխային յայտնի հասարակական գոր-
ծիչ և սանդարամետական դեախնամ ընկերութեան պատւաւոր նախագահ
պարոն Լէնկթեմուրի վերին Երուսաղեմ մուտք գործելու 500-ամեայ յօրե-
լեանը: Յօրելեանական մասնաժողովի անդամներ ընտրւած են հետևեալ
պատւաւոր անձինքը.—նախագահ՝ Ճինկիդ-խան, անդամներ՝ Չարմաղան,
Բաթի, Ալիասլան և Բուղա, քարտուղար՝ Հասան-խան: Հանդէսին մասնակ-
ցելու հրաւիրաթերթեր ուղարկւած են դժոխքի բոլոր ազգութիւններին,
նոյն իսկ հայերին, թէև այդ բանին դէմ էր Մելիք-Ֆրանգիւլը: Հրաւերներ
ուղարկւած են նաև դրախտի պրեմիէր Յոբ երանելուն, ինչպէս նաև ձեր
երկրի մի խումբ համակրողներին: Յօրելեանը կկատարուի Սաղայէլեան
մեծ թատրոնում, ուրբաթ օրը:

ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Հանդէսի օրը մօտենում է: Սաղայէլեան թատրոնը և ամբողջ Լիւցի-
ֆերեան հրապարակը զարգարւած են դեղին դրօշակներով, իսկ Ահրիման-
եան մեծ աշտարակի վլխին տեղի են ունենալու հրախաղութիւններ: Թատ-
րոնի ներսը հիասքանչ զարդարւած է, և պատերը նկարազարդած յայտնի

դևերի, քաջքերի, ջիների և ալքերի պատկերներով, որոնց մէջ տեղում կախած է մեծանուն յօրելեարի կենդանագիրը, շրջապատւած իշկաթնուկի և եօնջի գիրլանդներով:

Բեմի դիմաց արքայավայել տեղ է պատրաստած նորին ամբարտաւանութեան Մեծն Բեհեղգերուխի համար, որը ցանկութիւն է յայտնել ներկայ գտնւելու հանդիսին:

Դժոխային դերասանական խումբը այդ օրը ի պատիւ յօրելեարի կը ներկայացնէ Գորդինի «Սատանան» և Անդրէևի «Անաթեման»: Յօրելեանական հանդիսից յետոյ կը լինի հանդիսաւոր խնջոյք և պարահանդէս Շահ-Աբասի ապարանքում:

ՆԱՄԱԿ ԵՐՐՈՐԴ

Յօրելեանական հանդէսը վաղն է: Հետզհետէ դալիս հասնում են զանազան ազգութիւնների պատգամաւորութիւնները: Դրախտական գաւառներից դեռ ոչ ոք չի եկել, կարծիք կայ, որ նրանք չեն ուզում մասնակցիլ: Դժոխային կիսապաշտօնական «Անդունդ» օրաթերթը խիստ լեզու է բանեցնում դրախտականների հասցէին Լէնկթեմուրի նման մի գայլարժան մեծ գործչի յօրելեանին չը մասնակցելու համար: Թերթը նոյն իսկ այդ հանգամանքը վերագրում է աղքատ Ղազարոսի պրօվակացիային:

Տեղական ենթակոմիտէն փողոցներում և հրապարակներում թուռցիկներ է տարածել, որի մէջ բոյկոտ է յայտարարում այսուհետև դրախտական «տիրացուների» հետ որևէ ինամիական կապեր հաստատելու դէմ:

Յայտարարած է վաղւայ ցերեմօնեալը, որ հետևեալնէ, հանդիսի ըսկզբին երբ բոլորը իրանց տեղերը գրաւած կլինեն, յօրելեանական յանձնաժողովի կողմից Չարմազան էֆէնդին և կոմս Բուզան կը գնան Լէնկթեմուրին իրա ապարանքից բերելու: (Նորին դիւական բարձրութեան Սադայելը իր շքեղ օտօմօբիլը դրել է նրա տրամադրութեան տակ): Լէնկթեմուրը իր Ֆաթմա կնոջ և Դիւլիզար աղջկայ հետ կնստի օտօմօբիլը և կսլանայ հանդիսատեղին: Սուրմակ և Բրքիշոյ հայ քահանաները ջորիները վրայ նստած կհետևեն նրան և ամբոխ ճանապարհի վրայ սոխ կցրւեն: Թափօրը ընդառաջ կգնայ հետևեալ փողոցներով. Լիւցիֆերեան հրապարակ, Դեմօնեան նրբափողոց, Ճիւաղեան պրօսպեկտ և Մեֆիստօֆելեան փողոց: Դժոխքի հաւատարիմ հպատակները կերգեն «հրեշափառ» և ճանապարհին կցանեն սխտոր և պղպեղ:

ՆԱՄԱԿ ԶՈՐՐՈՐԴ

Վերին Երուսաղէմի ամբողջ ազգաբնակչութիւնն այս օրերս սրտատրոփ սպասում էր յօրելեանին: Հանդէսը կատարւում է այսօր, փողոցները կեն-

զանութեան մէջ են: «Անդունդ» լրագիրը հրատարակել է բացառիկ պատկերագարդ թիւ, որի մէջ դրւատում է յօբելիարի հերոսական ասպատակութիւնները և գազանաբարոյ գործերը: Կան ալան-թալանի, սրածութեան ու հրդեհների պատկերներ:

Ահա գալիս են պատգամաւորութիւնները: Ամենից առաջ եկան Սասանեան պարսկաստանի ներկայացուցիչները—Կիւրոս, Կոմբիւս և Յազկերտ, Շապուհը ճանապարհին հիւանդացել է և Միհրներսէ սպարապետի հետ վերադարձել: Յետոյ եկան Հոռմէական պատգամաւորները—Հերովդէս, Ներոն և Կալիգուլա: Կեսարը ատամնացաւի պատճառով չի կարողացել գալ: Հրէաստանից եկել են Կայափայ քահանայապետը, Յուդան, Բարարբան և Մադքոսը: Իսկ ուսաց կողմից ներկայ գտնւեց Պուգաչևը: Եւսպոնիայից՝ Նօգձուն և Կուրօկին, Չինաստանից՝ Լի-Սուենգ-Չանգը և մարքիզ Իտօն: Վրաց պատգամաւորները իրենց հետ բերել են մի մեծ տիկ գինի և սազանդարների խումբ: Ամենից վերջը եկան հայոց պատգամաւորները՝ Վէստ Սարգիս, Մերուժան և Եզր Կաթուղիկոս: Վասակ Մամիկոնեանը չի կամեցել որևէ մասնակցութիւն ունենալ, նոյն իսկ շատ վշտացել է, որ իրեն հրաւիրաթերթ են ուղարկել: «Ինձ թիւրիմացութեամբ են դժոխք բերել—գրում է նա մի նամակով,—ես ահա 14 դար է դատ եմ բաց արել Եղիշէ պատմագրի դէմ, որ ինձ չի հասկացել և Մամիկոնեանների ցանկութեամբ ինձ դաւաճան է դուրս բերել, բայց դրախտական բարձր դիւանը այսքան երկար ժամանակ չի բարեհաճում իմ գործը քննութեան յանձնել, որովհետև դիւանի քարտուղարը Անոնգ երեցն է»:

Շնորհաւորական հեռագիրներ են ուղարկւած Բելից, Աժդահակից, Նաբուզոդոնոսոսրից, Յուլիանոսից, Կրուշևանից: Եզրպետոսի փարաւոնները ընծայ են ուղարկել մի ոսկի սուր և մի խուրջին: Հեռագիրներ կան և երկրից՝ Սուլթան Համիդից, Պուրիշկևիչից և մի պագրօմասէր հայից, որի անունը դժբախտաբար չի կարողացուում: Պուրիշկևիչն ուղարկել է ընծայ մի կարաս հրէական արիւն և մի կարաս անմեղների արտասուք:

Պուրիշկևիչի ընծաները մատուցելու են Գրիգմունդը և Կատկովը:

ՆԱՄԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Նորին ամբարտաւանութիւն»... «Նորին ամբարտաւանութիւնը գալիս է»... «գալիս է Մեծն Բեհեզեզերուխը»: Իրարանցում ընկաւ հսկայ թատրոնի մէջ: Յօբելիանական յանձնաժողովի անդամները թատրոնից դուրս եկան նրան ընդառաջ: Բոլոր հանդիսականները ոտքի կանգնեցին, երաժշտութիւնը թնդացրեց դժոխային հիմնը: Ներս մտաւ նա, որը տէր և տիրական էր ամբողջ տարտարոսի, որի անունից դողում են ձեր երկրում, ու ծանր, հանդիսաւոր քայլերով բարձրացաւ ու բազմեց իր տեղը: Տասն և մէկ երկ-

տասարդ ու սիրունատես աչքեր որպէս թիկնապահ շաթիրներ՝ շարեցին նրա աջ և ձախ կողմը: Քիչ անցած դրսից լսեց օտոմօրիլի սուլոցը, բերին յօրելեարին. Լէնկթեմուրը ներս մտաւ հանդիսաւոր կերպով, դահլիճը թընդաց ոտնահարութեամբ, երաժշտութիւնը նւագեց թաթարական մարշը:

Յօրելեարը նախ քան իրեն յատկացրած տեղը հասնելը, մօտեցաւ նորին ամբարտաւանութեան գահոյկին և ամենախորին հպատակութեամբ համբուրեց նրա ամենաողորմած կրունկը: Մեծն Բեհեզզերուխ օրհնեց նրան և նրա պարանոցից իր սեփական ձեռքով կախեց մարդկային գանգերից կազմած մի շղթայ, շնորհելով նրան նոյնպէս իսկական տոհմական հրոսակապետութեան պատւաւոր կոչում:

Ապա սկսեցին պատգամաւորներ շնորհաւորութիւնները:

Ամենից առաջ խօսեց Ներոնը: Ահա նրա ճառի համառօտ բովանդակութիւնը:

Չերդ գոռոզութիւն

Տէր Աւագակապետ!

Հինգ դար է անցել այն օրից, երբ դուք առաջի անգամ ոտք դրիք մեր սրբազան տարտարոսեան սահմանները: Մեզ քաջ յայտնի են ձեր անօրինակ սխրագործութիւնները հզօր կամքիդ դէմ գնացող մարդկանց բռնաջինջ անելու հմուտ քաղաքականութեան մէջ: Լինելով այդ ասպարիզում վերտուօզ-արտիստ, ես ամեն անգամ հաճոյքով էի կարդում Կայէնի խըմբագրութեամբ հրատարակող «Արիւն» շաբաթաթերթի մէջ ձեր քաջագործութիւնների մասին՝ հրճուում և ուրախանում էի: Ինքը Կայէնն էլ, որ հիմնադիրն է մարդասպանութեան, միշտ գովեստով է խօսում ձեր սատանահաճոյ գործերի մասին: Այսօր ահա անձամբ շնորհաւորելով ձեր 500-ամեայ յօրելեանը, ցանկանում եմ ձեզ երջանիկ դարեր: Չեր մասին իմ գրած մի սքանչելի քերթւածը լոյս է տեսել «Անդունդի» այսօրւայ պատկերազարդ յաւելւածում: Չեր անձնէր բարեկամ մեծ բանաստեղծ և մեծ երաժիշտ՝ Կայսր Ներոն:

«Հանց... գւարճութիւն...» գոռաց բազմութեան միջից հոռմայեցի ամբոխը, երբ տեսաւ Ներոնին: Լռեցէք անպիտաններ, լսեց Դժոխքի պրիստաւ Մուխտար փաշայի սպառնական ձայնը և ամբոխը լռեց:

Այնուհետև շնորհաւորեցին ուսաց պատգամաւորները, մատուցելով մի երկաթի գաւազան և երկու ձու: Միւս ազգութիւնների շնորհաւորանքից յետոյ ամբիոն բարձրացաւ հայ պատգամաւոր Մէրուժան Արծրունին և սասաց մի զգացւած ճառ.

«Տեարք և տիկնայք!

«Տարտարոսի պատւական ազգաբնակութիւնը այսօր հանդէս մը կկատարէ, որու նմանը տեսնւած չէ վաղուց անտի: Կար ժամանակ որ խուլիզանարար կմաքառէին ջուրը կրակին դէմ, քամին արևին դէմ, մուկը գոմէշին դէմ և վերջապէս անդէն ոչխար ժողովուրդը հզօր և արիւնկզակ հրոսակախամրի դէմ, անցան, անցան այն ժամանակները, այժմ անոնք ջուր են մենք կրակ, անոնք քամի են մենք արև, անոնք մուկ են մենք գոմէշ: Եւ

մեր այսօրւայ հերոս յարգելի յօրելիարը, պէտք է ասել, մեծ անուն ունի հանած ասպատակութեան և մարդակերութեան պանծալի ասպարիզում և նրան դարերը չեն մոռանար: Լէնկթեմուրի բորենափայլ անունը միշտ յարգանքով պէտք է յիշէ ամեն մի պագրօմասէր հայ: Թող միշտ ապրի սաղայէլեան շրջանում մեր վայրենազարմ յօրելիարը:

Ուրեմն երիցս ուռն... տուշ»:

Երաժշտութիւնը թրնդաց:

Մի շարք ուրիշ պատգամաւորութիւններից յետոյ, կարդացւեցին շրնորհաւորական հեռագիրները. Սուլթան-Համիդի հեռագիրը լսեց ոտնկայս: Այժմ խօսքը պատկանում է յօրելիարին:

«Ձերդ ամբարտաւանութեան Մեծն Բեհեղգերուխ, մեծամեծ իշխաններ մայր Սանդարամենտի, ազնիւ պատգամաւորութիւններ և յարգելի հանդիսականներ.

«Ես այնքան զգացւած եմ, որ չեմ կարողանում խօսել, բայց և պէտք է խօսեմ: Պէտք է խօսեմ, որովհետև չեմ կարող լռել: Դարեր առաջ ազգերի և ժողովուրդների կռիւները, ստրկացումը, ինչպէս զիտէք, բացառապէս Ֆիզիքական էր, ներկայ ժամանակներում երկրագնդի վրայ բացի Ֆիզիքական բնաջնջումից աւելացել է աւելի վտանգաւորը՝ հրոսակութիւն, բռնաբարում պատի, մտքի, կամքի և այլն և այլն...

«Եւ մինչ մեզ, հրոսակապետներիս մարդկութիւնն անմահացրել է, յետագայ դարերում երկրորդ տեսակի հրոսակապետները մնում են աննկատելի: Երկար չեմ խօսի դուք ինձ կհասկանաք, այժմ յոգնած էք, չեմ ուզում երկարաբանել: Շնորհակալութիւն ձեր ինձ ցոյց տւած պատիւների համար»:

Որոնտնդոստ ոտնահարութիւններով թնդացրին Սաղայէլեան կամարները: Լէնկթեմուրին բարձրացրին ձեռքերի վրայ և տարան հասցրին մինչև օտոմօբիլը:

ՆԱՄԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

Այսօր Շահ-Աբասի ասպարանքում ի պատիւ յօրելիարի տեղի ունեցաւ մեծ ճաշկերոյթ: Թամադա ընտրւեց Յուդա Իսկրաովտացին: Յօրելիարը ախորժակ չունէր, երևի 5 դար դեռ ևս կուշտ էր անչափ մարդկային գլուխներ ուտելուց:

Ճաշացուցակը կազմւած էր օրւայ պատշաճ:

1. Սաշ՝ մարդկային ոտքերից պատրաստած.
2. Տապակած՝ հրկիզեալ դիակների փափուկ մսերից.
3. Գառան միս՝ ծծկեր երեխաներ.
4. Քաղցր՝ Եւայի կերած պտուղներից:

Գինու տեղ Շահ-Աբաս իր հիւրերին մատուցեց Արաքսի ջուր՝ հայի արիւնով ներկւած: Աղ և պղպեղի տեղ գործ ածեցին՝ արտասուք և թուք:

Հանդէսը վերջացաւ գիշերւայ կիսին:

ՄԵՖԻՍՏՕՖԷԼ

բաններին յանձնելու մասին: Իսկ եթէ գործը ուրիշ կերպ սկսէ և սրանով ամէն ինչ ասէ—վարձելով սուտ վկաներ, որոնք «կիսաբաց դռների յետևից» և այլն, և այլն... փո... այդ արդէն կեղտոտ միջոց կլինի, իսկ եթէ գործը հէնց այնպէս տանէ, ինչպէս որ կայ, ճ... այդ արդէն ուրիշ բան է...

Այդպիսի մի բարեփոխութիւն մտցնել ամուսնալուծական գործերի մէջ, մի այնպիսի բան կնհրկայացնէր որ...

Եզոր Ստեպանովիչը մտածում էր, թէ ինչպէս պէտք է տեսնէր իր բարեկամ երդւեալ հաւատարմատար՝ Բալզամանովի հետ և խնդրէր որ նա դատարանի անունով մի խնդիր գրէ: Հէնց իւր գրասեղանի արկղում նա մարկաներ էլ ունէր...

Իր մտածմունքների այդ վայրկանին յանկարծ մէկը դռան վարագոյրը բարձրացրեց և նրա տակից երևաց Բալզամանովի գլուխը...

— Հէնց այս բոպէիս քո մասին էի մտածում, բացականչեց Եզոր ըՍտեպանովիչը:

— Հը, ի՞նչ կայ որ: Առհասարակ երբ արեգակի մասին են մտածում... — Հէնց նա էլ դուքս է գալիս... ահա... ահա քեզ գործ, բաժանիր ինձ, եղբայր, Մարեա Սիմէօնովայից, բաժանիր, կարծեմ նոր կանոն էլ կայ, կամ թէ շուտով պէտք է հրատարակւի այդ կանոնը... մարկաներն էլ պատրաստէ. այ, տես...

Բալզամանովը չզարմացաւ. նա շտապեց վերցնել մարկաները, փաթաթեց թղթի մէջ, դրեց իր ժիլետի գրպանը, յետոյ վերցրեց մի թերթ թուղթ, վերցրեց գրիչը նոյնպէս և ի՛ր եղբունգի վրայ փորձելուց յետոյ, ինչ որ բաներ իզրգեց թղթի վրայ և շուտ գալով դէպի Եզոր Ստեպանովիչը հարցրեց.

— Է՛հ, եղբայր, ի՞նչ ես վախենում, գործէ էլի, կարշտարանեմ, այս բոպէիս էլ կարելի է խնդիր գրել, բայց օփսոս որ վաղը ասուէ և խնայիք չեն ընդունի... բայց և այնպէս ի՞նչպիսի պատճառարանութիւններ պէտք է բերել...

— Անպայման պէտք է մի պատճառ բերել...

— Տխմար խօ չես, իհարկէ...

— Չգիտես որ գատարանում վկաններին կհարցանեն: Բայց խնդիրը պէտք է այնպէս գրել. «Ի նկատի ունենալով իմ ամուսին՝ Մարեա Սիմէօնովնա Պօզովինցովայի դաժան վերաբերմունքը դէպի ինձ, խոնհարարաբ խնդրում եմ դատարանից բաժանել ինձ նրանից և այդ առթիւ տալ ինձ կատարողական թերթ: Իրոշմամբարը սրա հետ ներկայացնում եմ»:

— Այդպէս, չէ:

Եզոր Ստեպանովիչը մտածեց.

— Այդ ձևով ո՛չ լաւ է և ո՛չ էլ ճիշտ: Առաջին որ նա ինձ հետ դաժան չի վարուում, թէև նա շատ դաժան է վերաբերում դէպի ամուսնուհիւր և ամուսնուհիւրը,— այդ ճիշտ է, իսկ երկրորդ որ առհասարակ անյարմար է կնոջ դաժան վերաբերմունքի մասին բողոքել: Կմտածեն թէ հարբեցող է կամ թէ ուրիշ մի այլ... Ո՛չ, ո՛չ, անյարմար է...

— Հն... երկարացրեց Բալզամանովը, — ճիշտ որ անյարմար է... բայց, սիրելի տղայր, դատարանը շատ անգամ իւր ներքին համոզմունքներով է վճիռ կայացնում... մի բան էլ կայ, դուք է Մարեա Սիմէօսովնան ինքն ներկայացնէ մարկաներ և խնդիրը ու միջնորդէ անհետևանք թողնել քո խնդիրը: Այդպիսի դէպքերումն էլ դատարանը՝ առհասարակ ամենից առաջ կանանց խնդիրն է յարգում...

— Է՛հ նրա վրայ չարժէ բոլորովին մտածել, թէկուզ նա այդպիսի խնդիր էլ տայ, որովհետև դատարանում նա մի ուրիշ բան կմտած է և կասէ...

— Գտայ, յանկարծ բացականչեց Բալզամանովը և մօտենալով դուան, ցած թողեց վարագոյրը ու սկսեց ուրախ ուրախ փսփսալ. «Երբ ձեր մէջ ծագիլ է այդ, այսպէս ուսաց, միմիանց չհամազատասխանելու հարցը, աստ ինձ, նա քեզ անւանում է «դաժան», «տանջող», «անխիղճ»...

— Անւանում է:

— Այդ կարող են դատարանում հաստատել ծառան, լակէյը և խոհարարուհին:

— Իհարկէ, կարող են:

— Եթէ այդպէս է, աւելի լաւ կլինի որ այդ խնդիրը ոչ քո կողմից գրւի և ոչ էլ նրա, այլ թող այդ խնդիրը բոլորովին կողմնակի մարդիկ տան, որոնք իբր զայրացած քո կնոջ դաժան վերաբերմունքից դէպի քեզ, ստիպւած են լինում բողոքել դատարանին: Հասկացար:

— Բոլորովին ո... ոչ:

— Կատարեալ կոճղես... ասենք այդ քեզ չէ վերաբերում, այդ իմ գործն է: Ինչ որ հարկաւոր է ես այն կանամ, բայց միայն դու դատարանում քեզ շատ քաջ պահիր: Երբ դատարանում կհարցանեն կինդ «դաժանութիւններ» անում է, ասա այո, «անխիղճ էր», ասա այո, «տանջում էր», ասա այո և ինչպէս և ունքերդ էլ այսպէս, այնպէս արա:

— Չէ՞ որ նա դատարանում կարող է ամեն ինչ փչացնել:

— Ո՛չ, փչացնել չի կարող, ընդհակառակը այդ նրան շատ դուր կգայ, քանի որ այստեղ նա անմեղ գոհ է դառնում: Իսկ կինն էլ առհասարակ նման դէպքերում երկար սպասել չէ կարող, նա անպատճառ թաշկինակը կտանէ աչքերին ու կասէ. «մխ, ես շատ անբաղտ եմ»... մեզ էլ հէնց այդ է հարկաւոր: Հն, կասեմ, դուք անբաղտ էք, և իսկոյն կխնդրեմ այդ մըտցնել արձանագրութեան մէջ և դատարանի ուշադրութիւնը կհրաւիրեմ այդ խօսքերի վրայ, կապացուցանեմ, որ նա իւր սրտի խորքիցն է ասում՝ «ես անբաղտ եմ», յետոյ անուշ խօսքերով նրան կհարցնեմ. «ձեր ամուսինը ձեր կեանքը իհարկէ խորտակեց», նա նորից աղլուխը կտանի աչքերին և կասէ. «Իմ մարդը իմ կեանքիս լաւ տարիքը խլեց»: Ես կխնդրեմ դատարանին այդ ամենը մտցնել արձանագրութեան մէջ և այսպիսի հանգիստ ձեւակահանութիւններով գործը կտանենք, այնպէս որ ինքը դատարանն էլ չի հասկանայ, թէ ինչպէս իւր մօտ հաւաքւեցին այդքան «ներքին համոզմունքներ», որոնց հիման վրայ նա ստիպւած կլինի լուծել ձեր ամուսնութիւնը:

Եզոր՝ Ստեպանովիչի գէմքը փնջեցի...
 Բալզամանովը շարունակեց.— դու ինձ ներիր, ես քեզ դատարանում
 կնկարագրեմ զօրս դու պատուիրեցէր, երբէք էլ չեմ խնայի, կասեմ, սլարոն-
 աչք դատաւորներ, թէև սա իմ բարեկամն է, բայց և սոյնպէս սրիկայի
 մէկն է, ամենադաժան բնաւորութեան տէր և կեղծ մարդ է, թէև արտա-
 քուստ ձևանում է քաղաքավարի և զգաստ, բայց սա մարդ գազան է, սա
 սովատանջ է արել իր կնոջը...

— Միթէ դրանք հարկաւոր են:

— Անպատճառ... սովամահ է արել... կասեմ որ առանց որևէ պատ-
 ճառի սեղանի վրայից վեր էր կենում, գնում էր իւր առանձնասենեակը,
 ինչպէս այդ վկայում է, թէև քաղաքացուհի, բայց ապօրինի ծնւած Պելո-
 գէյեա Սիդորովնան, լաւ իմանալով, որ նման գէպքերից յետոյ, սոյն դա-
 ժանի անմեղ զոհը չէր կարող մօտենալ տապակած մսին... իսկ ինքը իւր
 առանձնասենեակում նստած մտածում է միայն իւր փորի մասին: Պահես-
 արի Ֆէյերվերկեր կապիտօն Կուրանդին ցոյց է տալիս, որ շարունակ
 բերել է սրա առանձնասենեակը պանրի և վետչինայի բուրդերրօզներ և
 սա կերել է... Արդեօք սա երբևիցէ մտածել է իւր անբաղա զոհի կրած
 չարչարանքների մասին...

— Այ, քաջս, այ քաջս, քեզ պէտք է...

— Սա երբէք թոյլ չէր տալիս քնելու իր թշւառ զոհին, կասեմ ես, Սի-
 դորովայի և Ֆէյերվերկեր Կուրանդինի տւած վկայութիւններից մենք տես-
 նում ենք, որ սա սովորաբար նստում էր պարապելու մինչև առաւօտեան
 ժամը 5-ը, իբր թէ թղթեր էր գրում, չնայելով նրան որ սրա անբաղա զոհը
 շարունակ ազերուում էր պանկել քնելու և հանգիստ թողնելու իրեն, իսկ
 սա գիտակցաբար ինկվիզիտօրի սառնարիւնութեամբ ցոյց էր տալիս իբր
 թէ գրում է ամբողջ գիշերը՝ մինչև իւր մատների յօգնելը և այդ ամենը նա
 անում էր գիտակցաբար, որպէս զի իւր զոհին թոյլ չտայ քնելու: Սա խա-
 դում էր նրա ջղերի հետ, նրա հոգեկան հիւանդութեան, pardon— նրա հո-
 գեբանութեան ամենաքնքոյշ լարերի, այն լարերի որոնք կապում են կա-
 նացի թոյլ սրտերը: Այն ժամանակ, երբ սրա անմեղ զոհը ցանկանում էր
 բողոքել այդ բոլոր տանջանքների դէմ, գիտէք, սլարոնայք դատաւորներ,
 ինչ էր անում սա, սա միայն լսում էր...

Մի քիչ կանգ կառնեմ: Յետոյ կշարունակեմ... սա լսում էր, լսում էր
 միայն գիտակցաբար, ձայն ու ծաղտուն չէր հանում, լաւ իմանալով որ չը-
 ութեամբ են միայն կերակրում կեանքի մէջ ամենաթշւառ, չուրախացած
 էակներին...

Բալզամանովը լռեց և ապա իր բոլոր ոյժերը ՚ի մի հնւաքելով անաց.
 — Իմացիր եզրայր իմ, որ նա անպատճառ լաց կլինի... իսկ ես այդ բոսէին
 կխնդրեմ որ այդ ևս մտցնեն արձանագրութեան մէջ: Մի տանք բոսէից
 յետոյ արդէն վճիռը պատրաստ կլինի:

— Բայց չէ որ նա կսկսի սկանդալներ բարձրացնել:

— Ինչ ուզում է թող անէ: Վճիռը որ վերջնական կլինի... հա... հա... հա...

Եգոր Ստեպանովիչը ուրախութիւնից վեր ցատկեց և համբուրեց Բալդամանովին...

— Ուռն, գործիր հէնց այդպէս, ինչպէս ասացիր:

Այս խօսքի հետ նա իսկոյն քնից զարթնեց: Նրա գլխի վերև կանգնած էր Մարեա Սիմէօնօփան, որը մօտեցնելով իր գլուխը ամուսնու գլխին, հարցարեց.

— Ի՞նչ ես գոռում: Հ՞ը, ի՞նչ է, թէյլը այստեղ բերեմ թէ սեղանատուն կգաս...

Եգոր Ստեպանովիչը գիտէր իհարկէ, թէ ի՞նչ է նշանակում ասել անանձնասենեակ թէյ բերել. շտապով պատասխանեց. «հոգեակս, սեղանատուն կգամ, սեղանատուն:


Եւ ինքն իրան մտածում էր.

— «Հ՛ը, այդպէս... է... կկակղես կուտես, բաս կուզես բաժանել...

ԿՎԻԴԱՄ.

Թարգ. ՇԱՏԷԼ-ԱՐԱԲ

„Вѣсна“-ից



ԱՆԿՈՒՇՏ ԱՐԱՐԱԾՆԵՐ

Հորթարած էիր—քահանայացար,—
Բանուոր հոտին դու հովիւ դարձար.
Առաջ մերկ էիր և կերըդ—մախոխ,
Հիմա ապրում ես լի՛, փարթամ և ճոխ...
Բայց գոհ չես դարձեալ... Աչքածակ յիմար,
Էլ ի՞նչ ես ուզում՝ դու՞րդ, թե՞ զսիրտումս...



Կար ժամանակ, որ առած մի քրթոց՝
Նաւթ էիր ծախում փողոցէ փողոց.
Հիմա, փանք Աստու, ունիս դաւօղներ,
Երկյարկանի տոն, անթիւ մըշակներ...
Բայց գոհ չես դարձեալ .. Անկնշտ խելագար,
Էլ ի՞նչ ես ուզում՝ դու՞րդ, թե՞ զսիրտումս ..



Տպարանի մէջ ցաւ շատ քաշեցիր,—
Տառեր շարելով՝ կեանքըդ մաշեցիր.
Այժմ խմբագիր ես, եկամուտդ էլ—յորդ,—
Ունիս հազարից աւել բաժանորդ...
Բայց գոհ չես դարձեալ... Քաղցած գըրաշար,
Էլ ի՞նչ ես ուզում՝ դու՞դ, թե՞ զսիրտումս ..




Բալախանում չաղ պաշտօն ձեռք առար,—
Մի մեծ Ֆիրմայում եղար կառավար.
Վերջը Ֆիրմայի վային անտեցիր,
Եւ դատարանում փողո՞ւ վ մարտեցիր...
Բայց գոհ չես դարձեալ... Ոսկեմոլ տըխմար,
Էլ ի՞նչ ես ուզում՝ դս՞րդ, թե՞ զարհուրմար...



Երեսուն տարի անյայտութեան մեջ
Մաշեցիր կեանքըդ—'ի սէր քո ազգի.
Բայց, խեղճ Լիլիպուտ, չունեցար մի խէչ,
Որ ծեր հասակում քեզ նեցուկ լինի...
Սակայն դու ազգից չես ուզում հազար,
Այլ պատառ չոր հաց—ապրելու համար...

ԼԻԼԻՊՈՒՏԻ



Բարձրագույն զոր քաղաքն ինչո՞ւն էր...
Այն անձն էր, որ ինչո՞ւն էր...
Եւ ինչո՞ւն էր, որ ինչո՞ւն էր...
Եւ ինչո՞ւն էր, որ ինչո՞ւն էր...
Եւ ինչո՞ւն էր, որ ինչո՞ւն էր...



ԴԱՌՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ *)

Նա ինձ տասց. «Գրանգ կը բռնեմ,
Որ դու վրաս ես մըտածում»:
—Ո՛հ, ասացի,—ի՞նչ թագցընեմ,
Ես քո մասին չեմ խորհում:

«Ի՞նչ է ապա, իմ սիրելի,
Եղել մըտքիդ առարկան»:
—Պարտեզը, երբ ծաղկո՞ւնքով լի՝
Կեանք է շընչում, սիրական:

«Ահա, տեսա՞ր, որ տարայ ես»,
Թոթովեց նա՝ ժրպտալով.
«Մի՞թէ կուրծքըս չէ՞ մի պարտէզ
Եւ չէ՞ ծաղկում՝ խայտալով...»

Ես լուռ կացի՝ յաղթահարեա՞ծ...
Սակայն կըրկին խօսեց նա.
«Հէ՛նց այս ժամիս դու անկասկած
Մըտածում ես իմ վերայ»:

*) Նմանութիւն կատարել Մինդիսի «Արձակ բանաստեղծու-
թիւն» գրեածքին: Ծան. Հեղ.

— Ո՛հ, Երեւելի ջան, դու արխարւում ես, —
Ես չեմ խորհում քո մասին՝
«Ի՞նչ է ապա, խրնդրեմ՝ ասեա, —
Նիւթը մըտքիդ խոհերին»։

— Լուսնի դողող ձառագայթը՝
Ընկած ծովի ծակերին.
«Տարւոյ... միթէ իմ ժրպիտը
Նըման չէ այդ պատկերին...»

Ես լըռեցի... Բայց նա վերստին
Շըշընջաց ինձ՝ նազելով.
«Արե՛ս վըկայ, այս վայրկենին
Դու գրադած ես ինձանով»։

— Ո՛հ, սիրելիս, ինձ հաւատա, —
Միտքս այլ տեղ է սըլանում...
«Որ այդպէս է, դէ ճիշտն ասա՛
Ինչի՞ վերայ ես մըտածում»։

— Վարդի վերայ — մըշտաւարտ:
«Դարձեա՛լ տարայ, սիրելիս...
Միթէ նոյն չեմ, երբ երկու կաթ
Արցունք ցօլայ այտերիս»։


Յաղթւած էի... Վերջին անգամ
Նա խօսեց իմ ականջում.
«Վուզե՛ս գաղտնիդ ես իմանամ, —
Իմ վերայ ես մըտածում»։

— Ո՛հ... Այս անգամ, իմ նազելի,
Դու սխալում ես չարաչար:
«Դէ մի տանջիր, ասա էլի,
Ի՞նչ ես գըցել սարէսար...»։

— Ես խորհում եմ նախապահ
Մարտ վերայ, իմ անգին,
Որ անբաժան և սրտերիմ
Մընայ արու տատարակին:

Նա, մահապարտ մարդու նրման,
Կամաց խօսեց. «բարեկամ
Դու յաղթեցիր ինձ. — անպայման, —
Ես տարւեցայ այս անգամ...»

ԼԻԼԻՊՈՒՏԻ



Զոյգ սովածներ մի օր
Մօտեցան աստձու դռան.
«Մենք սոված ենք այս եօթ օր
Հալ չի մնացել մեր վերան ...»

Արամազդը զարմացաւ.
«Այս ի՞նչ ձայներ լսեցի,
«Սորանք դարձան գլխիս ցաւ,
«Երբէք լաւ բան չարեցի...»

Այս ասելով ցած նայեց
Աստուծային աթոռից,
Ուր հանգչում էր նա յոգնած
Արարչական գործերից...

Երկուսին էլ մի տեսակ
Նա նւէրներ պատրաստեց,
Զոկ ջոկ լցրեց զոյգ քսակ
Ու վերևից ցած նետեց:

Որի անուն հարուստ էր
Թոցրեց ոսկու քսակ,
Իսկ որին որ աղքատ էր
Մնաց մի մեծ ախորժակ...

Երբ հարուստ տեսաւ ոսկին
Ասաց. «Էսպէս պարզեին

«Պիտ ախորժակ ահագին,
«Իսկ ես չունեմ տակաւին...»

«Եկ խլեմ նորա քսակ,
«Եթէ չեղաւ կխափեմ,
«Կամ թոյն կտամ մի բաժակ,
«Զոյգ պարզեր ես կուտեմ...»

Հասաւ յանկարծ աղքատին
Բռնեց դրեց ոտի տակ,
Տրորում էր այս այն դին,
Ուզելով խլել քսակ...

Իսկ աղքատը շնչասպառաւ սարժուեց
Կուռում էր նորա աակին, ծախս գնեց
Ազատել կուզէր իսպառուցումն վէ յան
Ու առնել փախչել ոսկին,

Ախորժակն էլ աշխոյժով
Մի կողմից պահած փորին,
Կանչում էր օգնել օյժով
Աշխարհի աղքատներին...

Արամազդը վերևից
Հէնց այս տեսաւ փնթփնթաց,
«Այժմ պրծայ ես ցաւից,
«Զահնամ կէրուի չոր ու թաց»

Հեռուից մի նոր ձայն լսուեց
Կասես խօսքեր հանաքի,
«Էստեղ բանս հէնց դզուեց,
«Թող աշխարհը տրաքի»

Երգում էր այդ սատանան
Պարկապղուկ բերանին,
Պար էր գալիս ինքն իրան
Ու ծափ տալիս այդ բանին...

ԳԵՂԻ ՄՈՒԽՍԻՆ

Մեծի պահոց բարիլուսին
Ժամ էր գնում գեղի մուխսին,
Իր հարևան նորահարսին
Տեսաւ ճամբին կուժը ուսին:
— «Հազար բարե շէկ Նարգիզին,
Ասաց մուխսին սիրուն հարսին.
«Ո՛ւրես գնում, եկ միասին
«Մի քիչ խօսանք սիրոյ մասին...
«Ձէքս ոսկի, մըչ ատլասին
«Ես դարձել եմ գեղին լուսին»...
— «Չօռ ու ցաւը քեզ պէս փըսին»,
Դարձաւ հարսը գէպի մուխսին.
«Կրակն ուտէ էդպէս բոյսին
«Չար դե՛, էն էլ, էս ուրբ պասին...
«Մինչև էդ սառ կեանքիդ կիսին,
«Քաղաքներում միթան, լուսին
«Ծունր չոքած գինու թասին,
«Սև ես կապել քո նամուսին...
«Մտել ես գեղ՝ պաշտում քիսին,
«Ընկերացած ծուռ ուսին,
«Ողջ սանձել էք նստել ուսին
«Շինել ոսկոր մըչ հարիսին...»

«Քեաչալ գլուխդ կասես լուսին,
«Ձիւն է դրել բեխիդ, մուրսին...
«Ամօթ քեզի քո նամուսին,
«Քար մի քցիր անտէր կոյսին,
«Մի խօսցրու խալխի հարսին...
«Կորիր, պարկիր մըչ սև փոսին,
«Տես, կկանչեմ... իմ ամուսին
«Մուր կքսէ քո երեսին»...»


ՇԱՏԷԼ-ԱՐԱՐ



Ով չափազանց շատերին է անւանում բարեկամ, նա չունի և
ոչ մի բարեկամ:




Համակրանք՝ դէպի մէկը մեծ մասամբ էգոիստական աստուծ
է ունենում:




Մարդը անվստանգ լողում է ովկեանոսում, սակայն հեշտութեամբ
խեղդւում է փողոցի աղտոտութիւնների մէջ:




Մարդկութեան իւրաքանչիւր նոր սերունդը ուղղում է իր հայ-
րերի սխալը, իսկ իրենք սխալւում են 'ի հաշիւ իրենց որդոց:




Նաւակով դժւար է ովկեանոսում լողալ, սակայն ամենից դժ-
ւար է դատարկ գրպանով կեանքի ովկեանոսում լողալը:



Ապրիւր այնպէս ինչպէս խորհուրդ է տալիս գրպանդ և ոչ թէ
ինչպէս թելադրում է խելքդ:



Ծիծաղիր յաճախ ցածր ձայնով, բարձրաձայն ծիծաղը միայն
թշնամիներ է բազմապատկում:



Այն հարցին թէ «ու՞մ ես դու սիրում», պատասխանիր բացա-
սաբար... և դու երբէք սուտ ասած չես լինել:



Մարդիկ մեռած հոգով ուրախութեամբ են իրենց կենդանի
մարմինը քարշ տալիս երկրի վրայ:




Թագցրու քո անբախտութիւնը, որպէսզի դրանով ուրախու-
թիւն չպատճառես թշնամիներիդ:



Կեանքը մի դաշտ է, որի վրայով մէկը անցնում է ծանր հա-
ռաչանքներով, մէկ ուրիշը ուրախ, խնդազին երգերով:



Երիտասարդութիւնը տրւում է բոլորին, իսկ խորը ծերութիւ-
նը՝ միայն ընտրեալներին:



Եթէ ծոյլերը չլինէին, աշխատասէրների կէսը քաղցածութիւ-
նից կմեռնէր:



Ծառերը բուսնում են անտառներում, իսկ տոկոսները՝ մուր-
հակներում:



Դիպլոմատիան մի արւեստ է, որը կայանում է շատ խօսա-

լու, բայց ոչինչ չասելու մէջ:




Չգիտես ինչո՞ւ բոլորը կարծում են, թէ բաղաւորութիւնը սիրոյ և փողի մէջ է:

Այդ սխալ է, բաղաւորութիւնը — դիտողութեան մէջ է:



Որնէ՞ ամենալաւ միջոցը մարդուն ճանաչելու համար. — նրա խօսելու ժամանակ համարել թէ նա քանի անգամ ասում է «ես»:




Չար մարդիկ նման են սառցակոյտերին. — գլորւելուս աշխատում են իրենց հետ տանել ուրիշներին ևս:




Աշխատիր զարգանալ հնարաւորին չափ բազմակողմանի կերպով, որովհետև կեանքիդ մեծագոյն մասը անց ես կացնում քո ինքնամփոփ սեփական հասարակութեան մէջ:




Եղի՛ր ինքնուրոյն, ոչ ոքի խորհրդին մի՛ լսիր. — սրան նույնպէս:



Շատ հեղինակներ գրում են այնքան շատ, որ բնաւ ժամանակ չեն ունենում մտածելու:



Փառքը նման է գայլորս փոսի, որի մէջ ընկնողը երկնքում ցերեկն էլ է աստղեր տեսնում, բայց իր շրջապատում՝ մարդկանց երբէք:




Երկաթէ կամքը և երկաթուղին հաւասար կերպով հարկաւոր են մարդու:



Ով աշխատում է զլիսով, նա խնայում է ոտքերին:



Եթէ ուզում ես պարապել «դատարկ գործերով» — ճշմարտութիւնը փնտռիր:



Շուայ հազուստում յիմարն էլ է յարգանքի արժանանում:



Մաքուր սպիտակեղէնով կեղտոտ հոգին չի կարելի ծածկել:



Բոլոր վայրենի գազաններից ամենասարսափելին և ամենավտանգաւորը — մարդն է:



Աշխարհային բոլոր հազազիւտ բաններից հետո գերեզման տար միայն մէկ բան — բարի անուն:



Երբէք ուշ չէ գղջումը, բայց միշտ էլ անօգուտ է:



Եթէ ուզում ես լինել լաւ մարդ, ամենից առաջ խոստովանիր որ վատ մարդ ես:



Աւելի լաւ է ցորենի հատիկը քարի վրայ ցանել, քան քարը՝

ցորենի հատիկի վրայ:



Ոչինչ չունեցողը գտնէ ազատութիւն ունի:



Փայռի վրայ ագուան էլ է արծիւ երևում:



Մարդիկ սովորաբար շտապում են երկու գէպում. մէկ երբ
առջևից գնում է գեղեցիկ կին և երկրորդ երբ նրանց հետևում է
պարտատէրը:



Ընկերոջդ ցեխի միջից հանելիս, աշխատիր որ ձեռքերդ մա-
քուր լինին:



Փող շատ աշխատելը—քաջութիւն է, նրա պահելը—խմաստու-
թիւն, իսկ ծախսելը—արևեստ:



ԱՅ, թէ ՈՆՅ ԴԱՌԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Հէնց գիգայի թէ, բանաստեղծ լինել,
Մի շատ մենձ խելքի, հունարի բանն սւ.
Եա մախլուխի մէջ մենձ անուն հանել,
Ուսումով գլխի, քեամալի բանն սւ:

Գնացի բազար, մի մանտօ առայ,
Նեղ շալվար սերթուկ, էն էլ անփարայ,
Դեղնագոյն չաքմէք, չէշմակ ու տրօստ,
Ջարդլաձ ցիլինդր, կրախմալ ու փօստ:

Մազերս էլ գլխիս խուճուճ շինեցի,
Բեղերս կանտով, մի մուրուք էծի,
Ցիգարն էլ դնչիս երբ թամամ էլաւ,
էլ Փալանդուզը բանաստեղծ դառաւ:

Եւ դալամն առած, ահա գրում եմ,
Պօէտի նման ծուռ դիրքով նստած,
Քեալաշովի պէս երևակայում եմ,
Ամպերի միջին աթոռս դրած:

Պարոն Աւետիք Իսահակովից
«Նուշ» «վարդ» ու «պաշեր» բօլ անգիր արած.

Ու արտասուենքն էլ Ահարոնովից,
Ծոր ծոր թափում եմ, կժով փոխ առած:

Թումանովի պէս գլխիս զօռում եմ,
Համ ոտանաւոր, համ ան ոտ գրեմ,
Վախտ վախտ էլ խալխից բօլ գողանում եմ
Որ ինչ ա խելքովս խալխին զարմացնեմ:

էյ դու Ծատուրով, շատ չպարծենաս,
Քաղցած փորովս ես քեզնից զօռ եմ,
Կամ քնած վախտս, «անթառամ երազ»
Օհանէսից էլ տեսնելու քօռ եմ:


«Պօղպատ ու զինջիլ, զնդան ու կտրիչ»,
«Զլուտ բազուկներ» կառնեմ Ակորից,
«Հէյ դուք բանւորներ» «խաւար» ու «արև»,
Մեր կուրդինեանցի բախկալի դուքնից:

Ախ, օֆ, հէյ, աւանդ, լուսին ու աստղեր,
Կապտագոյն թշեր, էյ կարմիր աչեր,
Վարդ ու սիրական, սոխակ գիշերներ,
Բաց մառմառ դօշեր, նուռ շամամ ծծեր:

էս բաներից էլ հօ մեր քուչեքում,
Կարելի ա միշտ թիակով կիտել,
Ու էս խիստ էժան, առատ տարիքում,
Կասեն դժւար ա «բանաստեղծ» լինել:

ՓԱԼԱՆԴՈՒԶ. ՄԿԾ


Արտատպած «Խաթարալա»-յից 1910 թ.



—Աննա Պետրովնա, ես վաղուց սիրահարուած եմ ձեզ վրայ ու
մտածում եմ թագուն կերպով ձեզ՝ կնութեան առնել:


—Բայց ինչո՞ւ թագուն և ոչ արհեստագործ:

—Որովհետև ես չափազանց գնահատել գիտեմ իմ արժանա-
պատուութիւնս և այդպիսի արհեստագործ յիմարութիւններ չեմ անիլ:



—Ս.յդ ինչ էք անում. — ես ձեզ ուղարկեցի այգի որ իմ կը-
նոջս փնտռէք, իսկ դուք նրան գտել էք և համբուրում էք:

—Բայց ես նրան այնտեղ գտնուեցի, իսկ օրէնքի տրամադրու-
թեան համաձայն իւրաքանչիւր, գտած իրի արժէքի երրորդ մասը
գանողին է:



—Ասա՛, սիրելիս, դու ինձ սիրելի՞ս ես ծերութեանդ հասակում
նոյնպէս:

—Ա՛խ, թանկագինս, ես այդ ապացուցանում եմ հէնց: այժմ:



—Ասում են դու արդէն ամուսին ունես:

—Ո՛չ, առայժմ միայն երեխայ ունեմ:



Գ Ո Ր Ժ Ո Ղ Ա Ն Չ Ի Ն Ք

1, ՆԻԿԻՏ ԿԱՐՊԻՉ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, ծառայող	60	տարեկան
2, ՍՈՒՍԱՆՆԱ, նրա երրորդ կինը	35	»
3, ՕՐ. ԲՕԶԱԼԻԱ, Նիկիտի աղջիկը՝ նրա երկրորդ կնոջից. 16	»	»
4, ՎԱՐԴԵՐԵՍ, գաղթական ուսուցիչ, Նիկիտի տնւորը . 25	»	»
5, ԹԱԳՈՒՇ, աղախին	25	»
6, ԳՈԳՈՐ, իրոհարար և ծառայ	30	»

Անցքը պատահում է № քաղաքում.



ԴԱՍԱԽՑՍՈՒԹԻՒՆ

Վօդեիլ մէկ արարւածով

(Ներկայացման իրաւունքը վերապահւած է հեղինակին)

Տեսարանը ներկայացնում է Նիկիտի առանձնատենեակը: Աջ ու ձախ դռներ: Միջի դրան աջ կողմում մի ընդարձակ գրասեղան խառն ի խուռն թափւած գրքերով ու «գործ»-երով, երկու մոմակալ, մի լամպա, թանաքաման իր պատկանելիքներով, հաշւեշտոք և այլն: Աջ և ձախ պատերին Նիկիտի ու իր երեք կանանց մեծաղիր պատկերները շրջանակներով, որոնց վրայ երևում են իրենց պատկերելու օրւայ հարսնութեան նշան փոքրիկ արհեստական ծաղկի պսակները: Յատակի վրայ թափւած այլ և այլ թղթեր, աթոռները անկարգ դրութեան մէջ: Մի քանիսի կոնակները դէպի հանդիսականները, մի երկուսը սենեակի մէջ տեղը դըրած, մէկը վայր ընկած և այլն: Սենեակը անկարգ դրութեան մէջ է:

Տ Ե Ս Ի Լ Ա

Նիկիտ, ՄԵՆԱԿ

(Բարկացած ներս է գալիս դրսի դրան բանալին ձեռքին): Որ մորթէք՝ էլ դիմանալ չեմ կարող... այժմ էլ պարտիզի վարդերն են պոկել: Այս ի՞նչ է սենեակի հալը, ամեն բան տակն ու վրայ... այս արդէն չափից դուրս է, просто изъ рукѣ вонѣ: Տանից դուրս ես գնում բարկացած, ծառայութեան մէջ տանջւում չարաչար և ժամի 4-ին վերադառնում առեն հանգստանալու փոխարեն դարձեալ բարկանում: Մա մարդու կեանք չէ, շան կեանք է: Այսօր էլ տան բանալիքը ուղարկել են ինձ, իսկ իրանք չքւել, ասա ուր... դասախօսութեան: Ժամանակի ոգու հետ են գնում կոտորւածները իբր թէ: Ну уже шалите, բուսկան է... համբերութիւնն էլ իր չափն ու սահմանն ունի:

շատակի առթիւ կազմած երեկոյթին քովէ քով նստած էինք սկիւրանոցին
 թատերասրահին մէջ: Երեկոյթէն բան մը չհասկացայ ես, սակայն անոր հետ
 իր առաջարկութեամբ թեանցուկ տուն դառնալս Կօկօլին արժանիքը շատ
 բարձրացուց իմ առջ, վասն զի Կօկօլն ծնած չլլար նէ՝ քրտմնի կօլօլմն
 իր վարդուհուն թեանցուկ ըլլալը երբէք չէր տեսար: Ելեքարուկան հո-
 սանք մը գոգցես իմ նիհար թեէն արըզզղ. անոր գերուկ թեն կանցնէր և
 անոր գերուկ թեէն բըրզզղ... կգառնար իմին նիհար թեն կմանար: Այդ
 օրէնէ ի վեր շարաթը չորս հինգ հեղ վարդուհիս երազս կուզայ ու կերթայ,
 քովս չի մնար... սա պարապ դալ երթալուն վերջ տալու է, որ միտնդամ
 դայ՝ ալ յետ չերթայ, ընդ միշտ քովս մնայ... (մօտենալով դասնը եւ խաչակնքիով)
 եա սուրբ Մարիամ Աստուածածին... ինչ ալ ըլլայ նէ՝ դարնելու եմ: (ծեծում է)
 ներեցէք համարձակութեանս, վսեմապատիւ Մկրտիչ աղա... (կողմը) միբոս
 բարախել սկսաւ:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆԱ ԵՆ ՆԻԿԻՏ

- ՆԻԿԻՏ.—(ներսից) Ո՞վ է...
- ՎԱՐԴԵՐԵՍ.—(Դէպի ներս) Ձեր խոնարհ ծառան, մեծարգոյ, վսեմապատիւ
 Մկրտիչ աղա:
- ՆԻԿԻՏ.—(Դուրս գալով) Ի՞նչ կայ, պ. Վարդերես, խէ՞ր է...
- ՎԱՐԴԵՐԵՍ.—Խէ՞ր չեղած՝ շատ ըլլալու չէ, մեծարգոյ, վսեմապատիւ և գե-
 րամեծար Մկրտիչ աղա:
- ՆԻԿԻՏ.—(կողմը) Ածականները քիչ քիչ աւելացնում է... անպատճառ մի
 փորացաւ կունենայ (նրան) համեցէք նատեցէք, պ. Վարդերես (աճող է
 առաջարկում եւ ինքը նստում):
- ՎԱՐԴԵՐԵՍ.—Շնորհակալութիւն, Մկրտիչ աղա (նստում է աճողի պոնկին եւ
 կողմը) Թւում է սկսեմք...
- ՆԻԿԻՏ.—Ինչպէս երևում է, պ. Վարդերես, մենակութիւնից դուք էլ ինձ
 պէս նեղանում էք:
- ՎԱՐԴԵՐԵՍ.—Ի՞սկ այդպէս, շնտ, անշափ կնեղանամ, մեծարգոյ, վսեմապա-
 տիւ, գերամեծար, վսեմաշուք և աղնւամիտ Մկրտիչ աղա... (կողմը)
 դորձերնիս յաջողելու է իշալլա:
- ՆԻԿԻՏ.—Ի՞սկ այդքան ածականները միտաին դորձածելով չէ՞ք ձանձրանում,
 պ. Վարդերես:
- ՎԱՐԴԵՐԵՍ.—Ամենեին ոչ, տակաին պաշարս սպառած չէ, կուպէք նէ՝ դար-
 ձեալ աւելցնեմ, բարեծնունդ, բարեշատաւիդ, բարեհամբաւ, բարեհո-
 չակ...
- ՆԻԿԻՏ.—(Ընդհատելով) Ո՞չ, ո՞չ, ինչբեմ կըճատէք:

ՎԱՐԴԵՐԵՍ. — Պատրաստ եմ կրճատելով խօսել... հաւաստի եմ, թէ թոյլ կուտաք աղնւամբս, վսեմաշուք, գերամեծար և վսեմապատիւ Մկրտիչ աղա, մենակութեանս առթիւ ձեր հետ քիչ մը խորհելու և ի հարկին՝ դարման խնդրելու:

ՆԻԿԻՏ. — Իրաւունք ունիք:

ՎԱՐԴԵՐԵՍ. — Կյուսամ, վսեմաշուք, գերամեծար և վսեմապատիւ Մկրտիչ աղա, ձեր բարի խորհուրդը չէք զլանար նւաստ ծառայիդ:

ՆԻԿԻՏ. — Եթէ կարող եմ մի բարի խորհուրդ տալ ձեզ և օգտակար լինել՝ պատրաստ եմ, պ. Վարդերես, բայց խնդրեմ ածականները...

ՎԱՐԴԵՐԵՍ. — Արդէն հատ մը պակսեցուցի, ուստի անբաւ շնորհակալութիւնս յայտնելով ձերոյին մանիշակափայլ համեստութեան՝ հաստատապէս կըսեմ, որ կրնաք ինծի օգտակար ըլլալ, Մկրտիչ աղա... եթէ չեմ սխալիր՝ կարծեմ (ցոյց տալով նիկիտի երկրորդ կնոջ պատկերի վրայ) այս պատկերը ձեր յաւերժացեալ և վաղաթառամ երկրորդ կողակցին նկարն է:

ՆԻԿԻՏ. — Ճիշտ այդպէս:

ՎԱՐԴԵՐԵՍ. — Անունն ալ Մանիշակ:

ՆԻԿԻՏ. — Մանիշակ, Մանիշակ...

ՎԱՐԴԵՐԵՍ. — (Լացի ձայնով) Աստուած հոգին լուսաւորէ, դատաստանը քաղցր ըսայ:

ՆԻԿԻՏ. — (Կողմը) Հարցնող լինի իմ կնոջ վրայ դու ինչնու ես լաց լինում, (նրան) շնորհակալ եմ, պ. Վարդերես, բայց ինչնու էք լաց լինում:

ՎԱՐԴԵՐԵՍ. — Կուլամ, վասն զի մարս յիշեցի, ըստ որում անոր անունն ալ Մանիշակ էր, անոր քիթն ալ այսչափ պատլիկ, աչերն ալ սա պէս գօղարիկ, բերանն ալ այսչափ կլորիկ ու գեղեցիկ էր:

ՆԻԿԻՏ. — Բայց միթէ նա այժմ սորա պէս...

ՎԱՐԴԵՐԵՍ. — Այո, չկայ նա այլևս... անօրէն քրդերուն ձեռք կոտորածին ատեն չարաչար սպաննւեցաւ և զիս որք թողուց, Մկրտիչ աղա...

ՆԻԿԻՏ. — Շատ ավստո... ձեր գլուխը ողջ լինի, Աստուած հոգին լուսաւորէ:

ՎԱՐԴԵՐԵՍ. — Անբաւ շնորհակալութիւն... սակայն տխուր յուշերը մէկդի թողունք: Ուրեմն, Մկրտիչ աղա, ձեր հաճութիւնն զիս գրաւական ունենալով՝ կխնդրեմ...

ՆԻԿԻՏ. — Ի՞նչ էք խնդրում:

ՎԱՐԴԵՐԵՍ. — Իսկոյն, աղաս: Այսօր աւետարեր նամակ մը առի արեան ծով եղած մայր երկրէն, որով բոլոր գաղթականներու կկանչեն երթալ հանգչիլ ի ծոց կաթողին հայրենեաց և մեր պապերու շիրիմներուն քով նորէն ծլել, նորէն դալար ընծիւղներ արձակել, նորէն ուռճիլ, նորէն զօրանալ, վասն զի հոն, ուր երբեմն լուսինը արեան լինէրու մէջ կողար, ամօթէ կկարմրէր ու կշիկնէր՝ այժմ աւետարեր ազատութեան և եղբայրութեան շնորհիւ քաղցր ի ժպիտ կկուսաւորէ մայր երկրին ծաղկազարդ մարգարեանի վրայ սիրով քով քովի ճարակող գայլերն ու գառներ:

ՆԻԿԻՏ.— (Կողմը) Երանի հաւատացողներին, բայց եւ խաթի մէջ ընկալ (նրան)
Պայլը գայլի՝ գառն էլ գառան հետ կարածի եղբայր, ահանջներիդ
բամբակը հանէք, իսկ եթէ դուք զօրով ուզում էք ի միասին նրանց
արածացնել եւ ասածներիդ էլ հաւատում էք՝ հողւով չափ ուրախ եմ եւ
յորդորում եմ շուտ գնալ:

ՎԱՐԴԵՐԵՄ.— Հայրենիք վերադառնալուս սրտումը անխախտ է, Մկրտիչ
ազա, սակայն երթալէս առաջ կփափաղէի անդին յիշատակ մը առնուլ
հետս իմ երկրորդ հայրենիքէն:

ՆԻԿԻՏ.— Յիշատակ... սրտեղից:

ՎԱՐԴԵՐԵՄ.— Ձեր տնէն, ձեր աննաման եւ գեղեցիկ պարտիզէն, որի տեսքն
այսքան երկար տարիներ առատօրէն վայելած եմ, գերամեծար Մը-
կրտիչ ազա:

ՆԻԿԻՏ.— Իմ պարտիզից, ասում էք...

ՎԱՐԴԵՐԵՄ.— Այն Մկրտիչ ազա, յատուկ Ձեր պարտիզէն, որ եթէ զըլա-
նաք ինձ՝ տրտում եւ անմխիթար մեկնելուս պատճառը եղած պիտի
ըլլաք:

ՆԻԿԻՏ.— Ես պատրաստ եմ, ասացէք, ի՞նչ յիշատակ էք ուզում իմ պար-
տիզից:

ՎԱՐԴԵՐԵՄ.— Անդին եւ նորարարող ծաղիկ մը միայն:

ՆԻԿԻՏ.— Մի ծաղիկ միայն... համեցէք, խնդրեմ, թէկուզ մի ամբողջ մեծ
փունջ, ս. Վարդերես:

ՎԱՐԴԵՐԵՄ.— Ո՛չ, անուշահոտ, կարմիր վարդ մը միայն շնորհեցէք ինձի,
աւելին չուզեմ:

ՆԻԿԻՏ.— Իրաւունք ունիք, բայց մինչեւ տեղ հասցնէք՝ նա կթառամի:

ՎԱՐԴԵՐԵՄ.— Ո՛չ, չեմ թողուր, աչացս վճիտ արցունքով կցօղեմ այն, որ
չթոռմի, անկեղծ սիրոյս շղարշով կպատեմ զինքը, որ չխամրի... հա-
մաձայն էք շնորհել ինձ այդ վարդը:

ՆԻԿԻՏ.— Ձեր խնդրածը շատ չնչին բան է, համաձայն եմ, բայց այսօրւայ
վարդերը բոլորն էլ գողերը պոկել են, եղածներն էլ դեռ չբացւած
կոկոն են:

ՎԱՐԴԵՐԵՄ.— Ուզածս վարդը, Մկրտիչ ազա, գողերու աչքէն գաղանի եւ
ձեր պարտիզին մէջ ի հէրուն հետէ բացւած է ինձ համար... նա ձեր
չքնաղ գուտար Րօզալիան է, հողոյս հատոր...

ՆԻԿԻՏ.— (Յանկարծ ձեռքով նրա բերանը փակելով) Կայց, հասկացայ. (կողմը)
ըլլմամ... տեսնաք փորացաւը...

ՎԱՐԴԵՐԵՄ.— (Չարունակելով եւ չոքելով) Կհաճիք արդեօք բախտաւորել զիս
ձեզ որդի անւանելով, վեհանձն, մեծարգոյ, վսեմապատիւ, գերամե-
ծար...

ՆԻԿԻՏ.— (Ընդհատելով եւ վերկայնելով) Խնդրեմ վեր կացէք... սպասեցէք... դուք
ուրեմն աղջկաս ձեռքն էք խնդրում:

ՎԱՐԴԵՐԵՄ.— Այն, կյանդդնիմ (չոքելով), վեհանձն, մեծարգոյ, վսեմապատիւ,
գերամեծար, վսեմաշուք, ազնւամիտ, սպորմած եւ առատաշնորհ Մկրտիչ

աղա, կհաճի՞ք հայր անուանել ձեզ, կարժանանամ արդեօք ձեր լիա-
շուքի՞ն օրհնութեանը:

ՆԻԿԻՏ.—(Վերկայնելով) Ներեցէք, որ ձեր անսպասելի առաջարկութեան հա-
մար անպատրաստ եմ որոշ պատասխան տալու:

ՎԱՐԴԵՐԵՍ.— Սակայն դուք խոստում ըրիք այդ ծաղիկն շնորհել ինձ, Մը-
կրտիչ աղա:

ՆԻԿԻՏ.— Ես այդպիսի ծաղիկ չեմ խոստացել և իրաւունք էլ չունիմ խոս-
տանալու:

ՎԱՐԴԵՐԵՍ.— Եթէ չէք ալ խոստացած՝ (չօքելով) այժմ սաքերնիդ ինկած կա-
ղերսեմ, կպաղատեմ, կազաչեմ, որ խոստանաք:

ՆԻԿԻՏ.—(Վերկայնելով) Ես ասացի և կրկնում եմ, որ խոստանալու իրաւունք
չունիմ, իմ աչքի լոյս ս. Վարդերես... ծաղիկը ինքը պէտք է խոստանայ...
նրանն է իրաւունքը և կամքը... դուք համաձայն էք:

ՎԱՐԴԵՐԵՍ.— Փեսային ընտրութիւնը անոր կամքէն կախումն ունի, այն,
կխոնհարիմ ձեր կարծեաց առաջ:

ՆԻԿԻՏ.— Երկուսս էլ պէտք է խոնարհիւնք վարդի առաջ, այնպէս չէ՞:

ՎԱՐԴԵՐԵՍ.— Շիտակ է աղաս, շիտակ է... ճշմարիտ է, վեհանձն, մեծար-
գոյ, վսեմապատիւ...

ՆԻԿԻՏ.— (Ընդհատելով լուրջ) Կարճ կտրէք, խնդրեմ, բաւական է... այդ մա-
սին այլեւս ոչ մի խօսք... ուրիշ բան ունէ՞ք ասելու:

ՎԱՐԴԵՐԵՍ.— Ուրիշ բան մը առայժմ չունիմ, սակայն կուզէի վերջնական...

ՆԻԿԻՏ.— Վերջնական խօսքը երեք օրից կամ դուրսէ հէնց այսօր կիմանաք...
(ձեռքը մեկնելով) ուրեմն...

ՎԱՐԴԵՐԵՍ.— Յտետութիւն, Մկրտիչ աղա... հազար ներողութիւն...

ՆԻԿԻՏ.— (Հետևելով) Բարով դնաք (գնում է Վարդերեսը):

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՆԻԿԻՏ ՄԵՆԱԿ

(Փակում է դուռը և դառնում) Հա, հա, հա... քոստա է՞ծը, ասած է, ազրբի
ակից ջուր կխմի՞ս... հոսհոս... սիվ է Բօզալիայի ձեռքը խնդրում... մի քո-
ստա, տկուր վարժապետ է՞ֆէնդի, որ դեռ իր վարձած սենեակի երեք մա-
սական վարձը չի տուել, որ աշխարհիս երեսին չունի մի չոր քար՝ գլուխը
դնելու, որի հէնց առաջին յանցանքը ուսուցիչ լինելն է, իսկ երկրորդ ա-
մենամեծ մեղքը՝ պսակուելու ցանկութիւնը, իր պէս թշուառներու թիւը ա-
ւելացնելու փափաղը... Բայց ի՞նչ յանդգնութիւն, ի՞նչ համարձակութիւն
նրա կողմից... սրտեղից սրտեղ... չլինի Բօզալիան երեխայութիւն արած լի-
նի և խօսք տուած... անկարելի ոչինչ չկայ... իսկ եթէ այդպիսի մի յիմա-

բախիւն արած լինի՞... չեմ թողնի, ամենայն ուժով կդիմադրեմ... իմ պարտքն է նրան յետ համոզել... հասկացնել իր սխալը, իսկ նախքան այդ պէտք է հասկասին սենեակից հեռացնել... մեղաւորը ես եմ... սասն էլ մարդ չգամը սենեակից տարւաւ: Դու չգիտեմ միթէ, որ դուն ու շախմատը իրար մաս չեն պահի, չէ՞ որ շախմատը շրիկայ թէ չէ՞ դուք կվաւի: Ինչեիցէ... սասն է, ԲԻՔԵ ՔԻՅՈՒ, ԲԻՔԵ ՄԿԻՍԵ (լուսւմ է կերտրական զանգի ծայնը) քնք... փառք Աստուծոյ, վերջապէս եկան, եկաւ գրողի տարածք, (կրկին զանգ)... բարեկանամ, գոսամ վրէն... բայց չէ, պէտք է զսպեմ ինձ, (զարծեալ զանգ) եկայ, եկայ, ես քո բոյր թաղեմ (զնում է դուրս, առ ժամանակ թե՛րդ ստարկում է): Ո՞վ է... ԲՕԶԱԼԻԱՅԻ ԶԱՅՆԸ, — Ես եմ, ես, պատաշա, դուք բաց արա: ՆԻԿԻՏԻ ԶԱՅՆԸ, — Դու մնա... (դուք բանում է եւ կրկին փակում):

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆԻԿԻՏ ԵՆ ԲՕԶԱԼԻԱ

- ՆԻԿ.— Մեծանկ ես... մայրդ ուր է, աղջիկս...
- ԲՕԶ.— Միթէ դեռ չի եկել... ես նրան հետից տեսայ պ. Յուրակի հետ:
- ՆԻԿ.— Պ. Յուրակի հետ... մի է այդ պ. Յուրակը:
- ԲՕԶ.— Այսօրւայ դասախօսը, հայրիկ... երեխ շառավ կգայ:
- ՆԻԿ.— Ո՞վ, դասախօսը՞:
- ԲՕԶ.— Ո՞չ, մայրիկը:
- ՆԻԿ.— Միասին չէ՞ք դուք միթէ:
- ԲՕԶ.— Ո՞չ, միասին չէ՞նք, պատաշա:
- ՆԻԿ.— Բաս դու ձրտեղ էիր:
- ԲՕԶ.— Միմեանց չխանդարելու համար ես ուրիշ դասախօսութիւն էի զընայել՝ նա ուրիշ:
- ՆԻԿ.— (Ջարմանքով) Միմեանց չխանդարելու համար...
- ԲՕԶ.— Այն, պատաշա, այդպէս էր սասն մայրիկը:
- ՆԻԿ.— (Կողմը) Հըրըմամ... (նրան) ոչինչ չեմ հասկանում... միթէ ուրիշ դասախօսութիւն էլ կար:
- ԲՕԶ.— Մէկի տեղ երեք, պատաշա... կուրում, օր, գպրոցում եւ սանձիկութենց այդում:
- ՆԻԿ.— Միթէ... Ծրառ, Ծրառ... մեծ յառաջադիմութիւն, ես ու իմ Աստուած:
- ԲՕԶ.— Բան, պատաշա... ազատութիւնն այդպէս բան է... եթէ մի քանի տարի էլ այսպէս շարունակէի՝ մեր քաղաքը Պարիզ կդառնայ:
- ՆԻԿ.— Ի՞նչ Պարիզ, Ամերիկա սաս, աղջիկս, Ամերիկա... (կողմը) միմեանց չխանդարելու համար (նրան) իսկ դասախօսները աղջիկս, ծեր մարդիկ էին թէ ջանէր:

ԲՕՁ. — Բարբըն էլ երիտասարդ, հայրիկ, այս դարը փթած պատաների դար չէ:

ՆԻԿ. — Ի՞նչպէ՞ս...

ԲՕՁ. — Ուզում էի ասել ասէլ, ուսում չառած, անկիրթ պատաների, հայրիկ:

ՆԻԿ. — Հա՛... այդ ուրիշ բան է... իսկ մի էր ձեր գասախօսը:

ԲՕՁ. — Պ. Բզնունին, պատաշա:

ՆԻԿ. — Բզնունի՞ն... անունը՞...

ԲՕՁ. — Մարէն, հայրիկ:

ՆԻԿ. — Մարէ՞ն...

ԲՕՁ. — Այո՛, պատաշա, թնչ կայ որ...

ՆԻԿ. — Ասանձին սչինչ, (կողմը) այդ փախստականը երբ բաներից ազատեց և երբ գասախօս դարձաւ... (նրան) միւս գասախօսներին էլ հաշտւում ես, ազջիկս:

ԲՕՁ. — Մէկը պ. Եղիշն է, ինչպէս ասացի, իսկ միւսը Միհրան Հայկունին, պատաշա:

ՆԻԿ. — Հրբումմմ... (կողմը) երկուսն էլ ի նոցանէ... իսկո՞՞ ժողովրդի գրպանի սիրահար անկուշտ տղրուկներ... (նրան) իսկ թնչ նիւթի վրայ են խօսել, ազջիկս, լսել ես:

ԲՕՁ. — Պ. Եղիշի նիւթը, պատաշա, «Կանանց ազատութեան հարցն» է եղել, պ. Բզնունունը՝ «Մանրատական տեսակէտը հոգեբանութեան մէջ», իսկ Հայկունունը՝ «Բանւորական հարց»-ը:

ՆԻԿ. — Առաջինը և վերջինը մի քիչ հասկացայ, ազջիկս, իսկ երկրորդը զբուխս չմտա... թնչպէս ասացի՞ր...

ԲՕՁ. — Մանրատական տեսակէտը հոգեբանութեան մէջ:

ՆԻԿ. — (Հասն հաս) Միմիտրական տեսակէտը հոգեբանութեան...

ԲՕՁ. — (Խիժաղով բնորոտելով) Միմիտրական չէ, Մանրատական տեսակէտը հոգեբանութեան մէջ:

ՆԻԿ. — (նրան) Ի՞նչպէս ասացի՞ր... մանրատական...

ԲՕՁ. — Այո՛, պատաշա:

ՆԻԿ. — Էլի չհասկացայ:

ԲՕՁ. — Ի՞նչ կայ չհասկանալու... արք ես հէնց այդ գասախօսութեանն էի ներկայ, պատաշա:

ՆԻԿ. — Որ դու ներկայ էիր, ես անպատճառ պէտք է հասկանամ թնչ է... որ չեմ հասկանում,՝ գորով հօ չի՞... իսկ դու հասկացար...

ԲՕՁ. — Ի՞նչարկէ:

ՆԻԿ. — Եւ կարող ես ինձ բացատրել:

ԲՕՁ. — Ի՞նչպէս չէ:

ՆԻԿ. — Այսինքն թնչ հասկացար:

ԲՕՁ. — Այն, որ պատաշա, մօնիզմը դուրս է եկել յունական monos բառից, որ կնշանակի միակ, մէկ հատիկ:

ՆԻԿ. — Հա՛... արեմե դու ինձ համար monos ես, Բօղա ջան, այսուհետե քեզ

μονός Բօզա եմ կանչելու, հա, հա, հա...

ԲՕԶ.— Ի՞նչ հանաքի ժամանակ է, հայրիկ:

ՆԻԿ.— Հանաք չեմ անում... Իսկ ես կասեմ, որ քո գասախօսը սխալ է ասել... մօնիզմը ծագել է ոչ թէ յունական մոնոս բառից, այլ գօկական մոյն բառից, որ դարձեալ մէկ կնշանակէ, հա, հա, հա... (կողմը) չէ, ինձանից էլ գասախօսի հոտ է գալի:

ԲՕԶ.— Ի՞նչ դրա ժամանակն է, պապաշա, եթէ ուզում ես բան իմանալ լսիր:

ՆԻԿ.— Ի՞նչպէս չեմ ուզում... Կա... ասեմք թէ մօնիզմը ծագել է յունական m nós բառից... յետոյ դրանից ի՞նչ դուրս եկաւ, աղջիկս:

ԲՕԶ.— Այն, որ մոնոս բառը յունական բառ է և այդ բառիցն էլ մօնիզմն է ծագել... հիմա հասկացնո՞ւմ, թէ էլի շարունակեմ բացատրել:

ՆԻԿ.— Ի՞նչ ասացիր, որ հասկանամ... շարունակիր տեսեմ (կողմը) նեղու-թիւն չլինի՝ դուք էլ ինձ հետ լսեցէք, որ գլուխ գլխի տանք և գուցէ մի բան հասկանանք (նրան) յետոյ:

ԲՕԶ.— Յետոյ, պապաշա ջան, լաւ իմացիր, որ յունական բառ է մոնոս բառը և մօնիզմն էլ ծագել է հէնց այդ մոնոս բառից:

ՆԻԿ.— Էդ հօ դուրս եկաւ հասան քեաշալ՝ քեաշալ հասան... դու էն ինձ ասա, թէ իսկապէս մօնիզմը ի՞նչ ջանաւար է, կուտա՛ի, կհազնա՛ի, թէ կխմա՛ի, ի՞նչ ես բառախաղ անում:

ԲՕԶ.— Ի՞նչ պէտք է լինի, մօնիզմը, հայրիկ ջան, մօնիզմ է, էլի, ինչպէս ես Բօզա եմ, մայրիկը Սուսաննա է՝ դու էլ հայրիկ ես, պապաշա:

ՆԻԿ.— Յետոյ... շարունակիր... էլի բան գիտե՞ս թէ պրծար:

ԲՕԶ.— Շարունակում եմ, պապաշա. (արագ արագ) այն մօնիզմն է առողջ, որ սինթետիքական մօնիզմ է, որ ճանաչում է նիւթին և հողուն, նիւթականին և իդէականին, ոգեկանին և ֆիզիքականի սինտէզին և այդ սինտէզին էլ դնում է ֆունկցիօնէլ կախման, ֆունկցիօնէլ յարաբերութեան մէջ:

ՆԻԿ.— (Կրկնելով) Սինթետիքական, նիւթական, իդէական, ոգեկան, ֆիզիքական, սինտէզ, մինտէզ, ֆունկցիօնէլ, մունկցիօնէլ, գունկցիօնէլ, լունկցիօնէլ, խունկցիօնէլ, շունկցիօնէլ... հա, հա, հա... բաւական է, բաւական, գլուխս ցաւեց, հասկացայ, լաւ հասկացայ, որ դու դարձեալ зубричка гимназистка ես մնացել և իսկական թութակների նախանձը կարող ես շարժել:

ԲՕԶ.— Ի՞նչպէս թէ թութակների:

ՆԻԿ.— Թութակների, էլի, поугай-ների... իմացիր, որ քո գասախօսը իսկապէս մի ճարպիկ կօմիկ է...

ԲՕԶ.— Ի՞նչպէս թէ կօմիկ:

ՆԻԿ.— Կօմիկ, էլի.— ծաղրածու... կօմիկն էլ է յունական բառ, աղջիկս, որից դուրս է եկել կօմիզմը:

ԲՕԶ.— Ի՞նչ էք ուզում ասել, հայրիկ:

ՆԻԿ.— Այն, որ քո գասախօսը Բզնունի է, թէ ճանճունի՝ ձեր առաջ մի կա-

տարեալ կօմիկի դեր է կատարել և իր ունկնդիրներին մի մի թու-
թակ շինել՝ ուղարկել իրանց տները, հասկացանք... մեծ բանի վրայ
էք էլի... (մտոր Թափ տալով), առաջին և վերջին անգամը լինի քո դա-
սախօսութեան գնալը, արդեւու՞մ եմ, իմացանք... առանց իմ կամքի,
առանց իմ թոյլատուութեան ոչ մի տեղ...

ԲՕԶ.— Երբէք...

ՆԻԿ.— Երբէք:

ԲՕԶ.— Բայց, պապաշա...

ՆԻԿ.— Մնւ, խօսքս մի կարիր... այսուհետե ոչ դասախօսութիւն, ոչ պրօս-
պեկտ, ոչ բուլվար...

ԲՕԶ.— (Ընդհատելով) Ի՞նչպէս թէ...

ՆԻԿ.— (Ընդհատելով եւ շարունակելով) Ոչ թատրոն, ոչ ցիրկ, ոչ սինեմատօ-
գրաֆ...

ԲՕԶ.— (Ընդհատելով) Ախր հայրիկ...

ՆԻԿ.— (Ձլտելով եւ շարունակելով) Ոչ պարահանդէս, ոչ կօնցերա, ոչ պրօժեկ-
տօր, ոչ երեկոյթ...

ԲՕԶ.— (Ընդհատելով) Ի՞նչպէս թէ...

ՆԻԿ.— (Ընդհատելով) Ոչ նշանդրէք, ոչ հարսանիք, ոչ մկրտութիւն, ոչ բաղ-
նիք, ոչ ես ի՞նչ գիտեմ էլ ի՞նչ:

ԲՕԶ.— Միայն բանտարկութիւն չորս պատի մէջ:

ՆԻԿ.— Այո, բանտարկութիւն, ոչ մի տեղ, հասկացանք:

ԲՕԶ.— Հնազանդու՞մ եմ, պապաշա, բայց մի տեղ մոռացաք յիշել, այնտեղ
էլ չգնամ:

ՆԻԿ.— Ո՞ւր:

ԲՕԶ.— Գերեզմանատուն, (փոփոխելով) մօրս մօտ:

ՆԻԿ.— (կողմը) Գերեզմանատուն... մօրդ մօտ...

ԲՕԶ.— Բայց դուք չէք պատասխանում, պապաշա... թոյլ տւէք, եթէ չէք
ուզում, որ գիտեմքով ինձ այնտեղ տանեն:

ՆԻԿ.— Դիտեմքով... դու ուրեմն սպառնալ էլ գիտես:

ԲՕԶ.— Այն ժամանակ դուրեկ կիմանաք, որ ձեր արածը բռնութիւն էր, որ
ձեր վարմունքը դէմ էր մարդկային ազատութեան իրաւունքներին,
անձի անհատականութեան ազատ զարգացման օրէնքներին:

ՆԻԿ.— Ի՞նչ, ի՞նչ... ձէնդ կարիր, ասում եմ, դատարկ, փքլած բտտերի ըշ-
տեմարան... (Բօղալիան գնում կանգնում է իր մօր սպուկերի առաջ) հինգ
կողէկանոց գրքերից հաւաքած, անդիր սերտած խօսքերի տօպրակ:

ԲՕԶ.— (Լացակումած) Ա՛խ, մայրիկ, ինչո՞ւ որք թողիր ինձ, ես որք մնալ չեմ
ուզում... ես քո ծոցում միայն հանգիստ կգանեմ... շուտով կգամ
քեզ մօտ:

ՆԻԿ.— Ես քո այդ օձի լիզուն արմատից կհանեմ, որ չկարողանաս կեղծ ար-
տասունքներովդ, սրան նրան խաբել (նմանցնելով) ես քո ծոցում հան-
գիստ կգանեմ, ես շուտով կգամ քեզ մօտ (նրան) սուտը... իսկ եթէ
քեզ պէս թութակ դասախօսի մէկը ձեռքդ խնդրի՝ էլի՞ մօրդ ծոցը

կերթաս, հմ:

ԲՕԶ.— Բաւական է հայր... միանգամ ընդ միշտ իմացէք, որ ես ամուսնա-
նալու չեմ, միայն եմ մնալու:

ՆԻԿ.— Ուրեմն monós ես ուզում դառնայ... ես քեզ monós խրատ աւողի
հոգին կհանեմ, ես քեզ սինթետիքական մօտիզմ խրատ կտամ, ես քեզ
սգեկանի և փիզիքականի սինտէզ կսովորցնեմ, ես քո ֆունկցիօնէլ
կախումը ֆունկցիօնէլ յարաբերութեան մէջ կդնեմ... խելագարներ...
գներս, գներս կորիւր աչքիցս, դատարկամիտ երեխայ:

ԲՕԶ.— (Լացով կողմը) Ախ Աստուած, այս ի՞նչ անտանելի կրակի մէջ եմ ըն-
կել (նրան), հայր, տեսնում եմ, որ անտանելի բեռն եմ դարձել ձեզ
համար... այսօր և եթ կազատեմ ձեզ այդ ծանր բեռից, որով թէ դուք
կհանգստանաք և թէ ես (դէպի մօր պատկերը) գայիս եմ քո գիրկը,
մայրիկ, աշխարհս նեղ, իսկ գիրկդ լայն է ինձ համար, (ուզում է դնալ):

ՆԻԿ.— (Ձեռքից բռնելով առաջ է բերում) Կայց, խելագար երեխայ, և դու հաւա-
տում ես, (գիրկն առնելով եւ շոյելով դալար) թէ տարաբախտ հայրդ այն-
քան քարասիրտ է, որ թոյլ կտայ քեզ այդ քայլն անելու... (Բողալիան
հեկեկումէ) Կայց, հանգարուիր և լսիր ինձ: Ես չեմ ուզում, որ դու ժա-
մավաճառ լինիս և լսես այնպիսի ցնորամիտ դասախօսութիւններ,
որոնց համար ոչ դու քո սահմանափակ կրթութեամբ այնքան պատ-
րաստականութիւն ունիս՝ ոչ էլ քո աչքակապ ֆրազեօր դասախօսը,
հասկաց՛մ:

ԲՕԶ.— Բայց ես ցանկանում եմ առաջ գնալ, հայր, ես ուզում եմ...

ՆԻԿ.— (Ընդհատելով) Հասկանում եմ միտքդ... դարդանալ ես ուզում, այճ...
ուրախ եմ... համեցէք... քո տրամադրութեան տակ եմ գնում ամսա-
կան 30 բուրլի և աւելի... վարձիր խելքը գլխին կանոնաւոր, բանի-
մաց ուսուցիչ, թող զեկավարէ նա քեզ ճշմարիտ դիտութեան անսխալ
շաւղով: Մի հետեր հասարակութեան աչքին թող փշոզ և նրա հաւա-
տը ի շարք գործ գնող այս կամ այն բախտախնդիր և սրիկայ խարե-
րային, որ յանդգնում է հասարակաց ուսուցիչ ձեանալ և նրա գրպա-
նի վրայ ծանրանալ, որ դասախօսութեան ժամանակ հինգ բողէի ըն-
թացքում հինգ շիշ ջուր է խմում, բայց հինգ ուղիղ խօսք չի կարո-
ղանում արտասանել, որ մարդ բան հասկանայ... Այդ թողնենք... ես
քեզ հետ մի կարեօր խօսակցութիւն ունեմ, բայց այժմ ժամանակը
չէ... առ այժմ մի բան էի ուզում ասել, մտքիցս ընկաւ... հմ, մըտա-
բերեցի... մի ուրախալի նորութիւն ունիմ հաղորդելու քեզ, աղջիկս:

ԲՕԶ.— Ի՞նչ նորութիւն, հայրիկ...

ՆԻԿ.— Աստուած լսեց քո աղօթքը, Բողալիա... Տաճկաստանի խաղաղ ազա-
տագրութեամբ մեր տաճկահայ գաղթական եղբայրների և քոյրերի
առաջ փակւած դռները բացել են արդէն, արգելքները և հալածանքը
վերացել: Նրանք խումբ խումբ վերադառնում են իրենց քայքայւած
հայրենիքը վերաշինելու... ուրախ ես, որ քո վաղեմի ցանկութիւնը
կատարեց:

- ԲՕԶ.— Իհարկէ ուրախ եմ, պատաշառ... իսկ դու ուրախ չե՞ս:
- ՆԻԿ.— Ես էլ ուրախ եմ, աղջիկս, բայց ցաւում եմ, որ նրանց հետ գնում է նաև մեր անւոր Վարդերես վարժապետը:
- ԲՕԶ.— Հա՛... մի՞թէ:
- ՆԻԿ.— Ի՞նչ է որ, ինչ՞ա՛ զարմացար, բառ չգնանք:
- ԲՕԶ.— Ինչ՞ա՛ չգնայ որ, հայրիկ:
- ՆԻԿ.— Զգիտեմ... եթէ չես ուզում, որ գնայ՝ կարելի է համոզել, որ մնայ:
- ԲՕԶ.— Ընդհակառակը, հայրիկ, եթէ ուզենայ մնալ՝ պէտք է համոզել, որ գնայ:
- ՆԻԿ.— (Համբուրելով ձախար) Կեցցես, աղջիկս... այժմ տեսնում եմ, որ դու իսկ որ իմ հարազատ աղջիկն ես, իմ նոյնատիպ պատճէնը, մտածում ես այնպէս՝ ինչպէս ես եմ մտածում (կողմը) ճիշտ... հազիւ հանգստացայ:
- ԲՕԶ.— Ուրեմն, հայրիկ, առանձին ուսուցիչ վարձում եմք:
- ՆԻԿ.— Անպատճառ, սիրելի աղջիկս, անպատճառ:
- ԲՕԶ.— Ա՛խ, հայրիկ, որչա՞փ ես քեզ սիրում եմ (համբուրում է ձեռքը, որից յետոյ լսում է երբորական դանդի ծայնը) այս անպատճառ մայրիկը կլինի... մի՞թէ դուք փակել ես, հայրիկ... գնամ աչքի լոյս տամ...
- ՆԻԿ.— Այո՛, փակած է, գնա բաց արա, աղջիկս, բայց ոչինչ չասես նրան... ցոյց չտաս, թէ ես քեզ վրայ բարկացել եմ, (զանոյ) գալիս է, գալիս... (նրան) շտապիր, բաց արա դուք (Բողալիան դնում է բանալու), միմեանց չխանդարենք... հըըըմմմ... պէտք է թափ տալ... սիրտս փխ բան է գուշակում... (Սուսաննան ներս է մտնում Բողալիայի հետ):

Տ Ե Ս Ի Լ Զ.

ՆՐԱՆՔ ԵՒ ՍՈՒՍԱՆՆԱ

- ՆԻԿ.— Հազիւ եկանք... այս սրտեղ ես:
- Ս-ՆԱ.— Նոր պրծաւ դասախօսութիւնը, Նիկիտ ջան... էնքան նոր նոր բաներ իմացանք, օխտն որ որ պատմեմ՝ չի պրծնի... էնքան խալի կար, էնքան կնիկ ու աղջիկ էին կիտել, որ անհէտար, մողնի թահր թուհր շլապէքով սաղ գալը լցւել էր, լօժէքն ու ֆօէն, մուգիկանտ ների տեղն ու ահօշկէքի գոգը ընէնց իրար վրայ նստած էին, որ էլ ի՞նչ ասեմ, ասեղ գցելու տեղ չկար, ես ըսէնց բան իմ օրուքը չէի տեսել՝ թամաշա ասա ու պրծի, Նիկիտ ջան, թամաշա...
- ՆԻԿ.— Է քեզ ի՞նչ (Բողալիէն մօրը լսելու նշաններ է ցոյց տալիս, բայց նա չի նրկատում):
- Ս-ՆԱ.— Մեզայ Ասածու... մնց թէ ինձ ի՞նչ...
- ՆԻԿ.— Էդ թամաշէն իմ փորը կկշտացնի... քս տան թամաշէն պակաս է,

որ գնացել ես ուրիշի թամաշէն տեսնելի՞նք... դու քո ոտքիցդ մինչև գլուխդ ի՞նչ պակաս թամաշա ես... թամաշա... չէ մի մամաշա... թամաշի համար եմ բերել քեզ տո՞ւն... քեանդրբազ էր խաղում այնտե՞ղ՝ թէ կապիկ էին պարածում:

Ս-ՆԱ.— Ի՞նչ քեանդրբազ, ես ի՞նչ մէյմուն, այ մարդ (Րօզալիան լսելու նշաններ է ցոյց տալիս—կողմը) էս աղջիկը ի՞նչ ա ուզում ասի...:

ՆԻԿ.— Բաս ի՞նչ թամաշա ես ասում... դասախօսութիւնը թամաշա է՞...

Ս-ՆԱ.— Չէ. եանի ասում եմ տեսնելու բան էր էլի... չորս կողմից ծաղկէփունջ էր թափում Յուլակի վրէն, խեղճ մարդը գլուխը կորցրել էր... չէր իմանում որի՞ց շնորհակալ ըլնի՞ որին թողայ, օյին էր, խտակ օյին, (Րօզալիան նշաններ է ցոյց տալիս) ճՖ, դու ինչ ես լալօյնի խաղում քան... լեզուդ կատուն կերել է՞... բան ունիս ասելու՝ ասա էլի:

ՆԻԿ.— Ո՞վ, Րօզալիէ՞ն...

Ս-ՆԱ.— Հա՛, աղջիկդ... հէնց մի դարար աչքով ունքով ա անում քան...

ՐՕԶ.— Ո՞վ, ես... չէ, հայրիկ, ես ոչինչ չեմ անում:

ՆԻԿ.— Խելօք կաց, Րօզալիա... հանդարտ չես կարող մնալ՝ գնա քո բանին, — ոչինչ, Սուսաննա՛, մի նեղանայ, երեխայ է:

Ս-ՆԱ.— Հա՛, երեխայ ա, մատա չը կծի՞... երես տու, երես...

ՐՕԶ.— (Դուրս գալով) Ես գնում եմ, մայրիկ, մի նեղանայ...

Ս-ՆԱ.— Գնա՛, գնա՛, մի խանգարի...

ՐՕԶ.— (Դուրս գնալով՝ կողմը), վայն եկաւ հալիդ (գնում է):

ՆԻԿ.— Զուր երեխայի խաթրին դիպար (կողմը) մի խանգարի... (նրան) ուրիշ անգամ էլ է խանգարում քեզ Րօզան, Սուսաննա:

Ս-ՆԱ.— Տօ բաս ի՞նչ... էլ հօ չի թողում, որ մարդ ոտքը ոտքի առաջ դնի, մէկի հետ խօսի, էն սհաթը պոկպոկ, ներս է խցկում, աղջիկն ինչ մեծերի խօսակցութեանը խառնելն ինչ... մի տեղ ես ուզում գնայ թէ չէ՝ փէշը փէշիցդ կպցնում՝ չի հեռանում:

ՆԻԿ.— Հա՛... նա մեղք չունի, գիմնազիտան է մեղաւոր... լա՛ւ, մի բարկանայ, դու քո խօսքը շարունակի, ես նրան կխրատեմ:

Ս-ՆԱ.— Ի՞նչ էի ասում... հա՛... գիտես ի՞նչ, Նիկիտ ջան, բոլորին տրաքացրի... ամենից շատ պ. Յուլակը իմ բուկէտը հաւանեց, համա գցելիս բուկէտս խեղճի երեսին դիպաւ, մի հոհոց, մի ծիծաղ բարձրացաւ, որ ես խաբար չեմ, բայց ի՞նչ կասես, որ գետնից վերցնելիս համբուրեց, ինձ մտիկ տւեց ու ծիծաղեց, վերջն էլ հետը տուն տարաւ:

ՆԻԿ.— Ո՞ւմ, քե՞զ...

Ս-ՆԱ.— Քա չէ, մի վախենայ. ո՞նց թէ ինձ, բուկէտը, բուկէտը...

ՆԻԿ.— Հա՛... դէ այդպէս ասա է՞... վախեցայ... ուրեմն ինչպէս երևում է, Սուսաննա, մեր պարտիզի վարդերը...

Ս-ՆԱ.— Հա՛, ես եմ քաղել, Նիկիտ ջան:

ՆԻԿ.— Լա՛ւ, հիմի ուղիղն ասա, Սուսաննա, միայն փունջդ հաւանեց թէ՛...

Ս-ՆԱ.— Բաս էլ ուրիշ ի՞նչ...

ՆԻԿ.— Քեզ ո՞նց...

Ս-ՆԱ.— Սուս, սուս, ձէնդ կտրի, ամօթ է...

ՆԻԿ.— (Կողմը) Հաւատամ:

Ս-ՆԱ.— Էդ չէ, Նիկիտ ջան, համա ծանօթանալիս երբ որ իմացաւ, որ ես քո կնիկն եմ՝ շատ ուրախացաւ և ճանապարհ դրեց ինձ մինչև մեր տուն:

ՆԻԿ.— Էն էլ ո՞վ է իմանում թեանցուկ, հա՛:

Ս-ՆԱ.— Սաղ ճամբէն չէ, Նիկիտ ջան, էն որ ծուռում ենք դէպի տան կուռը՝ նեղ պլանումը, մի կտոր տեղ... որ ոտներս քարերին չկպչի...

ՆԻԿ.— Հա՛ (հազում է) Ըհը, Ըհը, Ըհը (կողմը) ասա էնտեղ քարերն ո՞վ է տուել:

Ս-ՆԱ.— (Ձարունակելով) Դուս ա գալիս, որ պ. Յուլակը ժամանակին քո աշակերտն ա ըլիլ, երբ որ դու վարժապետութիւն ես անելիս եղել:

ՆԻԿ.— Չէ, չէ, սուտ է, այդպէս բան չկայ (կողմը) ուղիղ է, դռումի մէկն էր:

Ս-ՆԱ.— Ձարմացաւ, Նիկիտ ջան, որ դու ինձպէս ջահէլ և սիրուն կնիկ ունես... (մտալ Թափ տալով վրան) հըըը, սատանայ, բաս ինձ հաւատացընում ես, թէ 45 տարեկան ես... պ. Յուլակն ասում էր, որ 60-ն էլ անց ես... ես եմ ասում ախր...

ՆԻԿ.— Սուտ է, ասում եմ է... ո՞վ է իմանում ի՞նչ խաբեբայի մէկն է դա, ես այդպիսի աշակերտ չեմ ունեցել... դու խօսքդ շարունակիր:

Ս-ՆԱ.— Գիտես ի՞նչ անուն տուեց ի՞նձ... դու, ասաւ, տիկին, շատ պիկանտ ու էլէկանտ ես:

ՆԻԿ.— Հա՛... է, դու ի՞նչ ասիր:

Ս-ՆԱ.— Ես էլ ասի բան... համա դրուստն ասեմ չիմացայ, թէ՛ պիկանտը ես էլէկանտը ի՞նչ բանի հետ ա, ի՞նչ ա ուզում ասի:

ՆԻԿ.— Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր:

Ս-ՆԱ.— Ես էլ ասի պիկանտն էլ դու ես, էլէկանտն էլ, պ. Յուլակ... հըմի թէ փիս խօսքեր ա՛ թող գնայ ուտի, թէ լաւ ա հօ՛ թող լաւ ըլի:

ՆԻԿ.— Շատ լաւ ես պատասխանել, աչքը հանել ես... լաւ, այդ թողնենք... դու ինձ այն ասա, ի՞նչ հասկացար այդ դասախօսութիւնից, (մտալով դնելով կնոջ գլխի վրայ) պուլիկի գլուխը մի բան լցրի՞ր՝ թէ եղածիցն էլ մի բան դուրս տուիր:

Ս-ՆԱ.— Չլցրած հօ չէի պակսեցնելու քա՛...

ՆԻԿ.— Օրինակ ի՞նչ լցրիր, ի՞նչ սովորեցիր:

Ս-ՆԱ.— Ես ի՞նչ գիտեմ ինչ... հազար բան ասաւ:

ՆԻԿ.— Հազարից մէկն ասա տեսնեմ:

Ս-ՆԱ.— Այ, խօսքի հըմար, ասաւ, ներսի երկրներումը կնկանը չին ծեծում, ամա էն ինչ մեղանում ա՛ գցում են ոտի տակ ու գլխին, մէջքին քացով ես դազանակով վերհատում՝ ոնց որ տաւար... դրա հըմար էլ, պ. դասախօսն ասըմ էր, որ մեր տղամարդիկը շատ թունդ դէսպօրտ են, դէսպօրտ...

ՆԻԿ.— Դէսպօրտը ո՞րն է, Սուսաննա:

Ս-ՆԱ.— Եանի թէ կողքը հաստ էլի, հերսոտ, իր ասածի:

ՆԻԿ.— Է՛...

Ս-ՆԱ.— Բանս... ընտեղարենք տաւարին ծեծողից ըշտրաֆ են առնում, ասաւ, ամա մեզանում կնկանը ծեծողին բարաքեալլա են ասում:

Ն.Ի.Կ.— Հէնց այդքան...

Ս-ՆԱ.— Ո՞նց թէ էդքան, ընդիարենք, ասաւ, պսակ-մսակ չկայ, ասաւ, կանդրախտով են տղայ ու աղջիկ իրար առնում:

Ն.Ի.Կ.— Ի՞նչպէս թէ կանդրախտով, այ կնիկ, գժւել ես:

Ս-ՆԱ.— Էն Աստօծը, Նիկիտ ջան... գրաժղանսկի պսակ, էլի... նօտարուսով կանդրախտ են առնում ու գնում իրար հետ ապրում: Ով երբ ուզում ա՛ էն վախոն էլ տուն ա գալի եա դուս գնում, մի բանալիք կնկայ ձեռքին ա՛ մէկն էլ մարդու, ով ում հետ ուզում ա՛ նրա հետ էլ նրատում ա՛ վերկենում: Բան ա, թէ որ մի քանի օր, մի քանի ամիս եա թէ չէ մի քանի տարի եղը իրար արանքով սև կատու ա անցկենում ու խռովում են՝ մէկ էլ տեսար կանդրախտը պատուեցին ու մէկը աջ գնաց, մէկը ձախ: էլ ոչ իրար ծեծել, ոչ հէրն ու մէր ու մեռել ուշուենց տալ, ոչ իրար ծամ եա մազ պոկել, ըտէնց բան չկայ:

Ն.Ի.Կ.— Այդ լաւ բան է... ուրեմն «և եղիցին երկոքեան ի մարմին մի»-ն փաս էլի:

Ս-ՆԱ.— Բանս... տօ հազար մարմին դառի, ո՞վ ա հարցնում, մենակ հօ էդ չի... նրանցում, Նիկիտ ջան, հաս ու չհաս էլ չկայ... քո քրոջից սաւահի ումն ուզում ես՝ ան, հալալ ա, հաս ա: Սօսքի հըմար մարդս մեռաւ՝...

Ն.Ի.Կ.— (Ընդհատելով) Լեզուդ քեզ քաշի...

Ս-ՆԱ.— Չէ, քեզ հըմար հօ չեմ ասում, Աստօծ ոչ անի... ընէնց, խօսքի հըմար եմ ասում... հն, ասենք կնիկդ մեռաւ՝ գնա նրա մէկէլ քրոջն առ, էն էլ մեռաւ՝ մէկէլին առ, չորրորդին, հինգերորդին...

Ն.Ի.Կ.— Մի խօսքով, ասա, աներանցս տանը ինչքան աղջիկ գտնեմ՝ առնեմ, էլի:

Ս-ՆԱ.— Հն, հն, Նիկիտ ջան. ան... ազատութիւն ա է, ազատութիւն... բանս... ըտէնց երկիր կըլնի՞, իստակ դրախտ ա, դրախտ... արի գնանք ընդի ապրենք, Նիկիտ ջան...

Ն.Ի.Կ.— Լաւ երկիր է, ես ու իմ Աստուած... զոքանչիս ի՞նչպէս, նրան էլ կարող եմ առնի՞:

Ս-ՆԱ.— Էդ մէկը, դրուստն ասեմ՝ լաւ չլսեցի, ամա ես ասեմ զոքանչին էլ կարաս առնի, չունքի աղջկանից նա մի պորտ էլ հեռու ա:

Ն.Ի.Կ.— Լաւ, ասենք թէ մարդ ու կնիկ կանդրախտը պատուեցին ու ինչպէս դու ես ասում, մէկը աջ գնաց՝ մէկը ձախ, բաս նրանց երեխաները:

Ս-ՆԱ.— Նրանց հըմար էլ կանդրախտն ասում ա, թէ որը որի հետ պըտի գնայ եա թէ չէ՝ թէ որ մի հատ աղջիկ ա եա տղայ՝ իրար մէջ փուշք են գցում, որին որ գուրս ա գալի՝ նա էլ տանում ա պահում... մէկ էլ որ նրանցում, Նիկիտ ջան, ընէնց չի, ոնց որ մեզանում, որ ինչքան երեխայ ուղենաս՝ ունենաս... նրանցում մարդ ու կնիկ զակազով են երեխայ ունենում, էն շատը՝ երկու հատ:

Ն.Ի.Ն. — Ի՞նչ է ասում... զտկազով էլ երեխայ կլինի՞:

Ս.Ն.Ս. — Հնա հնա, Նիկիտ ջան, էն մեռածը... երկու հատ են ունենում, որ բաժանելիս հալալ փայ անեն, մէկը մէկին հասնի՝ մէկն էլ մէկին, եա թէ չէ՝ ընենց Փանդ են անում, որ ըսկի երեխայ չունենան, որ իրանք հանգիստ իրանց քէֆին ապրեն, աշխարհի վայելչութիւնից չզրկուին:

Ն.Ի.Ն. — (Լուրջ) Լաւ, լաւ, հասկացանք, հէրիք տոպրակդ թափ տաս... լո՛րր և լսի՛ր... այսօր փաստփուսէդ կհաւաքես և դճւզ հօրդ տունը:

Ս.Ն.Ս. — (Ասլած) Հօրս տունը՛... ընչի՞ որ...

Ն.Ի.Ն. — Այնպէս.

Ս.Ն.Ս. — Ո՞նց թէ էնպէս, գնամ ի՞նչ անեմ:

Ն.Ի.Ն. — Գնա և մնա այնտեղ... էլ սֆաթդ դուրս չի գալի... կանդրախտը պատում եմ:

Ս.Ն.Ս. — Ի՞նչ ես ասում, այ մարդա՛...

Ն.Ի.Ն. — Էլ ես մարդութիւն չեմ ուզում անի, կնկաթող եմ լինում, հասկացա՛ր:

Ս.Ն.Ս. — Այ մարդ երազ հօ չե՞ս տեսիլ:

Ն.Ի.Ն. — Գնում եմ Սեան ճգնելու, էլ ես քո մարդը չեմ, վարդապետ եմ դառնալու, իմացա՛ր:

Ս.Ն.Ս. — Քա վարդապետները հըմի պսակում են, դու նոր գնում ես վարդապետ դառնա՛ս... բաս ես ի՞նչ անեմ... ի՞նչ քարը տամ գլխիս:

Ն.Ի.Ն. — Ազատութիւն է, ուզում ես գնա մի փախած վարդապետ էլ դու առ:

Ս.Ն.Ս. — Խելօք խօսի, խելօք, այ մարդ:

Ն.Ի.Ն. — Մի անգամ ասի, որ էլ ես քո մարդը չեմ, ի՞նչ ես ձիու ճանճի պէս կպել... պոկ արի էլի:

Ս.Ն.Ս. — Լսողն ի՞նչ կասի, այ մարդ:

Ն.Ի.Ն. — Լսողը կասի, որ ազատութիւն սիրող Սուսաննի կանդրախտը իր դեսպօրտ մարդը պատուից, ուրիշի հետ պսակելու իրաւունք տուց և ինքն էլ գնաց չորրորդ կին առաւ:

Ս.Ն.Ս. — Վճւյ, քոռանամ ես, չորրորդ կին առա՛ւ:

Ն.Ի.Ն. — Հնա, ի՞նչ ես զարմանում, քու հաւանածն է էլի, ազատութիւն է...: Էս ի՞նչ է ի՞նչ, իմ տան հալը, չե՞ս ամաչում... (ննջարանից դուրս է բերում հանած շորերը, կօշիկները, գլխարկները), էս ննջարանի շնորհք է՞, քեզ եմ հարցնում, գետինը չե՞ս մտնում, որ տանտիկինն է այսպէս տուն պահում, սա գոմ է՞ թէ ախոռ... (Թափ է տալիս շորերը եւ գետնով տալիս, շըրջազգեստի գրպանից ընկնում է մի բաց արած նամակ) օհօ, էս ի՞նչ է... նամակ (խոնհարում է վերցնելու, բայց կինը իրանից առաջ է վերցնում, որից Նիկիտը քաշքշելով խլում է), Քոնն է՞...:

Ս.Ն.Ս. — (Փորձում է յետ խել, բայց չի կարողանում) Այո՛, իմն է, տուր ինձ... իրաւունք չունիս կարգալու:

Ն.Ի.Ն. — Իրաւունք չունի՛մ... այժմ աւելի շուտ կկարգամ (բանում է կարգալու, Սուսաննէն աշխատում է արգելի, որ չկարգայ)... հեռի կանգնիր, քեզ ասում եմ... (հեռանում է, իսկ ինքը կարդում) «Սուսաննա ջան», օհօ... (նաւ

յում է կնոջ երեսին) էդ հում ջանն ես:

Ս.ՆԱ.—(Չորում՝ ընկնում է ոտները) Մի շարունակիր, տուր ինձ նամակս...

Ն.Ի.Վ.—Տամ, տամ, կաց պրծնեմ՝ տամ (շարունակում է կարդալը): Վաղը երեկոյ ժամի 6-ին կսպասեմ քեզ բուլվարի մութ ակէում. (նրան) ինչի՞ պէտք է Փիլիպպոսովի ելեքտրական լուսաւորութիւնը այնքան խաւար լինի, որ դու բուլվարում մութ ակէյ գտնես:

Ս.ՆԱ.—Բաւական է, մի շարունակիր, մորթիր ինձ ու պրծիր... խղճա ինձ...

Ն.Ի.Վ.—Մորթե՛մ, խղճա՛մ... անհաւատարիմ... (շարունակում է) «էնպէս արա, որ քո բայդուշը չիմանայ...», բայդո՛ւշ... ես քեզ բայդուշ ցոյց կտամ (նրան) շատ շնորհակալ եմ, սիրամարգ... բայդո՛ւշ...

Ս.ՆԱ.—Ի սէր Աստծու մի շարունակիր, պատուիր նամակը, սպանիր ինձ ու պրծիր:

Ն.Ի.Վ.—Կաց, անիծւած, կաց տեսնեմ հիվ է այդ անառակը, որ համարձակել է տանս խաղաղութիւնը վրդովել...

Ս.ՆԱ.—Մի շարունակիր, ասում եմ, դու նրան կսպանես...

Ն.Ի.Վ.—Մաս մաս կանեմ անզգամին (շարունակում է) «քեզ միշտ պաշտող ու սիրող Պ. և կէտեր... (նրան) ասա ինձ, հիվ է քեզ պաշտողը, հիվ է քեզ սիրում, հիվ է թագնւած այս կէտերի տակ...

Ս.ՆԱ.—Ես ոչինչ չգիտեմ.

Ն.Ի.Վ.—Ասան քեզ ասում եմ (Սուսաննան լուծ է) պապանձել է՞ս... անպատկառ կին, անհաւատարիմ ամուսին... (ծեռքը տանում է աթոռին) դ՛ուրս, դ՛ուրս կորիր այստեղից և սպասիր քո վճռին (Սուսաննան փախչում է ննջարան): Բայց ե՛րբ, հր օրւանից է այդ թունաւոր օձը սողալով մտել իմ խաղաղ յարկի տակ... չեմ հանգստանայ, մինչև չգտնեմ, չիմանամ հիվ է և հաշիւս չվերջացնեմ նորա հետ (մօտենալով աջակողմեան դրանը կանչում է) Բօզալիա, Բօզալիա...

Տ Ե Ս Ի Լ Է.

ՆԱ ԵՆ ԲՕԶԱԼԻԱ

ԲՕԶ.—Այստեղ եմ, հայրիկ...

Ն.Ի.Վ.—Ո՞ւր են աղախինն ու ծառան:

ԲՕԶ.—Դասախօսութիւնից դեռ չեն հեկել, պնայաշա:

Ն.Ի.Վ.—Լաւ, գնա, կգան թէ չէ՝ ուղարկիր ինձ մօտ (Բօզալիան գնում է): Դասախօսութիւն խրատ կտամ ես ձեզ... վաղը ես գիտեմ փիտոյին էլ են տանելու դասախօսութիւն, որ նա էլ իր փէշակը մոռանայ՝ մուկ չըրանի... չէ՛... պէտք է բոլորին մաքրել, բոլորի քօքը պէտք է կտրել այստեղից: (Մտնում են Գողորն ու Թագուշը եւ գլուխ տալի):

Տ Ե Ս Ի Լ Ը.

ՆԱ, ԳՈԳՈՐ ԵՆ ԹԱԳՈՒՇ

Ն.Ի.Կ.—(Խորը զուլխ տալով) Դուք էլ էք դասախօսութիւնից գալի հմ:

ԳՈԳՈՐ.—Հրաման քե, աղա:

ԹԱԳՈՒՇ.—Էդպէստ ա, աղա:

Ն.Ի.Կ.—Դէ պատմէք տեսնեմ, ի՞նչ լսեցիք, ի՞նչ ասացին, ի՞նչ հասկացաք:

ԳՈԳՈՐ.—Շատ բան իմացանք, խէլի բան, աղա, օղորմի սաբարի հօրը:

ԹԱԳՈՒՇ.—Էնդադար բան, աղա, ո՞ր... անհէսար, անհէսար բան, աղա:

Ն.Ի.Կ.—Յրինակ ի՞նչ, Գոգոր...

ԳՈԳՈՐ.—Խօսքի հըմար, վըրա առաջինը էն աղա, որ սրանից եղը... էլ չեմ թողալու ինձ, ամօթ ա ասել, ուլախի նման բարձես, բւնացնես (Թա- գուլին) դուն էլ քոնն ասա, աղջի:

Ն.Ի.Կ.—Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ...

ԹԱԳՈՒՇ.—Հն, բն... օղորդ կասա... խանուժ հոգիս հաներ ա, գինամ... էս վը- լացք ա, էս ութիկ, էս օթխներու պօլ մեղրամոմով պրտել, էս կար- կտնել, էս բուրդ չփխել, էս խանըմի եա քո ոտներ ճմոռել, էս ջոջ ու պատիկ խանըմի գլուխ վըլալ... են, բա իմ ջան ջան չի՞, աղա, չէ՞ մե- ռայ է... օրէկան 6 սըհաթից աւել բանել հարամ ա, օղորդ կասէր վալլահ էսօրւան ջահէլ աղէն:

ԳՈԳՈՐ.—Փէտ ջարդել, հայեաթը թամզել, կտրան ձինը քերել, կերակուր ե- փել, կուխնու ամանչամանը լւանալ, լւացքի ու խմելու ջուր բերել, սամավար գցել, բազար գնալ... սրանից եղը, աղա, էլ բազարիցը մի լիտրից աւելի գադ մադ բերողը չեմ, ես հօ համբալ չեմ: Մէկ էլ որ հախներս քիչ ա, աղա:

Ն.Ի.Կ.—Պրծա՞ք, բանից երևում է, որ բոլորիդ համբալն էլ ես եմ... ես դա- տեմ՝ դուք ուտէք...

ԳՈԳՈՐ.—Գու քէֆն ա, աղա, ռազի չես՝ էգուցւանից բահիկօթ ենք անելու...

Ն.Ի.Կ.—Բահիկօթը ո՞րն է Գոգոր:

ԹԱԳՈՒՇ.—Եանի թէ զարստովկ... ընկեր Հայկունին ընէնց թամբահ արաւ, աղա... «Գեղ կայնի, ասաւ, գերան կկոտրի», աղա, ասաւ, գինամ:

ԳՈԳՈՐ.—Լաւ խօսք ա, ես ու իմ Աստուած:

Ն.Ի.Կ.—Ընկեր Հայկունի՞ն ո՞վ է, աղջի:

ԳՈԳՈՐ.—Ըսօրւայ մեզ հետ խօսողն, էլի...

Ն.Ի.Կ.—Դասախօսը՞...

ԳՈԳՈՐ.—Հն, աղա,

Ն.Ի.Կ.—Լաւ, շատ լաւ, ես էլ էսօրւանից թէ բահիկօթ պիտի անեմ՝ թէ թի- ալի կոթ, որտեղ բարակի՞ թող էնտեղ կտրի: Ես որ տանը չեմ լի-

- նում, մեր տուն իսկի տղամարդ գալի՞ս է՝ թէ չէ:
- ԹԱԳ.— Ղոնա՞ղ, աղա:
- ՆԻԿ.— Հա՛, ղոնաղ:
- ԳՈՐ.— Շատ...
- ՆԻԿ.— Ո՞վ է գալի:
- ԳՈՐ.— Ո՞ր մէկին ճանաչեմ, աղա... ով ասես՝ գալիս աս:
- ԹԱԳ.— Մէկ բէտ բէտ բեխանի մարդ կայ, նա թեղ թեղ ա գալում աս:
- ԳՈՐ.— Ամէն անգամ էլ, աղա, մէկ մեծ ղութիկով կամփէտ ա բերում խանրմին:
- ՆԻԿ.— Հա՛... լաւ, (կողմը) գտայ անզգամին, հէնց նա է... Պետրոսեանը... (նրանց) էլ ո՞վ է գալի:
- ԳՈՐ.— Էն նոր տէրտէրն էլ ա գալի, աղա, կնիկը որ անցեալ տարի մեռաւ:
- ՆԻԿ.— Տէրտէր... (կողմը) աչքս լո՛յս...
- ԹԱԳ.— Մի բանձր բանձր վարդապետ էլ ա գալում ա, աղա..
- ՆԻԿ.— Վարդապետ...
- ԳՈՐ.— Կասես թարաքեամա ըլի, աղա, ըսկի վարդապատի նման չի...:
- ՆԻԿ.— (կողմը) Տունս քանդուց (նրանց) լաւ, լաւ, ձէներդ կտրէք, բաւականէ: Դրուտտ, խանումը ըսկի նամակ ստանում է:
- ԹԱԳ.— Գի՞ր, աղա...
- ՆԻԿ.— Հա՛, գիր:
- ԳՈՐ.— Ըսոր մինն ստացել էր, աղա...:
- ՆԻԿ.— Փոշտով...
- ԳՈՐ.— Չէ, աղա, էն երկար բեխանի մարդու գեաղէն էր բերել... առաջ էլ ա բերել...:
- ՆԻԿ.— Ե՞րբ...
- ԳՈՐ.— Վալլահ միտս չի, աղա, համա բերել աս:
- ՆԻԿ.— Լաւ, գնա խանումիդ ու Բողալիային կանչի Գոգոր, տես թէ վարդերես վարժապետը տանն է՞ նրան էլ խնդրիր, որ գնայ, յետ գալիս էլ մի գրաֆինկով ջուր և մի բաժակ էլ հետդ բեր, գնա՛, (Գոգորը գնում է):
- ԹԱԳ.— Աղա, էդ բէտ բէտ բեխանի աղէն շատ հանաքչի մարդ ա, գինա՞ս:
- ՆԻԿ.— Հա՛... քեզ հետ էլ հանաք արե՞լ է, Թագուշ:
- ԹԱԳ.— Չէ, աղա, խանըմի հետ...
- ՆԻԿ.— Սո՛ւս, լաւ, ձէնդ կտրի (ներս են գալիս Սուսաննան, Բողալիան և վարդերեսը Գոգորի հետ, վերջինիս ձեռքին ջրշիշն ու բաժակը):

Տ Ե Ս Ի Լ Թ.

ԲՈՂՈՐԸ ԲԵՄԻ ՎՐԱՅ ԵՍ

ՎԱՐԴԵՐԵՍ.— (Տանկական ձեռով բարեւոյով նիկիտին), Շնորհ ըրած էիք զիս կան-

չել, մեծարգոյ, ազնւաշուք, վսեմապատիւ...

ՆԻԿ. . Այո՛, այո՛, (աՅոռ է առաջարկում), համեցէք, նստեցէք, (Վարդերեսը նրստում է. — Սուսանային եւ Րօզալիային), իսկ դուք խնդրեմ տեղ բռնէք պ. Վարդերեսի աջ ու ձախ կողմում. (նստում են):

ՎԱՐԴԵՐԵՍ.— (Կողմը), Աջէս վարդին թուփը՝ ձախէս կարմիր վարդը, գործերնիս յաջողելու է իշալլահ... Աստուած լուսաւորէ ոուս. բանաստեղծ Կօկօլին հոգին, (Սուսանային) ձեր թանկագին առողջութիւնը ինտո՞ր է, տիկին... (Սուսանան երեսը շուռ է տալիս), կամչնայ կոր...

ՆԻԿ — Գոգո՞ր, Թագո՞ւշ, դուք էլ նստեցէք:

Գ-ՈՐ. — Ախր աղա...

ՆԻԿ. — Սո՛ւս, նստեցէք իրար կողքի, իսկ բաժակն ու ջրշիշը տուր ինձ, (Գոգորը երկու աՅոռ առանձնացնում է, մէկի վրայ ինքն է նստում, իսկ միւսի վրայ նստեցնում է Թագուշին: Նիկիտը ջրշիշն ու բաժակը առնում, դնում է կլոր սեղանի վրայ եւ մօտը կանգնում): Պ. Վարդերես, ձեզ մի նորութիւն ունիմ հաղորդելու, (ջուր է խմում): Այսօր իմ ամբողջ ընտանիքը դասախօսութեան էր գնացել և ինձ սոված թողել: Տեսնելով, որ սոքա այդ դասախօսութիւններից բացի քնասը ոչինչ օգուտ չեն դուրս բերել, եկայ այն եզրակացութեան, որ մի նոր դասախօսութիւն է պէտք, որից նրանք փոքր ի շատէ օգուտէին (ջուր է խմում), ինքս յանձն առնելով այդ նոր դասախօսի պաշտօնը, խնդրում եմ ուշադրութեամբ լսել և ինձ չխանգարել, որ ասելիքս չմոռանամ, (ջուր է խմում): Ուշադրութիւն, ես սկսում եմ, — Աշխարհիս երեսին յիմար է այն մարդը, որ կնկանը մարդ կշինի՝ իրան կնիկ, ծառային աղա՛ իրան ծառայ, աղախնին խանում՝ իրան աղախին...: Այդպիսի մարդը նման է մի բեռնակիր շորքոտանու՝ որ ինչքան բառնան և ինչքան բզեն՝ թէկուզ սատկի՝ ձայն չի հանի, (ջուր է խմում): Այդպիսի ցիմարներից մէկն էլ ձեր նոր դասախօսն էր, որ այսօրւանից խելօքանում է, տանից դուրս է անում ձեզ, որ իր աղջկայ հետ մենակ և հանգիստ ապրի, հասկացա՞ք ...: (Ձայնը բարձրացնելով), դէ՛հ հիմի վերկացէք ու կորէք աչքիցս, դասախօսութիւնը պրծաւ. (բոլորը փախչում են, բացի Վարդերեսն ու Րօզալիան):

ՎԱՐԴԵՐԵՍ.— (կողմը) Խէնթցա՛ւ հարի՛Ֆը. (նրան), ես ա՛լ կորսւիմ միթէ, Մըկրտիչ աղա:

ՆԻԿ. — Ո՛չ, դուք աշխատէք երկիր գնալ, (բարձր եւ որոշ), այսօրւանից իմ տանն էլ ձեզ տեղ չկայ, սենեակի չվճարած երեք ամսականն էլ իմ կողմից ձեզ ձանապարհածախքի նւէր, գո՛հ էք:

ՎԱՐԴԵՐԵՍ.— Շնորհակալ եմ, աղաս. բայց մենա՞կ գնամ՝ չէ նէ՛ (ցոյց տալով Րօզալիայի վրայ):

ՆԻԿ. — Մենակ, մենակ, սիրելիս... կարմիր վարդը (ցոյց տալով Րօզալիայի վրայ) ձեր հետ չի ուզում գալ:

ՎԱՐԴԵՐԵՍ.— Իրա՛ւ կըսէ հայրիկդ, օրի՞որդ:

ՐՕԶԱԼԻԱ.— Ես ոչինչ չեմ հասկանում... (դէպի հայրը՝ հարցական հայեացքով):

ՆԻԿ.—Ի՞նչ չե՞ս հաւատում, ի՞նչ է, որ օրիորդին ես դիմում, (Րօզալիային) քո
ձեռքն է խնդրում հասկացա՞ր:

ՐՕԶԱԼԻԱ.— Не уже-ли?... հա, հա, հա... մի՞թէ...

ՎԱՐԴԵՐԵՍ.— Oui, oui, Mademoiselle...

ՆԻԿ.— Ի՞նչ ես վույ-վույը գցել ու մեխածի նման կանգնել, ապուշ, քեզ
հետ չե՞մ... գնահ և սենեակդ այսօր և եթ մաքրիր:

ՎԱՐԴԵՐԵՍ.— (Վախեցած), Երթամ, աղաս, երթամ... (դնալով) այժմ յաւիտեան
անիծիալ ըլլայ Կօկօլին յիշատակը...

ՆԻԿ.— (Յետեւից) Յվվվվվէ... հազիւ պրծայ էլի աներես հոսհոսից:

ՐՕԶԱԼԻԱ.— Вот сумашедшій... հա, հա, հա, գնանք, գնանք հայրիկ, ճաշդ
պատրաստ է:

ՆԻԿ.— Գնանք, աղջիկս, հա, հա, հա, (դնում են):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր .



Դատարար. — Երբ օրէնքում չէ ցոյց տւած թէ կանայք իրաւաբան լինելու իրաւունք ունեն, — նշանակում է նրանք այդ իրաւունքից զրկւած են:

— Զայնէր նասարակոթեան միջից. — Իսկ օրէնքում ասւած է, որ կանայք դատախազներ ծնելու իրաւունք ունեն:

— Դատարար. — Ո՛չ:

Զայնէր նասարակոթեան միջից. — Այդ դէպքում ձեր մայրը կատարել է մի հակաօրինական յանցանք:



Պատասխած աղջիկը. — Ո՛ւհ. ինչ սոսկալի կերպով ցրտեր սկսեցին. երբեմն այնպէս եմ սառում, որ ատամներս միմիանց չեն կցւում:

— Բնկերուհին. — Ինչպէս կարող է քո բերանում ատամները միմիանց կցւել, երբ ներքին ծնօտը բերանումդ է, իսկ վերինը՝ սեղանիդ արկղում:



Տանտիրուհին — (դէպի իր հիւրը), մի կտոր սալի միս:

— Հիւրը (թախծալից), — Սագերին տանել չեմ կարողանում:

— Տանտիրուհին. — Ինչո՞ւ:

— Հիւրը — Նրանք Հոռմը փրկեցին:

— Տանտիրուհին. — Իսկ դրանից ի՞նչ:

— Հիւրը. — Իսկ ես իմ կնոջ հետ Հոռմումն եմ ծանօթացել. եթէ սագերը Հոռմը փրկած չլինէին, ներկայիս ես այսպէս դժ-

բախտ մարդ չէի լինիլ:



Նէ. — Աշնանային թափւող, ընկնող տերևները նման են կանանց:

ՆԱ. — Ամենահեռաւոր նմանութիւնն անգամ. տերևներն ընկնելիս՝ մայր ճիւղից բոլորովին կտրուում են, իսկ կանայք ընդհակառակը, ընկնելիս՝ միշտ կախւած են մնում մարդու շնքից:



— Սիրելիս, ինչի՞ վրայ ես այդպէս խորասուզւած մտածում:


— Մտածում եմ այն երջանիկ անցեալիս վրայ, երբ ես դեռ քեզ հետ ամուսնացած չէի:



— Կարապետ Անդրէիչ, աշխարհում ի՞նչն էք ամենից շատ սիրում:


— Սեփական տոկոսաբեր թղթերիս կուպոնները. իսկ դ՞ուք, Հռիփսիմէ Ալէքսանդրովնայ:

— Այն տղամարդկանց, որոնք այդպիսի կուպոններից շատ ունեն:



— Ասացէք խնդրեմ, տիկին Նատալիա, ինչ էք կարծում, կեանքում երկամբ կարող է ապրել այն մարդը, որ բնութիւնից զրկւած է խելքից ու տրամաբանութիւնից:

— Իսկապէս, պարոն Արշակ, քանի՞ տարեկան էք դուք:



Գնացքը 1½ ժամից յետոյ Մոսկվա պէտք է հասնէր: Ռուս ուսանողը սկսում է զարթեցնել իր խորը քնած հայ կօլլէզային:

— Ընկեր, վեր կացէք, Մոսկվան մօտիկ է: Հայ ուսանողը զարթնում, նայում է բոլոր ճանապարհորդներին ու կտրուկ պատասխանում.

— Չեմ կարող, սկզբունքով դէմ եմ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ճանապարհորդների մեծամասնութիւնը դեռ քընած է. — բարկացած պատասխանում է հայ ուսանողը և նորից քընում:



Հնդիանակ. — Այսպէս ուրեմն, դուք ասում էք որ իմ պատմը-
լածքը տպագրելուն հակառակ էք սկզբունքով:

Խմբագիր. — Այո՛, այո՛, հակառակ ենք սկզբունքով:

— Սակայն այդ ի՞նչ սկզբունք է:


— Չտպագրել թոյլ գրւածքներ:



Սկսնակ բանաստեղծը մի ճաշկերոյթի ժամանակ ասաց.

— Ես գրել եմ բազմաթիւ պօէմաներ, բայց ցանկանում եմ,
որ նրանք հրատարակուեն իմ մահից յետոյ:

— Ուռա՛, ուռա՛, — բղաւեցին բոլորը միաբերան ու բաժակները
բարձրացնելով ասացին. — ուրեմն, թո՛ղ ամենակարող Աստուած եր-
կարացնի ձեր կեանքը:




— Ես ոտանաւորներ եմ գրել:

— Ոչինչ, եթէ այդ ձեզ հետ առաջին անգամն է պատահում և
այլ ևս չէ կրկնուելու, — ներել կարելի է:



Քառասունևհինգ տարի ապրում եմ աշխարհում և անընդահատ
ձշմարտութիւնն եմ փնտռում... Չգիտէք արդեօք որտեղ է նա:

— Դէօգնեսին մի նամակ գրեցէք, նա այն աշխարհից կու-
ղարկի նրա հասցէն:



ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՃԱՇԱԿ ՈՒՏԵԼՈՒ ՄԷՁ

Թէ իմ ալևոր հերքս սենային,
Եւ ստամոքսըս նորէն ինձ յետ գար,
Յայնժամ ես նստած սեղանի գլխին
Չայն կտայի քեզ—էյ, իմ խոհարար.

Բեր ինձ շիրվանի ոչխարի մսից—
Շամախու կնոջ ձեռքով պատրաստած
«Բիրիան» կամ տօլմա քաղցր խնձորից,
Սաւզայի չամչով, իւղով տասպակած:

Թուրքական չլով կաթով պատրաստած,
Բրինձն Աղշաշի իսկ իւղն Արագած.
«Բօզբաշն» Երևան, Ղարաբաղ քուֆթա,
Եւ այդ բոլորը, իհարկէ մուֆթա:

Գեօզչայի եզան սուկուց խորոված,
Խոզի բասաուրմա Տամշլու դրած,
Ղարսի չորացրած մսէ դաւուրմա,
Չօբանի ձեռքով գառան բուղլամա:

Կարբու հնդուշկա, տասպակած խիստ բոլ,
Բողկը քեւառու, բլխէրա կարտօլ,
Կորեկից սամիթ, ածիկն Արարան,
Լուլա քեարարի իսկը թուրքական:

Խաւեարը բերած Սալեանի ծովից,
Իսկ իշխան ձուկը Սեանա լճից.
Թիֆլիսի լաւ դօշ, զուրգէլ Լենքօրան,
Բզնունեա տառեղ, «մուրձէն» Հրազդան:

Շուստովի կանեակ, գինին Մադրասի
Թէրմունն Երևան, օղին Կաւկազի.
Կամ եթէ լինի իսկական կախէթ,
Եւ տաճկաստանի Մաստիկա, Ափսէնթ:

Միրզն Արարատեան դաշտից ժողոված,
Դալմայի խաղող, դեղձը նոր քաղած.
Դութման «Թաղա գիւղ», կանաչ սնէյվազ,
Կարմիր ձմերուկ Բաշգեառնուց բերած:


Գեանջայի նուռը, խնձոր Խրթիղու,
Փթանոց եմիշ, զուտ Ուլուխանլու.
Եւ ի՛մ սեղանը օգոստոս ամսին,
Տեսնէի փոած Ալազեազ սարին:

ԼՈՒԿՈՒԼԼՈՍ



ՔԻՄԻԱԿԱՆ ՆԵՐՀԱԿ ՏԱՐՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾ ՈՒԹԻՒՆ


Քիմիական տարրերի մէջ եթէ կրակն ու վառողը մօտեցնենք միմեանց, տեղի կունենայ սոսկալի պայթիւն, այնպէս, ինչպէս կուարար գոքանչը տգեղ աղջկայ ամուսնու հետ՝ մօտեցնես իրար մի տան մէջ:



Ազօտեան թթուտը զգուշաւոր միջոցներով երբ լուծում են զլիցերինի մէջ, նա դառնում է խիստ վտանգաւոր բաղադրութիւն: Նրա հետ պէտք է վարել շատ զգուշ: հակառակ դէպքում, կտրաքւի այնպիսի աւերիչ կերպով, երբ ամուսինը սիրով միանում է մի այլ կնոջ հետ և անզգուշութեամբ այդ գաղտնիքը բացւում է իր իսկական կնոջ առաջ:



Կայծաքարն իր մէջ ամփոփում է կրակ: Նրան չի կարելի շփել պողպատի հետ՝ շուտ բռնկւող նիւթերի մօտ, որից իսկոյն կառաջանայ հրդեհ, այնպէս, ինչպէս օրիորդի թշրը երիտասարդի շրթունքներին մօտեցրած ժամանակ:



Ոսկեջրած պղինձը նման է ներկւած կնոջ. նրան պէտք է չդիպել, կամ հետու պահել կոշտ իրերի շփումից, ինչպէս կնոջ երեսը շրթունքների հպումից, հակառակ դէպքում ջուրը կգնայ և ամբողջ ներքին տգեղութիւնը առաջ կգայ իր բոլոր աղաւաղումներով:



Կինը նման է զելտերեան ջրով լցւած շի: Վերջինս իր մէջ պարու-

նակում է ջուր, մարմար և ծծմբաթթու: Իսկ կինը՝ սիրոյ խիստ նախանձ,
անհուն թշնամանք և ջղայնութիւն:

Եթէ զեւտերեան շիշը իր միջի բաղադրութիւնից միշտ ենթակայ է
պայթելու վտանգին, կինը նոյնպէս իր մէջ պարունակող այդ ոյժերից ա-
մեն բոպէ կարող է տրաքել:




Շատերն յաճախ ինքնախարէութեամբ բենդինը բռնում են կրակի մօտ,
կամ բամբակը պահում կրակի կողքին, թերահաւատ լինելով թէ նրանք չեն
բռնկւիլ: Այդպէս էլ վարում ենք յաճախ, գեղեցիկ կինը կամ սիրուն աղջիկը
թողնելով տղամարդի հետ միմեանց կողքին: Բայց հաւատացէք որ այս եր-
կու դէպքում էլ նիւթերն անպայման բռնկւում են:



Վաղուց լցրած հրացանն արձակելիս սաստիկ որոտ է հանում: Նոյն-
պիսի որոտումով տարածւում է և պառաւած աղջկան մարդու տալու լուրը:

ՔԻՄԻԿՈՍ



ԿԼԷԿՉՈՒԹԻՒՆ

Արագածի մէկ տեղում,
Յայտնի Բիրուսիան գիւղում,
Տասն ուստայ ենք մի աշկերտ,
Պիտի երթանք Ալաշկերտ:

Բոլորս էլանք կլէկչի,
Ուստաբաշին էր աշչի,
Ասաց, եկէք փորձ փորձենք,
Մենք ամենքս էլ անփորձ ենք:

Առաջ անցաւ մեր Փիլօն,
Նազ ու տուղով մի միլիօն,
Զարկեց չոքերն 'ի գետին,
Փորձն սկսաւ տաշին:

Սարքեց փքսերն ու քուրան,
Դրրեց պղինձն 'ի վրրան,
Ներսը փայլեց, գուրսն էր սև,
Սըրբէր, մաքրեր նա ևս և:

Էհ, ասաց իմ բանը չի
Սա ի՞նչ գործ է ոսկերչի,

Ու պղինձը դէն գցեց,
Տւած խօսքից յետ կանգնեց:

Մէջ տեղ եկաւ երկրորդը,
Փախան երրորդ, չորրորդը,
«Պապերս էին տէմերչի,
«Տօ ինձ համար ամօթ չի»:

Ասաց, առաւ քեալփաթին,
«Կորիւր, գընա դու անդին
«Դէ, «մղղըսի» դուն փըչի»
«Թող յետ կանգնողն ամանչի»:

Նըշատրի ծուխ կծու,
Քիթը մտաւ մըղղըսու,
Աչք ու բերանն մնաց բաց,
Հա կացաւ, հա փոշտաց:

«Ծօ հայւան սաբըրդ խէր չէր»,
Կասէր ու կըբանբաչէր,
«Օֆ, ձեռքերըս այրւեցաւ»
Սեփանիկն էլ յետ կացաւ:

«Այ ի՞նչ կընէք կընէչի,
«Զեզ պէսներն են եալանչի»,
Շաթիր-բաչին դուրս եկաւ,
Քեալփաթինը ձեռքն առաւ:

«Փչէք մինչև կարմրի,
«Ես էլ գոռ տամ նըշատրի,
«Կըլէկը զարկեմ երես՝
«Կը տեսնէք ձե՛նց կանեմ ես:

«Վախտը չի, հա, վախտի չի,
«Դեռ կլէկի վախտը չի»,
Էնքան նըշատիր ցանեց,
Մի մատ վերան կեղտ բունեց:

«Նաւըմ», հասաւ բախշաչին,
Մեր վեցերորդ կլէկչին,
«Քեալլա փաշան լաւ գիտէք,
«Կլէկչութիւնն ի՞նչ գիտէք»:

«Քէսերս ինձի բերէք մէմ,
«Սա սևերը յետ քերեմ»,
Չեռքն այրեց զարկածին պէս,
«Մարն ադոր լամ, չիյդեմ ես»:

Հետևաբար փրուրնչին,
Ընկեր գտաւ դայֆաչին,
Իրենց խելխին զոռ տալով,
Գործ կուզէին փորձելով:

Իներորդը Մուքրիկն էր,
Սովորցնել հէնց կուզէր,
«Ուտաբաշի, սկսիր
«Վերան բամբակ առ, քըսիր»:

Չէ, փորձելով բան չեղաւ,
Սորա ջանքն էլ զուր անցաւ,
Մի ֆունտ կլէկ նըշատիր,
Արեցին քիւլ ու մոխիր:

«Երթանք 'ի վեր դէպ Ամբերդ,
«էլ չը գնանք Ալաշկերտ,


«Ծափենք, պարենք քէյֆ անենք,
«Կըլէկչութիւնն ի՞նչ կանենք:»

Մենք հասանք մեր մուրազին,
Ծեծ շատ կերաւ մըղղըսին,
Տասսը ուստին մի աշկերտ,
Ե՞րբ կը հասնեն Ալաշկերտ:

Քիչ բան գիտես՝ լաւ գիտես,
Շատ գիտես՝ հէշ չը գիտես,
Թէ ծառայ ես երկտէրանց,
Չես ունենալ հագուստ և հաց:

Ոսկեեիշ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՇԱՀՐԻՄԱՆԵԱՆ

Բիւրական ամարանոցում:



Ճ Ա Մ Բ Ո Ր Դ Ն Ե Ր

(Աէօնիդ Անդրէեից)

I

Ոչ մի բան ինձ այնքան անհանդստութիւն չէ պատճառում և դժւար լուծելի հարց չէ թւում, որքան՝ գնացքի մէջ քնելու հարցը: Հէնց որ տեղ եմ բռնում, իսկոյն սկսում եմ՝ հարեաններիս ուսումնասիրել, — արդեօք «կթալանի՞ թէ ոչ»:

Եւ զգում եմ որ ինքս էլ նման ուսումնասիրութեան եմ ենթարկւում:

Եւ որ տարօրինակ երևոյթ է, որը ես շարունակ նկատել եմ գընացքներում, — բոլոր մարդկային դէմքերի այդ արտայայտութիւնը՝ (կթալանի թէ ոչ) ներկայացնում է մի կատարեալ հանելուկ, — դէմքից կարելի է գուշակել բարի մարդ է նա թէ չար, խելօք է թէ յիմար, բայց որոշել թէ նա կգողանայ թէ ոչ — անկարելի է:

Երկար փորձերից յետոյ ես եկել եմ այն եզրակացութեան, որ այդ հարցում պէտք է առաջնորդել ուրիշ նշաններով, — դիտել՝ դիմացինդ կամ հարեանդ ժամացոյց ունի՞ թէ ոչ:

Թէ ինչո՞ւ գողն անպատճառ ժամացոյց չի ունենալ, ես չգիտնմ, բայց ժամացոյց ունենալը մի տեսակ հաւատ է ներշնչում դէպի մարդը:

Նա հարեանդ խաղում է իր ժամացոյցի շղթայի հետ. դուք նայում էք ձերինին և այդ արդէն բաւական է, որ ձեր մէջ լուռ և անխօս կերպով կապւի ներքին մի հանգստացուցիչ միութիւն, հիմնւած ձեր դէպի մէկը միւսդ տածած հաւատի և դէպի շրջապատն ունեցած կասկածի վրայ:

Հարցի այդպիսի բարեյաջող լուծումը, յամենայն դէպս քեզ համոզել չէ կարողանում, որ դու կարող ես քնել անվտանգ:

Բոլոր մարդկանց ուսումնասիրել չի կարելի, իսկ գնացքով մի ասես չէ գնում:

Այդ պատճառով էլ ես վճռեցի ամբողջ դիշերը չքնել, բայց երբ համոզեցի, որ միևնոյն է, քունս տանում է և ես ննջում եմ արդէն, ստիպւած եղայ ակամայ մտածել ուրիշ հնարքներ:

Այնուհետև ես վերցրի վրայիցս ինչ որ կարող էի և ինչ որ կարելի էր, դարսեցի գլխիս տակ:

Ու գլխիս տակ փառաւորապէս կազմեց մի անբողջ Մօմբլան կամ Չեմբօրագօն¹⁾

Բայց երբ մի անգամ իմ գլխիս տակից գողացան փողամանս, իսկ հարևանիս էլ գլխարկը, ես հաւատա կորցրի և ինքնասպաշտպանութեան այդ եղանակի վերաբերմամբ էլ:

Չկայ մարդուս համար աւելի ցաւալի դրութիւն և անօգնական կացութիւն, քան այն, երբ ձմեռ ժամանակ գողանում են նրա գլխարկը: Օրինակ՝ հարևանս, որի գլխարկը գողացել էին, փորձեց գլուխը հանել գնացքի պատուհանից, բայց գլխարկ չուեննալը արգելք եղաւ դրան:

Նա թէկուզ ամենահին գլխարկի համար պատրաստ էր առաջարկելու ամենաթանգ գինը, բայց սրտեցից, որովհետև մեզանից իւրաքանչիւրը ունէր միայն մի գլխարկ, և ոչ ոք չէր մտածել մի աւելնորդն էլ վերցնել իրեն հետ:

Նա փորձեց մուշտակը պցել գլխին, բայց այդ էլ շատ ծիծաղելի եղաւ, կարծես հասարակական կարգ խանգարելու մի ակնարկ լինէր այդ:

Բոլորս ամեն կերպ աշխատում էինք օգնել խեղճին:

Ես խորհուրդ տւի գլխին դնել քթոցը, բայց նա ասաց, որ իր այդ «գլխարկով» ոչ մի կառապան չի համաձայնել իրան կառք հրամցնել, իսկ եթէ նոյնիսկ կառապանն ընդունի, միևնոյն է տանը չէին ընդունիլ:

Դժւարին կացութիւնը մօտաւորապէս թեթեւացաւ նրանով, որ նա իր գլուխը կապեց ձեռքի թաշկինակով: Եւ որովհետև նա մեծ միրուք ունէր, ուստի միրուքը փաթաթած գլխի հետ, տարօրինակ տպաւորութիւն էր թողնում:

— Դուք կարծում էք, որ ձեզ այդպէս ձեր տանը կընդունեն—հարցրի ես:

— Կփորձեմ. — մտախոհ պատասխանեց նա:

Այդ ժամանակեանից սկսած ես գնացքում քնում եմ այսպէս. բոլոր թանկագին իրերս լցնում եմ անդրավարտիկիս գրպանը, ձեռքերս կոխում եմ այնտեղ և չեմ հանում մինչև առաւօտ: Գլխարկս այնքան եմ իջեցնում, համարեա ծածկում եմ ամբողջ երեսս, որ կարելի լինի հեշտութեամբ ատամնհրով բռնել այն: Այդ դրութեան մէջ շուռ գալ անկարելի է, իսկ քրնել կարելի է՝ մէջքի կամ փորի վրայ:

Բայց յամենայն դէպս աներկիւղ ես:

II

Մտաբերում եմ մի շատ տխուր դէպք:

Մեր գնացքը նոր դուրս եկած լինելով կայարանից, մենք դեռ չէինք կարողացել ուսումնասիրել միմեանց, երբ մեզ մօտ մտաւ աւագ կօնսրօլը

¹⁾ Սարեր են:

ժանդարմի ուղեկցութեամբ և ասաց.

— Պարոնայք, զգոյշ եղէք այս գնացքով զնում է մի ճարպիկ գրպանահատ, լնւ նայեցէք ձեր իրերին:

— Իսկ որոնք են նրան ճանաչելու նշանները հարցրինք մենք:

— Նա բլօնդին է, միջահասակ, — ասաց ժանդարմը:

— Ի՞նչ էք ասում, նա կատարեալ բրիւնէտ է՝ և կարճահասակ — հակաճառեց աւագը:

Նրանք վիճելով անցան միւս ճամբորդներին նոյնպէս զգուշացնելու:

Երբ նրանց գնալուց յետոյ ես նայեցի հարևանիս վրայ՝ քիչ մնաց որ «կարաուլ» գողայի, որովհետև նա բլօնդին էր և միջահասակ ու ճարպիկ գրպանահատի դէմքի արտայայտութիւն ունէր:

Բայց նա կանխեց ինձ:

— Դուք բոլորովին երիտասարդ էք, — ասաց նա:

— Այո՛, ես երիտասարդ եմ:

— Եւ բրիւնէտ:

— Պարոն, դրանով ինչ էք ուզում ասել, — բղաւեցի ես:

— Ոչինչ!

Եւ մի կողմ քաշւեց: Ըստ երևոյթին նա համարձակել էր լրբօրէն ինձ գրպանահատի տեղը դնելու:

Բայց աւելի սարսափելին այն էր, որ մնացած հարևաններս էլ, ինչպէս երևում էր, նոյն կարծիքին էին իմ մասին:

Եւ երբ իմ և հարևաններիս մէկն ու մէկի հայեացքները հանդիպում էին միմեանց ես այնտեղ պարզ կարդում էի.

«Ճանաչում եմ քեզ, այնպիսի մի գրպանահատ ես, որ նմանդ չկայ»:

Իսկ եթէ նրանց մէկն ու մէկի դէմքին ինքդ նայէիր, կհամոզւէիր որ իրենք հէնց տեղն ու տեղը գրպանահատների են, նամանաւանդ ձախ կողմումս նստած բլօնդինը և նրա միւս կողմում նստած բրիւնէտը...

Մինչև առաւօտ մենք նստեցինք առանց քնելու, և միշտ մէկ մէկու վրայ լարւած նայելով: Եւ երբ մեզնից մէկը յանկարծ տեղիցը քիչ շարժւեց, բոլորս միաձայն սարսափով գողացինք:

— Կարանուլ...

Եւ բոլորիցս աւելի պինդ գողաց նա, որը տեղից շարժւեց առաջինը:

Թարգ. ԿԸԼԼԱՆ ՅԱԿՈՎԲ



ՈՎ Է ՄԵՂԱԽՈՐ

(Մի Trio-ի կեանքից կենսագրական ակնարկ)

I

ՆԱ: Մի 50 տարեկան, անդամներից շատերը կեղծ, գլուխը կատարեալ անմաղ, որպէս սառուցեալ սպիտակ մի տարածութիւն, որը լաւ կյարմարի ձմեռ ժամանակ երեխաների սահնակ բանեցնելու համար, դէմքը կնճիռներով պատած, ու այլեւ «թարմ» կանանց շրջանում առաջայ «յաջողութիւնը» կորցրած, «զգւելով» ամուրի կեանքից, — յանկարծ վճռեց ամուսնանալ... այնչէլ ջահելի վրայ... Բայց որովհետեւ կուշտ փորով ջահելը հազիւ թէ համաձայնէր նրա «կեանքի ընկերը» դառնալու (уже такковы наши нравы), ուստի մեր հերոսը իր հայացքը դարձրեց դէպի քաղաքի անհրապոյր մասերը, ուր քաղցից բռնւած և мода-ի համար ամեն կոմպրոմիսների պատրաստ էակների մէջ յաջողութեան աւելի մեծ շանսեր ունէր: Սակայն այստեղ էլ, (финаско-կրելով, (զարմանալի են այդ քաղցածները, երբէք իրանց «օգուտը» չեն հասկանում...) — դիմեց քաղաքի անհրապոյր մասի երկրորդ դասակարգին:

Կարճ ժամանակից յետոյ ողջ քաղաքն իմացաւ, որ մեր հերոսը «մի մեծ կարօտ ընտանիք սովից աղատելու համար», ամուսնացել է անհրապոյր թաղի մի աղքատ ընտանիքի ամենափոքրիկ (19 տ.) և ամենազեղեցիկ աղջկայ հետ:

Եւ այդ լուրը ճիշտ էր:

II

Նէ: Ջահել էր (ինչպէս ասացի 19 տար.) օր օրի վրայ նէրա նիհարող դէմքից մայրիկը վախենալով, բժիշկ կանչեց աղջկան քննելու, բժիշկը գլուխը տաւ, որ աղջիկը զուգւելու և դարդարւելու ցաւով է բռնւած: Երբ այդ բանն իմացաւ մայրն, շատ խորհելուց եկաւ այն եզրակացութեան, որ իր

աղջկան մահից ազատելու և նամանավանդ—իրանց էլ մի «լաւ օր» ըստեղծելու համար. միակ միջոցն այդ՝ իր աղջկան, մի որևէ հարուստի տալն է: Դորա հետ համաձայնեց և աղջկայ մեծ քոյրը, որը ՅՅՅՅ-ի մօտենալու պատճառով, իր համար նոր հագուստի հոգսը արդէն իրեն շատ էր տանջում:

Բայց... բայց որովհետև ջահէլ և առհասարակ «խելքը» գլխին հարուստի հայացքը իրենցից միշտ խուսափում էր, ուստի նրանք վճռեցին իրենց աղջըկանը տալ «անխելքին» և պառաւին:

Եւ տւին մեր հերոսին:

III


Նիհ: Մի ջահէլ, «իր գլուխը պահող», գեղեցիկ դէմքով և ճարտար լեզուով մի երիտասարդ էր: Այս ընտանիքի հետ ծանօթանալուց՝ սկսեց уеилепно-ухаживать անել: Ժամերով ծերունի ամուսնու բացակայութեան ժամանակ նա ջահէլ տանտիկնոջը ծերութեան, երիտասարդութեան, սիրոյ և «նման» հարցերի մասին դասախօսութիւններ էր կարդում, չմոռանալով ի հարկէ, հայացքներով ևս «խօսելուց»:

Նրանք. (այսինքն նէ և նիւ) մտերմացան... մտերմացան այնքան, որ մեր հերոսը, օրերի մի օրը, գիշերւայ կիսին, երբ ժողովարանում խըմած և թղթախաղում տանուլ տւած, շուտ վերադարձաւ տուն, պարզ կերպով լսեց, թէ ինչպէս իրանց черны́й ход-ի դուռը շտապ-շտապ բացւեց և սանդուխքների վրայ լսեցին արագ-արագ իջնող քայլեր...

Նա, իբրև опытный, իսկոյն հասկացաւ թէ «բանը ինչուին է», ուստի առաջ չգնաց, հէնց մուտքի շէմքում նստեց յատակի վրայ, թինկն ընկաւ աջ կողքին, գլուխը հէնց արմունկին և Դեօգէնէսի поза-ընդունելով սկսեց փիլիսոփայել:

— Կինը աշխարհասկզբից չարիք է մարդկութեան համար և ժամանակակից երիտասարդութիւնը այդ չարիքի պտուղը, դրա համար էլ,— եզրափակեց նա, օղուց ծանրացած գլուխը յատակին դնելով— ընտանեկան կեանքը լի է դառնութիւններով և հիասթափութիւններով... ու քնեց:

ՅԱԿ. ՏԷՐՈՒՆԻ



ՈՎ ԻՆՉՊԷՍ Է ԳՈՎԱՍՍԱՆՈՒՄ ԻՐ ՀՈՄԱՆՈՒՆ

Գրականագետը

Երեսիդ ֆօնը մաքուր թղթի պէս,
Աչք ու ունքդ սև, թանաքի նման
Շարժւածքդ սահուն թեթև իմ գրչէս,
Ժպիտդ հոգուս թռիչքն անսահման:

Դու իմ մուսան ես, հերոսն երգերիս,
Կենսաբայր Աստուածն իմ բանաստեղծիս.
Լեզուդ խրախոյս, աղբիւրն հանգերիս,
Հանճարեղ շարւածքն, բոլոր վանկերիս:

Ես քեզ կգգւեմ, ինչպէս իմ գրած,
Նորաւարտ երկը որ դեռ չէ տպւած,
Եւ թանգ ես ինձի այն ողջ գումարից,
Որ պիտ ստանամ տպւած գրքերից:

Փաստաբանը

Գիշեր ու ցերեկ, քեզ միշտ փնտռում եմ,
Ինչպէս օրէնքի մի պունկտը կորցրած
Եւ քեզի համար կեանքս մաշում եմ,
Ինչպէս մաշում են գրքերս օրինաց:

Քեզ սպասում եմ այնպէս կարօտով
Ինչպէս կսպասեմ հարուստ կլիէնտի,

Ախ քո վարմունքդ ոչ մի յօդւածով
Արդարացնելու հնար չի լինի:

Դէմքդ մթնել ես, ինչպէս դատախագ,
Կամ թէ անողոք նախագահի պէս,
Նայում ես ինձի այնպէս զայրացած,
Ինչպէս մի դժգոհ իմ վարած գործէս:

Օ՛ ես չեմ կարող այլ ևս տանել,
Կամ դատարանում այսուհետև ճանել
Թող բանդ, կախաղան վճիռ ստանան,
Ովքեր այսուհետև, միշտ ինձ մօտ կգան:

Նկարիչը

Օ՛, դու գունատես ներկերիս նման
Վշտից չորացել ինչպէս վրձինս,
Եւ վառ այտերըդ խոնացած քաթան
Կարծես անյաջող քաշած նկարս:

Թէ ինձ մօտ գայիր, գէթ երազով էլ,
Ես կդառնայի մի Ռափայէլ.
Քեզնից կստեղծեմ մի նոր «մադօննա»
Որ և կդառնայ իմ Աստուածը նա:

Հակառակ դէպքում ես կկատաղեմ,
Էլ չեմ նայի թէ վրձինս ուր թաթխեմ
Կապոյտի տեղակ կվերցնեմ դեղին,
Կարմրի փոխանակ ոյժ կտամ սևին:

Քաթանը փթած իսկ ներկերն անիւղ
Կառնեմ կկանգնեմ անվախ աներկիւղ
Մալեարի նման փուզին կտամ ոյժ,
Եւ կաղաւաղեմ դէմքդ ուխտադրուժ:

Բժիշկը

Սիրոյդ տանջանքից լուսնոտի նման
Ես թափառում եմ ամբողջ գիշերներ,

Եւ տիֆով բռնւած հիւանդի նման,
Քեզ եմ զառանցում անվերջ գովեսաներ:

Երբ կարինետում իմ մենակ ժամին,
Քննում եմ առողջ մերկացած մի կին,
Ախ այդ մառմառեայ կուրծքի հայելում:
Մտքով վերացած ես քեզ եմ տեսնում:

Օ, ես քննել եմ որքան գեղանի
Թիկունք ու մէջքեր կանանց սեռի մէջ,
Կուսական կուրծքեր, ազդրեր հոլանի,
Բայց մի անգամ գէթ չեմ տեսել քեզ պէս:

Օ, քո հայացքդ նշտարի նման,
Ենթարկում է ինձ անդամահատութեան,
Սիրոյդ մօրֆիով հոգիս թմրեցրած,
Չեմ զգում երբէք ցաւը հոգեհան:

Եւ դու դժբաղդիս մի օր կտեսնես,
Հիւանդանոցում թոքախտով պառկած.
Այնուհետ ինչքան կօնսիլիում կազմես,
Դարձեալ կտեսնես ինձ դիակ դարցած:

Ինձեանք տեխնոլոգը

Սիրուցդ մղւած ինչպէս մի մատօր,
Ես գիշեր ցերեկ դադարում չունիմ,
Ու լուսամուտիդ մօտից ամեն օր,
Լօկօմօտի պէս գնում գալիս եմ:

Այնքան խոր է, մութ, հոգուդ գաղտնիքը,
Ինչպէս նորագիւտ մի բարդ մեքենայ,
Գտնել բանալին, գիտնալ քո միտքը,
Որքան տանջւեցի, բայց չկարեցայ:

Մի դատապարտիր սիրտս ժանգոտման,
Ինչպէս մի երկաթ խոնաւ անկիւնի,

Դարձիր անպայման մաքուր իւղը այն
Որ ինձ փայլ կտայ ինչպէս հայելի:

Օ դու իմ կամքն ես և իմ տորմուզը,
Ես քեզնով լարւած մի մեքենայ եմ,
Դու ես այն շոգին, ինձ վարող ոյժը,
Որով կեանք առած՝ ես միշտ շարժւում եմ:

Իսկ եթէ մի օր դու կմտածես,
Իմ անհուն սէրը մէկին ծախելու,
Գիտցիր, այդպիսով դու կպատրաստես
Մեծ կրուշենիե մեր գլխին գալու:

Ահռելի թափով ես կ'կատաղեմ,
Ինչպէս մոլեգին մի երկաթուղու,
Բելսից դուրս գալով, դէպ մահ կվազեմ
Արնոտ խորտակում, մահ ստեղծելու:

Բազազը

Այ ու դանաւուզ, շիլէյ լաջվարդի
Պիւլը ու մախմառ, բարխատ ալ վարդի,
Քուլա եմ արել քեզ իմ անուշ եար,
Դրանցից բացի էլ ի՞նչ կայ քեզ յարմար:

Ես քեզ սիրում եմ ինչպէս փողերի,
Հարուստ քսակը լի ոսկով լցրած,
Կամ իմ խանութիս նաղդ ապրանքների
Հաւ տեսակները դարակում դարսած:

Նաղդ մուշտարու պէս առաւօտն արի,
Խօշով ու բէշով առուտուր անենք,
Գիշերով սվթէն համբոյրդ բարի
Թուղթ ու բարաթով մեր ուխտը կապենք:

Բայց, դ՛ու, անաստւած, դու ինձ տանջում ես,
Մուրհակի նման բանկումը դրւած,

Ոչ յոյս ես տալիս ու ոչ խղճում ես,
Չորից մերժում ես՝ մի խօսքի կանգնած:

Բայց գիտեմ, մի օր ես յուսահատուած
Պիտ փախչեմ ձեռքէդ ինչպէս կոտոր ընկած,
Փնտորի աշնուհետ ուր որ կուգես ինձ
Բայց չես ստանալ, հաւատու՛ ոչինչ:


Ոսկերիչք

Ոսկի ես թամամ հստակ պրօբի,
Էսպէս անթիկա եարը ո՞վ ունի,
Բրլիանտից մաքուր աչքերիդ ջուրը
Ինձնում վառել ա կրակ ու հուրը:

Վախտ արծաթի պէս անուշ խնդում ես,
Վախտ էլ պղնձից դէմքդ թնդում ես,
Մօտդ եմ գալիս մռայլ ես հագնում
Սևատի նման սաստիկ մթնում ես:

Քուրէն ես դրել սիրտս վառում ես,
Արճիճի նման կեանքս հալում ես,
Անխիղճ անասուած, էլ ի՞նչ ես ուղում
Որ սալին դրած ինձի հարում ես:

Մ. Տ.-Յ.



Ք Ա Օ Ս

(1. Անդրէկից)

(Նւէր Հայ ազգին, թարգմանչից)

Մի անգամ մայրաքաղաքի մեծ թատրոններից մէկում՝ ականատես եղայ մի այսպիսի դէպքի:

Մէկը, հանդիսականներից, ներկայացման ժամանակ—մի ձայն հանեց. չիմացայ,—ծափահարեց, թէ՛ շւացրեց.—միայն թէ լոռութիւնը խանգարուեց:

—Սուս!—բղաւեց մէկը նրա վրայ և աւելացրեց—սատանան գիտէ թէ ինչ է, չեն թողնում որ լսենք!...

—Դուք էլ դէ լռեցէք,—ովէ... ձայնեց երրորդը՝ երկրորդի վրայ և վրդովւած աւելացրեց.

—Քանի որ իրանց ըստ կարգին պահել չեն կարողանում, լաւ կանէին որ տանը նստէին...:

—Ի՛նչ խայտառակութիւն է—գոռաց 4-դը 3-դի վրայ.— ոչինչ չէ լսում!

—Լռեցէք այդտեղ է... ձայնեց 10-դը:

—Դէ վերջապէս սուս կացէք!—պաղատեց 50-դը:

—Սուս, կամաց, լռեցէք!—գոչում էին ամէն կողմից, մինչև որ ողջ թատրոնը, հաշուելով և սկզբից կարգ խանգարողին, դարձաւ ամբողջ ոյժով լոռութիւն պահանջող մի մեծ կոկորդ:

Բոլորն էլ լոռութիւն էին պահանջում և հէնց այդ պատճառով էլ բոլորը գոռում էին:

Եւ շատ տարօրինակ էր. լոռութիւնը ոչ մի կերպ չէր ստացւում:

Ընդհակառակը, որքան որ նրանք լոռութիւն էին պահանջում, այնքան նա չէր ստացւում, և երբ ես միացնելով իմ ձայնը ընդհանուրին ըսկըսեցի համոզել, թէ—կամաց լռեցէք:

Տեսայ, որ ոչ ոք ինձ չէ լսում, այլ ընդհակառակը՝ հէնց ինձ վրայ գոռում էին.

—կամաց, դէ գոնէ դուք լռեցէք, տօ, թրքական զուռնա!...

ՅԻՄԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Իւկասն Ակսօի հեքիաթներէց)

Մի փոքրիկ քաղաքում՝ հրապարակի վրայ, բատուշի և եկեղեցու մօտերքը, հաւաքել էին չարչարելու զանազան գործիքներ. պարաններ, թաւակներ, մեխերով ցցած աթոռներ, տաքացրած երկաթներ և այլն այդպիսի բաներ, որոնք կարող են մարդուն անասելի ցաւ պատճառել... Հրապարակի մէջ տեղ վառուում էր խարոյկը, որի վրայ պէտք է այրէին հերետիկոսին, և թէ նա խոստովանուէր որ ինքը զառանցում է, չհրաժարուէր իր սուտ մարդարէութիւնից և չհպատակուէր միակ ազատիչ՝ կաթողիկ եկեղեցու հրամաններին:

Հերետիկոսին ձգեցին սանդուխտների վրայ և ոտքերին կախեցին ծունր արձիճէ քարեր: Բայց նա պնդում էր միշտ հետևեալը.

— Ես չեմ խոստովանուում... ես չեմ հրաժարուում... և չեմ հպատակուում...

Նրան նստեցնում են մեխապատ աթոռի վրայ, բայց նա առաջւայ նրման միևնոյն խօսքերն է արտասանում իր դահիճների և հասարակութեան առաջ, որոնք նայում են նրան հրապարակից, փողոցներից, պատշգամբներից և տների լուսամուտներից:

Նրա մարմինը այրում են տաքացրած երկաթներով... բայց բոլորը իզուր: Նա չի խոստովանում, չի հրաժարուում, չի հպատակուում:

Մեծ ինկվիզիտոր կարդինալը, որ եկել էր Հռոմից պապի հրամանով հերետիկոսին ոչնչացնելու, այժմս չգիտէր թէ ինչ անէր այս մարդու հետ: Սոստովանանքը, հրաժարանքը, ինքնակամ հպատակութիւնը կարդինալի համար աւելի կարևոր էին, քան առևտօ-դաճէն, որին դիմում են, առհասարակ, ինչպէս ամենավերջին միջոցին, որի հետ մինչև անգամ բարձր հոգևորականութիւնը չէր հաշտուում:

Կարդինալը կանչում է իր ընկերներին բատուշի պատշգամբ, որտեղ նա նստած է ծիրանագոյն ծածկոցով, և հրամայում է խոստանալ մեղադրեալին ազատութիւն և օրհնանք իր ամբողջ ցեղին և ամբողջ քաղաքին: Բայց չարչարող հերետիկոսը արհամարանքով է ընդունում այս

լուրը:

Մեծ ինկվիզիտորի համբերութիւնը վերջանում է: Նա բարկացած հըրամայում է դահճին կտրել հերետիկոսի ձախ ձեռքը: Բայց հերետիկոսը առաջարկում է կտրել նաև աջը:

Եւ որքան ծանր են նրա շարժարանքները, որքան սարսափելի՝ նրա տանջանքները, նոյնքան նա բարձր է գոռում և աւելի հեռու է լսում նրա ձայնը: Նրան լսում են և՛ հրապարակի վրայ և՛ փողոցներում և՛ տներում և մինչև անգամ քաղաքի պարիսպներից դուրս:

Կարդինալի ճակատի վրայ նշմարւում են քրտինքի կաթիլներ: Նրան հրամայել են ամենայն կերպ ստանալ խոստովանանք, հրաժարումն և ինքնակամ հպատակութիւն, ապա թէ ոչ ամբողջ կարդինալների միաբանութեան և սուրբ հօր ատելութեան առարկայ կդառնայ:

Որտեղից ունի այդքան վիթխարի կամքի ոյժ.—հարցնում է, դարմացած կարդինալը, ինքն իրեն և շրջապատող հասարակութեանը:

Բայց ոչ ոք չէ կարողանում բացատրել: Մինչև այժմս, բոլորը որոնք տանջանքների են ենթարկւել, հրաժարւել են բացի սրանից:

Այն ժամանակ առաջ է գալիս յիմար ծաղրածուն, որին միշտ հետն է ման ածում կարդինալը ճանապարհորդութեան ժամանակ և խօսելու իրաւունք է խնդրում:

—Սօսիր.—հրամայում է մեծ ինկվիզիտորը:

—Սցկիր նրա կոկորդը, տէր իմ,—ասաց յիմարը,—աղաղակը մեղմացընում է նրա տանջանքները, իսկ երբ ձայն չի հանում՝ ցաւը կրկնապատկւում է:

—Ահա յիմարի խորհուրդը,—ասում է մեծ ինկվիզիտորը.—եթէ մենք նրան ստիպենք լռել, այն ժամանակ նա ի՞նչպէս կարող է խոստովանել որ դառանցում է, ի՞նչպէս կարող է հրաժարւել իր քարոզներից:

— Լռութիւնը — համաձայնութեան նշան է...

—Այո, դու խելօք ես, յիմար: Դու սրամիտ ես, ծաղրածու... ուրախ բացականչում է մեծ ինկվիզիտորը:

Եւ նա իսկոյն հրամայում է դահճին անել այն, ինչ որ ասաց յիմարը:

Իսկոյն ևեթ հերետիկոսի բերանն են խցում թաշկինակը: Յետոյ նըրան նորից ձգում են սանդուխքի վրայ և ոտքերին կապում են արճիճէ քարեր: Նա լուռ է: Նրա մարմինը այրում են տաքացրած երկաթով: Նա կրկին լուռ է:

Իսկ ժողովուրդը չլսելով այլևս նրա ձայնը, սկսում է ինքն աղաղակել, և՛ հրապարակից, և՛ փողոցներից, և՛ լուսամուտներից:

—Մի խոստովանւիր, մի հրաժարւիր, մի հպատակւիր...

Եւ նա չհպատակւեց: Թէպէտ նրան արգելել էին ձայն հանել, բայց հասարակութեան ձայնը նրա ցաւը տասնապատիկ թեթևացնում էր և տալիս էր նրան կամքի ոյժ: Եւ նա տարաւ բոլոր տանջանքները, մինչև որ

հողին աւանդեց:

Եւ այդ ժամին հրապարակից քաղաքից, և լուսամուտներից հնչեց մի նոր ձայն.

—Նա չխոստովանեց, նա չհրաժարեց, նա չհպատակեց... մեծ ինկվիզիտորը փետրում էր իր մազերը: Իսկ յիմարը ծիծաղում էր ինքն իրան, չէ՞ որ նրա խորհուրդնէր ամբողջ հասարակութեան աղմուկի պատճառը, այսինքն այն, որ ստիպեցին մի մարդուն լռել՝ իսկ հազարաւորին խօսիլ:

ՅՈՎ. ԶԱԼԵԱՆ



ԾԻԾԱՂԻ ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐԸ

Որքան ձայնաւոր տառ, այնքան էլ ծիծաղելու կերպեր կան: Թւենք.

«Ա»-ով ծիծաղողները անկեղծ են լինում, փոփոխամիտ և աղմուկ սիրող:

«Է»-ով ծիծաղը յատուկ է մեղկ ու մելամաղձոտ խառնւածքի:

«Օ»-ով ծիծաղը վեհանձնութիւն է ցոյց տալիս և յանդգնութիւն շարժումների մէջ: Սակայն պէտք է զգուշանալ երբ «օ»-ով ծիծաղում է տկար սեռը:

«Ի»-ով ծիծաղում են երեխաներն ու միամիտները, «ի»-ն ցոյց է տալիս ծառայելու տրամադիր մի անձն, անձնէր, բայց երկշոտ և անստոյգ: Խարտեաշները «ի»-ով են ծիծաղում, ինչ որ չէ ապացուցանում, թէ ամեն խարտեաշ միամիտ է:

Ոոյս տէք համաճարակի պէս «իւ»-ով ծիծաղողներից: Գծուծներ են նրանք, կեղծաւորներ և մարդատեացներ:

1907 թ. Ամենուն տարեցոյցը

ԻՄ ԼԵԶԻԱԳԷՏ ՎԱՐՍԱՎԵՐԸ

(Սամուէլ Սիւլիվան Պօկս'-ից)

Առաջին ծանօթութիւնս ածիլու հետ եղաւ Պրինկեպօ քաղաքի վարսավերի մօտ:

Վարսավերների մեծամասնութիւնը սիրում են լեզաբանութիւն:

Վարսավերը, որի մասին ես այժմս պէտք է խօսեմ կամ յոյն էր, կամ մալդիացի, կամ սլավոնացի, կամ բուլղարացի կամ վերջապէս մօնտենեզրցի (Черногорія). Առաջին անգամից անկարելի էր որոշել, թէ ո՞րն է նրա մայրենի լեզուն: Նա ազատ խօսում էր ֆրանսերէն, շատ քիչ գործածում՝ անգլիերէն, բաւականաչափ ծանօթ էր իտալերէնի հետ, ինչպէս շատերը մեր երկրում: Մի փոքր էլի սպաներէն գիտէր, որովհետեւ այդ լեզուն շատ նման է իտալերէնին: Այդպիսի լեզագիտութիւնն ամբողջովին սարսափեցնում է ինձ, նամանաւանդ եթէ գործածւում է ածիլելու կամ խուզելու ժամանակ:

Որովհետեւ ինձ այդ կղզու վրայ ոչ ոք չէր ճանաչում և միևնոյն ժամանակ իմ դէմքիցս դժւար է իմանալ իմ ով լինելս, ուստի և դրա համար հարկաւոր էր շատ ժամանակ որ ինձ ճանաչէր:

Իսկ ինձ մնում էր զինուել ամեն տեսակ լեզուների դրական և բացասական մասնիկներով: Այդպիսով ես կարող էի չդուրս գալ քաղաքավարութեան սահմաններից և կապահովէի իմ դէմքս արիւնահոսութիւնից: Իմ առաջին խօսակցութիւնը նրա հետ, շատ լաւ պարզեց իմ առաջ Շէքսպիրի «Սելիլիայի վարսավերի» շատախօսութիւնը:

Այս խօսակցութիւնը մօտաւորապէս հետեւեալն էր:

Վարսավեր. — Շատ ժամանակ է՞ ինչ որ այստեղ էք:

Ես պատասխանում եմ չեխերէն.

— Նէ (ոչ):

Նա հասկացաւ:

— Կամենում էք այստեղ բժշկուել:

Ես պատասխանում եմ որոշ և բացասական կերպով դանիերէն.

— Եա, նէի, մինհէրրէ (ոչ):

Այս նրան կաշկանդում է:

— Երևի զինւորութեան համար:

Ես պատասխանում եմ գերմաներէն.

— Նայն, նայն, հէրր (ոչ):

— Ուրեմն նաւի վրայ:

Աչքի առաջ ունենալով, որ Հունգարիան ցամաքային երկիր է, և մեր երկրի նման նաւեր չունի, ես պատասխանում եմ Հունգարերէն.

— Իժեն (այո):

— Ձեր նաւը կոնստանդնուպոլսումն է:

Յիշելով, որ ծովի վրայ հռչակել է իտալացի Քրիստփոր Կօլումբոսը, ես ասացի իտալերէն.

— Սի, սինեօրէ (այո):

— Դուք կամենում էք ձեր նաւը Պրինկիպօ բերել:

Այ քեզ դէպք, ես պատասխանում եմ նոր յոյնարէնով

— Նէ վեվայոս (այո):

Ջարմացած է:

Երևի նրա մայրենի լեզուն է: Ով զի՞տէ, երևի նրա հայրը յոյն է եղել: Նա ինձ հարցնում է Ֆրանսերէն.

— Ձեր նաւը Աթէնք կմտնի:

Ես պատասխանում եմ լեհերէն.

— Տակ (այո):

Եւ մի քանի բոպէից յետոյ աւելացնում եմ Ֆրանսերէն.

— Պը տէտըր (գուցէ):

— Իսկ Եզիպտոս կերթա՞ք:

— Սի, սինեօր (այո):

Սա Փորտուգալերէն է: Այն ձևը, որով ես տալիս եմ նրան այս պատասխանները, քաջալերում է նրան և նա հարցնում է, արդե՞ք ես եղել եմ Ալբանիայում: Ադրիատիկական ծովափեայ երկիրների ոչ մի լեզուի հետ ծանօթ չեմ: Ուղիղ է, իմ ծառայ Պետրօն դալմատացի է, բայց նա հետս չէ, և ես պատասխանում եմ ռուսերէն.

— Դա (այո):

Որովհետև այդ լեզուն ունի որոշ կապ սլավոնական լեզուների հետ, նա հասկացաւ:

— Դուք երբևիցէ եղե՞լ էք Եզիպտոսում:

Ես մտաբերեցի սօսինին և արմաւենին, հիւսիսային ցուրտը և եզիպտացոց բուրգերը և պատասխանում եմ շվեդերէն.

— Եա (այո):

Եւ աւելացնում եմ բուլղարերէն.

— Գիէ (եղել եմ):

Մի փոքր լռութիւնից յետոյ հարցնում է.

— Դուք եղել էք Բուլմեիլայում, Բօլզարիայում, Սերբիայում, Մօն-

տինէգրօում և Հէրցեգովինայում:

Հասկանալով որ չեմ կարող այդ հարցին ուղիղ պատասխանել, ես ասում եմ բուժիներէն.

—Նա կամմա, բուկկա (ոչ):

—Դուք լաւ ճանապարհորդ էք...

Ես յիշում եմ չինացոց երկիրը և պատասխանում եմ.

—Դըզի (այո):

Աւելի լաւ պարզաբանելու համար ես աւելացնում եմ մի խօսք, որը սովորել եմ Վաշինգտօնում չինաց հիւպատոսից.

—Տային (պարոն):

—Դուք հաւանում էք չինացոց լեզուն:

Ես պատասխանում եմ.

—Պուհ (ոչ):

Այդ միավանկ բառը չի հաւանում նա և հարցնում է հրէերէն, արդեօք ես եղե՞լ եմ Երուսաղէմ: Զգիտենալով հրէերէն ոչ մի բառ, ես պատասխանում եմ արարերէն, նմանցնելով հրէաներէնին.

—Նա ամ (ոչ):

Յիշեցի Ճապոնիան, զինուել եմ ճապոնացոց բառով: Հարցնում է.

—Դուք հաւանո՞ւմ էք Կոնստանդնուպօլիսը...

Ես պատասխանում եմ ճապոնացոց քաղցր հնչիւնով.

—Սամա, սան (այո):

—Քանի՞ տարի է ինչ որ եկել էք Պօլիս:

Պատասխանում եմ անգլերէն.

—Ես եկայ այնտեղ 1896 թւին...

—Մօն սիէն, մօն սիէն, մօն սիէն. (իմ Աստուծ) այդ թւից դուք այնտեղ էի՞ք ապրում:

—Բոկու, մուսիէ (չառէ պարոն):

Նա դեռ չի որոշել իմ ով լինելու: Ես վախենում եմ որ կհարցնէ Ամերիկայի մասին:

—Դուք եղել էք Ամերիկայում:

—Շատ անգամ:

Նա ոչինչ չհասկացաւ, ինչպէս երևաց Ամերիկա երբէք չէր տեսել: Եւ ես հարցնում եմ Քրանսերէն, թէ ո՞ր Ամերիկայի մասին է ասում:

—Հարաւային Ամերիկայի մասին: Իմ կնոջ քեռու տղան այնտեղ է: Հարցնում եմ ես Քրանսերէն.

—Լը նօն դու կուզան դը վօտըր Ֆամմ (ինչպէս է ձեր կնոջ քեռու տղի ազգանունը):


—Պիէր Մօլկա Պարք Միշիպօ Պօուլի, նա էլ ձեզ նման ճանապարհորդ է: Այստեղ նորից սկսւեց հարցերի և պատասխանների մի ամբողջ բառաձգութիւն:

—Մօսիօ, դուք եղել էք Փարիզում:

—Փամէ: (երբէք):

- Գինւայճում...
- Սի, սինեօր (Այո):
- Ախ, երևի դուք անգլիացի էք:
Պատասխանում եմ թուրքերէն.
- Եօկ (ոչ):
- Ֆրանսիացի՞ էք...
- Նոն (ոչ):
- Գերմանացի՞...
- Նայն (ոչ):
- Սլավոնացի՞...
- Նէէ (ոչ):
- Իտալացի՞...
- Նօ, սինեօրէ (ոչ):
- Իսպանացի՞...
- Ո՛չ, պարոն:
- Դէհ, ասէք վերջապէս, որտեղացի՞ էք: Հարցնում է նա ուժասպառ:
- Յիշեցէք այն երկիրը, որտեղ վարսավերը և արքան հաւասար են:
- Ախ, Շվեյցարիան. սապրիստի կօրպօ դի բակկօ (սատանան տանի):
- Ոչ, ես Շվեյցարացի չեմ:
- Բրազիլիացի՞...
- Ժամէ (հրէք):
Այն ձեռ, ինչպէս նա իւղ է քսում բեղերիս ապացուցում է, որ այդ
մարդը չափազանց յուսահատ է:
Հետևեալ անգամ երբ ես նորից հկայ, ստացայ որոշ յարգանք:
Բոլորի ձեռները բարձրանում են, ինչպէս այդ պահանջւում է:
«Սալամ Ալէյքումը»: Բոլորը իջեցնում են իրանց գլխները ամերի-
կայի դեսպանի առաջ, որին արդէն ճանաչել են:

ՅՈՎ. ԶԱԼԵԱՆ



Է Ս Ք Ի Ջ Ն Ե Ր

Վ Ե Ր Ե Ի Ի Ց

I

Մեր բիպլանը կամաց թռիչքով սկսաւ. բարձրանալ դէպի վեր: Նրա հսկայական թևերը տակաւին պտտուում էին դանդաղութեամբ, սակայն այդ դանդաղութիւնն այնքան սարսափելի էր իր արագութեամբ, որ օդի մէջ երբեք չէր թիթեռնիկի թևերի նման:

Երկիրը մեր ոտքերի տակ սկսաւ պտտել և պատուել մեզանից այնպիսի դժարութեամբ, որ ես խղճահարւեցի նրա ողորմելիութեան վրայ. նա ընկնում էր ցած և ասես դժգոհ ատելութեամբ նայում էր մեզ՝ մոնչալով, թէ ի՞նչպէս՝ «այդ ստահակները համարձակուում են կտրտել իրենց ոտքերի կապանքներն ու թռչել դէպի վեր» ..

Իրօք շատ ողորմելի էր նա իր այդ հոգեբանութեամբ:

Տասնեակ հազարաւոր ամբոխը գետնի երեսի վրայ սկսաւ սողալ մըջիւնների նման: Կանայք իրենց շքեղ հագուստների փայլով, լայնեզր բարդ շլեապաներով ու գոյնզգոյն ամպոհանիներով տափակում ու կպչում էին գետնից, և այն փայլը որը ստեղծելու համար նրանք կեանքի գոյութեան կուլի մէջ դիմած պիտի լինէին ամեն տեսակ մեքենայութիւնների ու անբարեխղճութիւնների, — ըստ սկսաւ գետնի վրայ պսպղալ գոյնաւոր բողոճների թևիկների նման:

Իրօք ի՞նչ ողորմելի բաներ էին. նրանք իրենց էութեամբ դարձան կատարեալ մի ոչնչութիւն:

Ես հեռագիտակով նայում եմ ցած: Ահա ամբոխի արանքում

բողէճի նման սողում է այն վաշխառուն, որն իր մեծ քթով և զըզ-
ւելի արտաքինով նայում է մեր ետևից, զարմանքից բացած իր
բերանը:

Ես խղճահարւեցի նրա ոչնչութեան վրայ և եթէ մօտս ունե-
նայի նրա 500 բուբլու չափ պարտքս, կշարտէի իրեն, որպէսզի նա
երեխայի նման լաց չլինէր այդ չնչին առարկայից զրկուելու համար:
Ահա և քաղաքն իր այն բուրգերով ու բազմայարկեան շինութիւն-
ներով, որ ցածում միայն կարող էին իրենց բարձրութիւններով
իշխել գետնին կպած բողոճների վրայ, որոնք և չէին տարբեր-
ւում մրջիւնի բների առաջ կուտակւած անհարդութիւններից:

Վաճառականական քաղաքն իր հսկայական մեծութեամբ, իր
փողոցներով, բնակարաններով, վաճառատներով, իր կեանքի ամ-
բողջ շարժումով ու տազնապով՝ երկրագնդի վրայ սկսաւ նմանւել
մի փոսիկում կսլած մրջիւնի բնավայրի, այնքան խղճուկ ու ողոր-
մելի, որ հէնց ինքս ինձ զգացի մի փոքրիկ ոչնչութիւն, սր ներ-
կայանում եմ մի այդպիսի խոռոչի բնակիչ. թո՛ւհ, ինչ յիմար
բաներ ենք եղած մենք մեր կեանքի գոյութեամբ և մեր գոյու-
թեան կուի ամբողջ տազնապով:

Եւ ես աւելի զայրացայ, երբ նորից երկրագնդի դէմքի վրայ
կարդացի նրա սպառնական հայացքը մեզ ըմբոստ ըստահակներիս
ուղղւած, — սաստիկ զայրացայ իմ գոյութեանս վրայ, թէ ի՞նչ է
նշանակում լինել այդպիսի փոքրիկ քերւածքների կամ խոռոչների
բնակիչ, և նոյնիսկ անխուսափելիութեամբ ենթարկւած այն բնա-
կան ողորմելիութեանը, որ դեռ սպառնում են էլ, թէ «ի՞նչպէս
ենք համարձակւել բաժանւել զրանցից»:

Մենք արդէն գտնւում էինք ծովի բարձրում: Նա մեր ոտքե-
րի տակ ընկնում էր հսկայական անհունութեամբ, մի կասկոյտ
մակերևոյթ, որ իր հայելիով կատաղութեան սոսկալի սպառնալիք
զարձած՝ ներքեից մռնչում էր իր սպանիչ հայածքով, ցած շոր-
թել և կլանել մեզ իր հեղհեղուկ ալիքների մէջ:

Հըմ, այ քեզ զայրոյթ. սա էլ սպառնաց: Թո՛ւհ, ի՞նչ յիմար
կասկերով ենք կաշկանդւած այդ տարերքի հետ:

Մենք սահում ենք դէպի անհունութիւնը: Բարձրանում է
քամի, որը մռնչալով սկսում է մարտնչել մեր բիպլանի հետ:

Սա իրօք ստահակօրէն կուում է նրա հետ և պատռելով նրա
փորը՝ սրնթաց կերպով առաջ է սողում:

Ես սկսայ սոսկալ այդ ճիւղաղից, մարդկութեան հանճարից ծըն-
ւած այդ սարսափից:

Հըմ, մենք հեծել ենք մեր հանճարի ծնունդի վրայ և ճախ-
րում ենք օդի մէջ: Եւ այդ նորածինը իր սոսկալի փոքրութեամբ
սպառնում է յաղթանակել և տիրել ամբողջ բնութեանը:

Մի քանի ժամից յետոյ, երկրագունդը գրեթէ ծածկւեց մշուշի
տակ: Ներքևում ամպերն սկսան կուտակուել, ճայթել, որոտալ եր-
կրագնդի գլխին:

Չգիտեմ ինչո՞ւ ակամայ մի դառն ծիծաղ դուրս թռաւ իմ կո-
կորդից:

Մենք գտնւում էինք մի սոսկալի դատարկութեան մէջ: Հոգե-
կան թոխչքս ու եթերում ապրելու տենչանքն սկսաւ յազենալ իմ
մէջ: Նա հնացաւ, նոյնիսկ սկսաւ հանդէս գալ իր ոչնչութեամբ. ոչ
մի բաւականութիւն այդտեղ:

Ես սկսում եմ կատաղել, զայրանալ իմ ոչնչութեան վրայ, ո-
րովհետև կեանքն այդտեղ դատարկ է և քանի որ իմ տենչը փրնա-
ռում է նորից դէպի նորը, դէպի կեանքը, հետևապէս և կամ պէտք
է աւելի բարձրանալ, կամ նորից ցած իջնել դէպի երկիր:

Իսկ երբ յիշեցի մեր խոռոչները, մարդկային դէմքերը, որոնց
մէջ բնականից աւելի ևս երկար անճոռնիութեամբ պարզւում էր
այն վաշխաուի քիթը՝ զզւեցի իմ գոյութեանս վրայ, թէ ինչպէս
չենք կարողանում բաժանուել նրանից...

Սակայն բիպլանը կանգ առաւ իր ոյժերից բարձր տարածու-
թեան վրայ. որովհետև նրանից աւելի այլ ևս առաջ չէր կարող
գնալ: Մենք սկսանք իջնել:

Անդունդի մշուշն սկսաւ կամաց կամաց նօսրանալ: Թւում էր,
ինձ, որ ես պարտւում եմ, պարտւում...

Մի փոքր ևս, նորից հանդէս եկաւ երկրագունդը իր բոլոր է-
ութեամբ:

Ես զայրոյթով նկատեցի, որ այս անգամ նա մեզ վրայ ծիծա-
ղում է, և գիտէ՞ք ինչ էի կարդում նրա այդ հեզնական ծիծաղի
մէջ.

--Հըմ, ողորմելի, ո՞ւր պիտի երթայիր, իջիր, դու կապւած ես
ինձ հետ, այս խոռոչների, այս մարդկանց հետ:

Եւ երբ բիպլանը հանդարտ կերպով նստաւ գետնի վրայ, և ես
ելայ նրանից, ինձ ճնշեց այն զգացմունքը, որ նոյն տկար և փոք-

րիկ արարած եմ և միայն ճպուռի նման մի թեթև ոստիւն էի
գործել...

ԵՐԿՈՒՄՆ Է՛Լ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ

II

Այդ օրը, չգիտեմ ինչո՞ւ, որոշ գասակարգի կանաց դէմքերի վը-
րայ՝ խորին լըջութիւն էր տիրում: Ես անցնում եմ նրանց խմբակ-
ների մօտից և խիստ զարմանում եմ, այդ ի՞նչպէս է, որ նրանք
այսօր չէն ժպտում իմ երեսին, որոշ նազանքներ անելուց դադա-
րել են և նոյնիսկ նրանց բարևի մէջ մի ինչ որ պաշտօնական ձև-
կայ, մի ձև, որ առհասարակ արւում է երկու ախոյեանների պայ-
քարի մէջ մտնելուց մի քանի րոպէ առաջ:

Ահա և օրիորդ X-ը: Դա նոյնիսկ ժպտում էր և այն ժամա-
նակ, երբ նրա մօտով անցնող ածխավաճառը խանդոտ հայածքներ
է նետում իրեն, և շատ անգամ նա դօռով այդ ժպիտները պա-
հում է իր վարդագոյն պօմադով ներկած շրթունքների մէջ, երբ
նոյնիսկ փողոցում անգամ մարդ չկայ: Բայց դա մի նախապատ-
րաստութիւն է նրա կողմից այն նպատակով, որ կարող է պատ-
ահել մէկն անցնելիս լինի և ինքը չնկատի, սակայն շրթունքները
պէտք է որ պատրաստ լինին միշտ իրենց դերը և կամ աւելի շուտ,
կանացի պաշտօնը կատարելու:

Նա նոյնիսկ չէ ժպտում, մանաւանդ իմ երեսին, որ դար-
ձեալ շինովի ժպիտներովս պակաս տեղ չեմ բռնում այդպիսի նա-
խազգուշական հոգեբանութեան մէջ — այս անգամ սակայն, դէպի
կանանց սեռն ուղղած ձգտումներով:

Ես այլ ևս չկարողացայ համբերել և սովորական ժպիտով բա-
րևելուց յետոյ, հարցրի.

— Ի՞նչ է պատահել:

— Ոչինչ. — ասաց նա գրեթէ թթւած դէմքով, և ես զգացի, որ
այսօր իմ դէմ կանգնած է այն հակառակորդներից մէկը, որ դժ-
գոհ զայրոյթով է լցւած դէպի հակառակ սեռը, որ այնքան էլ հաշտ
աչքով չէ նայում տղամարդկանց գերիշխող առանձնայատկութեան
վրայ:

Եւ երբ նա հեռացաւ, ես նրա հայածքի մէջ կարդացի՝

— «Սպասի՛ր»... սպառնալիքը:

Նրանց խմբակները անցնում են դէպի մեծ հրապարակը և մտնում Սուֆրոթիստիկաների կլուբը:

Պէտք է ասացես տղամարդկանց այն սովորական տիպերից եմ, որ միշտ էլ շրջապատւած են լինում միայն կանանց խմբերով, փողոցում ու բոլոր հանդէսներում եղած ժամանակս աւելի շատ շփւում եմ կանանց շրջաններում և միշտ նրանցով եմ շրջապատւած լինում՝ քան տղամարդկանցով:

Այդ իսկ պատճառով ես հնարաւորութիւն գտայ աննկատելի խառնել նրանց և անյայտանալ կլուբի այն սենեակներից մինում, որի դուռը բացւում էր դէպի դահլիճը:

Այստեղ հաւաքւած էր գեղեցիկ սեռի մի հոծ բազմութիւն, սկսած աղքատ դասակարգից մինչև ամենահարուստը. սակայն բոլորն էլ միևնոյն հոգեբանութեան ենթակայ տարրեր:

Մէջտեղում դրւած էր մի սեղան, իսկ սեղանի վրայ դրւած մի ինչ որ կապոց:

Ամենքը շրջապատել էին սեղանը և ամենքի էլ աչքերը սևեռած էին դէպի այդ կապոցն այնպիսի հայածքով և այնպիսի սրբազան երկիւղածութեամբ, որպէս հրէական ժողովուրդը կարող էր նայել Մովսէսի տապանակ ուխտի վրայ:

Ահա ներս մտաւ տիկին X-ը, կանանց էմանսիպացիայի ամենախոշոր լիդերն ու հերոսուհին:

Նա ոտքից գլուխ հագած էր շանթէքլետը, այնպէս որ այդ նեղ ու թափանցիկ հագուստի մէջ ձգւում էր նրա մարմնի ճկունութիւնը, իսկ ազատ դէկօլտէի տակից հանդէս էր դրւած կանացի դեղեցկութեան ամենաթանկագին և քնքոյշ մասերը...

Յաճախ նա իր նորաձևութիւնները հասցնում էր այնպիսի տարօրինակութիւնների և մօղային սանձարձակութիւնների, որ մարդիք նրան փողոցում պատահելիս զարմանքով, կամ աւելի ճիշտն ասած, մեծ զայրոյթով կանգնում և նայում էին նրա վրայ, մինչև որ նա ծռւում էր փողոցի միւս անկիւնը:

Բայց տիկին X-ը որ տղամարդկանց այդ զայրոյթի մէջ գլտնում էր մի որոշ բաւականութիւն, ոչ թէ զայրանում էր դէպի ինքը շարուած փողոցային կոմպլիմենտներից դեռ գոհ էլ էր, որ կարողանում է իր հերոսութեամբ կատաղեցնել ամբոխին:

Օ՛, նա ատում էր տղամարդկանց ազատութիւնը վրէժխնդրութեան թոյնով լցւած, նա իւր արտասովոր տարազներին և

մօղափոխութիւններին միացնում էր և բնաւորութեան այնպիսի գծեր, որ յատուկ և բնորոշ են միայն տղամարդկանց:

Չէ՞ որ կանանց էմանսիպացիան և իրաւահաւասարութիւնը վաղուց դուրս է հրապարակի վրայ և նրա իդէան արդէն ուժեղ կերպով համակել ու շարժում է կանանց բոլոր դասակարգերին:

Երբ տիկին X-ը ներս մտաւ, բոլորը վեր կացան տեղներից, նրան ընդունեցին բուն ծափահարութիւններով և աղմկալից ովացիաներով:

Նա բարձրացաւ նախազահի համար յատուկ պատրաստած տեղը և նստեց բազկաթոռի վրայ:

Տիրեց խորին լռութիւն:

Մի քանի բոպէ շունչ առնելով և քաղցր ժպիտներ խաղացնելով իր շրթունքների վրայ, նա գլուխ տւեց բոլորին և սկսեց:

«Սիրելի քոյրեր և դուստրներ! Փարիզի կանանց էմանսիպացիայի պաշտպանող կօմիտէտի վերջին հրատարակած ժուրնալը, տալիս է բաւական տխուր փաստերի նկարագիրներ մեր շարժումների անյաջողութիւնների վերաբերմամբ: Փողոցներում ամբոխը անկարգութիւններով է ընդունել առաջին քայլն անող կանանց, սուլել, հոտած ու փթած բաներ է շարտել նրանց վրայ, մինչև որ ոստիկանութիւնը միջամտել և ազատել է նրանց սպառնացող բռնութիւններից:

«Սակայն դա մեզ համար պարտութիւն չէ նշանակում, այլ այդ մեր յաղթանակի առաջին քայլերն են:

«Յայտնի է, որ ամեն մի նոր քայլ կանանց կողմից դէպի ազատութիւն և տղամարդացումը, արականների կողմից ընդունւում է կատաղութեամբ և յուզմունքով: Սակայն անցնում են առաջին տրադիցիաները և ահա նրանց աչքերը կամաց կամաց խրտնող ձիու պէս սովորում են կարմիր շէյֆներին:

«Միւս կողմից մենք կանայքս էլ շատ լաւ ենք հասկանում տղամարդկանց հոգեբանութիւնը:

«Հըմ, միթէ հասկանալի չէ որ այդ արունները նոյնիսկ տենչանք կզգային, որպէսզի բոլոր կանայքս մեր նախամայր Եւայի պարզ զգեստով շրջէինք փողոցներում ու բալերում, որպէսզի նրանց գայլի աչքերը մի առանձին վայելք ստանային մեր մերկութիւնները դիտելիս:

«Քոյրերս, Вѣдь, նրանք կեղծում են, երբ փողոցում փթած

բողկեր են շարտում մեր դեկօլտէներին և շանթէքլեօր հագուստներին: Նրանք ներքուստ առանձին հաճոյք են զգում դրանից և թերևս ամոսում՝ թէ ինչո՞ւ մենք այնքան ամօթխած ենք, որ ցանցառ կրուժեաներով ծածկում ենք մեր կուրծքերի ամենանուրբ տեղերը: Այո՛, մենք այս դէպքում աւելի անկեղծ ենք և աւելի պարզօրէն ենք արձագանք տալիս մեր կանացի հոգեբանութեանը: Եւ սատանան գիտէ, թէ հասարակական ի՞նչ տրամաբանութիւնից ստիպւած այդ տղամարդիկ մեր մերկութիւնը տեսնում են տեսնել միայն արբած ժամանակ, զանազան անկիւններում, խոռոչներում, շամպանիաների ներկայութեամբ: Իսկ փողոցում, թատրօնում, օ, օ, այստեղ արդէն նրանց բռնում է կեղծ պարկեշտութեան քաղաքականութիւնը:

«Բայց ո՞չ, այստեղ նրանք սարսափում են միայն այն միակ բանից, որ չլինի՞ թէ այդ նորաձևութիւնները լինեն այնքան վարակիչ, որով բռնւեն նոյնիսկ իրենց սեփական կանայք: Չէ՞ որ դրանք կանանց ազատամտութիւնը, կամ աւելի շուտ, բացարձակ ազատութիւնը թէ հագուստի և թէ իրաւաբանական իրաւահաւասարութիւնների տեսակէտից իրազորւած են ուզում տեսնել ուրիշների կանանց հաշիւն, իսկ իրենց սեփականները, օ, նրանք պէտք է լինեն միայն փակւած, չարշաւով և շալերով փաթաթւած, իսկ նրանց ազատութիւնը լինելու է միայն խոհանոցից-մանկանոց, մանկանոցից-խոհանոց:

«Այդ դէպքում մենք և մեզանից ամեն մէկը պէտք է աշխատէ իր բռնակալութիւնը տղամարդու վրայ՝ հասցնել ուղղակի ծայրահեղութեան:

«Այ, օրինակի համար, ես իմ ամուսնուն յատկացրել եմ այն բոլոր ֆունկցիաները, որոնք ինձ էին վերաբերում: Նա խնամում է երեխաներին. հազցնում, նրանց թէյ տալիս, տանում է զբօսանքի, խոհանոցում հսկում է խոհարարուհուն և նաժիշտին, իմ կօշիկներն է սրբում, իմ հաշիւներս է պահում և որ ամենից զլխաւորն է, նա այնքան հլու է և հնազանդ, որ երբ ես նրա վրայ ձշում եմ, նա սաստիկ կուչ է գալիս, վախենում է...»

«Իսկ ես արդէն կատարեալ տղամարդ եմ տան մէջ: Ամբողջ նիւթականը իմ ձեռքիս է, ես եմ ստանում մարդու հասանելիք փողերը, ես եմ շուկայ գնում, ես եմ ծախսում, ես եմ ընդունում և հրաւիրում բոլոր հիւրերին, առևտրական և այլ գործերում ես եմ

մարդուս փոխարէն սակարկում, պայմաններ կապում, հաշիւներ մաքրում և այլն:

«Այսպիսի պայմաններում բնական է, որ ես ազատ կարող եմ հագնել այն, ինչ որ ես ուզում եմ, գնալ՝ ուր կամենում եմ, բացակայել՝ որքան ես եմ ցանկանում: Ես բացարձակ տէր և տնօրէն եմ իմ վերաբերմամբ:

«Դ՞ո՞ք, աղջիկներս և քոյրերս, ստրկացրէք ձեր սմուսիւններին, ձեր եղբայրներին, ձեր մարդկանց, և եթէ ամեն մի կին ինձպէս իւր մարդուն դարձնէ խոհանոցի անկիւնում ընկած մի խրտուիլակ, կամ թէ մի փալաս,—հաւատացէք որ աշխարհի դեկը մեր ձեռքը կանցնի:

«Այդտեղից է, որ սկսելու է մեր տղամարդացումը»:

Նա վերջացրեց իր ճառը: Բարձրացաւ անվերջ ծափահարուածիւնների թնդիւն և նորից ազմկալի ու վացիաներ:

—«Այժմ սիրելիներս,—նորից խօսեց նախագահուհին—մենք այսօր պիտի կատարենք մի նշանաւոր ցոյց. դա առաջին քայլն է մեր տղամարդացման:

«Անշուշտ հասարակութիւնը նորից պիտի խրտնէ, ջղային ոստիւններ գործէ: Սակայն այդ ոստիւնները, կրկնում եմ, նման են մութ ախոռից քաշած վայրենի ձիու, որը սակայն շատ շուտ է ընտելանում ձգւած սանձին: Այդ ոստիւնները մեզ համար նշանակութիւն ունենալ չեն կարող և ես չեմ ընդունում ոչ մի խոչնդոտ մեր նպատակների յառաջադիմութեան համար: Թ՛ող կորչի կանացիութիւնը, կեցցէ կանանց տղամարդացումը...»

«Միանգամ ընդ միշտ համոզւեցէք, որ յաղթութիւնը մերնէ, մենք կարող ենք տիրել և ազդել մեր մարդկանց՝ մինչև նրանց խելագարացնելու շափ: Նրանք միշտ էլ մեր ստրուկներն են իսկ մենք՝ նրանց աստուածը, նրանց պաշտամունքի առարկան, նրանց սիրոյ, երգերի և բանաստեղծութիւնների հերոսուհիները, նրանց կուռքը: Մենք կօգտուենք նրանց թուլութիւնից:

«Դէ, ուրեմն, ո՞ր հերոսուհին ձեզանից կլինի առաջինը իր վրայ վերցնելու այսօրու այ ցոյցը, թող կանգնի տեղից: Բոպէական լուծութիւնից յետոյ՝ բազմութեան միջից բարձրացան մի քանի կանանց դէմքեր:

—Հըմ. ուրեմն դ՞ո՞ք, շատ լաւ, ես ձեզնից կընտրեմ միայն երեքին, որովհետև այստեղ միայն երեք հոգու համար կայ պատրաստի կօստիւմներ:

Ընտրւեցան երեքը, որոնց թւում և իմ նախածանօթ օր. X-ը: Նրանք առանձնացան միւս սենեակը և մի ժամից յետոյ յետ եկան դահլիճ՝ բոլորովին փոխւած թէ արտաքինով և թէ տարազով: Նրանք հագած ունէին արձակ դեկօլտէ և նորաձև կանացի յր/ւ. կ-ննր, որոնց մէջ կինը հանդէս էր գալիս որպէս կիսատղամարդ: Ամեն մէկը ձեռքին բռնած ունէր մի-մի փոքրիկ խլիստներ:

Ճիշտն ասած, ես խիստ հաւանեցի այդ նորագոյն տարազը, որի մէջ կինը ցուցադրւում էր իր այն բոլոր առաւելութիւններով, որոնք, յիրաւի, նրա արժանիքներ են կազմում որպէս կնոջ, այն ևս, իհարկէ, տղամարդի ճաշակի տեսակէտից:

Բոլոր ժողովականները նրանց ընդունեցին բուն ծափահարութիւններով:

Երեք սուֆրոժիստակաները նոյն բուն ծափահարութեամբ դուրս եկան դահլիճից և մտան փողոց:

Ես մի առանձին ցանկութիւն զգացի ուղեկցել նրանց և խլոյն դուրս գալով սենեակից՝ միացայ նրանց:

— Բարև ձեզ օր. X. ձեր տարազը հրաշալի է, շատ հրաշալի:

— Ա՛... բարև ձեզ, այս անգամ աշխոյժ ժպիտով ասաց նա թիւ պարզելով ինձ, — իրօք, հաւանում էք:

— Խիստ, խիստ, իրօք, դուք կանայքդ կատարեալ գեղարուեստագէտներ էք տարազների ճաշակի տեսակէտից, մեր սովորական բրիւկներից ստեղծեցիք այդչափ գեղեցիկ յուն...:

— Այո՛, երբ ձեր անձոռնի և անձաշակ բրիւկները մեզ մօտ այդչափ գեղեցկանում են և կատարեալ հմայք պատճառում, հաւատացէք որ ձեր տղամարդկային կոչումը մեզ մօտ, թերևս աւելի մեծ հրաշալիք դառնար և աստուածացած, համոզւում էք դուք դրան: Այս բոլորը նա ասաց այնպիսի տօնով, որ նրա ձայնի մէջ թունաւոր շեշտ էր պարունակւում:

— Ես մի փոքր կասկածում եմ և խորհուրդ կտայի ձեզ՝ ձեր յր/ւ. կ-ննրից այլ ևս վերև չանցնել, հակառակ դէպքում դուք կկորցնէք ձեր հմայքն ու կանացի արժանիքը:

— Այո՛, այն բանը որ վերաբերում է ձեր ճաշակին կնոջ վերաբերմամբ, բայց...

— Իսկ դրանից դուրս ի՞նչ կայ կնոջ մէջ, չէ՞ որ ձեր ամբողջ արժէքը հէնց դրա մէջ է կայանում:

— Ներեցէք, դա միայն ձեր այսօրւան կարծիքն է: Դուք դեռ

կանանց չէք ճանաչում, այսինքն ճանաչում էք դեռ ձեր տեսակէտից, իսկ մենք մեզ ճանաչում ենք թէ մեր տեսակէտից և թէ ձեր հոգեբանութեամբ: Այսօր երբ մեր յաղթանակը տակաւին բրիւկներին է հասնում, դուք խիստ հաւանում էք, վաղը նոյն կարծիքը կունենաք, երբ կխլենք ձեզնից ձեր ժիւեարը, երրորդ օրը բաճկոնը, չորրորդ օրը գլխարկը, հինգերորդ օրը մի սւրիշը... իսկ երբ մի օր կտիրենք ձեզ ամեն կողմից, այն ժամանակ թերևս մենք ձեր կուռքերը դառնանք. ինչ կասէք դուք սրան:

Սակայն ես հազիւ թէ ժամանակ ունեցայ պատասխան գտնել խօսակցիս, երբ յանկարծ սթափւեցի ու մեզ շրջապատած տեսաւ ամբոխի մի սոււար բազմութեամբ, որոնք սկսան սուլել, գոռալ, աղաղակել, հսհռալ, ծիծաղել և փողոցային այնպիսիսը ախօսութիւններ ուղղել, որ մենք սոսկացինք:

Օր. X-ը ամուր կպաւ թնիցս:

Մեզ վրայ սկսաւ տեղալ զանազան փթած բաներ: Մենք ըսկսեցինք արագացնել մեր քայլերը, սակայն իզուր, ամբոխը կտրել էր մեր ճանապարհը:

— Նայեցէք այս շինականդէին, սա էլ դրանց առաջնորդն է, թրիւկների պաշտպանը, իզուր չէ հագել դրանց իւրեան, այն ժամանակ ամեն մէկն իր տեղումը կլինէր...

Իմ ականջիս հասնում են այդ և դրա նման դարձւածներ:

Ես ինձ գտայ միանգամայն անյարմար դրութեան մէջ: Պէտք էր ընդէ առաջ հեռանալ նրանցից: Եւ երբ մի ճխլւած պօմօղօր կպաւ իմ շլեապիս եզրին և ամբողջովին թափւեց երեսիս ու շորերիս վրայ, ես ուզեցայ թևս պոկել օրիորդից և փախչել, սակայն նա այնպէս ամուր էր կպել ինձնից, որ ես չկարողացայ նրանից ազատուել, ու երբ նայեցի նրա այլայլւած աչքերին և վախից գունատւած դէմքին, — ես համակւեցի...

Նա այդպէս այնքան գեղեցիկ էր և գրաւիչ...

Ամբոխը գոռում էր, սուլում, խռնում մեր շուրջը այնպէս խուռն ու թափով, որ մենք հազիւ էինք կարողանում քայլել:

Մերթ ընդ մերթ զանազան կեղտոտ բաներ լսլիրշ հայհոյտնքների հետ միասին գալիս կպչում էին մեզ: Բրիւկ հագած կանայք շփոթւած մերթ փողոցի այս կողմ էին ծռւում, մերթ միւս կողմը, բայց ամեն տեղ էլ նրանց ճանապարհը փակում էին:

— Ազատէք մեզ, պարոն Տ... պաղատական հայածքով զիմեց օրի-

որդն ինձ, որի հայածքն այդ ժամանակ իր կանացի թուլութեամբ
այնքան ինձ դիւթեց, որ ես ակամայից ենթարկուեցի նրան:

Մօտենում եմ մի կառքի ետևիցս քարշ տալով թրիակուսուր
կանանց, մտածելով կառք ձգել և փախցնել, սակայն ամբոխի մի-
ջից մինը շտապով մօտ է վազում և նստելով՝ այդ կառքը քշել է
աալիս ուրիշ կողմ:

Դիմում եմ երկրորդ կառքին, այս անգամ մի ուրիշը կառա-
պանի ձեռքը կոխելով 5 բուբլի՝ քշում է մի այլ կողմ:

Ամբոխը կռում է մեզ հետ:

Ես դիմում եմ երրորդ կառքին, սակայն այս անգամ էլ նոյնն
է կրկնում:

Ամբոխն սկսում է երես առնել, որոնցից աւելի ստահակները
մօտենում և քաշքշում են կանանց թրիակներից: Ես դիմում եմ
ձեռնափայտիս օգնութեանը:

Ու այդպէս ամբոխի հռնոցի, աղմուկի հետ մենք առաջ ենք
դնում:

Մօտենում եմ չորրորդ կառքին:

— Տաս բուբլի, տանում ես թէ ոչ:

— Տասնուհինգ բուբլի. իսկոյն մօտ է վազում մի ուրիշը և
քշում:

Վերջապէս դիմում եմ հինգերորդին:

— Երեսուն բուբլի... համաձայնես:

— Համաձայն եմ... բայց ի՞նչ գեղեցիկ են նրանք, óհ прелесть...
ասում է կառապանը և քշում:

Մենք ձեղքելով ամբոխը դուրս պրծանք նրա շարքերից և
հազարաւոր սուլոցների տակ փախանք հեռու թաղերը:

Երբ տուն վերադարձայ, ինքս չկարողացայ ինձ հաշիւ տալ,
թէ ինչո՞ւ ես ակամայ յանձն սուայ ինձ վրայ կրելու, կանանց թր-
իակների պաշտպանութեան ամբողջ ծանր գործի պատասխանա-
ւուութեան առաջին քայլը իր բոլոր անախորժ հետեւանքներով...

Օ՛ կանայք, կանայք, թերևս ձեր յաղթանակը հակառակ մեր
ցանկութեանն, հէնց նոյնիսկ մեր ձեռքով կատարած լինիք:

III

Ն Ե Ր Ք Ի Ն Մ Ա Ր Դ Ը

I

Որոշումս դրական էր...

Եւ հէնց առաւօտից իսկ ես վճռեցի զեթ մի օրով հրապարակի իջնել իմ ներքին աշխարհով, իմ իսկական եռթեամբս՝ առանց կնիքների և թագցնելու այն բոլորը, ինչ որ զգում եմ եւ ինչ որ ցանկանում եմ ստանալու:

Երբ զարթնեցի, մայիսեան վաղորդեան արևի փայլուն ճառագայթներն արդէն բաց լուսամուտներից ներս էին թափանցել ննջարանս և ոսկէզօծել բոլոր կարասիները, սկսած բրօնզից, հախճապակուց, աբանօսեայ փայտեղէնից մինչև հայելիներն ու վարագոյրները:

Ի միջի այլոց ասեմ, որ մենք այնքան էլ աղքատներից չէինք իհարկէ:

Դրսում, պարտիզի կանաչ ուռիների վրայ, ճուղում էին հարկւրաւոր թռչուններ և այս բոլորը միացած զարնան մաքուր և ջինջ օդի ու երկնքի հետ՝ իմ մէջ զարթեցրին բանաստեղծական մի աւիւն, այն ևս օպերետային տրամադրութեան ներշնչումով, որովհետև դեռ գտնւում էի դիշերւայ թատրոնում տեսածս օպերաների ազդեցութեան տակ...

Եւ ահա առանց մահճակալիցս իջնելու՝ սկսայ կոկորդոփս մին երգել Չայկովսկու սօնէաներից:

Կեանքումս առաջին անգամն էի այդպէս լիաբերան՝ ազատ համարձակ երգում: Անշուշտ ես իմ ձայնից բաւական ախորժում էի և երկակայեցէք, որ իմ կարծիքով աւելի լաւ էի երգում, քան ոուս աշխարհոչակ՝ Շալիապինը:

Բայց երբ կինս ներս մտաւ, ես նկատեցի որ նա սարսափելի դունատ է և վախեցած:

Ու երբ ես աւելի ևս ոգևորւած ձայնս բարձրացրի, նա ականջները բռնած, խիստ երկչոտութեամբ կանգնեց դռան մօտ, սկսեց յուսահատական կերպով նայել ինձ — կարծելով որ ևս խելագարուել եմ:

— Ժօրժ, Ժօրժ, խելագարւե՛լ ես ինչէ, լո՛ր, ձայնիցդ մարդ է սարսափում, երեխաները սրտաճաք են լինում, լո՛ր:

Ասում էին որ իմ կինս այնքան էլ վատերից չէ և բաւական գեղեցիկ է:

Բայց ես նրանով արդէն վաղուց էր որ այլ ևս չէի հետաքրքրւում և ինձ համար նա մի կատարեալ փալաս էր:

Դա մի սովորական բան է և իհարկէ բոլոր ամուսինները միմեանց նախաբան փալաս են:

Ես իջնում եմ մահճակալից ու առանց հագնւելու, որպէս Ողիսևսը կղիմէր Տրովիադայի պարիսպներին, բեմական քայլերս ուղղելով դէպի կինս, երգում եմ:

«Ամենօրեայ միատեսակ կերակուրները

«Երբ իմ ստամոքսն են բթացնում,

«Կամ հնացած հագուստի ծլանքները

«Ինձ արդէն զգւանք են պատճառում.

«Ես կարող եմ իհարկէ ազատ կերպով,

«Դէն շարտել նրանք ինձանից,

«Եւ դէպի թարմը առանձին թափով

«Վազել, ստանալ հէնց այժմեանից:

— Դո՛ւ հիւանդ ես, Ժօրժ, իսէր Աստուծոյ, այդպէս մի աղաղակիր, ինչեր ես խօսում, բոլոր հարևանները վարմացած են, հանգստացիր...

Ե՛ս, հիւանդ, հրմ. աւելի առողջ եմ քան երէկ, կամ մինչև այսօր էի իմ կեանքիս մէջ: Գնա՛, հեռացիր իմ փալասս, գնա խոհանոց. օ, ես կուզէի դէն շարտել քեզ իմ շալակից, մի բեռ՝ որը չգիտեմ ո՞վ և ինչո՞ւ է կապել իմ մէջքին: Օ՛, ձեր քիթը, ձեր դէմքը, մշտական և անվերջ նոյնութիւնը, թո՛ւ, պրօպօստ, ինչ է ուղում սա ինձանից, գնա՛, կորիր, ես չեմ ուզում քեզ. հեռո՛ւ ինձանից:

Այդ ժամանակ ներս մտաւ մեր աղախինը, որին երկու օր էր որ վարձել էինք:

— Օ՛, Ելենա Անդրէենա, միլօստի պրօսիմ... ահ, որքան գեղեցիկ էք, թարմ, առօյդ, երիտասարդ. ձեր վարդագոյն թշերը, կապոյտ և խոշոր աչքերի հայածքը, բօզվի շրթունքները— օ, որքան հմայում են ինձ, ես քեզ սիրում եմ... ես քեզ վարձեցի հէնց քեզ նախաբան...

«Երանելի է այն տեղը, ուր դեռ չէ թափանցել մեր ոտքերը,
«Եւ քաղցր է ու անուշ միշտ արգելած բոլոր պտուղները:
Երգելով փաթաթում եմ աղախնու վզով և կուշտ համբուրում
նրան:

— Օգնեցէք, օգնեցէք, նա խելագարւել է. օգնեցէք... աղաղա-
կում է կինս իր մտքերը փետելով և դուրս գնում: Նա դեռ ծրր-
տում էր բակում և օգնութիւն աղաղակում, երբ ես հագնելով շո-
րերս դուրս եկայ փողոց:

II

Փողոցում հէնց առաջին քայլում պատահեց Եօսիֆ Սերգէիչը,
ձկնեղէնի մեծ վաճառական և իմ ծանօթներից մէկը:

— Ա՛յ, բարև ձեզ Եօսիֆ Սերգէիչ, ի՞նչպէս է ձեր կինը:

— Ի՞նչպէս թէ, ձեզ ի՞նչ, ասաց նա շարած և չոելով աչքերն
ինձ վրայ:

— Ի՞նչպէս թէ. ինձ աւելի հետաքրքիր է նրա առողջութիւնը
քան ձերը, որովհետև մենք երէկ թատրոնում բաւական քաղցր
ժպիտներ և նոյնիսկ օղային համբոյրներ փոխանակեցինք...

— Կորիւր ցնորւած, եթէ ոչ փայտովս կողերդ կշարդեմ, այնէլ
իմ կինս...:

— Ա՛յ, հիմա դու իսկական մարդն ես և արտայայտում ես
ճշմարտօրէն, բայց ներողութիւն, դուք ապահարզան չէք վերցնում
ձեր կնոջից:

— Լո՛իր անզգամ, ասաց նա և բարկացած երես թեքեց ինձա-
նից հեռանալու համար: Ես հետևում եմ նրան:

— Դէ միևնոյն է, դու այս բոպէիս չորս հօմանի ունես դեռ
հինգերորդի հետ էլ այսօր գիշերւայ ժամը 11-ին ժամագիր էք ե-
ղել, աւելի լաւ չէ պարզ լինել, աւելացրէք դրան, որ ձեր կինն էլ
ինձ է սիրում, հարդե՞նք այս բոլոր բարդութիւնները:

— Դու ցնորւել ես, սպասիր ես քեզ ցոյց կտամ. — ասաց նա
թափ տալով փայտը վրաս և կատաղած կերպով յետ դարձաւ դէ-
պի տուն:

— Հ՛րմ, տո՛ւն ես գնում, գնա ջարդիր վեցերորդ կնոջդ, աշ-
խատելով ապացուցել թէ դու սուրբ ես, խելա՛ն... ասացի նրան և
շարունակեցի ճանապարհս:

— Բարե՛ ձեզ, պարոն ժօրժ, ինչպէ՛ս է ձեր առողջութիւնը: Պատահում է ինձ Բաղդասար աղան, մի յաղթանդամ մարմնով ու խիստ բուրժական տեսքով մի մարդ:

— Ներեցէ՛ք պարոն ոսկէզօժ եզ, իմ առողջութիւնը ձեզ համար միանգամայն վնասակար է, որովհետեւ նա արգելում է ձեզ ձեռք ձգելու իմ տունս, որի վրայ դուք աչք ունէք:

— Բայց պարոն, դու ցանցառ ես խօսում...:

— Բոլորդ էլ ցանցառ էք, բայց կեղծում էք:

— Հեռացիր տխմար, դու ցնորւել ես:

— Եթէ բոլոր մարդիկ ցնորւէին այնպէս, ինչպէս ես, այն ժամանակ ձեզ պէս անբան եզը փոխանակ քաղաքային ձայնաւորի և բանկային հիմնարկութիւնների մէջ որպէս կարևոր մարդու՝ տեղ ունենալու, կգնար շալակով հող կրելու իմ կտուրը ծածկելու համար: Բայց մոռացայ պարուն... բայց ինչո՞ւ պարոն և մի ոչ հասարակ՝ Բաղդօ. դուք կազմել էք ձեր կտակը...:

— Ի՞նչ կտակ, տօ խելան:

— Այսինքն այն կտակը, որ քո փողերը մահիցդ յետոյ տանէին ծովը նետէին. որովհետեւ ձեզնից յետոյ նա քո անբարոյական և շռայլ որդուդ ձեռքում սոսկալի շարիք կդառնայ մարդկութեան համար:

— Այդ քո բանը չէ:

— Բայց թոյլ տւէք ինձ ձեզ ապտակելու, որովհետեւ ես այդ ցանկանում եմ:

Ես մօտենում եմ նրան և մի փառաւոր ապաակ հասցնելուց յետոյ՝ հեռանում, նա կատաղած կերպով դիմում է դէպի ոստիկանատուն, երևի ինձ վրայ դատ բանալու:

Անցնում է իմ ծխատէր քահանան:

— Ողջոյն Ձեզ, պարոն ժօրժ:

— Հեռացէ՛ք սատանայ, դուք ինձ բնաւ դուր չէք գալիս, իսկ եթէ միանգամ ընդմիջտ իմ երեսս չգաք, ես աւելի հանգիստ կը լինեմ:

— Բայց ինչո՞ւ պարոն ժօրժ, ս... անշուշտ այն անիծեալ տէր Թովմասը ձեզ լարել է իմ դէմ, ախ անիծեալ օձ, իժի ծնունդ, ես նրան ցոյց կտամ թէ ինչ է նշանակում իմ ծուխերը ձեռքիցս խլել, ես նրան ցոյց կտամ...:

— Հեռացիր, ես ինձ ստորացած եմ համարում ձեզ տեսնելիս:

մարդիկ, որոնք մեզ անասունների պէս բաժանել են իրար մէջ,
քաշւիր:

Նա հեռացաւ, ըստ երևոյթին քայլերը ուղղելով դէպի տէր
Թովմասի տունը:

Ես շարունակում եմ ճանապարհս, երգելով.

«Եւ բոլոր մարդիկ մի հաստ կեղևով

«Ծածկում են մարդը էութեամբ,

«Արևի տակ զգուշ դիմակով՝

«Գաղում են ներքինը զգուշութեամբ»...

Այդ ժամանակ դէմս է կանգնում ծանօթ ժուրնալիստներից
մէկը:

— Բարև ժօրժ, այդ ինչ ազատ երգեցողութիւն է այս ժամին
և փողոցի մէջ:

— Ա՛ն բարև ձեզ, մուսիօ Թաթոս, բայց ձեր սափրած երե-
սըն իր թախենքարդով աւելի ճշտօրէն իր դերի մէջ է գտնւում,
քան՝ ձեր ժանգոտած գրիչը:

— Ձեմ հասկանում, կարծես թէ առաւօտ գիշերով խմած լի-
նէք:

— Եթէ բոլոր մարդիկ մի օր հարբեն, թերևս կարելի կը
լինի գէթ մի օրով նրանց ճանաչել. ուզում եմ ասել, որ դուք կա-
կանանց ուշադրութիւնը գրաւելու ձեր իսկ արտաքինով աւելի
շատ էք գինւած, քան՝ հասարակութեան շահերը պաշտպանե-
լու...

— Ժօրժ, դու անպատուում ու ժխտում ես իմ հասարակական
արժէքը:

— Հասարակական արժէք... հա՛, հա՛, հա՛, հասարակական ար-
ժէքը... ձեր գրողների, այսինքն ազգիդ մշակների... բայց ներո-
ղութիւն, մուսիօ Թաթոս, դուք անցեալ օրն ինձնից փափուկ
բազկաթոռ էիք ուզում, ես կառաջարկէի ձեզ աւելի փափուկը,
նպատակաւարմարը, — կանանց արդէն իսկ դէն շարտած տուր-
նիւրներից... այնտեղից աւելի լաւ կարելի է «քրտնել» յանուն
հասարակութեան շահերի, այնպէս չէ՛:

— Թւում է, որ դուք անօրմացել էք պ. ժօրժ, դուք ցնորւած
չէք արդեօք:

— Ներեցէք, ես տրամադրւած եմ ձեզ հետ մի փոքր գրական
«վայելուչ» պօլեմիկա մղել, բայց առանց զրչի, իսկ եթէ ես մի

Թերթ ունենայի իմ տրամադրութեան տակ, ես իրաւունք կունենայի այնտեղ ձեզ անւանելու «պայլասնաչ»:

— Իսկ դուք՝ «դատարկամիտ եք»:

— Ըիշտ այդպէս «դո՛ւք փողոցային թերթի ողորմելի սիւն»:
մտցրէք այս նախադասութիւնը ձեր յիշատակարանի մէջ:

— «Անպատկա՛ռ», դուք անցնում էք քաղաքավարութեան սահմանից:

— «Սպեցիֆիկ ժարգով»:

— «Ինտելիգենտ կիւնտո», խելագար:

— Հրաշալի է ձեր «գրական ծամածոտութիւնը»:

— Կորիւր անպիտան, «փողոցային մարդ»:

— «Մտաւոր թշուտ», «մտքի եւ գրչի անստակ», «կրիլովի կապիկ», «մտաւոր անստակ», «չափրջ», իսկ որպէս զի մեր գրական այս պօլիմիկան աւելի լրիւ արտայայտէ, ես ձեզ կապտակեմ, ահա այսպէս: Եւ իմ խեղճ ժուրնալիստիս գլխարկը պատուում է օդի մէջ իմ ուժեղ ապտակից...

— Դուք փողոցային սիւնընձր, կուպիտ եւ մարմնացեալ բռնութիւն, ես ձեզ ցոյց կտամ...

— Երևի հաշտարար դատաւորի մօտ, բայց որպէս զի կօմեդիան աւելի հարազատօրէն պատկերանայ, դիմենք միջնորդ դատարանի, այն եւ ժուրնալիստներին ժողովին, թերեւ այնտեղ քո կողմնակիցներն աւելի ուժեղ լինեն, հա՛, հա՛, հա՛, հա՛ ..

Նա դիմում է դէպի ոստիկանատուն, իսկ ես՝ պաշտօնատեղիս:

III

Երբ ես մտայ գրասենեակ, մեր կառավարիչը նստած էր իր բազկաթոռի վրայ և ինչ որ թւեր էր գումարում համրիչի վրայ:

— Ոչ աւել ոչ պակաս—15 հազար բուբլի...

Ասացի ես ուղիղ կանգնելով նրա դիմաց:

— Ի՞նչ էք ուզում ասել. գնա՛ նստիր տեղդ և գործդ արա՛:

— Սա էլ մի գործ է, պարոն կառավարիչ եթէ մոռացել էք ձեր գրպանը դրած այս տարւայ գործարանատիրոջ սեփական փողը, կամենում եմ ձեզ օգնած լինել, որպէսզի համրիչին երկար նեղութիւն չտաք, իսկ եթէ դրանից հանէք միայն 3500-ը կմնայ 11500:

Նա սկսում է գունատուել, բայց ոչ թէ բարկութիւնից, այլ երկիւղից:

— Դու ցնորուել ես ժորժ, ի՞նչ ես խօսում:

— Այդ 3500-ը մի աղւէսի բաժին էր, որը մտաւ իմ գրպանս. բայց գիտէ՞ք ինչ, ես արդէն ապահարզան եմ տալիս իմ կնոջը, այժմ ես միանգամայն ապահով եմ, որ դուք ինձ կարձակէք պաշտօնից... որովհետեւ իմ կինս ձեզ շատ էր հետաքրքրում... բայց միևնոյն է, ես այժմ հարուստ եմ, շնորհիւ մեր միասին արած գողութիւններին:

— Դուրս արէք այս ցնորուածին, կատաղած գոռում է կառավարիչը, — Մինաս, դուրս տար սրան այստեղից:

Միւս սեղանի առաջից բարձրանում է մեր երիտասարդ հաշուապահը և մօտենում ինձ...

— Ա՛, բարե ձեզ, պարոն Մինաս, ի՞նչպէս է գործարանատիրոջ աղջկայ առողջութիւնը... կարծեմ դուք բուսականին հարուստ բոմանտիկ յաշաբերութիւն ունիք նրա հետ, չէ՞... իսկ պարոն խազէինը երէկ ձեր քրոջ հետ միասին կառքով ճեմում էր քաղաքից դուրս, բայց խնդրի այդ հսկողայրը լուծել մի փոքր դժւար է...

Նա սկսում է ինձ ձգել դէպի դուռը:

— Սպասիր եղբայր, երբ անցեալ օրը մի մեծ սուտ՝ հալած իւղի նման, ճշմարտութեան տեղ անցկացնելու համար վկայութիւն տւիր պարոն կառավարչին, իսկի ձեզ դուրս չձգեցին, իսկ այժմ ինչո՞ւ էք կատաղում, երբ գուտ իրողութիւն ենք ասում:

Այդ ժամանակ ներս է մտնում գործարանատէրը, բոլորն էլ ակնածութեամբ կանգնում են և յարգանքով բարևում:

— Իսկ ես, պարոն խազէին, յայտնում եմ ձեզ իմ խորին զգւանքը, որովհետեւ ես ասում եմ ձեզ, դուք թէ ժլատ էք, թէ գծուծ և թէ տխմար:

Նա սաստիկ շփոթւում է և այս անսպասելի դէպքից միանգամայն ապշած, մերթ նայում է կառավարչին, մերթ միւսներին:

— Հ՛րմ... պ. խազէին, հետաքրքիր է իմանալ, դուք զարմանքից էք ապշում որ ձեր այդպիսին լինելո՞ւ առաջին հաւաստիացումն էք լսում, թէ իմ առաջին այս գիւտն անելու համար է: Է՛հ Ամերիկա չենք գտել, ասում ենք այն ինչ, որ մինչև հիմա տեսել ենք բայց չեն յայտնել ձեզ:

— Նա ցնորուել է Կարլ-Սերգէիչ, — շտապում է յայտնել կառա-

վարիչը:

— Իսկ երբ ես ձեզ մի լաւ աստակ ուտեցնեմ, այն ժամանակ դուք աւելի ևս կցնորւէք, պարոն գեղծարար, — ասում եմ ես և մի ուժեղ աստակ հասցնում կառավարչին:

— Դուրս քշեցէք այս խելագարին, — գոռում է խաղէինը:

Կառավարիչը սաստիկ կատաղած՝ զանազան լեզուներով փողոցային հայհոյանքներ է ուղղում իմ հասցէին:

— Այժմ տեսէք, ինչպէս նա խելագարուեց, իսկ այժմ էլ խենթացէք և դուք, պարոն Կարլ Սերգէիչ, — ասում եմ և թքում նրա վրայ: Նրանք խառնուում են իրար:

Թողնելով նրանց՝ իրենց *անրքիւն* մարդու բնական արտայայտութեան մէջ, — ես դուրս եմ գալիս այգտեղից և հեռանում:

Փողոցները բազմամարդ են, մարդիկ շտապում են, ամեն մարդ դիմում է իր գործին: Նրանց բոլորի էլ դէմքերի վրայ ես կարդում եմ նրանց հոգեբանութիւնը:

Ահա բարձրահասակ, մեծազլուխ, մեծաքիթ մարդու մէկը կանգնեց եկեղեցու դիմաց, որի գմբէթն է միայն կէս վերստ հեռաւորութիւնից երևում — ջերմեռանդօրէն խաչ հանեց երեսին:

«Ա՛հ, եթէ մէկի հարուստ գրպանը ձեռքս խոթելու յարմարութիւն ունենայի» .. ասում է այդ ժամանակ նրա *անրքիւն* մարդը:

Ահա մի ուրիշը, քաղաքի մեծ վաճառական և պատուաւոր աղաներից մէկը: Նա քայլերն այնպէս է ձգում և նրա արտաքինն այն տպաւորութիւնն է թողնում, որ շրջապատում ամեն մէկը պատկառանքով ճանապարհ է տալիս նրան:

«Վերջին ժամանակներս ինձ շատ քիչ է յաջողւում գողանալ կամ իւրացնել ինձ հաւատսցող մարդկանց փողերը» .. խօսում է նրա *անրքիւն*:

Ահա մի աղքատ մարդ:

«Օ՛, եթէ ես ձեռքիս հնար ունենայի, կխեղդէի բոլոր հարուստներին», — ասում է նրա *անրքիւն*:

Ահա չորրորդը, եւրոպական ամենավերջին տարագով շպարւած մի ինտելիգենտ երիտասարդ: Ես բնաւ չեմ խաբւում, երբ նա խիստ հանդարտութեամբ պտտցնելով իր ձեռնափայտը, կորրեկտ կերպով փոխում է իր քայլերը:

«Ի՞նչ հնար գործ գնեմ, մտածում է նա իւր ուրի, որպէսզի կարողանամ փող կորզել իմ հարուստ բարեկամից» ..

Ահա նրա մօտով անցաւ մի կին, բաւական վեր բարձրացրած իր շրջագգեստի մետաքսեայ փեշերը: Նա հպարտէ և արհամարալից արտաքինով. բայց — «տեսէք, որքան հրաշալի սրունքներ ունիմ» — մտածում է տիկինը:

«Այո, տեսնում եմ, պատասխանում է ինտելիգենտի (նկարիչ) մարդը. — ես հէնց փողը փնտռում եմ այդ սրունքներից համար»:

Երբ ես ուզում էի շուռ գալ դէպի միւս փողոցը, յանկարծ անկիւնից դուրս եկաւ և ինձ բաղխեց մի հարբած մարդ: Նա յետ դառաւ և կանգնելով իմ դիմաց, ծումուած դէմքն ինձ դարձնելով՝ զրեթէ մոմաց:

— Եթէ դու հարբած լինէիր, ես քեզ չէի անւանիլ մալահանի եզ, իսկ երբ քո ուսերի վրայ ես տեսնում եմ երկու գլուխ, ուզում եմ մէկը կտրել: — Այս ասելով նա բարձրացրեց իր բոունցքը, սակայն յետ ու յետ գնալով ուզեց գլորւել, բայց ես մօտ վազեցի և բռնեցի նրան:

— Ի՞նչպէս, յիմար, դու սխալւում ես, իմ մի գլուխը ես այսօր թողել եմ տանը, ինչպէս և դու քոնը՝ գինետանը, երկուսս էլ մի-մի գլուխներ ունենք և այն էլ միատեսակ:

— Պէտք է ջարր... դե՛լ այն գլուխն... ն... ն... երբ, որոնք չեն թողնւում գինետանը... մոմաց նա և ապա իմ ձեռքերից պոկ գալով, մէջքը դէմ տւեց պատին ու դառնալով շրջապատող անցորդներին, մոնչաց. — Է՛յ, մարրդիկ, գնանք գինետուն, եթէ ոչ, ես՝ ս՝ կջարդեմ ձեր օձի գլուխննները... իժեր, խլէզներ, էշեր, աղւէսներ, երկու գլխանի սատանաներ... Այնտեղ բոլոր մարդիկ մի-մի գլուխ ունին և չեն կեղծում, երբ ուզում են համբուրել՝ համբուրում են, երբ կամենում են ծեծել՝ ծեծում են, երբ մէկի կզակը անճոռնի է և անպիտան՝ ջարդում են իսկոյն, երբ ուզում են հայհոյել՝ հայհոյում են... գնանք գինետուն:

— Գինին նրան խմել է, — նկատում է անցորդներից մինը:

— Ողորմելի մարդ, — աւելացնում է միւսը:

— Այնքան ողորմելի, որքան և դուք. տարբերութիւնը միայն ձեր խմած շիինելու մէջ է, — պատասխանում եմ ես:

— Օհօ, սա էլ է խմած:

— Իսկ ես հիմա ձեզ կխմցնեմ մի պինդ ապտակ և դուք աւելի վատ կլինիք քան՝ այս հարբածը, — և բոլորը լսեցին, թէ ինչպէս իմ ուժեղ ձեռքը շրխկալով կպաւ նրա երեսին:

— Ա՛... ուրեմն այդ անպիտան էշը երկու՞ գլուխ է ունեցել, վայր գլորի՞ր մինը, մումուաց հարբեցողը, բոլոր մարդիկ միայն մի գլուխ ունենալու են...

Ամենքն իրար խառնեցին: Ապտակ ուտող մարդու հետ միացած նաև իր ընկերը՝ վրայ վազեցին, բայց ես բաւական վստահ եմ բազուկներիս վրայ, որոնք երկու փթանոց քարերի հետ խաղում էին այնպէս, ինչպէս մի-մի թեթև ձմերուկների, ես երկուսին էլ հասցրի այնպիսի բոունցքներ, որ նրանք գետին թաւալեցին: Նրանք նորից վեր կացան, սակայն այս անգամ կամեցան վրայ վազել դանակներով, բայց ժողոված ամբոխը խլելով նրանց դանակները՝ զինաթափ արեց. մօտեցաւ ոստիկանութիւն և ցրւեց ամբոխին...

Ես շարունակում եմ ճանապարհս, երգելով.

«Եւ բոլոր մարդիկ մի հաստ կեղևով

«Ծածկում են մարդը էութեամբ,

«Արևի տակ զգուշ դիմակով՝

«Գաղում են ներքինը զգուշութեամբ»...

Մ. ԲԱԳԻՐՅԱՏՈՒՆԻ



Մ Տ Ա Ի Ո Ր Շ Ա Հ Ե Ր

(Նորապատկաների կեանքից)

—Վէրա ջան, յիշում ես, թէ ինչպէս մինչև մեր պսակելը դու այնպէս մեծ բաւականութեամբ ու ոգևորութեամբ մտածում էիր մեր երկուսիս մտաւոր շահերի մասին և, միևնոյն ժամանակ, ծրարում՝ մեր երկուսիս միասին ընթերցանութեան ժամերն ու ըզբաղմունքը... Ահա, ամսագրի մի նոր №, որի մէջ խիստ հետաքրքիր մի յօդուած կայ, — «ժամանակակից փիլիսոփայութիւնը և նորագոյն գրականական հասանքները»... նստիր միասին կարդանք...

—Անշուշտ, սիրելիս, շատ հետաքրքիր կլինի այդ յօդուածը. գնանք միայն իմ սենեակում կարդանք. այնտեղ և լաւ է և խաղաղ:

Գնում են:

—Նստիր այստեղ, թախտի վրայ...

—Ո՛չ, դու պառկիր, իսկ ես կնստեմ. այ, այդպէս, դէհ հիմայ կարդայ:

Ամուսինը կարդում է. «կեանքի իւրաքանչիւր մի շրջան»...

—Սպասիր, այդպէս քեզ համար լաւ չէ, դու անյարմար ես պառկած. գլխատեղդ լաւ չէ, թող միւս սենեակից բարձր բերեմ դիր գլխիդ տակը:

Բերում է:

—Շարունակիր:

—«Կեանքի իւրաքանչիւր մի շրջան, ինչպէս իւրաքանչիւր մարդու անհատական կեանքում, այնպէս էլ ընդհանուր հասարակական»...

—Սպասիր կօլիայ, ես ուզում եմ նստել բազկաթոռի վրայ,

քո դիմացը, որովհետև ուզում եմ քո երեսը լաւ տեսնել, այ այսպէս, շարունակիւր կարդալը:

— «Կեանքի իւրաքանչիւր մի շրջան, ինչպէս իւրաքանչիւր մարդու անհատական կեանքում, այնպէլ էլ ընդհանուր հասարակական կեանքում, ունենում է իր ներշնչումները, ծնում յայտնի իդէաներ և գեղագիտական պատկերներ»...

— Հոգեակս ես ուզում եմ քեզ համբուրել, մենք պէտք է հէնց սրանով էլ սկսենք իւրաքանչիւր մի գործ.— համբուրում է.— շարունակիւր այժմ:

— «Եւ գեղագիտական պատկերներ, որոնց ստեղծում են յայտնի և տաղանդաւոր անհատներ»...

— Սպասիւր, ես ուզում եմ քեզ աւելի մօտ լինել, թող ես պառկեմ թախտի վրայ՝ քո տեղը, իսկ դու նստիւր ինձ մօտ ու այնպէս միայն շարունակիւր կարդալը:

Տեղափոխւում են:

Ամուսինը շարունակում է.

...«Տաղանդաւոր անհատներ, իսկ յետոյ նրանց ստեղծագործութիւններն ընդհանրանում և դառնում են ընդհանուր հասարակութեան սեփականութիւն»...

— Սիրելիս կարդայ նորէն, սկզբից, ես չէի լսում:

Ամուսինը կարդում է երկրորդ անգամ:

— Գիտես Կօլիա ես ի՞նչ եմ մտածել. լաւ կլինի որ իմ պսակի դէյրան նորից չկտրատեմ և մի ուրիշ դէյրա կարել տամ, այլ նա որպէս յիշատակ թող այնպէս էլ մնայ, յետոյ այնքան լաւ և դուրեկան կլինի նրա վրայ նայելը...

— Վէրա, ես տեսնում եմ, որ դու բնաւ տրամադիր չես ինձ լսելու, լաւ կլինի որ այժմ թողնենք, յետոյ կկարդանք:

— Ո՛չ, ո՛չ, ո՛վ ասաց, ինչի՞ց եզրակացիր, կարդա՛, շարունակիւր:

— «Փիլիսոփայութեան մէջ այժմս նկատւում է երկու գլխաւոր ուղղութիւններ»...

— Ա՛խ Կօլիա, քո բեխիկները որքան նուրբ են ու գեղեցիկ և որքան մեղմօրէն են շարժւում, երբ դու կարդում ես:

— «Առաջին ուղղութիւնը՝ յոռետեսականն է»...

— Հոգեակս, աւելի լաւ կլինի որ մենք այժմ գնանք մի փոքր զբօսնելու, այսօր այդքանն էլ բաւական է, ես արդէն յոգնեցի. կվերադառնանք և թարմ ուժերով էլի կսկսենք մեր պարապմունքը:

ԱՐԴԷՆ ԻՍԿ ԱՆՈՒՂՂԵԼԻ ՍԽԱԼ

(Ա. Չէխով)

Սարսափելի կերպով լաց լինել եմ ուզում, զգում եմ, եթէ մի լաւ լաց լինեմ, կհանգստանամ, իսկ իմ հոգեկան այս դրութիւնը, իհարկէ, առանց պատճառի չէր:

Մի գեղեցիկ, հրաշալի երեկոյ էր, ես հազնւեցի, սանրւեցի ու մի փառաւոր Գոն-ժուան դառած՝ սլացայ դէպի նա, որը ինձ ըստպասում էր, իսկ նա շատ գեղեցիկ էր ու կրթւած և ինձ էլ շատ էր սիրում, իսկ ամենից գլխաւորն այն էր, որ նա երեսուն հազարի օժիտ ունէր: Նա ապրում էր Սօկօլնիկա ամարանոցում, ես այնտեղ էլ գնացի:

Նա նստած էր մեր երկուսիս սիրած նստարանի վրայ, բարձրը ու սոււերախիտ եղէնու տակ: Երբ նա ինձ տեսաւ, տեղից վեր թռաւ և ուրախ-ուրախ ինձ ընդառաջ եկաւ ու ասաց.

— Որքան անգութ էք եղած դուք, միթէ կարելի է այդչափ ուշանալ. չգիտէք որ առանց ձեզ ես խիստ տխրում եմ:

Ես համբուրեցի նրա փոքրիկ ու քնքշիկ ձեռքը և յուզւած ու աչքերս գետին գցած՝ նրա հետ միասին անցանք ու նստեցինք միևնոյն նստարանի վրայ: Ես յուզմունքիցս այնպէս էի դողում, որ թւում էր թէ սրտիս պայթումը մօտ է: Զարկերակս շատ արագ էր խփում... և այդ բոլորը զարմանալի էլ չէր. ամեն ինչ կախւած էր այդ երեկոյից:

Ես եկել էի վերջնականապէս որոշելու իմ ապագան:

Եղանակը շատ գուրեկան էր ու սքանչելի, բայց ինձ ի՛նչ, նա ինձ իսկի էլ չէր գրաւում: Մինչև անգամ ես ուշադրութիւն չէի դարձնում սոխակի գեղեցիկ դայլայիկներին, չնայած որ բոլոր փոքր՝ մ

շատէ կարգին randeg-ՎՍՍ-ներին կարծէք պարտաւորեցուցիչ է լսել սոխակի երգելը:

— Ինչո՞ւ էք լսել, — ասաց նա նայելով երեսիս:

— Այնպէս... շատ գեղեցիկ երեկոյ է... ինչպէս է ձեր մայրիկի առողջութիւնը:

— Լաւ... առողջ է...

— Այդպէս... ուրեմն... Վառվառա Պետրովնա . . . ես ցանկանում եմ ձեզ հետ խօսել . . . և հէնց դրա համար է, որ ես եկել եմ... ես լսել եմ, շատ եմ լսել, բայց այլևս արդէն ուժասպառ եղայ... ես անկարող եմ լսել...

Վարեան գլուխը խոնարհեցրեց ու դողդողջուն ձեռքերով ըսկսեց փետրել իր ձեռքի ծաղիկը: Նա գիտէր արդէն, թէ ինչի մասին է, որ ես ուզում եմ խօսել: Ի՞նչ փոքր լսեցի ու նորից շարունակեցի:

— Ինչո՞ւ լսել, որքան ուզում ես լսել, պատանձւել, բայց միևնոյն է, մի օր պիտի ազատութիւն տաս զգացմունքներիդ ու լեզուիդ. թերևս դուք ինձ չհասկանաք կամ նոյնիսկ վիրաւորէք, բայց ի՞նչ արած, ես լսել չեմ կարող:

Ես լսեցի:

Լսեցի, որովհետև հարկաւոր էր մի լաւ և յարմար նախադասութիւն գտնել: Իսկ նա նայում էր ինձ և նրա աչքերը կարծես բողոքում էին ասելով. «դէ ասա էլի, ի՞նչ ես երկարացնում ու տանջում»:

— Դուք ի հարկէ, վաղուց գուշակած կլինէք, — շարունակեցի ես մի փոքր լսելուց յետոյ — թէ ինչո՞ւ եմ ես ամենայն օր գալիս այստեղ և իմ ներկայութեամբ, թերևս ձեզ տհաճութիւն պատճառում: Եւ ինչպէս չգուշակել: Դուք թերևս վաղուց ձեր իւրայատուկ թափանցող, դիտող հոգու կարողութեամբ արդէն գուշակել էք այն զգացմունքը, որ ես... (սաուզա), Վառվառա Պետրովնա!...

Վարեան աւելի խոնարհեցրեց իր գլուխը և նրա ձեռքերը ըսկսեցին աւելի դողալ:

— Վառվառա Պետրովնա!

— Ինչ է...

— Ես... բայց ի՞նչ ասեմ... առանց ասելու էլ ինքնին պարզ է ու հասկանալի... ես սիրում եմ, սիրում, այո սիրում եմ... ես ձեզ սիրում եմ այնպէս, ինչպէս... մի խօսքով գրական աշխարհում որ-

քան վէպեր կան՝ ընտրեցէք նրանց միջից բոլոր սիրային բացա-
դրութիւնները, այդ առթիւ եղած երգումները, նրա սեղանին խոս-
տացած զոհերը և այդ բոլորը իմի գումարեցէք, — դուք կստանաք
այն, ինչ որ այս ընկալիս ես ուզում եմ ասել...

—Վառվառա Պետրովնա! (պաուզա), Վառվառա Պետրովնա!
Մակայն ի՞նչու լռում էք դուք:

— Ի՞նչ ասեմ:

— Միթէ... ո՛չ:

Վարիան բարձրացրեց գլուխը և ժպտաց, «ա՛խ, գրողը տանի»,
մտածեցի ես իսկոյն:

Նա ժպտած և հազիւ լսելի ձայնով ասաց. «և ինչո՞ւ ոչ»:

Ես խելակորոյս բռնեցի նրա ձեռքից և համբուրեցի:

Նա կատարեալ հերոսուհի է...

Մինչդեռ ես զբաղւած էի նրա ձեռքերը համբուրելով, նա գը-
լուխը խոնարհեցրեց և կամացուկ կրճքիս դրեց, ուր ի միջի
այլոց, ես առաջին անգամ մօտիկից տեսայ, թէ որքան գեղեցիկ և
փարթամ մազեր ունէր նա: Համբուրեցի նրա գլուխը և իմ կրճքումս
մի այնպիսի ջերմութիւն զգացի այդ ընկալին, որ կարծես թէ այն-
տեղ և փւռոզ ինքնահոգ դրին:

Երբ Վարիան բարձրացրեց իր գլուխը, ինձ այլևս ոչինչ չէր
մնում անել, քան եթէ անմիջապէս համբուրել նրա շրթունքները...
և համբուրեցի...

Եւ ահա, երբ արդէն Վարիան իմս էր, երբ արդէն երեսուն
հազարի օժիտը ինձ տալու որոշումը ստորագրւելու վրայ էր, երբ...
մի խօսքով, գեղեցիկ կին, շող հարստութիւն և լաւ կարիերան
արդէն միանգամայն ինձ համար ապահովւած էր, որտեղից որտեղ
սատանան եկաւ և իմ գլուխս մտաւ. ես ուզեցի իմ ապագայ
կնոջս մօտ իմ սկզբունքներովս հպարտանալ և փայլել... Իսկապէս,
ինքս էլ չգիտեմ, թէ ես ի՞նչ էի ուզում ասել, բայց և այնպէս
այդ բոլորից մի մեծ յիմարութիւն դուրս եկաւ, որը ոչ ես ըս-
տասում էի և ոչ էլ երազել կարող էի ահագամ:

— Վառվառա Պետրովնա! — սկսեցի ես առաջին համբուրից յե-
տոյ, — հախքան մենք կլինինք ամուսիններ, ես իմ սրբազանագոյն
պարտքն եմ համարում՝ ապագայ թիւրիմացութիւններից խուսա-
փելու համար, մի քանի խօսք ասել: Չեմ երկարացնի...

— Վառվառա Պետրովնա! գիտէք արդե՞տք, թէ ո՞վ եմ ես և ի՞նչ և մի:

Այո, ես ազնիւ եմ, աշխատասէր և հպարտ... Միևնոյն ժամանակ ես մեծ ապագայ էլ ունեմ... Բայց ես աղքատ եմ... ես ոչինչ չունեմ...

—Ես այդ գիտեմ, բայց փողի մէջ չէ միայն երջանկութիւնը, — ասաց Վարիան:

—Այո, ի հարկէ, և ով է ասում, որ միայն փողի մէջ է երջանկութիւնը. ես... ես հէնց հպարտ եմ իմ աղքատութեամբ և այն կոպէկները, որը ես վաստակում եմ իմ գրական աշխատանքով, նրանց չեմ փոխարինիլ այն հազարների հետ, որոնք... որոնք...

— Հասկանալի... բայց...

—Ես աղքատութեան սովոր եմ, ես կարող եմ մէկ շաբաթ նոյնիսկ չճաշել, ոչինչ չուտել, բայց դուք, դուք, որ նոյնիսկ անկարող էք երկու քայլ անել առանց կառքի, դուք, որ ամեն օր նոր, նոր զգեստներ էք հագնում, անտեղի փող էք շարտում աջ ու ձախ, դուք, որի համար ոչ մօղային դունաւոր հագուստներ չունենալը մի կատարեալ դժբաղտութիւն է, մրթէ՞ կհամաձայնէք զրկւել այդ երկրաւոր երջանկութիւնից՝ ինձ պէս մէկի համար, ասացէ՛ք:

—Բայց չէ՞ որ ես փող ունեմ, ես օժիտ ունեմ:

—Այդ դատարկ բան է. ուրիշի տասնեակ հազարները երկարատե կեանք չեն ունենում, նրանք խժուում են շատ կարճ ժամանակում, մի երկու տարում, իսկ յետոյ... զրկանք, արտասուներ... Հաւատացէք սիրելիս, իմ փորձառութեանս, ես գիտեմ, գիտեմ թէ ինչ եմ ասում: Որպէսզի ոյժ ունենալ կռիւ մղել կեանքի կարիքների դէմ, պէտք է ունենալ կամք և գերմարդկային տոկունութիւն... «Այ, ես էլ յիմար, յիմար բանէր եմ դուրս տալիս է»... մտածեցի ես ու շարունակեցի:

—Վառվառա Պետրովնա! մտածեցէք, լուրջ մտածեցէք, թէ որպիսի վճռական քայլի առաջ էք կանգնած դուք: Այդ քայլը ծանր է և անդառնալի:

Ունի՞ք ոյժ ինձ հետևելու, — հետևեցէք, զգում էք ձեզ թոյլ պայքարելու — մերժեցէք! Օ՛, աւելի լաւ է ես ձեզնից զրկւեմ, քան դուք՝ ձեր հանգստութիւնից: Այն հարիւր բուրլին, որ ես ստանում եմ ամեն ամիս իմ գրական զբաղմունքներիցս — ոչինչ է, նա չի բաւականացնի: Մտածեցէք քանի ուշ չէ...

Ես տաքացած բարձրացայ տեղիցս և շարունակեցի:

— Մտածեցէք, որտեղ կամքի ոյժ չկայ, այնտեղ կայ միմիայն արտասուէք, նախատինք, անժամանակ ծերութիւն: Զգում էք ձեր մէջ այնքան ոյժ, որ ինձ հետ միասին կարող լինէք ապրել այն կեանքով, որ իր արտաքինով ձեր ներկայ կեանքի կատարեալ հակապատկերն է, որը ձեզ օտար է... (պաուզա):

— Բայց չէ որ ես օժիտ ունեմ:

— Որքան է, քսան, երեսուն հազար: Հա, հա, հա, միլիօն... և վերջապէս միթէ ես ինձ այնքան թոյլ կտամ, որ սեփականացնեմ այն, ինչ որ... ո՛չ... երբէք... չէ որ ես հպարտ մարդ եմ:

Սկսեցի նստարանի շուրջը մի քանի անգամ անց ու դարձ անել: Վարիան մտածում էր: Ես յաղթանակը տարայ, նշանակում է ինձ անչափ յարգում է, որ իմ ասածները նրան խորը մտածմունքներ պատճառեցին:

— Ուրեմն, կամ ինձ հետ զրկանքներով լի կեանք, կամ առանց ինձ՝ հարստութիւն: Ընտրեցէք այս երկուսից մէկը: Ոյժ ունի՞ք ընտրութիւն անելու... Ու այդպիսի տօնով ես երկար խօսեցի և աննկատելի կերպով ինքս ինձ մոռացայ: Պօսում էի և միևնոյն ժամանակ զգում, որ իմ մէջ խօսել է սկսում երկու ձայն... մէկը շարունակում է այս ճառը, որը սկսել էի, իսկ միւսը՝ երազում էր. «հապա սպասիր բարեկամս, քո երեսուն հազարի գլխին այնպիսի քար գցենք, որ դու էլ չիմանաս»:

Իսկ Վարիան լռում էր ու լռում:

Վերջապէս նա տեղից վեր կացաւ ու ձեռքերը մէկնելով ինձ ասաց:

— Շնորհակալ եմ ձեզանից... և այդ ասաց նա մի այնպիսի ձայնով, որ ես ցնցեցի և նայեցի նրան: Նա լալիս էր:

— Շատ շնորհակալ եմ, — շարունակեց նա. — դուք շատ լաւ արիք, որ ամեն ինչ անկեղծօրէն ասացիք: Եւ շատ քնքոյշ եմ... ես չեմ...

Այս ասելով նա սկսեց բարձրաձայն հեկեկալ: Առհասարակ երբ կանայք լալիս են, ես միշտ շփոթւում եմ, ներկայ դէպքում ես առաւել:

Մինչ ես մտածում էի ինչ անել, նա հեկեկոցը կտրեց ու սրբեց աչքերը:

— Դուք իրաւացի էք. — ասաց նա — եթէ ես համաձայնեմ ձեր ամուսինը լինել, ես ձեզ կխաբեմ: Ինձ նմանները չեն կարող ձեր

կինը լինելի: Ես հարուստ եմ, քնքոյշ, միշտ կառքերով եմ — ման գալիս, միշտ թանկագին կարկանդակներ եմ ուտում: Ես երբէք սուպ ու ըշշի եմ ուտում: Ես ուրիշ կերպ չեմ էլ կարող ապրել: Ես սովոր չեմ ոտքով ման գալու, յոգնում եմ: Իսկ իմ հագուստեղէնս... Այդ բոլորը դուք ձեր հաշուով պէտք է գնէք... ոչ, ես չեմ կարող... մնաք բարեալ:

Եւ ընդունելով տրագիքական պօզա, մէկէն ու մէկ կարուկ ուճով պատասխանեց.

— Ես արժանի չեմ ձեզ, մնաք բարեալ:

Այս ասաց, շուռ եկաւ ու գնաց:

Իսկ ես... ես մեխել էի կանգնածս տեղում և ապուշ կտրած նայում էի նրա յետևից ու ինձ թւում էր, որ երկրագունդը երեւում է ոտքերիս տակ:

Իսկ երբ ուշքի եկայ, երբ իմացայ թէ որտեղ եմ ու յիշեցի մանաւանդ թէ որչափ մեծ անբախտութիւն է բերել զլիսիս իմ լիզուն, — ես կատաղեցի: Եւ երբ ուզեցայ գոռալ, «կանգնիր, վերագարձիր», նրա հետքն անգամ չկար:

Կանգնեցի, երկար ու բարակ մտածեցի, սակայն իզուր, խայտառակաւ, իսպառ զղջացած տուն դարձայ:

Ուղեփայտի մօտ ձիաքարշ էլ չգտայ. փող էլ չկար որ կառքով գնայի: Մի քանի օրից յետոյ ես գնացի Սօկոլնիկա: Ինձ ասացին որ Վարիան տկար է, պատրաստուում է հօր հետ Պետերբուրգ գնալ տատի մօտ: Այլևս ուրիշ ոչ մի բան չկարողացայ իմանալ:

Այժմս պառկած մահճակալիս վրայ, բարկութիւնիցս վերմակիս ծայրերն եմ կռծոտում ու մազերս փետում: Սրտիցս արիւն է զընում...: Դո՛ւ, սիրելի ընթերցող, գոնէ դո՛ւ ասա, հիմա ինչպէ՞ս ուղղեմ լեզուս գործած յիմարութիւնը, սխալը, ինչպէ՞ս յետ առնեմ իմ ասած խօսքերը, նրան ի՞նչ գրեմ, կամ ի՞նչ ասեմ: Օ. օֆ, խելքիցս շատ վեր է...

Ամեն ինչ կորաւ, փչացաւ, և որքան յիմար կերպով...

Թարգ. Օր. Ա. Ե.



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Յ Ա Ի Ե Լ Ի Ա Ծ

ԵՐԳԻԾԱՅԻՆ ՈՒԹԻՒՆ

Ինչ որ հայոց լեզուի մէջ գործ ենք ածում երգիծարանութիւն, երգիծանք, եւրոպական գրականութեան մէջ ասում է սատիրա: Satira լատինական ծագում ունի որ սկիզբն է satura բառից: Սատուրա կամ սատիրա յունական դիցաբանութեան մէջ կոչւում էին այն լեռնային և անտառային ոգիները, որոնք ներկայացնում էին որպէս արտայայտիչ բնութեան բիրտ, ֆիզիքական ոյժի: Յունական հնագոյն արձանագրութեանց յիշատակարաններում մենք պատահում ենք սատիրաներին, պատկերացրած մի քանի կենդանական բնորոշիչ նշաններով, և որոնց կոչում ենք այժամարդ՝ ոտքերը, թաւ մազերը, ականջները և պոչը այժի են, իսկ երեսը, մարմնի կազմւածքը, ձեռքերը՝ մարդու: Սատիրաներին յատուկ են եղել ճարպիկ շարժումներ, թռչկոտում, կանանց և գինու յետևից ընկնել, պարել և զանազան օրգիական զլարձութիւններ սարքել: Հաւանական է թւում, որ սատիրաների այս զլարձասէր բնաւորութիւնից բառի նշանակութիւնն անցել է որպէս տերմին զլարձական ուրախ քերթւածքներին, հեգնանքներին և երգիծաբանութեան— սատիրային: (Սատիրաները չպէտք է շփոթել կենտավրոսների հետ (մարդաձի):

Այսպիսի պատահական ծագում ունենալով հանդերձ սատիրան՝

«Առան»-ի խմբագրութեան սիրալիր առաջարկութեամբ՝ կազմում ենք ներկայ համառօտ տեսութիւնը երգիծաբանութեան մասին:

Գ. Լ.

*) Պ. Գ. Լեոնեանի ներկայ աշխատութիւնը խմբագրութիւնս ուշ ստանալու պատճառով, հնարաւորութիւն չունեցաւ լր յատկացելիք՝ յառաջաբանի բաժնում դնելու:

Խմբագրութիւն:

երգիծաբանութիւնը յետագայում այնպիսի լայն ստորաբաժնում-ներ ունեցաւ, որ մեր ժամանակի գրականութեան տեսութիւն կազմողները դժւարանում են թէ ո՞րչափ լայն է տարածում իր թեւերը սատիրան գրական այս կամ այն ճիւղի վրայ, և կամ գրական երկերի ո՞ր բաժինն է որ կարող է երգիծաբանութեանը լայն և ազատ ասպարէզ տալ:

Ի՞նչ է երգիծաբանութիւնը: Երգիծաբանութիւն իր լայն հասկացողութեամբ նշանակում է ժամանակակից կեանքի մերկացումը նա ծաղրը քանսատնդծոթեանս այս կամ այն ձիւղի մէջ: Նեղ մտքով երգիծաբանութիւնը կարող է վերաբերել ոչ ամբողջ կեանքին, այլ մի ժողովրդի, մի հասարակութեան, մի խմբակցութեան, ծաղրելով նրա թոյլ կողմերը և թերութիւնները: Եթէ երգիծաբանը ծաղրի առարկայ է դարձնում մի անհատ, այդ անհատը վերցնում է ոչ այդպիսին, այլ որևէ մէկը իր նմաններից, որպէս ներկայացուցիչ որոշ դասակարգի, որոշ խմբակցութեան:

Կլասիք գրականութեան մէջ սատիրան, երգիծաբանութիւնը արտայայտւել է լիրեք բանաստեղծութեան և թատերիգութեան մէջ, ապա անցել է վէպի, նամակագրական երկերի, մանր պատմաճօքների և մինչև իսկ հրապարակախօսութեան շրջանները. էլ չենք ասում թէ նոյնիսկ գրականութիւնից էլ անցաւ նկարչութեան մէջ և ստեղծեց ծաղրանկարը, կարեկատուրան:

Շատ անգամ երգիծանքը, սատիրան շփոթում են հումորի humor=юмор հետ, այդ առաջ է գալիս նրանից, որ երկու տեսակ գրաճօքների մէջ էլ գլխաւորը եթէ ոչ միակ նիւթը ծաղրն է, այլ այդ այդպէս լինելով հանդերձ, երկուսի մէջ եղած տարբերութիւնը խիստ մեծ է:

Երգիծաբանութեան մէջ հեղինակը անխնայ հարւածող է, կրժող, խայթող, մերկացնող և ծաղրը դաժան, թունալից (սարկազմ), հումորի հեղինակը հաշտեցուցիչ դեր է խաղում ծաղրելով, այպանելով հանդերձ: Ինքը համակրում է, ցաւում է որ ծաղրում է. և ծաղրում է արտասուխառն, ինչպէս ռուսներն ասում են, «СМѢХЪ СЪВОЗЪ СЛЕЗЫ» (օրինակ՝ Գօգօլ): Երգիծաբանը չի հաւատում, կամ համարեա չի հաւատում որ երբեիցէ կուղղւի իր ծաղրի առարկան, աւելի յոռետես է, դրա համար նա հարւածում է անխնայ, կատաղի կռիւ է յայտարարում, մինչդեռ հումորիստ հեղինակի ծաղրը փաղաքշող ժպտի է նման, որովհետև հաւատում է լաւ ասպաղային,

հա լուսատես է, աւելի իդէալիստ է. եւ վերջապէս հումօրը գործունի միայն անհատի, անհատական հոգեբանութեան հետ, մինչդեռ սատիրան ծաղրի առարկայ է դարձնում ամբողջ կեանքը, մարդկութիւնը, միջավայրը: Եթէ երգիծաբանը անհատով էլ զբաղւելիս լինի, ինչպէս վերեւում ասացինք, նրա նպատակը կլինի ընդհանուրը, այդ անհատը կլինի նրա համար մի սքեմատիք տիպ, մի էկզեմպլարը ընդհանուրի միջև:

Գեղարւեստօրէն արտայայտուելու գործում էլ սատիրան խեղճ է երբ հեղինակը գուրկ է հումօրից, որովհետև երգիծաբանը ուժեղ թափով ցնցելով իր քննադատելի առարկան, ինքն էլ կորցնում է իր հոգու անկողմնակալ հաւասարակշռութիւնը և դժւարանում է թափանցել տւեալ անհատի հոգեբանական ապրումների մէջ: Այստեղ սօցիալ-բարոյագիտական շահերը գերակշռում են գեղարւեստական պահանջներին:

Մինչդեռ երբ գրւածքի մէջ աւելի ծանրանում է հումօրը, հեղինակն անկախ վերոյիշեալ հանգամանքներից՝ առաջնութիւն է տալիս գեղարւեստական պահանջներին:

Երբ հեղինակը շնորհալի է, տաղանդից գուրկ չէ, երգիծական գրւածքներում աւելի ևս ճանաչելու է գրական էտիքան, քաղաքավարութիւնն ու վայելուչ ոճը, զգուշանալով գոեհիկ, ցինիկ ոճերից ու դարձւածքներից:

Երբ հեղինակը իբր երգիծաբանութիւն իր գրւածքի մէջ միակողմանի և կրքոտ հայացքով միալար վատաբանում ու դիտաւորեալ կերպով պարսաւում է որևէ անհատի, հասարակութեան կամ ազգի, առանց երգիծանքի և նրա աղը կազմող հումօրի, այդպիսի գրւածքները կոչւում են պաւսֆլիտ (պարսաւագիր): ¹⁾

Երբ հեղինակը երգիծաբանական իր աշխատութեան մէջ որևէ մի անհատի կամ հասարակութեան մասին թէկուզ անուղղակի կերպով չափազանց վիրաւորական, խայտառակ և սուտ բաներ է գրում, այդպիսի աշխատութիւնը կոչւում է պաւսկիլ: ²⁾

¹⁾ Պաւսֆլիտների գեղեցիկ օրինակ կարող են ծառայել հրապարակախօսական երգիծաբանութեան մէջ Սուվօրինի, Վելիչկոյի և Մենշիկովի մտածածին ֆելիետօնները հայերի վերաբերութեամբ, «հայոց մեծ թագաւորութեան», մինչև Ռոստով հասնող Հայաստանի երեւակայեալ քարտէզի մասին գրած բամբաստանքներով:

²⁾ Հայոց գրականութեան մէջ պատկերներ մեղ յայտնի են Միւլուկի «Սատանայի ողբի» և «Աստու» գրւածքները. հեղինակն իր անանը անվայել կերպով անւանարկում է և խայտառակում առաջինում Կիւրեղ եպիսկ. Սրապեանին, երկրորդում՝ Գրիգոր Արծրունուն:

Երգիծաբանական գրականութեանն է պատկանում և այն տեսակի չափական գրւածքները, որոնք յօրինում են մի որևէ յայտանի հեղինակի հանրածանօթ ոտանաւորի չափով, ըիթմով և բառերի կրկնութեամբ, միայն ծաղրելով և աղաւաղելով նրա տողերը: Այդպիսի շարահիւսութիւնները կոչւում են պարօղիս:

Պարօղիաների նպատակն է ծաղրել ոչ թէ յայտանի ոտանաւորի հեղինակին, այլ դարձեալ ժամանակակից հասարակութիւնը կամ որոշ դասակարգը: Ռուս գրականութեան մէջ մենք յիշում ենք Նեկրասովի մի պարօղիան, գրւած Լերմօնտովի «Спи младенецъ» օրօրոցի երգի նմանողութեամբ: Ահա օրինակ մի տունը.---

ԼԵՐՄՕՆՏՈՎ

ՆԵԿՐԱՍՈՎ

Богатырь ты будешь съ виду
И казакъ душой,
Провожать тебя я выйду
Ты махнешь рукой.

Чиновникъ ты будешь съ виду
И подлець душой,
Проважать тебя выйду
Ты махнешь ногой.

Մեր երգիծական գրականութեան մէջ պարօղիաներ պատահել ենք Ռ. Պատկանեանի «Երբ որ մայրը երկունքովի», «Հիմի էլ լռենք», «Թէ սիրումիս թամաշայի», «Մայր Արաքսի» վրայ յարմարեցրած: Օրինակ՝

Երբ որ մայրը երկունքով
Աշխարհ բերէ երեխայ,
Հայրը որդուն մի կոտորած
Պիտի արշին տայ ընծայ:

Երբ երեխան մեծանայ,
Խաղալիքների փոխան
Հայրը որդուն պիտի տայ
Իր կշեռքն ու գրւանքան... և այլն:

Երգիծաբանական գրւածքների մէջ յաճախ ուղեւորով աւելի վերաւորական ծաղրել, գործ են ածում իրօնիս, հեգնանք:

Այստեղ գործ են ածում բոլորովին հակառակ նշանակութիւն ունեցող բառեր և դեռ մի քիչի էլ չափազանցնում են, օրինակ՝ եթէ մէկի քիթը մեծ է, գրում են — «նրա քիթն այնքան փոքր էր,

որ երեսի վրայ չէր երևում, կարծես թէ քիթ չունենար»,¹ կամ մէկը եթէ մի քիչ սևէ, գրում են՝ «նրա երեսն այնքան սպիտակ էր, որ ես բամբակ կարծեցի», և այլն:

Երգիծաբանական-հումորիստական գրւածքների մէջ գործ են ածում ալեգորիա, այլաբանութիւն, որտեղ գործ ածւող որոշ բաների տակ թաղնւած են լինում ուրիշ մտքեր: Այլաբանական ձևը շատ ընդունւած է առածների, առակների և աշուղական-սատիրական երգերի մէջ: Օրինակներ՝—

Առած. «էշին ուէհան տւին որ հոտ քաշի, կերաւ»:

Առակներ «Փիղը և քոթոթը», «Գայլը և գառը», «էշը և սոխակը» և այլն:

Պարզ է որ այստեղ բոլոր կենդանիները, ինչպէս և ուէհանը ունին ուրիշ նշանակութիւն: ¹)

Ահա աշուղական երգերից այդպիսի մի քառեակ. —

Գայլը վերան ոչխարի մորթի հագած
Գառներուն պահապան, հսկող է դառած,
Աքլարը քարոզչի վերարկու հագած,
Ամբիօն է ելել, խելքի աշեցէք...

Այսչափը բաւարար համարելով երգիծաբանութեան տեսութեան մասին, անցնենք նրա համառօտ պատմութեանը, օգտւելով մի քանի ստար աղբիւրներից:

Երգիծաբանութեան պատմութիւնը սկիզբն է առնում շատ հին ժամանակներից: Չինաստանում երևաց հնագոյն «քառեակների գիրքը» բաղկացած էր երգիծական ոտանաւորներից: Յունաստանում յայտնի են երգիծաբանական կօմեդիաները, ինչպէս Արեստոֆանի «Ամպերը» (թէև սա աւելի պատկերի էր քան իսկական սատիրա.) խայթիչ եամբաներ և պարարօգաններ: Հռոմէական բանաստեղծութեան մէջ երգիծաբանութեան որոշ կաղպար տւեց Եննիոսը և դարձաւ իր հայրենիքում նրա հիմնադիրը (3-րդ դար Ք. առ.): Եննիոսը չունէր սակայն այն փայլուն տաղանդն, ինչ նրա յետնորդ հոռմայեցի նշանաւոր քերթողները. — բայց նա ժողովրդական բանաւոր գրականութիւնից ու փողոցային ծաղրածութիւնից նիւթեր վերց-

¹) Չպէտք է շփոթել կենդանական կեանքից վերցրած բալլանդները, ինչպէս օր. Յովթումանեանի «Շունն ու կատուն» կամ «Անբաղդ վաճառականները» որոնք ալեգորիա չեն պարունակում:

նելով երգիծաբանութեան որոշ ձև մշակեց: Վիրգիլիոս լատին բանաստեղծութեան պարծանքը, այսպէս է խօսում Եննիոսի մասին. — «Նրա աղտեղութիւնների մէջից ես գոհարներ եմ հաւաքում»:

Այնուհետև մէկը միւսի ետևից երևացին հոռմէական բանաստեղծութեան խոշոր երգիծաբանները — Լուկեիոս, Հորացիոս, Պերսիոս և Իւլիալ և իրենց քերթւածներով այնպիսի մեծ ազդեցութիւն արին, որ յաջորդ դարերում եւրոպական միջնադարեան ամբողջ գեղեցիկ գրականութեան մէջ համեմատ էր երգիծաբանութեան տարրը:

Շատ ասիտոս, որ այդ հեղինակներից հատուածներ չունեն հայերէն թարգմանութեամբ, որ մի քանի նմուշներ առաջ բերէինք, որքան յիշում ենք Հորացիոսից միայն մի քանի կտոր պէտք է, որ Վենետիկցիք թարգմանած լինեն: Հետաքրքրւողը աւելի շուտ կարող է կարգալ նրանց ուսերէն թարգմանութիւնները, թէև ոչ լիակատար, բայց բնագրին հարազատ հեքզամետր չափով և յաջողակ: ¹⁾

Ահա միայն մի երկու տող Հորացիոսից. —

„Лучше быть воиномъ! что имъ! лишь бинутся въ битву съ врагами
Часть не пройдетъ — или скорая смерть, или радость побѣды!“

Յաջորդ դարերում հեազհետէ լոյս տեսան երգիծաբանական երկեր գրականութեան զանազան ճիւղերում: Մեր յօդուածի ծաւալը շատ չմեծացնելու համար մենք կթւենք միայն արևմտեան ազգերի բելետրիստիկայի մէջ այն խոշոր անուանները, որոնք թողել են երգիծաբանական նշանաւոր գործեր:

Ճրանսիայում՝ Ռիւդբեֆ, — հեղինակ «վարդի վէպը» առաջին երգիծաբանական վէպի: Ռաբլէ՝ Ժողովրդական սրամիտ և ուրախ ստեղծագործութիւններից իր անսպառ նիւթերը վերցնող ²⁾, Ռօնսար, Դիւպլէ, Բուալօ-քննադատ երգիծաբան, Վօլտեր, Հիւգօ: Վերջին անուանները Փրանսիական լիրիք բանաստեղծութեան մէջ երգիծաբանութեան տարրը հասցրին այն բարձր դրութեան, ինչ հասցրեց կօմեդիաների մէջ անմահ Մօլիէրը: Գերմանիայում՝ Հայնրիխ Յօն Մելք, Սերաստիան Բրանդ, Մուրներ և անւանի երգիծաբան Յիշար: Երգիծական հումօրիք մի քանի երկեր թողել են նաև Ու-

¹⁾ „Гораций“ Дмитрева. Моск. 1858.

²⁾ „Ювенал“ Минаева. Митава, 1879.

լանդ, Գեօթէ և Հայնէ: Անդլիայում մի քանի երկրորդական անունների մէջ փայլում է Ջէրօմ Ջէյմսի և մեծ Սվիֆտի անունը «Գուլիվերի ճանապարհորդութեան» այդ համաշխարհային հեղինակը: Իտալիայում և Սպանիայում դարձեալ մի քանի անուններ, որոնք խոշոր տեղ չեն գրաւում ընդհանուր գրականութեան պատմութեան մէջ: Մի հոյակապ մեծութիւն, որի անունը Պերինեան լեռներից հնչեց դէպի համաշխարհային քարտէզը, այդ հռչակաւոր Սերվանտէսն էր՝ «Դոն-Քիշօտի» մեծանուն հեղինակը:

Քնարական բանաստեղծութեան, դրամայի, վէպի նիւթ դարձել էին արդէն երգիծաբանութիւնն ու հումօրը, մնում էր որ մանրավէպերն ու փոքր, հեշտ ընթերցանելի վիպակներն ու պատմաճփաներն էլ ունենային իրանց հանճարեղ երգիծաբանը, որ համաշխարհային հռչակ ունենալով ամբողջ երկրագունդը տարածէր իր համբաւը, և այդ մեծ անունը տեց մեզ Նոր աշխարհը՝ Ամերիկան, ստեղծելով Մարկ Տէէնի մեծ անունը: Նորերս վախճանեց Մարկ Տէէնը և ամբողջ աշխարհում հազիւ թէ մի լրագիր լինի, որ չողբայ նրա կորուստը: Ամեն մի քաղաքակիրթ լեզուով թարգմանուած են նրա երկերից գոնէ մի քանի կտոր: Հայերէն թարգմանուած կան նրա «Իշխանն ու աղքատը», «Թէ ինչպէս դարձայ խմբագիր» և մի քանի մանր պատմաճփաներ:

Ռուս գրականութեան մէջ երգիծաբանութիւնը ծաղկեց 18-րդ դարում, բայց ռուս երգիծաբանութիւնը վաղուց արդէն առատ նիւթ էր մատակարարում զաւէշտի ու երգիծանքի:

Առաջին երգիծաբանը բառի իսկական մտքով եղաւ Կանտեմիրը, այնուհետև երևան եկաւ Դմիտրև լիրիք բանաստեղծութեան մէջ, Փօնովիզին, Գրիբօեդով, Գօգօլ՝ կօմեդիաների մէջ, Սալտիկով-Շչեդրինը, Չելսով մանր պատմաճփաների մէջ: Ահա Դմիտրևից մի քառեակ երգիծաբանութիւն — էպիգրամա —

Мнѣ лекарь говорилъ: вѣтъ и одинъ больной

Не скажетъ обо мнѣ, что не доволенъ мной

Кончено, думаю я, никто не скажетъ

Смерть всякому языкъ привяжешь. ¹⁾

*) Բժիշկն ասաց, ոչ, ոչ մի հիւանդ չի ասիլ, որ դժգոհ է ինձանից: Ի հարկէ, մտածում եմ ես, ոչ ոք այդ չի ասիլ, որովհետև մահը ամենի լեզուն կապում է:

Դեռ դպրոցական կեանքից չենք մոռացել, որ պահանջում էին անգիր անել կանտեմիրի «Къ уму своему», Դմիտրևի «Чужої толкѣ», և Լերմոնտովի «На смерть Пушкина»:

Ուժեղ, շեշտակի և դառն երգիծանք բովանդակում է, ինչպէս առիթ ունեցանք յիշելու, և ալեգորիք առակախօսութիւնը: Առաջին նշանաւոր առակախօսը յայտնի է հին յունաց մէջ Եզովբոսը. այնուհետև հռոմէական գրականութեան մէջ Փետրոսը, նոր դարերում՝ ֆրանսիականի մէջ Լաֆօնտէնը և ուսաց մէջ Կոիլովը:

Նորագոյն գրականութեան մէջ երգիծաբանութիւնը մասնաւորապէս չի զբաղեցնում բելետրիստներին. օրւայ չարիքը, ընթացիկ կեանքի յոռի կողմերի մտրակումը բանաստեղծութիւնից մտել է հրասարակախօսութեան՝ լրագրութեան մէջ, և բոլորովին բնական է որ պէտք է նւագէր, եթէ ոչ իսպառ անհետանար լիբիք երգիծաբանութիւնը և դարդանար օրագրային երգիծանքն ու իւմօրը:

Եւ լրագրութիւնը առաջ քաշեց իր տաղանդաւոր երգիծաբան ժուրնալիստներին: Ներկայումս ոուս գրականութեան մէջ որքան կարգացւում է Գօրգին, Անդրէևը, Բայլմօնտն ու Մերեժկովսկին, նոյնչափ ազահաբար կարգացւում են «Ֆելիետօնիստների թագաւոր» Դօրօշևիչի, յայտնի Եաբլոնովսկու և Ամֆիտեատրովի ֆելիետօնները:

Օտարներից անցնենք դէպի մեր աշխարհ, տեսնենք ի՞նչ է տւել հայ կեանքը:

Հայոց հին գրականութեան մէջ որքան մեզ յայտնի է երգիծաբանութիւն չէ եղել. չէ եղել, որովհետև գրերի գիւտից մինչև միջին դարերը եկեղեցական գրքերից ու պատմութիւններից զատ ուրիշ բան չեն թողել մեզ մեր նախորդները, գոնէ մեզ ոչինչ չէ հասել: Օրինակելի բացառութիւն է կազմում Մխիթար Գօշի վարդանի առակները, Եզովբի, Փետրոսի առակների նմանութեամբ: Այնուհետև միջնադարեան տաղերի և ոտանաւորների մէջ հատ հատ պատահում ենք երգիծաբանական կտորների, այլաբանական դարձւածքներով սրոնք, սակայն, անմեղ զւարճախօսութիւններ են առանց սատիրայի կամ պարունակում են բարոյագիտական դիտաբանիք մտքեր:

Զգիտենք սխալում ենք թէ ոչ, բայց մենք հայ երգիծաբանութեան կարապետ համարում ենք Միքայէլ Նալբանդեանին իր «Յիշատակարանների» և «Մեռելահարցուկ» վէպի կամ պատմւածքի

համար: Վերջին պատմաւածքը գեղարւեստական մի առանձին բան չէ ներկայացնում, բայց որպէս առաջին փորձ պէտք է որ իր որոշ տեղը գրուի: «Մեռելահարցուկ» իր կրթոտ յարձակողական բովանդակութեամբ աւելի շուտ մի պամֆլետ է, բայց և այնպէս իր մէջ ունի և սատիրայի յաջողւածքներ:

Նալբանդեանից յետոյ գալիս է Ռ. Պատկանեանը թէ իր մի շարք երգիծարանական ոտանաւորներով («Մայրաքաղաքում կըրթւած հայ երիտասարդ», «Հայ օրիորդ», «Հայերիս բաղձանքը» և այլն) և թէ Սիւլիւկ ստորագրութեամբ մի քանի յաջող երգիծարանական պատմաւածքներ Նոր-Նախիջևանի և գրական բարբառով:

Այնուհետև երևացին Ա. Ծատուրեանի «Գրչի հանաքները», որոնք պարունակում են առաւել կամ նւազ չափով սատիրա, աւելի ցայտուն արտայայտւած:

Ինչ որ ուրիշ ազգերի մէջ, նոյնը կրկնւեց և մեզանում, գուտ գեղարւեստական գրականութիւնից երգիծարանութիւնը անցաւ հրապարակախօսութեան մէջ, և այստեղ պէտք է ասել՝ ունեցաւ իր խոշոր ներկայացուցիչները:

Դեռ մօտանցիկ դարու 80 թւին «Փորձում» տպագրւել սկսեցին «Հոսհոսի ձեռատետրը» վերնագիրը կրող Պօլսական կեանքը վարպետօրէն ծաղրաբանող մի շարք նամակներ Եւ այդ հոսհոսը դարձաւ մեր միակ տաղանդաւոր երգիծաբանը, Յակոբ Պարոնեանը, որ միմիայնց յետևից լոյս ընծայեց իւր միւս աշխատութիւնները, — «Պտոյտ մը Պօլսոյ թաղերուն մէջ», «Ազգային Ջոջեր», «Մեծապատիւ մուրացկաններ» և այլն, որոնք անմահ են մնալու մեր գրականութեան մէջ իրենց հազւագիւտ երգիծանքով և հումօրով:

Պարոնեանից յետոյ թիւրքահայ, կամ աւելի ճիշտն ասել պօլսահայ գրականութեան մէջ յայանի են որպէս երգիծաբան գրողներ Յ. Ալիիարը և Ա. Ատօնեան: Առաջինը իր մանր պատմաւածքներով, երկրորդը պատկերներով ու կառձառօտ ֆելիետօնաձև յօդւածներով աշխատում են հարազատօրէն արտայայտել «հոսհոսական» կեանքը, բայց երբեմն պասկւիլացնում են իրենց երգիծարանութիւնը:

Մեր տեսութիւնը հայ կեանքի վերաբերմամբ կարելոյն չափ լրիւ անելու համար, չենք կարող անտես անել մի այլ միջավայր, որը ոչ պակաս արժէքաւոր նիւթեր է տւել մեր երգիծարանութեան, և որը շատ քիչ է ծանօթ մեր գրական հասարակութեան:

Դա աշուղների միջավայրն է, որը աւել է երգիծաբանական այնպիսի արժէքաւոր նիւթեր որոնց մասին չենք կարող լռութեամբ անցնել: Շատ նշանաւոր է աշուղ Շիրինի «Աքլորը»:

«Ախ Յովհաննէս վարդապետ ի՞նչ ասեմ ձեր աքլորին»... և այլն: Սա ունի իր հետաքրքրական պատմութիւնը: Շիրինի այս երգիծաբանական երգին պատասխանեցին ուրիշները նոյնպէս երգերով և ծաղրել են էջմիածինը, Հոռմը և այլն:

Մեր ժամանակի աշուղների մէջ նշանաւոր է և շատ տարածւած է Զիւանու «Խելքի աշեցէք», «Եղած չեղած մէկ հաշիւ է» և այլն երգերը:

Աշուղական երգիծաբանական երգերը գրականի հանդէպ այն առաւելութիւնը ունէին, որ բացի կարդացելը երգւում էին հասարակութեան ամեն խաւերում, և մտրակելով ու ծաղրելով «հայտեացին», «ազգութային», «ազահ և ժլատ հարուստին» զգալի տրպաւորութիւն էին թողնում:


Օրագրային, հրատապ, այժմէական կեանքը, ինչպէս ասացինք ստեղծեց և զարգացրեց լրագրային երգիծաբանութիւնը: Ինչպէս եւրոպացիք ու ռուսները հիմնեցին իրանց երգիծաբանական թերթերը, այնպէս էլ մեզանում պակաս չեղան այդպիսի փորձ անողները: Դեռ 1857 թւին Կ. Պոլսի «Մեղուն» հետևելով ֆրանսիական թերթերին բաց էր արել և երգիծաբանական բաժին, այնուհետև հետզհետէ թիւքիայում լոյս են տեսել հետևեալ երգիծական պարբերականները. — Ափեղցփեղ, Դիմակ, Լապտեր Դիօզէնեան, Խիկար (Պարոնեանի), Աւել, Զիկ-Զակ, Խուզարկու, Կաւուօշ, Կոտօշ, Կիկօ, Մտրակ, Նշարակ, Ֆրուֆրու, Լելա, Խարազան Կառափնար: Ամերիկայում՝ Ապտակ: Ռուսահայոց մէջ՝ Ծուղրուղու, Սափրիչ, Խաթաբալա, Հայելի, Զուռնա, Աննամուս, Կայծեր: Բայց այստեղ պէտք է նկատենք, որ վերջերս նման թերթերի այսպիսի աճումը դեռ գրաւական չէ որ մեզանում երգիծաբանութիւնը ծաղկել է և խոշոր քայլեր է անում. ընդհակառակը, այդ թերթերից շատերը մի կամ մի քանի համար են հրատարակել իւր «խմբագրի» մաղձը թափելու այս կամ այն մարդու վրայ, և այս թերթերից շատերի մէջ անգամ այնպիսի բաներ են տպագրւում որ հեռաւոր կասկանգամ չունեն երգիծաբանութեան՝ սատիրայի հետ, այն սատիրայի ինչ որ մենք յիշեցինք վերևում իրենց տաղանդաւոր ներկայացուցիչներով: Տափակ, բութ, Մօլլա-Նասրեղի-

նային իբր սրախօսութիւնները երգիծաբանութիւն չեն և ոչ փողոցային ցեխը՝ գեղարւեստ:

Այդ մեր թւած երեսունի չափ պարբերականների մէջ երկար կեանք ունեցաւ Թիֆլիսի «Սաթաբալան», որը պէտք է տսել թէև ոչ բոլորովին ազատ վերև յիշած թերութիւններից, բայց և այնպէս կարողացաւ իր շուրջը գրաւել ոուսահայոց սակաս թիւ երգիծաբան ժուրնալիստներին, ինչպիսիքն են Տմբլաչի Սաչան, Ղալայչի Մարգար, Սալ-Ման, Ճնտրիկ Աբեղայ և մի քանի նոր գրողներ՝ Փալանդուզ-Մկո, Մեֆիստոֆէլ, Լէօնիդ, Բաշխօ, Փարեմուզ և այլն:

«Կոան»-ի խմբագրութեան նպատակը ողջունելի է հէնց այն նպատակով, որ ցանկանում է հասարակութեան ձեռքը տալ մի ընդարձակ հատոր, որի մէջ ամփոփած կլինի ներկայ ոուսահայ սուր միտքը, երգիծանքն ու հումօրը մեր ազգային հասարակական խնդիրների մասին: Իսկ ձրքան է յաջողւել նրան այդ, պատասխանը պէտք է տայ անաչառ քննադատութիւնը:

Գ. ԼԵԻՈՆԵԱՆ



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Կռան»-ի քննադատների զիջողաբար կամ աչառու վերաբերմունքի համար չէ, որ ժողովածուի խմբագրութիւնը կարևոր համարեց դնելու իր այս ասելիքը, այլ ընթերցող հասարակութեանը պարզել մի քանի իրական հանգամանքներ:

Երբ մենք ձեռնամուխ եղանք մեր այս վաղուցւան մտադրութեան իրագործման քայլին— ժողովածուի հրատարակութեան գործին, մենք զգում էինք արդէն մեր ձեռնարկելիք գործի ամբողջ ծանրութիւնը. իսկ այդ ծանրութիւնը ծնունդ էր մեզնից միանգամայն անկախ պատճառների:

Երկու գլխաւոր հանգամանքներ, որոնք իրենց հերթին ծնեցին այդ ծանր պայմանները, են — առաջին, որ մենք ձեռնամուխ էինք լինում հրատարակելու այսպիսի մի գործ գաւառում, և երկրորդ որ մեր հրատարակած ժողովածուն գուշտ իւրօրիւտուսկան ևս ստորուսկան էր շինելու:

Եթէ նոյնիսկ աչքի առաջ չունենանք այն հանգամանքը, որը իր հերթին ամենաէական նշանակութիւնն ունի և ամենաուժեղ գրաւականն է գրական ձեռնարկութիւնների առաջ գալու և զարգանալու համար,— շրջապատի հասարակական կեանքի տւեալ կուլտուրական պայմանները և նրա հոգեկան, մտաւոր-բարոյական կեանքի զարգացման աստիճանն ու շահերի գիտակցումը և նման ձեռնարկութիւններին ու գործերին նպաստող համապատասխան մթնոլորտն ու պայմանները, որ մեր գաւառական միջավայրերում իսպառ բացակայում է, եթէ դեռ աւելին չասենք՝ եղածը խեղդում,— բաւական է ՚ի նկատի ունենալ այն, որ այդպիսի մի գործ երբ մտադրւում է իրագործւել գաւառում, շատ քիչ է արժանանում

մեր կենդրոնական գրականագէտների բարեհաճ ուշադրութեանը...

Դեռ մինչև այժմ էլ մեր գրականագէտների մէջ նախապաշարմունքի թէ մի այլ տրամադրութեամբ ասենք գոյութիւն ունի այն, որ նրանք խիստ, շատ խիստ բարձրութիւնից են նայում մտաւոր—գրական իւրաքանչիւր մի շարժման կամ այդ ուղղութեամբ ձեռնարկելիք իւրաքանչիւր մի գործի, երբ նա տեղի է ունենում է գաւառում, իբր մտաւոր կենդրոնների կոչումն վայելող միջավայրերից դուրս... թւում է թէ գրականութիւնը միջավայրի մենաշնորհ է, կամ միջավայրը՝ գրականութեան:

Եւ այդ միջավայրերում բազմաժ մեր գրականագէտներն ու մտաւորականները մի տեսակ փոքրութիւն ասենք, թէ սեփական արժանապատուութեան նւաստացումն են համարում իրենց աջակցութիւնն ու մասնակցութիւնը ցոյց տալու գաւառական գրական ձեռնարկութիւններին:

Դա բուրժւայ և բիրժային հակումներով ու արժէքներով շոյււող և ապրող գրականագէտների իւրայատուկ կողմն է:

Եւ յիրաւի գաւառը իր գրական—մտաւոր կեանքով այնպիսի մի շուկայ չէ ներկայացնում մեր բիրժային գրականագէտների համար, ուր նրանք կարողանան շոյւել ու բիրժային արժէքաւորումներ ստանալ, ինչպէս այդ ուղղութեամբ արդէն իսկ կազմակերպւած մթնոլորդում:

Եւ արժէ՞ արդեօք փոքրանալ, նւաստանալ, իջնել գաւառ...

Ու չեն իջնում և եթէ իջնում են էլ շատ բիշ, և այն էլ որքան դժւարութեամբ:

Եւ մեր հրաւէրին ու կոչին, մեր գրած բազմաթիւ մասնաւոր նամակներին՝ մասնակցելու մեր ձեռնարկութեան,— մեր բիրժային գրականագէտներից (տւեալ դէպքում խօսքը իմօրիստ դրողների ու ժուրնալիստների մասին է ի հարկէ) շատ քչերը արձագանք տւին, շատ քչերը իրենց սրտին մօտ ընդունեցին այն և շատ քչերն իրենց մասնակցութեամբ խրախուսեցին մեզ:

Ու մեր բիրժային գրականագէտների այդպիսի վերաբերմունքը՝ դէպի գաւառական գրական ձեռնարկութիւններն ու շարժումը ոչ միայն մեզ հետ է սլատահում, այլ սա հին երևոյթ է և շատ հին: Ասում ենք հին, որովհետև մեր նորագոյն գրականութեան և հրապարակախօսութեան առաջին շրջաններում ընդհանրապէս և յետագայում էլ՝ մասնաւորապէս նրա ղեկավար շրջաններում աիրում

էր այն համոզմունքը, որ գաւառը ինքնին անկարող է ծնել ու զարգացնել մտաւոր-գրական կեանք և դժւար թէ նրան յաջողի ուսեղծածը պահել: Այս համոզմունքը շատ խոր էր ու կուռն: Եւերը յետագայում դաւառում այդ ուղղութեամբ կատարւած փորձերը եկան հակառակն ապացուցանելու, մեր բիրժային գրականագէտները ոչ միայն խոնարհւեցին կատարուող փաստի և երևոյթի առաջ, այլև եղան անհատներ, որոնք այդ՝ աւելորդութիւն համարեցին և կոչարին յարելու կենդրոնական միջավայրերի գրականութեան ու ժուրնալիստիկային, որով կարծէք միանգամայն ընդմիշտ ուզում էին սրբագործել գրականութիւնը միջավայրի մենաշնորհ դարձնելու սկզբունքը: Եւ ձգտում են այժմս էլ:

Շատերն էին մեզ ասում, որ դժւար թէ մեզ յաջողի բիրժային գրականագէտների ուշադրութիւնը գրաւել և կամ նրանց աշակցութիւնն ու խրախուսանքն ունենալ սակայն մենք կարծում էինք որ ժամանակը, ընթացիկ կեանքը թերևս, յարգած լինեն այն ամենն, ինչ որ կարող էր գոյութիւն ունեցած լինել անցեալում: Բայց փաստը եկաւ մեր կարծիքի հակառակը. աւելի ցայտուն կերպով հիմնաւորելու:

Եւ մեր կենդրոնական գրականագէտներից շատ քչերը, ինչպէս ասացինք, մեզ աշակցեցին:

Երկրորդ հանգամանքն այն է, որ մենք առաջին անգամ փորձ ենք անում մեր իրականութեան մէջ հրատարակելու զՆՈՒ ևրդիժարանսկան մի ժողովածու:

Երբ մենք դեռ նոր էինք սկսել կազմակերպել մեր ժողովածուի հրատարակման գործը և յայտարարել՝ մեզ նիւթեր ուղարկել, մի բարեկամ ժուրնալիստ—գրականագէտ մեզ գրեց, որ մենք ձեռնարկել ենք մի խիստ ծանր և դժւարին գործի, որը թերևս մեզ դժւար լինի յաջողեցնել և գլուխ բերել, որովհետև հայերս, մասնաւորապէս կւվկասահայերս չունենք առողջ, համով-հոտով և ուժեղ իւմօր և իւմօրիստ գրողներ:

Եւ իսկապէս. չափազանց շատ նիւթեր, որոնք ուղարկւած էին ժողովածուիս մէջ գետեղելու համար, եկան ապացուցանելու վերև յիշւած մեր բարեկամի կարծիքը:

Շատ քիչ բացառութեամբ, մենք ոչինչ չստացանք, որոնք նախ համապատասխանէին իւմօրիստական և սատիրական գրականութեան ուղղութեան գոնէ գլխաւոր և հիմնական պահանջներին, և

երկրորդ որոնք ունենային իմաստ, խորութիւն, համ և հոտ:

Մեծագոյն մասը այդ հեղինակների նիւթերի ընտրութիւնն անել չէ կարողացել, իսկական իւմօրը և գեղարւեստը չէ ըմբռնել և ամեն մի գաւգակութիւն և քրքիջ առաջացնող երևոյթ երգիծաբանութիւն ընդունելով, գրի է առել և ուղարկել: Մի մասն էլ ընտրած նիւթը մակերևոյթային է տւել, առանց խորութափանց լինելու նրա էութեանը և առանց կանոնաւոր մշակելու ու արժէքաւորելու այն: Թւում է, թէ մեր այդ իւմօրիստ գրողներն ու ժուրնալիստներն այնքան էլ մեղաւոր չեն, որ շատ յաճախ հեռանում են կամ սայթաքում իսկական գեղարւեստական գրականութեան պահանջներից. որովհետև այն իւմօրիստական և սատիրական մամուլը, որը վերջին տարիներս մեր իրականութեան մէջ այնպէս յախուռն թափով և մեծ քանակութեամբ երևան եկաւ՝ իւր հետ սոսպարէզ հանեց բաւականաչափ իւմօրիստ ժուրնալիստներ, որոնց, սակայն, կանոնաւոր առաջնորդել ու դաստիարակել չկարողացաւ: Եւ մեր իւմօրիստ ժուրնալիստների մեծագոյն մասի մինչ այժմեան տւած գրականութիւնը շատ քիչ է հեռանում վուլգար սրախօսութիւնների և պասկվիլների սահմաններից, իսկ այդ ո՛չ իւմօր է և ո՛չ սատիրայ:


Մենք չենք հաւակնում կարծելու, որ մեր խմբագրած ժողովածուն միանգամայն զերծ է պակասութիւններից և կամ համապատասխանում է այն բոլոր պահանջներին որոնց ընդգրկում է իւմօրիստական գրականութիւնը, սակայն չենք քաշւում նաև ասելու, որ մենք բոլոր հնարաւոր միջոցները գործ ենք դրել, մեր իրականութեան տւեալներից կազմել, ստեղծել մի բան: Իսկ թէ որքան է այն մեզ յաջողւել, մանաւանդ որպէս *առաջին փորձի* իբրև զուտ երգիծաբանական ժողովածուի—այդ էլ թողնում ենք անաչառ քննադատի դնահատութեանը:

Գալով նրան որ հակառակ մեր խոստման, հակառակ մեր գործ դրած ջանքերին, մեր ժողովածուի լոյս ընծայւելը այսքան ուշացաւ, պէտք է ասենք: Անշուշտ ով ծանօթ է տպարանական գործին, ով աշխատել է այդ ասպարիզում, մանաւանդ և բացառապէս հայ իրականութեան մէջ, նրան աւելի քան հասկանալի և ըմբռնելի կլինի այն դժւարին պայմաններն ու հանգամանքները որոնցով շրջապատւած է լինում այդ ասպարիզում աշխատողը,— աւելացրած եթէ այդ աշխատանքը կատարւում է գաւառական միջավայրում, ուր բացի

ընդհանուր դժւարին պայմաններից գոյութիւն ունի տպարանական այնպիսի տեխնիքական անյարմարութիւններ, որոնք շատ յաճախ շաբաթներով արգելք և խոչնդոտ են հանդիսանում գործիկանոնաւոր և անընդհատ առաջ գնալուն:

Վերջացնելով, մեր այս, երկու խօսքը, չենք կարող մեր խորին երախտագիտական շնորհակալութիւնը չարտայայտել Գերապատիւ Խորէն եպ. Մուրադբէգեանին, մեծ. պ. պ. Գ. Ամիրեանին և Յ. Աբրահամեանին որոնք իրենց նիւթական—բարոյական աջակցութեամբ խրախուսանք և ջատագով եղան մեր այս ձեռնարկութեանը:

ԽԱՐԱԳՂՍԹԻՒՆԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. Կռանի ծնունդը	III
ՊՕՂՈՍ ՄԷԿՈՒՆԻ. Այց դէպի հայկական մտքի բարձունքները	6
Մ. Ստի անկումը, Մարկ-Տէէնից	59
ԱՐՔՍԻՄ-ԼԻԶԱ. Խոզն ու ծիծեռնակը	65
ՍԱԼՄԱՆ. Խմբագիր հրատարակիչը. էսքիզ իրականից	67
ՄԷ-ԲՈՒՆԻ. Ֆէլիէտոնիստի յիշատակարանից	70
ՄԱՐՏ. ՌՈՒՇԱՆԵԱՆ. Շանթէքլեօր	73
Անեկդոտներ	76
ՆԱՐԳԻԶ. Թողէք ինձ	78
,, ,, Շուրջս մռայլ	78
Մ. Մազնիտ. Թարգմ. ոռւսերէնից	79
Ինչ ազգ, ինչպէս է գնում մի նոր դիրք	85
ԱՐՔՍԻՄ-ԼԻԶԱ. Ազգային քնար-հերքութիւն	86
,, ,, Արի-արի: Նրա կարծիքով	92
,, ,, Մոռացութիւն	93
,, ,, Եարը... նաշխուն արև	94
,, ,, Սիրուն տղայ	95
,, ,, Երգ	96
Մ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Հարսնախօսութիւն	97
ՇԻՄՇԻՐԵԱՆ. Կատուները	106
ՓԱԼԱՆԴՈՒԶ ՄԿՕ Արովհանի արձանի բացումը Երևանում	107
Մտքեր	121
Մտքեր կանանց մասին	123
ՄԷՖԻՍՏՈՖԷԼ Լէնկթեմուրի 500 ամեայ յօբէլեանը. նամակներ վերին երուսաղէմից	126
ՇԱՏԷԼ-ԱՐԱԲ Ամուսնալուծութեան պրօցէս. Թարգ. ոռւս.	130
ԼԻԼԻՊՈՒՏԻ Անկուշտ արարածներ	136
,, ,, Դառն խոստովանութիւն	138
ՇԱՏԷԼ-ԱՐԱԲ Զոյգ սովածներ	141
,, ,, Գեղի մուխսին	143

Մտքեր	145
ՓԱԼԱՆԴՈՒԶ ՄԿՑ Այ թէ ոնց դառայ բանաստեղծ	152
Անեկդոտներ	152
ՓԱՌՆԱԿԷՍ Դասախօսութիւն. վօղ. մէկ արարւածով	154
Անեկդոտներ	174
ԼՈՒԿՈՒԼԼՈՍ. Բանաստեղծական ճաշակ ուտելու մէջ	178
ՔԻՄԻԿՈՍ. քիմիական տարրերի վերլուծութիւն	180
ՈՍԿԵՐԻԶ՝ ՓԻԼԻՊՈՍ. ՇԱՀՐԻՄԱՆԵԱՆ. կլէկչութիւն	182
ԿԼԼԱՆ ՅԱԿՈՎԲ. Ճամբորդներ-Լ. Անդրէկից	186
ՅԱԿ. ՏԷՐՈՒՆԻ. Ով է մեղաւոր	189
Մ. Տ. Յ. Ով ինչպէս է գովում իր հոմանուն	191
Յ. Տ. ի Քասո. Լ. Անդրէկից	196
ՅՈՎ. ԶԱԼԵԱՆ. Յիմարի խորհուրդը	197
, , , , , Իմ լեզուս վարսավիրը	201
Ծիծաղի ձայնաւորերը. ամենուն տարից	199
Մ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. Է. քիզներ	205
Մ. Մտաւոր շահերը. թարգմ. ռուս.	219
ՕՐ. Ա. ԵՂ. Արդէն իսկ անուղղելի սխալ. թ. ո.	227
ԳԱՐ. ԼԵՒՈՆԵԱՆ. Յաւելւած. Երգիծարանութիւն	233
Խմբագրութեան կողմից	
Յայտարարութիւններ	



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ո Ւ Ո Ւ Ս Ա Հ Ա Յ Թ Ե Ր Թ Ե Ր

„Կ Ռ Ա Ն“

ԵՐԳԻԺԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾԻԻ ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆԸ

որոշած լինելով շարունակել ժողովածուի հրատարակութիւնը պարբերաբար, ամեն ջանք դարձ է գնելու դարձնել այն հետաքրքիր և ճշիւ, որի համար հրատարակում է Ռուսահայ և Տաճկահայ բոլոր երգիծարան գրողներին, աջակցել իրենց գրականութեամբ, հէնց այժմեանից ուղարկելով նիւթեր, կցելով նրանց հետ նաև իրենց լուսանկարները:

Հոնարարի սկզբունքը պահպանուում է:

Эривань Мучегь Баграгун.

Արտասահմանից՝ Eriwan (Caucase) Mueheg Bagratuni

Խ Ա Թ Ա Բ Ա Լ Ա

Երգիծարանական-սատիրական պատկեր. շաբաթաթերթ:

ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ

Գրիչն ու թանաքը, ներկն ու Հանաքը.

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆՈՒՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Գ Ա Կ

Գրական, քաղաքական, հատարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը պակաս վճարով:

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան 5 ռուբլի, կէս տարին 3 ռ., երեք ամիսը 1 ռ. 50 կ.

Թիֆլիսում տարեկան 4 ռուբլի:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան 7 ռուբլի, կէս տարին 4 ռ., երեք ամիսը 2 ռ. 25 կ.,
ամիսը 75 կ.

ԵՐԿՈՒՍԸ ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ

Տարեկան 10 ռուբլի, կէս տարին 6 ռ., երեք ամիսը 3 ռ. 50 կ.,
մէկ ամիսը 1 ռ. 20 կ.

Դիմել — Тифлисъ, редакция «Хатабала». Հետադրով — Тифлисъ,
«Хатабала» Արասահմանից — Tiflis (Caucase), Redaktion «Khata-
bala»

ՀՈՐԻԶՈՆ

Գրական, քաղաքական և հասարակական
լրագիր:

Բաժանորդագրինն է Ռուսաստանի համար տարեկան 8 ռ., Եւրոպայի՝
30 ֆր., 6 ամսւանը 4 ռ. 50 կ., Եւրոպայի՝ 18 ֆր., 3 ամսւանը
2 ռ. 30 կ., 1 ամսւանը 80 կ.:

Բաժանորդագրութիւնը ընդունուում է միայն իւրաքանչիւր
ամսի 1-ից: Ապառիկ ոչ ոքի թերթ չի ուղարկուում:

Հասցէն՝ Тифлисъ, редакция «ОРИЗОНЪ», Вельяминовская, № 16
Արասահմանից՝ Redaktion «HORIZON», Tiflis (Russie-Caucase).

Մ Ջ Ա Վ

Քաղաքական և գրական լրագիր: ԲԱԺԱՆՈՐԴԱՅ
ԳԻՆԸ. — տարեկան 10 ռուբ., տասն և մէկ

ամսւանը նոյնպէս 10 ռուբ., տասն ամսւանը 9 ռուբ., ինն ամ-
սւանը 8 ռուբ., 8 ամսւանը 7 ռ., 7 և 6 ամսւանը 6 ռ., հինգ
ամսւանը 5 ռ., չորս ամսւանը 4 ռ., երեք ամսւանը 3 ռ., մէկ
ամսւանը 1 ռուբլի:

Հասցէն՝ Тифлисъ, редакция «МШАКЪ», արասահմանից Tiflis,
Redaction «Mschak».

Լ Ո Յ Ս

Գրական-հասարակական շաբաթաթերթ,

ԲԱԺԱՆՈՐԴ. — Ն. Նախիջ., Ռուստովի ու շրջակայ հայ գիւղերի
համար տ. 3 ռ., կէս տ. 3 ռ., 3 ամիսը 1 ռ.: Ռուսաստանի այլ
տեղերի համար տ. 4 ռ., կէս տ. 1 ռ. 50 կոպ. և 3 ամիսը 1 ռ.
50 կ., հատով ամեն տեղ արժէ 10 կոպ.:

Դիմել՝ Нахичевань-на Дону, въ редакцію армянскаго еженедѣльнаго
Журнала „ЛУЙС“.

Ժ Ա Յ Ռ

Գրական, հասարակական և քաղաքական թերթի

բաժանորդագրինը —

Ռուսաստանում՝ տարեկան 3 ռ., կէս տարւան 2 ռ.

Արտասահմանում՝ » 5 ռ., » » 2 ռ. 50 կ.

Հասցէն՝ Александрополь, Редакция „Жайръ“.

Պ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ

Գրական գեղարվեստական երաժշտական պատկերազարդ հանդէս
 Բաժանորդագիրն է թիֆլիսում 10 գիրքը 10 ռ. 5 գիրքը 7 ռ.
 4 գիրքը 5 ռ հատաժաման 2 ռ.

Օտար տեղեր իւրաքանչիւր գրքին 25 կոպ. պոստի ծախս.
 Հոյս են տեսել Ա. Բ. Խ. Գ. գրքերը
 ԽՄԲԱԳՐԻՈՒՄ է Գ. ԳԻՐՔԸ

Հատաժաման երեքը միասին պոստի ծախսով 5 ռ. կարելի է ուղարկել և վերադիր վճարով.

Խմբագրութեան հասցէն. Гудовича, № 7
 Օտար տեղերից. Тифлисъ, Редакция «Гехарвестъ»! կամ Почт. ящ. № 133.
 Արաասահմանից, Tiflis. Redaction «Kegharvest»

Թիֆլիսում կարելի է բաժանորդագրւել նաև «Գուտտենբերգ» գրախանութում.
 Բազում, «Сотрудникъ» գրաժամանոցում:

Ա Ր Ո Ւ Ր Ե Ա Ն

Պ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ
 Բաժանորդագիրն արեկան 3 ռովի.
 Александровичъ, Редакция „Ахурянъ“

Հոյս են տեսել և վաճառւում են ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

հետևեալ գրական քննական աշխատութիւնները.

1. Վանան Տերևան. Յնորքի, ծարաւի և հաշտութեան երգիչը 105 էր., գինն է 25 կ.
 2. Շիրվազադէ. Հայ ընտանիքի և ինտելիգենտի վիպասանը, (նկարով), 200 էր., գինն է 75 կ.
 3. Միրույեկ Կարամուկեան. Ազգութեան հրապարակախօսը, 194 էր., գինն է 50 կ.
- Դիմել «Գիր», «Գուտտենբերգ» և «Կենդրոնական» գրաժամանոցներին: Գումարով գնողներին 25% զեղջ. գիմել Գարեգին Գարդիշեանցին՝ «Հորիզոնի» խմբագրատուն:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Թ Ե Ր Թ Ե Ր

ԲԻԻՋԱՆԳԻՈՒՆ Ազատ հայաթերթ ամենօրեայ (Խմբ. Բ. Քէչեան)
 Տարեկան՝ Տաճկաստան 120 դրշ. - Արաասահման 40 ֆր
 Հասցէ՝ Redaction du journal «Puzantion», Constantinople.

ԱԶԱՏԱՄԱՐԵՐ Օրաթերթ՝ քաղաքական գրական և հասարակական բաժիններով:

Բաժնեգինն է տարեկան. — Կ. Պոլիս՝ 75 դրշ., Գաւառները՝ 100 դրշ.: Արտասահման 25 ֆր.:

Հասցէ՝ Redaction «Azat. mart», Péra, leui Tchiarchi N. 32 Constantinople.

Գ Ա Ղ Ի Ն Ք Օրաթերթ քաղաքական և գրական: Կհրատարակւի Իիդմիրում.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԻԹԻՆ

	տարեկ.	վեց.	ևս.
Իդմիր	80	40	20 դրշ.
Պոլիս և գաւառ	80	40	դրշ.
Արտասահմ.	25	13	ֆր.

Redaction du Sourand armenie «Dachink», Smyrne.

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Օրագիր Կ. Պոլս

Բաժանորդագինը տարեկան 100 դրշ. 40 ֆր. 10 րուբլի:
Constantinople journal «Hayrenik» Avenue de lahdline Parteru Ebousynond 38

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ժողովրդական, ազգային գրական և քաղաքական օրաթերթ

Կ. Պ Օ Լ Ի Ս

Բաժանորդագինը Կ. Պոլիս 80 դրշ. արտասահմանում 25 ֆր.
Avenue de la Sublinu Post 13

Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ

Ամսագիր

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

Բաժանորդագինն է տարեկան 10 ֆր. 4 ր.

Pedaction de la revue «Bazmavap». S Lazare. Vienne (Italie).



„Ս Ա Ք Ս Օ Ն Ս Կ Ի“

Մ Ա Գ Ա Ջ Ի Ն

Ե. Ա. Խ Ա Ն Ա Ջ Ա Դ Ե Ա Ն Ի

Ե Ր Ե Ի Ա Ն Ո Ի Մ

Ֆիրմ. գոյութիւն ունի 1877 թ.

Սանութում մշտապէս մեծ քանակութեամբ և ընտրութեամբ գտնուում է ՇՏԻԳԼԻՑԻ ֆիրմայի ԴՐԱՓ, ԿԱՍՏՕՐՆԵՐ և ՄԱՀՈՒԴ բոլոր պետական և հասարակական հաստատութիւնների ծառայողների համար: Բոլոր դպրոցական հաստատութիւնների աշակերտ աշակերտուհիների համար համապատասխան տարազի կտորներ:

ԼԱՆԳՏ-ՎԻԿԵՐՏՍԷՆ և ՎԷՅՄ արտասահմանեան գործարաններից մշտապէս ստացւում են տղամարդկանց և կանանց բոլոր սեղօնների համար զանազան ԿՕՍՏԻԻՄՆԵՐԻ կտորներ:

Սանութում վաճառւում է կանանց համար պատրաստի ինչպէս ՎԵՐՆԱԶԳԵՍՏ նոյնպէս և ՍՊԻՏԱԿԵՂԷՆՆԵՐ ամենանորագոյն կտորներից և ամենայայտնի ֆիրմաների սպիտակեղէններից:

ԺԻՐԱՐԴՈՎԻ գործարանի մաքուր ՎՈՒՇԻՑ ՍՓՈՒՑՆԵՐ, ԱՆՉԵՌՈՑԻԿՆԵՐ, ԹԷՅԱՍԵԴԱՆԻ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ և այլն:

Նոյն ժիւրԱՐԴՈՎԻ ֆիրմայի տղամարդկանց, կանանց և երեխաների բրդէ և ֆելՖելիկսՍՈՎԻ շուլքիներ, ֆուֆայկաներ, պրօֆեթերԻ սիստէմի ամառնային թափանցիկ շապիկներ, ամառնային և ձմեռնային օղէեակներ և այլն և այլն:

ԽԱՆՈՒԹՆ ՈՒՆԻ ՆԱԵԻ ԻՐ ՕՊՏՈՎԻ ՊԱՅԵՍՏԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Մ ազագիւնի սկզբունք-դեռիզն է Չ

Բաւականանալ բշով, անել առևարական մեծ շրջանառութիւն, միևնոյն ժամանակ, բաւարարութիւն տալ իւր բազմաթիւ սպառողների ճաշակին ու պահանջին:

Առևտուրը առանց սակարկութեան

Ընդունւած սովորական ՋԵՂՋՆ ԱՐԻՈՒՄ է ԿԱՍՏՕՐՆԵՐԻՄ:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԱՐՀԵՄՏԱՆՈՅ
ԵՐԵՒԱՆՈՒՄ

Ս դե քսանդր Մեղքոնեան Բուշախչեանի

Ֆիրման գոյութիւն ունի 1890 թւից:

ՈՍԿԵՂԷՆ ԵՒ ԱՐԾԱԹԷՂԷՆՆԵՐԻ

Վաճառում են պատրաստի ոսկեղէն և արծաթեղէն իրեր—
Բրիլիանտի, արմաղի, հակինթի, փիրուզայի և այլ թանկագին
քարերից մատանիներ, ապարանջաններ, օղեր, բրօշկաներ և այլն:

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ

ԱՄԵՆ ՏԵՄԱԿԻ

Ոսկուց, արծաթից, Ամերիկական ընտիր ոսկուց և այլ մե-
տաղներից—ՕՄԵԳԱ, ԳԷՕՐԳ, ՖԱԻՐ ԺԱԿՕՄՕԶԵՐԻ և այլ գործա-
րաններից:


Նոյնպէս և շղթաներ ոսկուց, արծաթից և Ամերիկական ոս-
կուց—սլակէ, վերջինս բնաւ գոյնը չի փոխում և մրցում է ոսկու
հետ:

Արծաթեայ ամեն տեսակ ճաշակաւոր իրեր, բաժակակալներ,
սերւիզներ, ծխախոտի տուփեր, ազաթասներ, անձեռոցիկների օղեր,
դանակներ, պատառաքաղներ, զզալներ և այլն:

Արհեստանոցում պատրաստում են թէ Եւրոպական, թէ Կով-
կասեան և թէ Ասիական ճաշակի արդ ու զարդեր:

**Արհեստանոցը իր ընտիր արտադրութեամբ
արժանացած է արծարեայ շքանշանի:**

Առևտուրը և պատուէրները կատարւում են բարեխճութեամբ և
բոլոր մրցութիւններից միանգամայն դուրս:



Կ Օ Ն Ե Ա Կ Ի

և ընկառնափրկացիայի գործարան ընկերութ. «ԱՐԱՔԱ»
Ղամարլու գիւղ. Եր. նահանգ:

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժ. Ա. Ն. Տէր-Աւետիքեանցի.

Ատուֆեան փող. սևի. տուն

Հիւանդանոցն ունի բաժանմունք երթևեկ հիւանդների համար, որտեղ ամենայն օր որոշ ժամերում ընդունում են հիւանդներին մասնագէտ բժիշկներ ու բաժանմունք գիշերօթիկ հիւանդների համար: ԲԱՑԻ ԱՅԴ, հիւանդանոցն ունի առանձին կարփնետներ, որտեղ հարուստ են ամենանոր գանազան տեսակի գործիքներ, ապագարատներ բժշկելու էլէքտրականութեամբ, էլէքտրական լոյսով, տաքացրած օդով, մասսաժով և այլն.

Մեծ ՈՒՅՆԳՐՈՒԹԵԸՆ Է ԸՌՆԻԸԹ ԲԹԵԿԸԿԸՆ ԳԻՄՆԸՍՏԻԿԸՑԻ ԳԸՀԼԻԹԸ,
ՋԵՏԵՂԻԸԹ ԵՆ ՄԻՆՁԵԻ 20 ՋԸՆԸՋԸՆ ԸՊՊԸՐԸՑ ԵՐ.

Հիւանդանոցում կատարուած ևս նաև զանազան տեսակ սնույթներ, միզի, խորիխ, ստամոքսի նիւթի, սրտան, կաթի, կղկղանքի և այլն.

Այցելութեան վարձը 50 կոպ.

**ԹԳԵՐԸՑԻԱՆԵՐՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԳԸ ՄԻ ՔԱՆԻ
ԲԹԻՇԿՆԵՐԻՑ ԸՌԱՆՁԻՆ ՎԱՐՁՈՎ.**

Վերատեսուչ հիւանդանոցի՝ բժ. Ա. Ն. Տէր-Աւետիքեանցի

ԿԱՏԱՐԵԼՍԳՈՐԾԻԱՆԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ԿՕՆԵԱԿԻ ԵՒ ՕՂԻԻ

Պ Ա Հ Ե Ս Տ

ՅԱԿՈՎԲ ԱՐՐԱՀԱՄԵԱՆԻ

ԸՆԴՈՒՆԻՈՒՄ ԵՆ ՕԺԻՏԻ ՊԱՏԻԷՐՆԵՐ

Գները վերջնական են

Նապարեան փողոց տուն Աֆրիկեանի.

ՎԱՃԱՌ-ԱՏՈՒՆ 77 **ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԳ** 66

Ե Պ Ր. Ք Ն Ղ ա թ ե ա ն ն ե թ ի

ԵՐԵՎԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Վաճառում են մանուֆակտուրային ապրանքների բազմազան տեսակներ. մահուդի, դրափի, կաստորի, գիազոնալի, միկենոյն ժամանակ և մեաքսի, բրդի և քաթանի ապրանքներ, պատրաստի սպիտակեղէն և այլն:

Կրէպոսանայա փողոց պտտած Հայոց Թեմական Գործանոցի:



ԱՅՎԱԶԵԱՆՑ ԵՒ ՆԱԶԱՐԵԱՆՑ
ԵՐԵՎԱՆԻՄ.



Տպարան, կազմատուն, կնիքների գործարան, դրամօֆոններ, պատեֆոններ, երաժշտական գործիքներ:


Գնողները և պատուէր տւողներն օգտուում են ժամանակավճարի արտօնութեամբ:

Մ Շ Տ Ա Կ Ա Ն Ն Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԳՆԵՐԸ ԳՈՐԾՎՐԱՆԱՅԻՆ ԵՆ ԵՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ.

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես.	տող	սխալ	ուղիղ
11	13	անհունի	անճոռնի
60	38	ժամակ	ժամանակ
110	9	տէր Գուարի	տէր Եղնիկի
130	1	յօրեկարը	յօրեկարը



152 with the A



74771P.

